Օ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Օ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

333.5(47.925)
З-85

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ, 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

А $\frac{н}{10776}$

О. М. ОГАНЕСЯН

Аграрный вопрос
в бывшей Эриванской губернии
в конце XIX, в начале XX в. в.

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

Ա. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

1. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

*1861 թվի փետրվարի 19-ի օրենքով Ալեքսանդր 2-րդի կառավարությունը վերացրեց ճորտատիրական իրավունքը Ռուսաստանում։ Դրանով իսկ Ռուսաստանը թևակոխեց զարգացման մի նոր շրջան՝ կապիտալիզմի զարգացման շրջանը։ «1861 թ. փետրվարի 19-ը,— ասում է Լենինը,— իրենով նշանավորում է ճորտատիրական էպոխայից աճած նոր, բուրժուական, Ռուսաստանի սկիզբը»**։

Ի՞նչն էր ստիպում Ռուսաստանի առաջին կալվածատիրոջը՝ Ալեքսանդր 2-րդին, ռուսական կալվածատերերին, վերացնելու դարերի ընթացքում գոյություն ունեցող ճորտատիրական իրավունքը Ռուսաստանում։

Այդ բանը նրանց ստիպեց անելու Ռուսաստանի ներքին տնտեսական զարգացումը։ *Ապրանքային-դրամական հարաբերությունների զարգացումը երկրում խարխլում էր ֆեոդալական՝ նատուրալ տնտեսության հիմքերը և Ռուսաստանը տանում էր դեպի կապիտալիզմի զարգացումը։ Ճորտատիրական-ոստիկանական և ոչ մի բռնապետություն, որքան էլ զորեղ լիներ նա, չէր կարող կասեցնել երկրի՝ դեպի կապիտալիզմ զարգացող բնական և անխուսափելի ընթացքը։ Այս պայմաններում Ռուսաստանի տիրապետող դասակարգի և նրա կառավարության առջև դրված էր երկընտրանք՝ կամ կործանվել և ասպարեզը զիջել զարգացող կապիտալիզմին, կամ ընդհակառակը՝ ընդառաջել կապիտալիզմի զարգացմանը, այնուհետև աստիճանաբար, դանդաղ քայլերով նոր*

---

* **Լենին,** *Երկեր, հատ.* XV, *էջ* 143, *երրորդ հր.*

պայմաններին համարվել, իրենց ձեռքում պահելով պետական իշխանությունը և երկրի տիրապետությունը։ 1861 թ. ռեֆորմը հենց վերջին՝ պրուսական ուղիով առաջ գնալու առաջին քայլն էր Ռուսաստանում։

Ղրիմի կամպանիայում ցարիզմի կրած պարտությունը արագացրեց գործերի այդ ընթացքը Ռուսաստանում։ Պատերազմում ցարական կառավարության կրած պարտությունը Ռուսաստանի տնտեսական և ռազմական հետամնացության ուղղակի արդյունք էր։ Նա ցույց տվեց Ռուսաստանի «փտածությունն ու անզորությունը» — ասում է Լենինը։ Սև ծովի ավազանում ճորտատիրական Ռուսաստանը բախվեց կապիտալիստական առաջավոր երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Այդ երկրների նորագույն ռազմական տեխնիկային նա կարողացավ հակադրել գերազանցապես հետամնաց հրազենը և առագաստանավը միայն։ Պարտությունը ռազմաճակատներում և նրան հետևող ամոթալի դաշնագիրը Փարիզում,— ստիպում էին տիրապետող դասակարգին երկրում մտցնել տնտեսական որոշ փոփոխություններ։ Այդ փոփոխություններն իրենց արտահայտությունը գտան 1861 թվի ռեֆորմում։

Եվ վերջապես ցարիզմը ստիպված էր վերացնելու ճորտատիրական իրավունքը Ռուսաստանում գյուղացիական բունտերի սպառնացող վտանգի տակ, բունտեր, որոնք խիստ կերպով աճում էին նախառեֆորմյան շրջանի յուրաքանչյուր տասնամյակի ընթացքում։ Կառավարության պաշտոնական, բայց ոչ լրիվ տվյալները ցույց էին տալիս գյուղացիական բունտերի հետևյալ աճը. 1826—34 թվականներին տեղի է ունեցել 148 բունտ, 1835—44 թվականներին—216, 1845—54 թվականներին—384 և 1855—61 թվականներին, այսինքն ռեֆորմին անմիջապես նախորդող 5—6 տարիներում—474 բունտ։ Յուրաքանչյուր տասնամյակում անընդհատ աճող գյուղացիական այս բունտերը տագնապ էին առաջ բերում տիրապետող դասակարգի մեջ և ստիպում այդ դասակարգի առաջին կալվածատիրոջը, Ալեքսանդր 2-րդին ընդունելու, «որ ավելի լավ կլինի ազատագրել վերևից, քան սպասել երբ կազատվեն ներքևից»։

Սրանք էին հիմնականում գյուղացիական ռեֆորմի իրագործման պատճառները և նրա արագացման շարժառիթները։

Ինչ վերաբերում է ռեֆորմի թափին, նրա խորության ու շրջանակներին, ապա այն կանխորոշվում էր նախ և առաջ տիրապետող դասակարգի շահերով։ Ռեֆորմը կենսագործվում էր ոչ թե ներքևից, գյուղացիական մասսաների կողմից, որպես նրանց ռևոլյուցիոն գործունեության անմիջական արգասիքը, այլ վերևից՝ ֆեոդալական-ճորտատիրական դասակարգի կողմից, ուստի և իր վրա կրում էր այդ դասակարգի դրոշմը, ներծծված էր նրա շահերի պաշտպանությամբ։ Չնայած այս բոլորին, ռեֆորմն իր էությամբ բուրժուական բնույթ էր կրում և նոր ուղի էր հարթում կապիտալիզմի զարգացման համար Ռուսաստանում։

Փետրվարի 19-ի օրենքը վերաբերում էր միայն Ռուսաստանի ներքին նահանգներին, այսինքն մետրոպոլիային, նա չէր վերաբերում ցարիզմի գաղութներին։ Ցարական կառավարությունը շատ կցանկանար սահմանափակել ռեֆորմի շրջանակները միայն Վելիկոռոսիայով, պահպանելով սատատուս-քվո գաղութներում՝ եվրոպական երկրների օրինակով։ Առավել ևս նա շահագրգռված չէր տնտեսական զարգացման ուղի հարթել իր գաղութների առաջ։ Սակայն այստեղ նա չէր կարող հաշվի չառնել իր գաղութների երեք հիմնական առանձնահատկությունները.

1) Ի տարբերություն մյուս երկրների գաղութներից, ցարական Ռուսաստանի գաղութների որոշ մասը (Լեհաստանը, Մերձբալթյան երկրները) զգալի չափով առաջ էին գնացել, իսկ մյուս մասը (Անդրկովկասը) տնտեսապես առաջ էր գնում։ Հետևապես, գաղութների տնտեսական զարգացումը նույնպես առաջ էր մղում ճորտատիրական իրավունքի վերացման հարցը և ոչնչով չէր կարելի կասեցնել նրանց հետագա զարգացումը կապիտալիզմի ուղիով։

2) Ի տարբերություն մյուս երկրների գաղութներից, ցարական Ռուսաստանի գաղութները կտրված չէին մետրոպոլիայից ծովերով, օվկիանոսներով, հազարավոր և տասնյակ հազարավոր կիլոմետրներով, ինքնուրույն տնտեսական և վարչական կյանքով։ Նրանք մետրոպոլիայի հետ միասին վարչական և աշխարհագրական մի ամբողջություն էին կազմում։ Ռեֆորմի իրագործումը կայսրության մի մասում չէր կարող չանդրադառնալ նրա մյուս մասի՝ գաղութների վրա, չառաջացրել նույնպիսի ռե-

ֆորմի իրագործման անհրաժեշտությունն ամբողջ գյուղացիության նկատմամբ։

3) Վերջապես գյուղացիական շարժումներն ընդգրկել էին ոչ միայն բուն Ռուսաստանի ներքին նահանգները, այլ նաև գաղութները։ Գյուղացիական բունտերը Լեհաստանում, Բաշկիրիայում, Բեսարաբիայում, Հյուսիսային Կովկասում, Վրաստանում և այլուր ստիպում էին ցարական կառավարությանը սկսել ռեֆորմի իրագործումը նաև գաղութներում։

Ահա այն բոլոր հանգամանքները, որոնք հաշվի էին առնվում ցարական կառավարության կողմից և ստիպում նրան կիրառելու այսպես կոչված տեղական ռեֆորմներ։

Այնուամենայնիվ ցարական կառավարությունը չէր շտապում իրագործել տեղական ռեֆորմները և իրագործելիս էլ հաշվի էր առնում առանձին գաղութների յուրահատուկ պայմանները։

Երևանի նահանգում և ընդհանրապես Արևելյան Անդրկովկասում ռեֆորմի կենսագործումը ձգձգվեց։ Այստեղ նա սկսեց կենսագործվել միայն 1870 թ. մայիսի 14-ի հայտնի օրենքով։ Օրենքը սահմանում էր, որ ռեֆորմը տարածվում է այն գյուղացիների վրա, որոնք բնակեցված էին հայկական մելիքներին, նախկին խանական ընտանիքի անդամներին, բեկերին և աղալարներին պատկանող հողերի վրա։ Նա ընդգրկում էր Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները և Վրաստանի մուսուլմանական գավառները։

Մայիսի 14-ի օրենքը տարածվում էր միայն 1846, 1847 և 1851 թվականների օրենքներով բնակեցված գյուղացիների վրա, մինչդեռ գյուղացիների որոշ կատեգորիաներն այդ օրենքներին ենթակա չէին։ Այնուհետև օրենքը չէր տարածվում նաև այն գյուղացիների վրա, որոնք թեև բնակեցված էին մելիքներին և մյուսներին պատկանող հողերի վրա, բայց նրանց հարաբերությունները կալվածատերերի հետ որոշվում էր նրանց փոխադարձ «կամավոր» պայմանագրությամբ։ Նրանց հողային և իրավական պայմանները մնում էին անփոփոխ։ Եվ վերջապես օրենքը չէր տարածվում նաև այն գյուղացիների վրա, որոնք բնակեցված էին մուսուլմանական և հայկական բարձր դասին չպատկանող (կառավարության կողմից չճանաչված) անձնավորությունների հողերի վրա։

Այսպիսով, 1870 թ. մայիսի 14-ի օրենքը սկզբից ևեթ սահ-

սահմանափակում էր նրա ազդեցության շրջանակները, դուրս թողնելով գյուղացիների որոշ խմբերի։

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն գյուղացիների տրամադրության տակ պահպանվում էր **հողօգտագործման** իրավունքը այն կալվածներում, որտեղ նրանք տեղավորված էին։ Այդ հողերի **սեփականության** իրավունքը վերապահվում էր հողատիրոջը։ Գյուղացիներին մշտական օգտագործման էին անցնում բոլոր տնամերձ հողերը, խաղողի և պտղատու այգիները, վարելահողը և խոտհարքը, որոնցից գյուղացիները մինչ այդ օգտվում էին (հոդված 8-րդ)։ Կալվածատերերին մնացող հողային տարածությունը պետք է կազմեր ամբողջ հողի մեկ երրորդ մասը։ Եթե գյուղացիների հողերի քանակը նորմայից ավելի էր, իսկ կալվածատերերինը ավելի քիչ, քան ամբողջ հողի մեկ երրորդը, ապա կալվածատերն իրավունք ուներ կտրելու գյուղացիներին պատկանող բաժնեհողի ավելորդ մասը։ Օրենքի այս հոդվածը մի հզոր լծակ հանդիսացավ կալվածատերերի ձեռքին գյուղացիական հողերը կողոպտելու ուղղությամբ։

Այնուհետև 12—15-րդ հոդվածները մատնանշում էին բաժնեհողի բնույթը։ Գյուղացիներին անցնող հողի մեջ պետք է մտնեին միայն պիտանի հողերը։ Արգելվում էր գյուղացիների հողային նորմայի մեջ հաշվել ավազոտ և քարքարոտ տեղերը, ինչպես և փողոցներն ու ճանապարհները։

Օրենքի 25-րդ հոդվածով որոշվում էին քոչվորական ցեղերի հողային հարաբերությունները։ Հողաբաժին չունեցող քոչվորական ցեղերը, որոնք անասնապահությամբ էին պարապում, 6 տարվա ընթացքում պահպանում էին իրենց նախկին իրավունքները՝ կալվածատիրական արոտավայրերից օգտվելու իրավունքը, որից հետո նոր օրենքով պետք է որոշվեին նրանց հետագա հողային հարաբերությունները։

Վերոհիշյալ բոլոր հոդվածները խոսում էին գյուղացիների **հողօգտագործման** մասին և ոչ թե նրանց սեփականության մասին հողի վրա։ Կարո՞ղ էր արդյոք գյուղացին դառնալ իր բաժնեհողի լրիվ սեփականատերը և ի՞նչ կարգով։ Այս հարցին պատասխանում էր 133-րդ հոդվածը, մատնանշելով, որ գյուղացին կարող է իր բաժնեհողը ինչպես ամբողջությամբ, այնպես և առանձին

մասերով հետ գնել որպես սեփականություն կալվածատիրոջ համաձայնությամբ, այն էլ հաշտարար միջնորդի կողմից հաստատվելուց հետո։ Կալվածատիրոջ համաձայնության բացակայության դեպքում,—մատնանշում էր հաջորդ հոդվածը,—գյուղացիները կարող էին իրենց հողերը հետ գնել նաև կալվածատիրոջ կամքին հակառակ, պայմանով, որ հետ գնած հողամասը 15 դեսյատինից ավելի չլինի։ Իսկ եթե գյուղացու ամբողջ բաժնեհողը հավասար է 15 դեսյատինի, ապա նա կարող էր հակառակ կալվածատիրոջ համաձայնության հետ գնել միայն 7,5 դեսյատին։

Վերջապես մայիսի 14-ի օրենքի 138-րդ հոդվածը սահմանում էր, որ գյուղացիների կողմից հողի հետգնումը կատարվում է առանց կառավարության օժանդակության։ Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիները որպես գաղութային ժողովուրդների ներկայացուցիչներ զրկվում էին այն ողորմելի «օժանդակությունից», որով օգտվում էին ռուսական գյուղացիները հետգնման ժամանակ։

Գյուղացիների և կալվածատերերի միջև սահմանվող վերահիշյալ հողային հարաբերությունները որոշվում և գրի էին առնվում հատուկ կանոնագրքերում (Уставные грамоты) հաշտարար միջնորդների կողմից որպես պետական ակտեր։ Մինչև կանոնագրքերի կազմելն ու հաստատելը, որի համար սահմանվում էր երկու տարի ժամանակաշրջան, գյուղացիների և կալվածատերերի մինչ այդ եղած նախկին փոխհարաբերությունները անփոփոխ էին մնում։

Կանոնագրքերի հաստատումից հետո գյուղացիները պարտավոր էին կալվածատերերին վճարել երկրագործությունից ստացվող ողջ արտադրանքի մեկ տասներորդ մասը Բաքվի, Ելիզավետպոլի նահանգներում և Թիֆլիսի նահանգի մուսուլմանական գավառներում։ Իսկ ինչ վերաբերում էր Երևանի նահանգի գյուղացիությանը, ապա սրանք կալվածատերերին վճարում էին ամբողջ արդյունքի $^4/_{30}$-րդը։ Այսպիսով Երևանի նահանգի գյուղացիությունն ավելի ծանր կացության մեջ էր դրվում։

Բացի վերոհիշյալից, մուլքադարների, բեկերի և աղալարների օգտին սահմանվում էր նաև դրամական կամ նատուրալ հարկ բանջարանոցներից և բոստաններից—80 կոպեկ, այգիներից—

1 ռուբ. 20 կոպեկ յուրաքանչյուր 10 բաժման հողից և 15—30 կոպեկ տնամերձ հողերի ամեն մի դեսյատինից։

Ավելի ուշագրավ է օրենքի 87-րդ հոդվածը։ Այստեղ մատնանշվում է, որ կալվածատիրոջ օգտին կատարվող գյուղացիական հատկացումները կատարվում են նույնպիսի խստությամբ, ինչպիսի խստությամբ գանձվում են պետական հարկերը։ Հենց այստեղ էլ մատնացույց է արվում հատկացումները չվճարող գյուղացիների նկատմամբ կիրառվող բոլոր միջոցառումները։

***

Դժվար չէ նկատել, որ ռեֆորմը ամբողջովին ենում էր տեղական տիրապետող դասակարգերի շահերի պաշտպանությունից, իսկ գյուղացիների համար ըստ էության պահպանվում էր նույն ճորտային և կիսաճորտային վիճակը, ինչ գոյություն ուներ մինչև ռեֆորմը։ Գյուղացիներին կաշկանդող տնտեսական և քաղաքական շղթաները մնում և ավելի էին ամրապնդվում, միայն այն տարբերությամբ, որ այժմ նրանք ներկված էին «գյուղացիական մեծ ռեֆորմի» գույնով։

Սակայն վրացական ազնվականները, հայկական մելիքներն ու մուսուլմանական աղալարներն ու բեկերը չբավականացան օրենքով իսկ սահմանված ամենաառատ արտոնություններով։ Ի չարը գործ դնելով օրենքի առանձին հոդվածները՝ նրանք բռնագրավեցին ավելի մեծ հողային տարածություններ։

Անդրկովկասում կալվածատիրական հողերը շատ ավելի էին գերազանցում օրենքով սահմանված նորմաները։ Թիֆլիսի նահանգում կալվածատերերը 7 անգամ ավելի շատ հող ունեին, քան թե գյուղացիները, Քութայիսի նահանգում՝ 4 անգամ, Բաքվի նահանգում՝ ավելի քան երկու անգամ, Ելիզավետպոլի նահանգում՝ մեկ ու կես անգամ, Երևանի նահանգում՝ մեկ ու կես անգամ և այլն։ Հազիվ թե ռուսական կայսրության որևէ մասում տեղի ունեցած լինի գյուղացիական հողերի այսպիսի վայրենի հափշտակում, ինչպիսին տեղի ունեցավ Անդրկովկասում գյուղացիական ռեֆորմների կիրառման կապակցությամբ։

Ստանալով չափազանց աննշան քանակությամբ հողային տարածություն, կողոպտվելով կալվածատերերի կողմից, և խեղ-

դվելով սակավահողությունից, Անդրկովկասի գյուղացիությունը այս բոլորով հանդերձ չէր ազատագրվում ճորտատիրական կախումից։ Ինչպես մատնանշեցինք, բաժնեհողերը գյուղացիներին որպես սեփականություն հանձնելու գործը ամբողջովին կալվածատերերի քմահաճույքին էր թողնվում։ Այստեղ, Անդրկովկասում պետական օրենքը չէր ստիպում պարտադիրաբար հետդնման կարգով գյուղացիներին հանձնելու նրանց հողերը, այդ պատճառով էլ գյուղացիների մեծ մասը մինչև 1912 թիվը մնում էր ժամանակավոր պարտավորյալ կամ ժամանակավոր կախյալ վիճակում կալվածատերերի նկատմամբ, կատարելով իր պարտավորությունները։

Այսպիսով Անդրկովկասում կիրառվող ռեֆորմները իրենց մեջ մարմնավորում էին Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ ցարական միահեծանության գաղութային ողջ քաղաքականությունը։ Այդ ռեֆորմների ողորմելիությունը ակներև է։

Սակայն հասարակական հողերի ամենամեծ հափշտակողը Անդրկովկասում հանդիսանում էր ինքը ցարական կառավարությունը։ Ազնվականներին, բեկերին, մելիքներին թողնելով նրանց հողերը, ցարիզմն իր ձեռքն էր կենտրոնացնում վրացական նախկին պետության, խանական իշխանության, Պարսկաստան և Թյուրքիա փախած խաների, փաշաների և բեկերի հողերը, հսկայածավալ արոտավայրերն ու անտառները։

Ամբողջ Անդրկովկասում եղած 15 միլիոն 731 հազար դեսյատին հողային տարածությունից ցարական կառավարության և կալվածատերերի սեփականությունն էին կազմում 11 միլիոն 120 հազար դեսյատին, կամ ողջ հողային տարածության 70 տոկոսը*, այդ թվում միայն պետական հողերը 8.598 հազար դեսյատին, կամ ողջ հողային տարածության մոտ 55 տոկոսը։ Եթե ցարական պետության սեփականություն հանդիսացող հողային հսկայական այս տարածության մինչև իսկ 50 տոկոսը հաշվենք մշակության համար անպետք, կամ սակավ պիտանի հողային մասիվներ, դրանից հետո էլ պետության տրամադրության տակ

* Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях закавказского края.—соч. VIII, 1899 г.

կմնա ավելի քան 4 միլիոն դեսյատին հողային ֆոնդ, որը ցարական կառավարությունը շրջանառության մեջ դնելով անխնա կերպով շահագործում էր Անդրկովկասի գյուղացիությունը։

2. ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեզ անհրաժեշտ է ցույց տալ այժմ, թե «կոնսերվատիվ հողատիրության» պահպանումը և ցարական միահեծանության առկայությունն ամբողջ Ռուսաստանում ինչպես էր անդրադառնում ցարիզմի գաղութներից մեկի՝ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման վրա, Երևանի նահանգի սահմաններում, հետռեֆորմյան շրջանում։ Ամենից առաջ ի՞նչ ուղղությամբ էր զարգանում կալվածատիրական տնտեսությունը։

Այսպես կոչված 1870 թվի գյուղացիական ռեֆորմի ժամանակ բեկերը, աղալարներն ու մելիքները, ինչպես արդեն մատնանշել ենք, էքսպրոպրիացիայի ենթարկեցին գյուղացիությանը։ Օգտվելով իրենց վարչական դիրքից, տնտեսական հզորությունից ու գյուղացիական մասսաների հետամնացությունից, նրանք 1870 թվի մայիսի 14-ի օրենքի բոլոր հոդվածները մեկնաբանում և կիրառում էին բացառապես իրենց օգտին։ Գյուղացուն հող հատկացնելիս, կանոնագրքեր կազմելու ժամանակ, հաշվի էին առնվում տվյալ տնտեսության արական անձերի ոչ թե այդ մոմենտին եղած առկա քանակը, այլ 1863 թվականին կատարված կամերալ ցուցակագրության ավելի նվազ տվյալները, որի հետևանքով զգալի քանակությամբ գյուղացիներ զրկվում էին հողից։

Կալվածատերերն էլ ավելի գիշատիչ կերպով հափշտակում էին ոռոգող ջուրը։ Գյուղացիները զրկվում էին ոչ միայն հողից, այլև ջրից օգտվելու հնարավորությունից։

Այսպիսով գյուղացին ամբողջովին կախման մեջ էր մնում կալվածատիրոջից՝ թե հողից և թե ջրից օգտվելիս։ Բեկերի, մելիքների, աղալարների, հաշտարար միջնորդների կամայականությունները—գյուղացիներին հողից և ջրից զրկելու բնագավառում, կանոնագրքեր կազմելու ժամանակ այնքան ակներև էին, այնքան մասսայական և այն չափերի էին հասել Ելիզավետպոլի և

մյուս նահանգներում, որ ցարական չինովնիկ Կուչաևը բոլոր կանոնագրերի վերանայման հարցն էր առաջ քաշում։ Եվ եթե նա չէր պնդում այդ բանի վրա, ապա միայն քաղաքական նկատառումներով։ Ահա թե ինչ է գրում նա. «Ոչ մի կասկած չի կարող լինել, որ ներկայումս ձեռնարկել բոլոր կանոնագրերի ուղղմանը անհարմար կլիներ, քանի որ այդ կարող էր բնակչության մեջ տատանում առաջ բերել դեպի կառավարության կարգադրությունները...»*։

Իրենց ձեռքում կենտրոնացնելով ամենաարգավանդ հողերը և ջրից առատորեն օգտվելու հնարավորությունը, կալվածատերերը հազվագյուտ դեպքերում էին հողագործությամբ զբաղվում և հետևապես նախաձեռնում տնտեսության մշակման գործը։

Ռուսական կալվածատիրությունը հետռեֆորմյան ժամանակաշրջանում ստիպված էր վարել իր տնտեսությունը կապիտալիզմի զարգացման, այդ տնտեսության ռացիոնալացման ուղիով։ Լենինը մատնանշում է՝ «...եթե զուտ ռուսական նահանգներում գերակշռում են աշխատավճարումները, ապա ընդհանրապես եվրոպական Ռուսաստանում ներկայումս գերակշռող պետք ճանաչվի կալվածատիրական տնտեսության կապիտալիստական սիստեմը»**։

Այդպես չէր դրությունը Անդրկովկասում և մասնավորապես Երևանի նահանգում։ Այստեղ կալվածատիրության գերակշռող մասը հողագործությամբ չէր զբաղվում։ Նա իր ունեցած հողը գերադասում էր ամբողջովին կամ մեծ մասամբ վարձակալության տալ գյուղացիներին և նրանց հաշվին ապրել։ Այս երևույթը կարելի է լուսաբանել Երևանի նահանգի չորս գավառների տվյալներով։ 1894 թվականին պետական չինովնիկ Պագիրովը, ուսումնասիրելով մասնավոր սեփականատերերի հողերը վարձակալության տալու և անձամբ մշակելու պայմանները, բերում է հետաքրքիր տվյալներ Երևանի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և Էջմիածնի գավառների մասին։

---

* *Кучаев*, „Крестьянская реформа в Елизаветопольской губернии“, 1885 թ., էջ 31. ընդգծումը հեղինակինն է։

** Լենին, Երկեր, հատ. III, էջ 162, ռուս. IV հրատ.։

Այդ տվյալներից պարզվում է, որ մասնավոր սեփականատերերին պատկանող 28 հազար 194 դեսյատին հողից անձնական օգտագործման համար պահվում է ընդամենը 5670 դեսյատին կամ մոտ 20 տոկոսը, այն էլ մեծ մասամբ Դարալագյազի գավառում, իսկ մնացած 22 հազար 524 դեսյատինը կամ 80 տոկոսը վարձակալության է տրվում։ Իհարկե հողերը վարձակալության էին տալիս ոչ միայն կալվածատերերը, այլև մյուս մասնավոր սեփականատերերը, սակայն հողը վարձակալության տվողների գերակշռող մասը կալվածատերերն էին հանդիսանում։ Բավական է մատնանշել, որ Երևանի գավառի վարձակալության տված 10.971 դեսյատին հողից 8276 դեսյատինը 7 խոշոր կալվածատերերի սեփականությունն էր, որոնք, ի դեպ ասած, ոչ մի դեսյատին հող չէին թողել իրենց օգտագործման համար, մինչդեռ Երևանի գավառն առանձնապես և Սուրմալուի, Էջմիածնի ու մասամբ էլ Դարալագյազի գավառներն ընդհանրապես Հայաստանում գյուղատնտեսական պրոդուկտների ապրանքայնության տեսակետից մյուս գավառների համեմատությամբ առավել զարգացած գավառներն էին հանդիսանում։

Կալվածատերերի այս բացարձակ պորտաբույծ կյանքի մասին խոսում է նաև Ռ. Ի. Դանիլովիչը, որը հատուկ ուսումնասիրության էր ենթարկել Արաքսի հովիտը՝ Հայաստանում երկաթուղի անցկացնելու կապակցությամբ։ Ահա թե ինչ է գրում նա. «Բացի մուլքադարներից հող ունեն նաև արտոնյալ դասի մի շարք անձինք, որոնք հողից օգտվում են սեփականության սկզբունքով։ Բայց այդ անձերից և ոչ մեկը, ինչպես և մուլքադարները, ինքները չեն մշակում հողը, բավականանալով հողը գյուղացուն վարձակալության տալով՝ բերքի մի մասը ստանալու պայմանով։ Դրա համար էլ արտադրողականության տեսակետից արտոնյալ դասակարգը շատ քիչ է օգտակար հողագործության համար և շատ քիչ է ազդում գյուղացու գյուղատնտեսական կյանքի վրա»*։

Իսկ այդ նշանակում էր, որ ոչ միայն գյուղացիական, այլև կալվածատիրական հողը մշակվում էր գյուղացու հետամնաց և պրիմիտիվ գործիքներով։ Այստեղից միանգամայն հասկանալի է,

* *Данилович*, „Аракская равнина“, стр. 597, 1897 г.

թե ինչպիսին կարող է լինել գյուղատնտեսության արտադրողականությունը Անդրկովկասում ընդհանրապես:

Ինչո՞վ բացատրել այս երևույթը:

Այդ երևույթի պատճառը պետք է որոնել գյուղացու և կալվածատիրոջ միջև առաջացած այն արտադրական հարաբերությունների մեջ, որոնք ստեղծվել էին մեզ մոտ, Անդրկովկասում, հետռեֆորմյան շրջանում:

Անդրկովկասի գյուղացիությունը ռեֆորմից հետո տնտեսական անկախություն ձեռք չբերեց: Բացի այդ, նա էքսպրոպրիացիայի ենթարկվեց կալվածատերերի և կառավարության կողմից: Նրան որպես բաժնեհող տվեցին անպետք հողեր՝ ավազուտներ, աղուտներ և այլն: Գյուղացու տնտեսական դրության ծայր աստիճան հետամնացությունը, նրա ճնշվածությունը կալվածատերերի և ցարական կառավարության կողմից, նրա չտեսնված հողասակավությունը և անելանելի վիճակը,—նորից նրան կալվածատերերի գիրկն էին նետում, ստիպում նրան ստրկանալու հողատերերին:

Առանց իր նախկին հողամասը վարձակալելու, գյուղացին չէր կարող իր աղքատիկ գոյությունը քարշ տալ: Առանց կալվածատիրոջ դիմելու նա չէր կարող իր դաշտը ջրել: Այսպիսով Անդրկովկասի կալվածատիրությունը վստահ էր, որ թշվառ գյուղացիները մշտապես ստիպված կլինեն վարձակալել կալվածատիրական հողերը:

Որո՞նք էին կալվածատիրական հողերի վարձակալության պայմանները: Երևանի նահանգի այն գավառներում, որտեղ կալվածատերերը սեփական տնտեսությամբ չէին զբաղվում և իրենց հողի մեծ մասը վարձակալության էին տալիս, գերակշռում էր վարձակալության նատուրալ ձևը, երբ գյուղացիները իրենց ինվենտարով և սերմացուով մշակում էին կալվածատիրոջ հողը և վերջիններիս էին տալիս բերքի կեսը: Երևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում 499 հողատերերի կողմից վարձակալության տրվող 22.524 դեսյատին հողի վարձակալության պայմանների հետազոտությունը պարզում է, որ այդ 4 գավառներից միայն Երևանի գավառումն էր գերակշռում վարձակալության դրամական ձևը, իսկ մյուս գավառներում գերակշռում էր նատուրալ ձևը, այսինքն բերքի կեսը կալվածատիրոջը

վճարելու պայմանը։ Որպես ընդհանուր կանոն աշխատավճարային ռենտան վերոհիշյալ գավառներում գոյություն չուներ։ Չվարելով սեփական տնտեսություն, կալվածատերը կարիք չէր զգում օգտագործել վարձակալության պայմանները իր տնտեսությունը բանվորական ձեռքով ապահովելու համար։

Երևանի գավառում կալվածատերերը, հրաժարվելով սեփական տնտեսություն վարելուց, ամբողջ հողը վարձակալության էին տալիս՝ այն էլ մեծ մասամբ փողով։ Այդ նշանակում է, որ Երևանի կալվածատերերն իրենց տնտեսական բոլոր կարիքները հոգում էին շուկայից գնելով։ Եթե հաշվի առնենք Երևանի գավառի գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնության զարգացումը մյուս գավառների համեմատությամբ, այդ երևույթը միանգամայն հասկանալի կդառնա։ Էջմիածնի և Սուրմալուի գավառներում կալվածատերերը նույնպես հրաժարվել էին սեփական տնտեսություն վարելուց, սակայն գյուղացիներից վարձակալության վճար էին վերցնում մեծ մասամբ նատուրայով, մի հանգամանք, որը ցույց էր տալիս ապրանքային տնտեսության համեմատաբար թույլ զարգացումը այդ գավառներում։ Շարուր-Դարալագյազի գավառում ընդհակառակը, հողատերերի մեծ մասը իրենք էին օգտագործում իրենց հողը։ Հողն այստեղ դրամական վարձակալության էր տրվում սակավ դեպքերում միայն։ Որքան մենք դեպի Հայաստանի լեռնամասը բարձրանանք, այնքան նվազում են դրամական վարձակալության դեպքերը։ Եվ վերջապես Բորչալուի գավառում կալվածատերերը չհրաժարվելով իրենց սեփական տնտեսությունը վարելուց, հողը վարձակալության տալիս օգտագործում էին վարձակալության պայմանները որպես միջոց սեփական տնտեսությունը բանվորական ձեռքով ապահովելու համար։ Այս դեպքում կալվածատերերը ձգտում էին հարմարեցնել իրենց տնտեսությունը կապիտալիզմի զարգացմանը։

Ընդհանուր տենդենցն այն էր, որ կալվածատիրական տնտեսությունը աստիճանաբար հարմարվում էր կապիտալիզմի զարգացմանը։ Որոշ շրջաններում—Արարատյան դաշտավայրում այդ կատարվում էր ավելի արագ կերպով, մյուս շրջաններում՝ լեռնամասում—ապրանքային տնտեսության թույլ զարգացման պայմաններում նա կատարվում էր դանդաղ կերպով։

Ապրանքային տնտեսության զարգացած շրջաններում մի

դեպքում կալվածատերը ինքն էր հարմարվում կապիտալիզմի զարգացմանը, հրաժարվելով սեփական տնտեսություն վարելուց, վերածվելով մի տեսակ «ռանտիեի», որն ապրում էր իր՝ վարձակալության տված հողի եկամուտների հաշվին, մյուս դեպքում նա իր տնտեսությունն էր հարմարեցնում կապիտալիզմի զարգացմանը։

3. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ի՞նչ վիճակում էր գտնվում գյուղացու տնտեսությունը մեզանում, հետռեֆորմյան շրջանում։ Ինչպես արդեն մատնանշել ենք, գյուղացիական ռեֆորմը Անդրկովկասում կիրառվեց է՛լ ավելի կրճատված և յուրահատուկ ձևով։ Անդրկովկասի գյուղացիությունը չազատագրվեց ճորտային և կիսաճորտային կախումից։ Բոլոր կալվածատիրական և վանքապատկան գյուղացիները վերածվեցին ժամանակավոր պարտավորյալ (Վրաստան) և ժամանակավոր կախյալ (Անդրկովկասի մյուս շրջաններում) գյուղացիների։ Նրանք այդ դրությունից դուրս գալ կարող էին միայն իրենց հողերը հետգնելու միջոցով, իսկ հետգնումը ամբողջովին կալվածատիրոջ քմահաճույքից էր կախված։ Եթե Ռուսաստանում 1881 թ. օրենքով հետգնումը պարտադիր կերպով պետք է իրագործվեր, ապա այդ օրենքը չէր վերաբերում Անդրկովկասին։ Բացի այդ, եթե մեզ մոտ կալվածատերերը մինչև իսկ կամավոր կերպով համաձայնեին հետգնմանը, գյուղացիական ստվար մասսան չէր կարող հետգնել իր հողը միջոցների բացակայության պատճառով։ Իսկ ցարական կառավարությունը հրաժարվում էր այս ասպարեզում «օգնելու» Անդրկովկասի գյուղացիությանը։ Տասնյակ տարիների ընթացքում, բացի Թիֆլիսի ու Քութայիսի նահանգներից, որտեղ գյուղացիների որոշ մասը հետգնման կարգով կարողացել էր նվազագույն քանակությամբ հող ձեռք բերել, մնացած բոլոր շրջաններում և մասնավորապես Հայաստանում գյուղացիները չկարողացան հետգնել և ոչ մի դեսյատին հող։ Այդ ստիպված էր խոստովանելու ինքը Վորոնցով-Դաշկովը։

«... Մուսուլմանական պրովինցիաներում,— գրում էր նա,— գյուղացիների համարյա բոլոր փորձերը հետգնման ուղղությամբ վերջացավ իրենց մտադրությունից հրաժարվելով»։ Ինչո՞ւ հա-

մար, «որովհետև նատուրալ պարտավորությունները դրամի վերածելու հաշվառման պրակտիկան տալիս էր շատ ավելի բարձր գին», այսինքն մի գին, որ գյուղացիների ուժերից վեր էր վճարելու, և «միաժամանակ օրենքի խիստ պահանջը, որ ամբողջ հաշիվները կալվածատերերի հետ կատարվեին մեկ տարվա ընթացքում»*։ Ահա թե ինչ. նատուրալ պարտավորությունները դրամի վերածելիս կալվածատերերը պահանջում էին հաշվի առնել գյուղատնտեսական ապրանքների վաճառքի ներկա գները։ Այս հաշվով գյուղացիների հետգնման վճարումները խիստ կերպով աճում էին։ Այդ դեռ բավական չէր, նրանք պահանջում էին հետգնման հաշիվները մաքրել մեկ տարվա ընթացքում։ Կարո՞ղ էր արդյոք այս պայմաններում հետգնման որևէ ակտ կատարվել։ Պարզ է, որ ոչ։

Այսպիսով Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գյուղացիները տնտեսական անկախություն ձեռք չբերեցին։ Նրանք շարունակում էին կատարել իրենց պարտավորությունները կալվածատերերի և եկեղեցու նկատմամբ, որպես ժամանակավոր, ավելի ճիշտ կլինի ասել մշտապես կախյալ գյուղացիներ։ Իսկ կալվածատերերը օգտվում էին գյուղացիների կախյալ վիճակից և է՛լ ավելի ուժեղացնում նրանց շահագործումը, նրանց պարտավորությունները, ոտնահարելով օրենքով սահմանված բոլոր շրջանակները։ Նրանք այժմ պահանջում էին գյուղացիներից «եկամտի մեկ երրորդը, տան տեղից—3—10 ռուբլի, յուրաքանչյուր օրավարին էլ բացի բերքի 1/3-ից 2—4 ռուբլի, արոտի համար յուրաքանչյուր կովին կամ եզան 1—2 ռուբլի, խոզին և ոչխարին—20—30 կոպեկ, յուրաքանչյուր տնից 10 մշակ և այլն»**։

«Մեր տնտեսությունը,— գրում է «Գյուղատնտես» ժուռնալի թղթակիցը,—խեղդված է ճորտության ժամանակից մնացած հողատիրության ձևերի մեջ, որոնք սիստեմատիկաբար քայքայում են գյուղատնտեսությունը։ Միայն մեր երկրումն է, որ ժամանակավոր մուլքադարական ռայաթ ասված գյուղացիները մինչև օրս կախված են կալվածատերերից և ամենաթշվառ դրության մեջ են գտնվում»***։

Փաստերի այս շարանը կարելի է ավելացնել, բայց բերածն

* В. Дашков, „Всеподданнейшая записка", стр. 37.

** «Աշխատանք», 1907 թ., № 1, էջ 7։

*** «Գյուղատնտես», 1909 թ., № 2, էջ 20։

A 10776
14377

էլ արդեն բավական է գյուղացիների վիճակն ըմբռնելու համար։ Նրանք վկայում են այն մասին, որ Անդրկովկասի գյուղացիության դրությունն ընդհանուր առմամբ նույնն էր մնացել, ինչ որ ճորտատիրական իրավունքի ժամանակ, այն տարբերությամբ միայն, որ նա գնման ու վաճառքի ենթակա չէր այժմ։ Տնտեսական տեսակետից նրա դրությունը անհամեմատ ավելի վատացել էր. նրա բաժնեհողը ռեֆորմի կապակցությամբ զգալի չափով կրճատվել էր, մինչդեռ պարտավորությունները կալվածատիրոջ առաջ և պետության նկատմամբ ոչ միայն նույնն էին մնացել, այլ ավելացել էին։ Գյուղացին շարունակում էր վճարել կալվածատիրոջը նույն աշխատավճարային, նատուրալ և դրամական ռենտան, ինչպես առաջ։ Դրան ավելանում էր նաև այն, որ գյուղացին այժմ ստիպված էր վարձակալության վերցնելու իր նախկին հողամասը, որն ատրեզկաների ձևով կալվածատերերի սեփականությունն էր դարձել։

Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիների տնտեսական դրությունն անհամեմատ ավելի վատ էր, քան գյուղացիների դրությունը Ռուսաստանի ներքին նահանգներում։ Այնտեղ գյուղացին վճարում էր հետգնման տարեկան գումարները, պլյուս դրան վճարում ատրեզկաներ վարձակալելու համար։ Այդ շրջանակներից դուրս նա հարաբերականորեն ինքնուրույն էր։ Այստեղ գյուղացին կախյալ վիճակումն էր, նա շարունակում էր կատարել իր պարտավորությունները կալվածատիրոջ հանդեպ, պլյուս ատրեզկաների համար տրվող վճարումը։ Այդ շրջանակներից նա կարող էր դուրս գալ միայն հետգնման միջոցով։ Ճիշտ է, մեր գյուղացին հետգնման վճարներ չէր մուծում, բայց տասնյակ տարիներ տևող նրա պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ բազմաթիվ անգամ գերազանցել էին ամեն մի հետգնման վճարումների չափից։

Այսպես էր կալվածատիրական գյուղացիների ճնշվածությունն Անդրկովկասում և Հայաստանում։

Ոչնչով լավ չէր նաև պետական գյուղացիների վիճակը մեզանում։ Թեև նրանք կալվածատիրական գյուղացիների համեմատությամբ ավելի շատ հող ունեին և ազատված էին կալվածատիրական պարտավորություններ կատարելուց, բայց նրանք ավելի շատ պետական հարկ էին մուծում, քան թե կալվածատիրական և վան-

քաղաքական գյուղացիները։ Ռեֆորմի ժամանակ նրանց տրված հողաբաժինը, բավարար չէր կարող համարվել ընտանիքի գոյության իսկ պահպանելու համար։ Այդ դեռ բավական չէր։ Հետագայում հողերի սահմանագծումների ժամանակ էլ ավելի էին խուզվում նրանց հողային տարածությունները։ Պետական գյուղացու մահվանից հետո նրա հողերը բռնագրավվում էին և նորից տրվում նույն ընտանիքին այս անգամ վարձակալության։ Գյուղացու բաժնեհողը վեր էր ածվում պետական հասութաբերության աղբյուրի։ Գյուղացու կողմից չհերկված, հանգիստ թողած հողը համարվում էր որպես պետական արոտավայր։ Այդ հողի մացառներով ծածկված մասը խսկույն ևեթ պետականացվում էր։

Այս պայմաններում պետական գյուղացիները նույնպես չէին կարող յոլա գնալ առանց պետական, կալվածատիրական և վանքապատկան հողերը վարձակալելու։ Սակայն վարձակալության տրվող պետական հողերը աճուրդի էին հանվում ամբողջությամբ վերցված։ Հետևապես նա մատչելի էր միայն հողով չարաշահողներին, սուբարենդատորներին, որոնք փոքր կտորներով վարձակալության ավելի բարձր վճարով միայն տալիս էին կարիքավոր գյուղացիներին։

Այս նույն երևույթը տեղի ուներ նաև կալվածատիրական ու վանքապատկան հողերն աճուրդով տալու ժամանակ։ «... երկու գյուղացի,— ասում է Արղուտինսկի Դոլգորուկովը Բորչալուի գավառի վերաբերյալ,— վարձակալել են իշխան Օրբելյանից 1400 դեսյատին հող 1300 ռուբլով, իսկ իրենք վարձակալության են տալիս այդ հողը համագյուղացիներին 2500 ռուբլով», երկու անգամ ավելի թանկ գնով։ «Բեկզադլու գյուղում,—շարունակում է Արղուտինսկին,— միջնորդը հողատիրոջը վճարում է 800 ռուբլի 500 դեսյատինի համար, իսկ ստանում է գյուղացիներից 1600 ռուբլի։ Բոլնիս Կափանախչի գյուղում միջնորդը կալվածատերերին է վճարում 3370 ռ., իսկ ինքը գյուղացիներից ստանում է ամեն մի ծխից 3-ական ռուբլի և երկրագործական բոլոր արտադրանքների մեկ քառորդը»*։

---

* *Долоруков-Аргутинский*, „Борчалинский уезд“, стр. 68—9.

Այսպիսով գյուղացիների և հողատերերի միջև խցկվում է մի երրորդ անձնավորություն, միջնորդը, հողով առևտուր անողը, որն օգտվելով գյուղացիների հողասակավությունից և անելանելի վիճակից, մեկին երկուսով, երեքով և շատ ավելի թանկ գներով վարձակալության է տալիս գյուղացիներին իր կողմից միանգամայն էժան գներով վարձակալված հողը։ Վերը բերած օրինակներից երևում է, որ ամեն մի դեսյատին հողի համար միջնորդը վճարում է 93 կ. մինչև 1,40—1,60 կ. վարձակալության վճար, մինչդեռ նույն այդ Բորչալուի գավառում դեռ 1890 թվի տվյալներով ամեն մի դեսյատին հողի վարձակալության վճարը մանր կտորներով հաշված հավասար էր 11 ռուբլու։ Թիֆլիսի գավառում ստորին որակի հողի վարձակալության վճարը 4 ռ. է, միջինը—6 ռուբլի, բարձրը—10 ռուբլի։ Երևանի գավառում համապատասխան կերպով 7, 10, 20 ռուբլի, Ն.-Բայազետի գավառում 5, 8, 14 ռուբլի, էջմիածնի գավառում—8, 15, 25 ռուբլի, Զանգեզուրում 2, 5, 15 ռուբլի և այլն*։

Հայաստանում և Անդրկովկասում գյուղացիական մասսաների ճնշվածությունն ու նրանց տնտեսական վատթար դրության պատճառը սակավահողությունը չէր միայն։ Այստեղ և ընդհանրապես Արևելքում հողի հետ միասին՝ որպես գյուղատնտեսության արտադրության գլխավոր միջոցներից մեկը՝ կարևոր նշանակություն ուներ ջուրը, առանց որի հողագործությունը դառնում էր անհնարին։

Արարատյան դաշտավայրում, ինչպես նաև Բաքվի, Ելիզավետպոլի նահանգների, Թիֆլիսի նահանգի մի շարք գավառների դաշտավայրերում, և ոչ միայն դաշտավայրերում, այլև լեռնալանջերում եղած հողը ոչ մի տնտեսական նշանակություն չէր ունենա գյուղատնտեսության համար, եթե նա մթնոլորտային տեղումներից բացի, արհեստական ոռոգման չենթարկվեր։ Հարյուր հազարավոր դեսյատին արգավանդ հողեր անպտուղ էին մնում այդ վայրերում ոռոգող ջրի բացակայության պատճառով։

Գարնան մթնոլորտային տեղումներից առաջացած նոր և վտիտ բուսականությունը ամառն այրվում, խանձվում էր արևի կիզիչ ճառագայթների տակ։ Այստեղ հողի արգանդում գյած և ոչ

---

* Кавказский календарь, 1890 г., стр. 29.

մի սերմ լույս աշխարհ չէր գալիս, եթե նրան օգնության չհասներ ոռոգող կենսարար ջուրը։ Այդ պատճառով Արարատյան դաշտավայրում ընդարձակ հողային տարածություններ մնում էին միանգամայն անմարդաբնակ, մինչդեռ բնակչությունը խռնվում էր Արաքսի աջ ու ձախ ափերին, կազմելով գյուղերի, այգիների, ցանքադաշտերի խիտ, իրարից չկտրվող անվերջ մի շղթա ամբողջ Արաքսի երկարությամբ, երբ դժվար էր որոշել, թե որտեղ է վերջանում մի գյուղի սահմանը և սկսվում մյուս գյուղինը։

Ոռոգող ջրի նշանակությունը այնքան տիրական էր Արարատյան հարթավայրում, որ պարսիկների տիրապետության ժամանակ Երևանի խանության տերիտորիալ բաժանումը հիմնվում էր մեծ մասամբ գետերի և նրանց ընթացքի վրա — Զանգիբասարի մահալ, Վեդիբասարի մահալ, Գյառնիբասարի մահալ, Կարբիբասարի մահալ, Գյոքչայսկի մահալ և այլն[*]։

Գյուղացու բարօրությունն Արարատյան հարթավայրում որոշվում էր ոչ միայն և ոչ այնքան բաժնեհողի բացարձակ մեծությամբ, այլ նախ և առաջ ոռոգվող հողի քանակությամբ։

«Հարթավայրերում,— ասում է պետական գյուղացիների կենցաղն ուսումնասիրող Դեկանսկին,— հողն առանց ջրի ոչ մի արժեք չի ներկայացնում։ Միայն ոռոգող միջոցների քանակությամբ, որը ստանում է գյուղացին, կարելի է դատել նրա հարստության մասին...»[**]։

Այսպիսով Անդրկովկասի հարթավայրերում ոռոգող ջուրը, գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոկուլտուրայի չափազանց ցածր մակարդակի պայմաններում, բացարձակ նշանակություն էր ստանում հողագործության համար։ Գյուղացու աչքում ոռոգող ջրի արժեքը չափազանց բարձր էր և կազմում էր նրա սրբություն սրբոցը։

«Եթե ջրանցքի անցկացումն անհրաժեշտություն է,— ասում է վրացական ժողովրդական առածը,— ապա կարելի է այն անցկացնել նաև եկեղեցու միջից։

* *Шопен*, Исторический памятник, стр. 441—446.

** Материалы, т. IV, ч. I, стр. 305.

Հայաստանում սակավաջուր վայրերում, որտեղ հերթական ջուրն ստանալն ու նրա օգտագործումը կենաց և մահու նշանակություն ուներ գյուղացու համար, այդ ջուրը «մոր արտասուք» էր կոչվում։ «Զանգուն օրական մի լիտր ոսկի է տալիս, Քասախը — մի լիտր արծաթ» — պատկերավոր կերպով ասում էին Երևանի նահանգի հարթավայրի գյուղացիները*։

Ժողովրդական մասսաների կողմից ոռոգող ջրի այս ֆետիշացումը բխում է նրա տնտեսական ողջ նշանակությունից երկրագործության համար, գյուղացու ընտանիքի գոյությունը պահպանելու համար։ Ահա թե ինչու Հայաստանում և Անդրկովկասում դարերի ընթացքում ժողովուրդը չափազանց մեծ ուշադրություն դարձնելով ոռոգման հարցին, միաժամանակ ստեղծել է ու մշակել ջրի օգտագործման հատուկ սովորությունների և նորմերի մի ամբողջ սիստեմ, որը սրբությամբ պահպանել է դարերի ընթացքում։

Դեռևս 1870 թվի գյուղացիական ռեֆորմն իրագործելիս ցարական կառավարությունը կալվածատերերի օգտին գյուղացիներից խլում էր ոչ միայն նրանց հողի լավագույն մասը, այլև զրկում էր նրանց ջրից ազատ կերպով օգտվելու իրավունքից, կալվածատերերի սեփականությունը դարձնելով ոռոգող ջուրը։

«Շուշիի բաժանմունքի Լեներան գյուղում, — մատնանշում է Կուչաևը, — որտեղ հողատերը ոչ մի տնտեսություն չունի... կանոնադրքի համաձայն ջրի 3/4-ը նրան է թողնված, իսկ 1/4-ը գյուղացիներին։ Ջիվանշիրի բաժանմունքի Ջինլի, Դորբանդլի, Կոյունբինասի, Կարամանլի, Նամար, Կեվլուկ և Հաջիալիսի գյուղերը կանոնադրքերի համաձայն ստանում էին Տերտեր գետի ջրից միայն նրա 1/3-ը, իսկ 2/3-ը կալվածատեր Աղալարովի սեփականությունն էր կազմում»**։ Հայտնի է նաև, որ Քասախ ջրի կեսը Էջմիածնի գավառում պատկանում էր Էջմիածնի վանքին։

---

* Գ. Գոռոյան, «Բզզիկ», էջ 99։

** *Кучаев*, „Крестьянская реформа в Елисаветопольской губернии" Тифлис, 1885 г., стр. 23.

Այսպիսով կալվածատերերի ձեռքին էին կենտրոնացել հողագործության երկու կարևոր ֆակտորները՝ հողը և ջուրը, որոնց միջոցով նրանք շահագործում էին գյուղացիներին։

«Գրավելով ոռոգող ջուրը,—ասում է Եղիազարովը,—կալվածատերերը այդ ջուրը դարձնում են եկամուտի աղբյուր և նրանով բացարձակ կերպով առևտուր անում, նրանք հափշտակում են ոչ միայն «հանած» ջուրը, այլև ոռոգող հերթական ջուրը*»։ Ոռոգող ջուրը հանդիսանում էր շահագործման նույնպիսի գործոն նաև կապիտալիստների ու բաժնետիրական ընկերությունների ձեռքին։ Գեներալ Կախովսկու ընկերությունը, որը 65 տարով վարձակալության էր վերցրել Արազդայանի 10 հազար դեսյատին հողամասը, պահանջում էր այդ հողերի վրա բնակեցված գյուղացիներից հողից և ջրից օգտվելու համար ընկերությանը հանձնել բերքի $^{2}/_{5}$-ը։ Արփաչայից օգտվելու համար Շարուր-Դարալագյազի գյուղացիները վճարում էին իրենց բերքի $^{1}/_{2}$-ից մինչև $^{7}/_{8}$-ը։

Թեև գյուղացին ջրից կարող էր օգտվել, ելնելով իր օգտագործության տակ եղած հողի քանակից, սակայն չքավոր գյուղացին ամեն դեպքում չէ, որ կարողանում էր օգտվել իր հերթական ջրից։ Այստեղ հարցը որոշում էր ամենակարող միրաբը։ Նա էր բաշխում ջուրը համայնքների և տնտեսությունների վրա։ Միրաբը հանդիսանում էր տվյալ ջրային շրջանի բարձրագույն վարչական անձը։ Պարսիկների ժամանակ նա նշանակվում էր Սարդարի կողմից, իսկ հետագայում ցարական Ռուսաստանի տիրապետության ժամանակ, 1845 թվից սկսած նա ընտրվում էր մահալի (ջրային շրջանի) ընտրողների կողմից։ Միրաբն օգտագործում էր իր իշխանությունը գյուղացիների և առանձին համայքների հետ իր անձնական հաշիվները մաքրելու համար։ Ամառը ցանքերը ջրելու ամենակրիտիկական մոմենտին նա զրկում էր այս կամ այն համայնքին, կամ գյուղացուն, հերթական ջրից օգտվելու իրավունքից։ Նա միշտ հանդիսանում էր գյուղի համփանների և

---

* *Егиазаров*, „О водовладении в Закавказском крае", 1895 г., стр. 16.

** *Инженер Псарев*, Записка об ирригации на Араздаянской степи.

կալվածատերերի շահերի հավատարիմ պաշտպանը, չքավոր գյուղացիների կեղեքիչը։

Զրկվելով հերթական ջրից—«մոր արտասուքից»—թեկուզ և մի անգամ, առավելապես նրաշտ տարիներին, չքավոր գյուղացին զրկվում էր այդ տարվա բերքից կամ լավագույն դեպքում միայն սերմացուն կարող էր ստանալ։ Ի՞նչ էր մնում անելու չքավոր գյուղացուն այդպիսի դեպքերում։ Նրան մնում էր «ապավինել» միրաբի ամենակարող ուժին, նրա սորուկը դառնալ։

«Սակավաջուր շրջաններում,— ասում է Եղիազարովը,— գյուղացիները սիրով համաձայնվում են մշակելու իրենց սեփական բաժնեհողը կիսովի ամեն մեկի հետ, ով իր վրա կվերցներ հողի միայն ամառային ոռոգումը։ Իսկ քանի որ մահալի ջուրը գտնվում էր միրաբի հսկողության տակ, ապա գյուղացին նման առաջարկով դիմում էր նրան, այսինքն առաջարկում էր մշակել իր բաժնեհողը նրա հետ կիսովի սկզբունքով»*։

Այսպիսով ոռոգող ջուրը դառնում էր կալվածատիրոջ, կուլակի և միրաբի ձեռքին չքավոր գյուղացիներին շահագործելու, նրանց բաժնեհողերը իրենց ձեռքին կենտրոնացնելու տնտեսական հզոր մի գործոն, որը իր կողմից նպաստում էր գյուղի շերտավորմանը։

4. ՑԱՐԻԶՄԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիության ճնշվածության պատկերը լրիվ չէր լինի, եթե մենք չուսումնասիրեինք մի ուրիշ գործոն ևս, որն ավերիչ կերպով էր ազդում գյուղացիական տնտեսությունների վրա, քայքայում և կործանման եզրին հասցնում նրանց զգալի մասին։ Այդ գյուղացիական լայն մասսաների վրա ծանրացած ցարական կառավարության հարկային սիստեմն էր իր բազմապիսի ձևերով։

Թեպետ Անդրկովկասի տնտեսական նվաճումը դեռևս չէր իրագործված, նրա հողային ընդերքում թաքնված հսկայական հանքային հարստությունները և հողագործությունից ստացվող հումքն անմատչելի էին մնում դեռևս Ռուսաստանի տիրապետող

---

* Егиазаров, նույն տեղը, էջ 25։

դասակարգերի համար, սակայն հարկային կատարելագործված մեխանիզմի միջոցով այստեղ կարճ ժամանակամիջոցում ցարիզմի համար ստեղծվում էր ակտիվ բալանսով բյուջե։

Եթե 1870 թվին ցարական կառավարության եկամուտները Կովկասում կազմում էին 5 միլիոն 358 հազար ռուբլի, իսկ ծախսերը՝ 7 միլիոն 601 հազար ռուբլի, ապա 1880 թվին եկամուտները կազմում էին արդեն 8 միլիոն 744 հազար ռուբլի, տալով 3 միլիոն 420 հազար ռուբլու կամ 38 տոկոսի աճ, իսկ ծախսերը նվազել էին մինչև 6 միլիոն 579 հազար ռուբլու, նախկին 7 միլիոն 601 հազարի դիմաց*։

Հարկային մեխանիզմի միջոցով ստեղծվող ակտիվ բյուջեի այս քաղաքականությունը պահպանում է իր ուժը և ընդարձակվում նաև մյուս տասնամյակներում։

Ու՞մ վրա էր ընկնում անընդհատ աճող հարկային ծանրությունը։ Նա ընկնում էր ամբողջովին, չնչին բացառություններով, աշխատավորության, նախ և առաջ գյուղացիական լայն մասսաների վրա։ Քննենք գյուղացիներից գանձվող հարկերի հարցը։

Մինչև 1901 թվի հարկային ռեֆորմը, Անդրկովկասի գյուղացիները վճարում էին հետևյալ հարկերը։

1. Ծխահարկ, որը գանձվում էր ամեն մի տնտեսությունից.
2. Հողային հարկ—հողից օգտվելու համար.
3. զեմստվային հարկ՝ ա) պետական և բ) նահանգական.
4. Հասարակական-համայնական հարկեր.
5. Եկեղեցական-կրոնական հարկեր։

Թե ինչ չափերով էին գանձվում վերոհիշյալ հարկերը գյուղացիներից, կարելի է ցույց տալ Երևանի նահանգի օրինակով։ Ըստ Ռ. Ի. Դանիլովիչի տվյալների, անցյալ դարի 90-ական թվականների վերջում Արաքսի հովտում գյուղացիների կողմից վճարվող հարկերի առավելագույն չափը կազմում էր՝ ծխահարկ—8 ռուբլի, հողային հարկ—6 ռուբլի, զեմստվային հարկեր—պետա-

---

* „Кавказский календарь“, 1886 г., отд II, стр. 8—9.

կանը՝ 5 ռ. 07 կ., նահանգականը՝ 2 ռ. 96 կ.*: Հետևաբար միայն կառավարության կողմից գանձվող հարկերը ամեն մի ծխի համար կազմում էին 22 ռուբլի։ Նույն հեղինակի տվյալներով համայնական-հասարակական հարկերը հավասար էին պետական բոլոր հարկերի 1/3-ից մինչև 1/2-ին։ Այս հիման վրա, եթե 22 ռուբլու վրա ավելացնենք հասարակական հարկերը — 10 ռուբլի, և ապա 5 ռուբլի էլ եկեղեցական հարկերը, այն դեպքում գյուղացիական ամեն մի ծխին ընկնող հարկի առավելագույն չափը հավասար կլինի 37 ռուբլու։

Պետք է մատնանշել սակայն, որ հարկերի վերոհիշյալ պաշտոնական գրանցումները և գանձվելիք գումարների չափը չէին տալիս Երևանի նահանգի և Անդրկովկասի գյուղացիության հարկային ծանրության ամբողջ պատկերը։ Իրականում հարկերն ավելի բազմապիսի էին և գյուղացիներից գանձվող գումարներն ավելի շատ։ Չխոսելով դեռևս անուղղակի հարկերի մասին, անհրաժեշտ է վերև մատնանշված ուղղակի հարկերի վրա ավելացնել մուսուլմանական բնակչությունից գանձվող հատուկ զինվորական հարկը՝ ցարական բանակին զինվոր չտալու համար, և բազմաթիվ ու բազմապիսի հարկեր և տուգանքներ, որոնցից գյուղացիությունը շնչահեղձ էր լինում։

«Վերջին 4 տարվա մեջ,— գրում էր «Շեփորի» թղթակիցը,— մեր գյուղը տվել է 10—15 անգամ տուգանք, և ցավալին այն է, որ գյուղի վրա դրված տուգանքը մի անգամ վճարելու տեղը 2—3 անգամ են վճարում»**։

Թե ինչպես էին գանձվում պետական հարկերը և մանավորապես իր անունով չափազանց «դեմոկրատական» այսպես կոչված «հասարակական կամ համայնական հարկերը», այդ կարելի է ցույց տալ կոնկրետ օրինակներով։ Յուրաքանչյուր գյուղն իր հարկերը վճարելու համար կազմում էր գյուղական ծախսերի բյուջե — կամ ինչպես ասում էին «թովջի» — տարեկան

---

* Р. И. Данилович, Араксская равнина, стр. 624։

Դանիլովիչի հաղորդագրությամբ Երևանի նահանգի գավառների մեծ մասը, մանավորապես Արաքսի հովիտը, որպես գյուղատնտեսական բարձր կուլտուրաներ արտադրող շրջան, մտնում էր հարկահանության առաջին կատեգորիայի մեջ։

** «Շեփոր», 1908 թ., № 5, էջ 7։

երկու անգամ (որոշ տեղերում երեք անգամ), որից հետո մուծ-վելիք գումարը բաժանվում էր համայնքի վրա կամ ըստ համփա-չարեքային սիստեմի*, կամ ըստ ծխերի։

Պերճ Պռոշյանն իր «Հացի խնդիր» վեպում նկարագրում է թոլչի կազմելու իրական պատկերը Աշտարակում։ Նա մատնա-նշում է, որ թոլչին կազմվում էր տանուտերի և գյուղական իշխանների կողմից։ Պետության հարկը հաշվելուց հետո տանու-տերն անցնում է «հասարակության» համար կատարված ծախ-սերին։ «Դե՛ տանուտեր դու քու արած ծախսն ասա, ձայն է տալիս թոլչի անողներից մեկը (գյուղական տզրուկներից մեկը— Օ. Հ.), տեսնենք թե աշնանից ընչանք էսօր քո քիսիդ պողի համար ինչ-քան ես մսխել»։

Տանուտերը հաշվում է՝—«Եսաուլ Մարգարին երկու շաբաթ տանս պահեցի, երբ որ եկել էր ղարատ հանելու. օրական նրա վրա ջուլ խարջ եմ արել մի-մի մանեթ, էն կանի 16 մանեթ։ Հիմի դրա վրա ավելացրեք նրա տված նեղությունները, մեր անհան-գստությունը. ես ձեր խղճմտանքին եմ թողնում»։

Թոլչի նշանակողները «խղճմտանքով» մոտենալով որոշում են 20 ռ., այնինչ տանուտերը եսաուլին պահելու համար ոչ մի կոպեկ ծախս չէր արել, այլ պահել էր նրան գյուղացիների հաշ-վին, ամեն օր մեկն ու մեկի տնից նրան ուտելիք բերելով։

Այնուհետև տանուտերը նույն եղանակով թվում է իր կա-տարած բազմաթիվ «ծախսերը» և ապա հարցնում գրագրին (տիրացուին). «Մի հաշվի տես իմ արած ծախսն ինչքան եղավ». «225 մանեթ, ասում է տիրացուն»։

---

* Համփաչարեքային սիստեմի դեպքում ամբողջ համայնքը բաժան-վում էր որոշ քանակությամբ հարկավճար միավորների։ Ամեն մի լրիվ միավորը կոչվում էր համփա. իսկ նրա քառորդը՝ չարեք համփա, կեսը՝ յարըմ համփա կամ կիսան և այլն։ Համայնքում համփաների բաժանելիս մի դեպքում հաշվի էին առնում շնչերի թիվը, և ըստ այնմ 16 անձ ունե-ցող տնտեսությունները սովորաբար կազմում էին մեկ համփա, մյուս դեպ-քում՝ տնտեսության կարողությունն անկախ շնչերի թվից և այլն։ Այսպես, օրինակ, Դանիլովիչի տվյալներով Կարխուն գյուղը բաժանված էր 46 համ-փայի. որտեղ ամեն մի համփան բաղկացած էր 20 տնից։ 149 հարկ վճարող տնտեսություններից 24 տնտեսությունը կազմում էին լրիվ համփա և վճարում պետական հարկ 19 ռ. 20 կ. ամեն մեկը, 22 ծուխ կեսական համփա և ամեն մեկը վճարում էր 9 ռ. 63 կ.։

— Ես ու իմ խղճմտանքը, որ շատ քիչ աքյած, 300 էլ կհասնի, թե որ մի քիչ աստվածդ ուրանաս, շողոքորթում էին խորհըրդական աղաները» և տանուտերի ծախսը կլորացվում է մինչև 300 ռուբլի*։

Հարկային սիստեմի ճնշումը Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիության վրա այնքան կործանիչ էր, և միաժամանակ այնքան ակնբախ, որ այդ մասին չէր կարող լռել մինչև իսկ նորին մեծության Անդրկովկասյան փոխարքա Վորոնցով-Դաշկովը։ 1907 թ. գրած իր զեկուցագրում նա ստիպված էր խոստովանելու հետևյալը.

«Հարկային ծանրության այսպիսի անհավասար բաժանումը (այսինքն երբ Անդրկովկասի գյուղացիները նրա իսկ տվյալներով տաս միլիոն դեսյատին հողի համար վճարում էին 5 միլիոն 570 հազար ռուբլի ծխահարկ և հողային հարկ, իսկ մասնավոր սեփականատերերը 5 միլիոն դեսյատին հողի համար ոչինչ չէին վճարում—Օ.Հ.)... որը գոյություն ունի կովկասյան երկրում 1843 թվից սկսած, չէր կարող համարյա թե 60 տարվա ընթացքում կորստաբեր կերպով չանդրադառնալ Կովկասի գյուղացիների տնտեսական դրության վրա և առանձնապես ժամանակավոր պարտադիր գյուղացիների վրա»**։

«Այսպիսի պայմաններում,— շարունակում է փոխարքան,— Կովկասի գյուղացիության համար միանգամայն անհնարին էր դարձել որևէ բարելավում մտցնել հողի մշակման մեջ, որ ծախսեր էր պահանջում»***։

Իրականում դրությունը շատ ավելի վատ էր, քան պատկերացնում էր ցարական սատրապը։ Իրականում գյուղացիների մեծ մասը ոչ միայն չէր կարող «որևէ բարելավում մտցնել հողի մշակման մեջ», այլև չէր կարող վերարտադրել իր տնտեսությունը։ Գյուղացու տնտեսությունը դեգրադացիայի էր ենթարկվում, գութանը փոխարինվում էր արորով, լծկան ուժեղ գոմեշները փոխարինվում էին վատ եզներով և կովերով, եռադաշտային սիստեմը փոխարինվում էր միևնույն դաշտում անընդ-

* Գ. Գուշյան, «Հացի խնդիր», էջ 151—153։

** Всеподаннейшая записка, стр. 87.

*** Նույն տեղը։

հատ միևնույն բույսը ցանելու սիստեմով, և այդ բոլորի հետևանքը լինում էր բերքատվության անկումը, գյուղացիական տնտեսությունների քայքայումն ու պրոլետարացում:

Երևանի նահանգի գյուղացիների կյանքն ուսումնասիրող կոմիտեի անդամները «միահամուռ կերպով ցույց էին տալիս, որ կյանքն ամեն տարի ավելի դժվար է դառնում, բոլոր առարկաները թանկանում են, հարկերը և տուրքերն ավելանում են, բնակչությունն աճում է, իսկ հողից բերք ստանալը ավելի դժվար է դառնում: Այսպիսի դրությունը բացատրվում է գյուղացիների պատկերավոր արտահայտությամբ նրանով, որ «հողը պառավել և վատ է ծնում»: Առաջներում հացաբույսերը տալիս էին մեկին 12—15 բերք, այժմ մեկին՝ 4—5, իսկ կան տեղեր, որտեղ բերքատվությունը մեկին 2—3-ի է հասնում: Առաջներում հողը հանգիստ էին թողնում 3—4 տարի, այժմ այդ մասին մտածել անգամ չի կարելի, հերկված են մինչև իսկ արոտավայրերը: Այդ տխուր վիճակի գլխավոր պատճառներից մեկը տեղական հողագործների կոմիտեն ընդունեց. «գոյություն ունեցող կախյալ հարաբերությունները, որոնք խանգարում են տնտեսության ամեն մի բարելավմանը»*:

Ահա և գյուղի դեգրադացիայի մի այլ պատկեր: «Այժմ,— գրում է «Գյուղատնտեսի» թղթակիցը,— 8—10 լծկանով բանող գութանը տեղի է տվել միայն 2 զույգով բանող արորին: Գոմեշը կամ բոլորովին անհետացել է, կամ շատ պակասել. գոմշամածնով էլ չի հյուրասիրում գյուղացին իր հյուրին. իսկ նախկին խոշոր, ուժեղ, կուշտ և առողջ եզների ու կովերի փոխարեն պատահում են հաճախ այնպիսի թույլ, նիհար, մանր ու վտիտ կենդանիներ, որոնց տեսնելիս մարդ զարմանում է, թե ինչպես է կարողանում գյուղացին սրանցով իր գործը յոլա տանել: Այդ բոլոր երևույթները երկրագործի աստիճանաբար աղքատանալու հետևանքն է»**:

Արտադրության գործիքների դեգրադացիայի վերոհիշյալ պայմաններում հողի մշակման եղանակը նախնադարյան մեթոդներից այն կողմը չէր անցնում:

---

* Памятная книжка Эр. губ., 1904 г., стр. 7.

** «Գյուղատնտես», 1909 թ., № 7, էջ 100—101:

5. ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ ՀԱՄԱՌՈՏ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփենք գյուղացիական ռեֆորմի արդյունքները Հայաստանում և Անդրկովկասում:

1. Ցարական կառավարությունը ստիպված լինելով իրագործել գյուղացիական ռեֆորմը Ռուսաստանում, ստիպված եղավ կիրառելու այն նաև իր գաղութներում: Սակայն այստեղ, Անդրկովկասում կիրառված տեղական ռեֆորմներն իրենց վրա կրում էին ոչ միայն ճորտատիրական-ֆեոդալական կարգերի կնիքը, այլև ցարիզմի գաղութային քաղաքականության դրոշմը: Անդրկովկասի գյուղացիությունը տեղական ռեֆորմների հիման վրա չէր ազատագրվում ճորտային և կիսաճորտային կախումից: Նրանք դառնում էին ժամանակավոր պարտավորյալ և ժամանակավոր կախյալ գյուղացիներ և շարունակում էին կատարել իրենց կալվածատերերի նկատմամբ եղած պարտավորությունները, մի դրություն, որը ըստ էության շարունակվում էր Անդրկովկասում մինչև սովետական կարգերի հաստատումը: 1864 և 1870 թվերի ռեֆորմները և ցարիզմի կողմից հետագայում ձեռնարկված միջոցառումները ամբողջովին ապահովում էին ցարական կառավարության և տեղական կալվածատիրության շահերի հետևողական պաշտպանությունը ընդդեմ Անդրկովկասի գյուղացիության: Այսպիսով, Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիական մասսաների դեմ հանդիման կանգնած էր ցարական կառավարության և տեղական կալվածատիրության միասնական ճակատը:

2. Ռեֆորմի արդյունքն եղավ այն, որ կալվածատերերն ու եկեղեցին մի կողմից, և ցարական կառավարությունը մյուս կողմից՝ էքսպրոպրիացիայի ենթարկեցին գյուղացիությանը, խլելով գյուղական համայնքներին պատկանող լավագույն հողերի հսկայական տարածությունները: Ատրեզկաների ձևով գյուղացիներից խլված հողերը հսկայական չափերի էին հասնում Անդրկովկասում: Կալվածատերերն ու եկեղեցին միասին տարբեր նահանգներում ունեին երկու և 4,7 անգամ ավելի հողային տարածություն, քան գյուղացիները: Կալվածատերերի, վանքերի և պետության ձեռքին էր կենտրոնացած Հայաստանի մշակության համար պիտանի հողային տարածության 71,7 տոկոսը: Հողազրկված գյուղացիները ստիպված էին այժմ վարձակալելու

կալվածատիրոջից, եկեղեցուց և պետությունից իրենց սեփական հողերը՝ օտրեզկաները կապալային, ստրկական պայմաններով: Այսպիսով ժամանակավոր պարտավոր և կախյալ գյուղացիները մի կողմից շարունակում էին իրենց պարտավորությունների կատարումը կալվածատերերի հանդեպ, մյուս կողմից՝ վարձակալության վճար տալիս վերջիններիս օտրեզկաններից օգտվելու համար: Հետևապես գյուղացիական ռեֆորմը ոչ միայն չբարելավեց գյուղացիների տնտեսական դրությունն, այլ է՛լ ավելի վատացրեց այն:

3. Կալվածատերերը, վանքերը և ցարական կառավարությունը հափշտակեցին ոչ միայն գյուղացիների հողը, այլև ոռոգող ջրի մեծ մասը: Զրկելով գյուղացիներին նաև ոռոգող ջրից, կալվածատերերը դրանով է՛լ ավելի ուժեղացնում էին գյուղացիների կախումն իրենցից: Այժմ Անդրկովկասի և Հայաստանի հարթավայրերի գյուղացիները իրենց տնտեսությունը վարելու համար պետք է վարձակալեին նաև ոռոգող ջուրը, առանց որի անհնարին էր հողագործությունն այդ վայրերում: Հարթավայրի գյուղացիները պետք է կատարեին իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ, պլյուս դրան վարձակալության վճարը օտրեզկաների համար, պլյուս դրան նոր վճարումներ ջրից օգտվելու համար: Այս հանգամանքը չէր կարող առավել ևս չվատթարացնել գյուղացիների տնտեսական դրությունը:

4. Այդ դեռ բոլորը չէր. գյուղացիների կեղեքումն ու ճնշվածությունը լրացվում էր ցարական կառավարության հարկային և գաղութային քաղաքականությամբ: Բազմապիսի և բազմատեսակ հարկերի, տուգանքների, կաշառակերության և չարաշահության միջոցով ցարական կառավարությունը և նրա տեղական չինովնիկները՝ նահանգապետը, գավառապետը, ոստիկանապետը, ամենավերջին եսաուլը միացած գյուղական տանուտերի, կղերի, վաշխառուի և գյուղական ցեցերի հետ ծծում էին գյուղացիների վերջին հյութը, նրան արյունաքամ անում: Շահագործողների և վամպիրների այս ամբողջ պիրամիդը ապրում էր գյուղացիների անասելի շահագործման հաշվին:

Այս բոլորի հետևանքը լինում էր այն, որ գյուղացիական տնտեսությունները մեծ մասամբ դեգրադացիայի էին ենթարկ-

վում, քայքայվում, իսկ գյուղացիական մասսաները պաուպերիզացիայի ենթարկվում։

5. Որն էր ելքը. ելքն այն էր, որ Հայաստանի և Անդրկովկասի ամբողջ գյուղացիությունը ռուսական և մյուս գաղութների գյուղացիների հետ միասին ձեռք-ձեռքի տված, պրոլետարիատի ղեկավարությամբ կատարեին ագրարային ռևոլյուցիա Ռուսաստանում, կործանելով ցարական միապետությունը և ֆեոդալիզմի մնացորդները։ Ռուսական ամբողջ կայսրության քաղաքական կյանքի առանցքն այդ ժամանակաշրջանում հանդիսանում էր ագրարային ռևոլյուցիայի հարցը, այսինքն՝ ճորտատիրության մնացորդների ոչնչացումը և դեմոկրատական կարգերի ստեղծումը։ Ագրարային ռևոլյուցիայի վճռական հաղթանակի հետ էր կապված Անդրկովկասի և մյուս գաղութների ժողովուրդների ազգային ազատագրության բախտը։

Բ. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

1. ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Այժմ մեզ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե գյուղացիական ռեֆորմը ինչպիսի ազդեցություն է թողնում Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիության վրա, նրա ներքին սոցիալական էվոլյուցիայի տեսակետից, գյուղացիական տնտեսությունների ներքին զարգացման տեսակետից, այլ խոսքով՝ անդրադառնալ այն հարցին, թե ինչ ուղղությամբ էր զարգանում գյուղացիական տնտեսությունը մեզանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին։

Գյուղացիական տնտեսությունները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում համախմբված էին գյուղական համայնքներում, որի հիմքում ընկած էր հողի համայնական-հավասարական օգտագործումը։

Հողի հավասարական օգտագործման, կամ հավասար բաշխման բնագավառում Անդրկովկասի և Հայաստանի տարբեր գավառներում, շրջաններում և գյուղերում կիրառվում էին մի շարք ձևեր, որոնցից գլխավորներն են. ա) հողի բաժանումը ըստ համփաշարեքային սիստեմի, բ) ըստ կամերալ ծխերի հաշվառման. գ) առկա եղած ծխերի համաձայն, դ) ըստ շնչերի և այլն։

Հողի բաշխման այդ բազմաթիվ ձևերը նպատակ ունեին պահպանելու հողի հավասար օգտագործման սկզբունքը, թույլ չտալու վարելահողերի, արոտավայրերի և մարգագետինների մասնավոր սեփականացումը։ Այս հանգամանքը սնունդ էր մատա-

կարարում հայկական հնչակներին և էսեռներին, ռուսական նարոդնիկների և էսեռների օրինակով կաշչելու գյուղական համայնքին որպես սոցիալիզմի սաղմը և նրա բազան։ Մինչդեռ համայնքը ոչ սոցիալիզմի բազան էր և ոչ էլ նրա սաղմը։ Նա վաղուց քայքայման էր ենթարկվում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ, ներքին հակասությունների հիման վրա։

Այդ հակասությունը այն էր, որ եթե վարելահողերը, արոտավայրերը, մարգագետինները և անտառները համայնքի անդամների մասնավոր սեփականություն չէին հանդիսանում սկզբնական շրջանում, ապա հողի մշակումը կատարվում էր մասնավոր եղանակով, առանձին տնտեսությունների մասնավոր սեփականություն հանդիսացող բանվորական ձեռքերի, լծկան անասունների և արտադրության գործիքների միջոցով։ Հողից ստացած արդյունքը ևս մասնավոր սեփականություն էր կազմում։ Այդ նշանակում է, որ գյուղական համայնքը սկզբից ևեթ խարխլվում էր ներքին հակասությունների վրա, դուալիզմի վրա — հողի ընդհանրության և մշակման մասնավոր եղանակի հակասության վրա, մի հանգամանք, որի վրա Մարքսը հրավիրում էր Վերա Զասուլիչի և մյուս նարոդնիկների ուշադրությունը։

«Չի կարելի թաքցնել,— գրում էր Մարքսը Զասուլիչին,— որ արխայիկ այն տիպը, որին պատկանում է ռուսական համայնքը, թաքցնում է ներքին դուալիզմ, որը որոշ պատմական պայմաններում կարող է իր կործանումն առաջ բերել։ Հողի սեփականությունը ընդհանուր է, բայց... ամեն մի գյուղացի արևմտյան մանր գյուղացու նման մշակում է իր դաշտը իր սեփական հաշվին։ Համայնական հողատիրության և հողի պարցելյար մշակման այս կոմբինացիան, որն օգտակար էր ավելի հեռավոր էպոխայում, դառնում է վտանգավոր մեր ժամանակներում»*։

Մարքսի կողմից ռուսական համայնքին տրված այս գնահատականը ամբողջովին վերաբերում է նաև հայկական համայնքին։ Դեռ ավելին, այստեղ ոչ միայն հողի մշակումն էր մասնավոր,

---

* Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Արխիվ, գիրք I, եջ 280.

այլև համայնական հողերի մի մասը նույնպես գյուղացիների մասնավոր սեփականություն էր դարձել դեռևս պարսիկների տիրապետության ժամանակից։ Մեզանում վաղուց ի վեր գյուղացիների մասնավոր սեփականությունն էին հանդիսանում. 1. կալատեղերը, 2. խաղողի և պտղատու այգիները և ընդհանրապես ցանկապատած հողամասերը, 3. խամահաթները — կուլտուրական մշակության վերածած խոպանները, 4. անտառից մաքրված վայրերը, 5. կառուխները — միջգյուղյան վարելահողերը և այլն*։

Հետևապես հայկական համայնքում դուալիզմն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն հողի ընդհանրության և նրա մըշակման մասնավոր եղանակի մեջ, այլև հողի մի մասի ընդհանրության և մյուս մասի մասնավոր սեփականության մեջ։ Այսպիսով համայնքի առկայությունը և հողի հավասարական բաշխումը չէր կարող կանխել հողի մասնավոր սեփականացման պրոցեսը։

Այդ պրոցեսն ավելի արագ թափով սկսեց առաջ գնալ հետռեֆորմյան շրջանում, երբ հողը մասնավոր սեփականություն էր դառնում գնման, վաճառքի, պարտքի դիմաց գրավ դնելու և այլ միջոցով։

Ո՞վ էր վաճառում և ո՞ւմ կողմից էր գնվում գյուղացիական հողաբաժինը։ Պարզ է, որ նա վաճառվում և գրավ էր դրվում անասնազուրկ, ինվենտարազուրկ և պարտքի մեջ թաղված չքավոր գյուղացիների կողմից, իսկ գնողը հանդիսանում էր ունևորը, հողի առևտրով զբաղվող անձը։ «Հողաբաժինները, ասում է Մակարովը, վաճառում են սովորաբար աղքատացող տնտեսությունները։ Գնողը հանդիսանում է երբեմն իր իսկ հարևան համագյուղացին, բայց ավելի հաճախ մասնավոր անձինք»**։

Ահա Մակարովի կողմից բերված մի շարք փաստեր այս մասին վերցված Երևանի գավառից։ Շենգավիթ գյուղում Գևորգ Շահնազարովը և Սիմոն Ազիզովը վաճառում են իրենց այգին աճուր-

---

* *Егиазаров*, „Исследования по истории учреждений в Закавказии“, ч. I, стр. 139–40.

** *Макаров*, Экономический быт гос. кр. Эриванского уезда, стр. 50.

ղով — 1,76 դես. 303 ռուբլի արժողությամբ: Գերասիմ Թարվերդովը վաճառում է իր այգին նույնպես աճուրդով—0,08 դեսյատին 150 ռուբլով: Համբարձում Կարապետյանը իր 0,52 դեսյատին այգին Մարտիրոս Ահարոնյանին մշտական ժառանգության հանձնեց 450 ռուբլի պարտքի դիմաց: Ուլուխանլու գյուղում երևանցի Հաջի Բուլաթ Սուլեյման օղլին 1880 թվին գնեց Հաջի Յաթալ օղլից և մյուսներից 2,08 դեսյատին վարելահող 900 ռուբ. արժողությամբ, Երևանի արական գիմնազիայի ուսուցիչ Միրզա Ալասքյար Իշխանովը (տեղական գյուղացի) գնեց Քյալբլար Րաֆֆի Մահմեդ Բաղալովից 0,94 դեսյատին վարելահող 500 ռուբ.: Նորագավիթ գյուղում քահանա Գևորգ Եղիազարյանը 1884 թվին գնեց գյուղացի Գևորգ Ղազարյանից խաղողի այգի 1,04 դեսյատին 500 ռուբլով, քահանա Մկրտիչ Նազարյանցը գյուղացի Ասատուր Թարվերդովից գնեց խաղողի այգի 1,76 դեսյատին 600 ռուբլու արժողությամբ և այլն: Ընդ. որում տարբեր գյուղերում, մատնանշում է Մակարովը, վաճառված է գյուղացիների օգտագործման տակ եղած պետական հողերից 68,55 դեսյատին 86 մասնավոր մարդկանց (տես նույն տեղը):

Ովքե՞ր են գյուղացիների բաժնեհողերը գնող մասնավոր անձինք: Երևանի գավառում նույն հեղինակի տվյալներով նրանց թիվը 279-ի է հասնում, որոնցից 239-ը նստակյաց կյանք են վարում պետական հողերի վրա, այսինքն հող վաճառողների համագյուղացիներն են, իսկ 40-ը ապրում Երևանում և այլ տեղերում: Այդ անձնավորություններն են՝ աղնվական դասից 79 հոգի, զինվորական դասից— 6 հոգի, քաղաքացիական չինովնիկները — 3 հոգի, հոգևորականները — 95 հոգի, առևտրականները — 2 հոգի, Երևան քաղաքի քաղքենիներ — 35 հոգի, տաճկահայեր — 2 հոգի և պարսկահայեր — 57 հոգի: Գյուղում ապրող 239 տնտեսությունները, որոնք հող են գնել, ունեն իրենց սեփական հողերը 1302 դեսյատին, լծկան անասուններ—542 գլուխ, կաթնատու խոշոր անասուններ—827 գլուխ, ձիեր—213 հատ, էշեր—39, մանր անասուններ—4475 գլուխ, ընդամենը 6096 գլուխ:

Հողի վաճառքի և գնման փաստեր գոյություն ունեին ավելի կամ պակաս չափով նաև մյուս բոլոր գավառներում:

Հողի գնումն ու վաճառքը ավելի շատ տարածված էր հարթա-

վայրերում, այգեգործական շրջաններում, որտեղ հողն ավելի արժեքավոր է և դրամական տնտեսությունն ավելի խոր արմատներ է գցել։ Կարբի գյուղում (էջմիածնի գավառ) 150 ծխից 20 տնտեսության խաղողի այգիների մի մասը վաճառված է հարևան 10 ընտանիքին։

Ի՞նչ են ցույց տալիս վերոհիշյալ փաստերը։ Նրանք ցույց են տալիս, որ գյուղացիների օգտագործման տակ եղած բաժնեհողերը (ոչ միայն այգիները, այլև վարելահողերը) մասսայական վաճառքի և գնման առարկա են դառնում։ Այդ նշանակում է, որ հողի համայնական տիրապետությունը և նրա հավասարարական բաշխումը չի կարող կասեցնել գյուղում առաջացած նոր պրոցեսը, և նա տեղի է տալիս հողի առևտրային հարաբերություններին։ Նրանք ցույց են տալիս, որ հող վաճառողը հանդիսանում է գլխավորապես կարիքից ճնշված չքավոր գյուղացին, որը համարյա թե աննշան գնով վաճառում է իր հողը։ Այնուհետև այդ տվյալները ցույց են տալիս, որ վաճառվող գյուղացիական բաժնեհողերի մեծ մասը կենտրոնանում է համայնքի շերտավորման հիման վրա ծնունդ առած կուլակի ձեռքին, և ապա այն անձնավորությունների ձեռքին, որոնք հողը գնում են առևտրական նպատակներով, որի հետևանքը լինում է այն, որ չքավոր գյուղացին զրկվում է հողից, իսկ հողը կենտրոնանում է նորածին գյուղական բուրժուազիայի ձեռքը։

Նույն ուղղությամբ էր գնում սակավահող գյուղացիների կողմից հողը կուլակներին վարձակալության տալու պրակտիկան։

Գյուղի վամպիրները, այդ աշխարհակերները, օգտվելով գյուղացիների անասնազրկությունից և կարիքից, օգտվելով երաշտից և բնական ամեն մի դժբախտությունից, իրենց ձեռքն էին կենտրոնացնում գյուղացիների հողերը։ Հողի համայնական օգտագործման և հավասարարական բաշխման ոչ մի ուժ չէր կարող կասեցնել հողի՝ կուլակների ձեռքը կենտրոնացնելու այս պրոցեսը։

Կար նաև մի ուրիշ գործոն ևս, որն առավել ուժգնությամբ էր ներգործում գյուղի շերտավորման վրա, գյուղացիական տնտեսությունների հողազրկման և հողի կենտրոնացման վրա։ Այդ գյուղացիների պարտքն էր նատուրայով և դրամով։

Սակավահողությունը, չրասակավությունը մի կողմից, անընդհատ 2—3 տարին մեկ անգամ կրկնվող երաշտն ու անբերությունը մյուս կողմից, դրան գումարած պետական օրըստօրե աճող ուղղակի և անուղղակի հարկերը երրորդ կողմից, վարձակալության սարկական պայմանների կատարումը չորրորդ կողմից և այլն,— այս բոլորը չքավոր ու միջակ գյուղացուն փողատիրոջ ու վաշխառուի գիրկն էին նետում։

Վերջիններս ուրախությամբ իրենց «օգնության» ձեռքն էին մեկնում անելանելի վիճակում գտնվող գյուղացուն և իրենց ունկանի մեջն ասում նրան։ «Գյուղացու տեղը նեղ է, իսկ մեր մանգաղը սուր» — մտածում էին փողատերն ու վաշխառուն և ճարպիկ կերպով գործի անցնում։ Մի անգամ պարտքի տակն ընկած գյուղացին աշխատում էր ազատվել նրանից, նա ձկան նման թպրտում էր, բայց ի զուր, վամպիրն այնպես էր հյուսել իր թակարդը, որ պարտքատերը կարողանար այնտեղից դուրս պրծնել, նա խեղդամահ էր անում նրան։

Որքան կարիքավոր էր լինում գյուղացին, և նրանց թիվը շատ, այնքան արյունռուշտ էր դառնում փողատեր-վաշխառուն, այնքան նա ուժգնորեն էր սեղմում իր թակարդն ընկած գյուղացու կոկորդը։ Նա հանդիսանում էր գյուղում փողի մենաշնորհատերը, ուստի և պարտք տրվող դրամի տոկոսները ոչ մի բանով չէին սահմանափակվում։ Ռուբլուն 25—30 և մինչև իսկ 40—50 տոկոս, իսկ երաշտ տարիներին մեկին երկու վերցնելը սովորական երևույթ էր գյուղում։ Այդ ձևով վաշխառուն յուրացնում էր մանր արտադրողի ոչ միայն հավելյալ աշխատանքի արդյունքը, այլև անհրաժեշտ աշխատանքի արդյունքի մեծ մասը և որ գլխավորն է իր ձեռքն էր գցում չքավոր գյուղացու ունեցվածքը՝ նրա հողը, անասուններ, ինվենտարը և այլն։

Եթե նախառեֆորմյան շրջանում վաշխառուն նպաստելով գյուղի քայքայմանը չէր ստեղծում արտադրության նոր եղանակ, ապա հետռեֆորմյան շրջանում, նոր պայմաններում վաշխառուն իր մեջ մարմնավորելով վաշխառուի և կուլակային-կապիտալիստական արտադրողի միասնության տիպը, մանր արտադրողների քայքայման հիման վրա ստեղծում է իր կուլակային տնտեսությունը։

Եվ որքան խորն էր գնում գյուղի շերտավորումը, այնքան ուժեղանում էր վաշխառու-կուլակը և որքան նա ուժեղանում էր, է՛լ ավելի ուժգնորեն էր արտահայտվում գյուղի քայքայումը, պարտք ունեցող գյուղացիների թիվը։

«Արաքսի հովտում սակավ է պատահում այնպիսի գյուղ,—ասում է Դանիլովիչը,—որը ազատ լիներ պարտքից։ Հաճախ բոլոր ծխերի ¼-ից—կեսը գյուղում ծանրաբեռնված են պարտքերով, որոնք երբեմն մեծ չափերի են հասնում»։ «Ձրանգանոց գյուղում,—շարունակում է նույն հեղինակը,—գյուղացիները հայտարարեցին, որ իրենց գյուղի 77 ծխից միայն 5 ծուխն է ազատ պարտքից*։ Այդպես էր նաև դրությունը Կողբ գյուղում և բազմաթիվ այլ գյուղերում։ Նույն վիճակում էին գտնվում Անդրկովկասի մյուս նահանգների գյուղացիները։

Եվ ահա վաշխառու-կուլակի կողմից մանր արտադրողին տրված դրամական կամ նատուրալ պարտքը հանդիսանում է տնտեսական մի նոր զենք վերջինիս հողազրկելու և նրա ունեցվածքը հափշտակելու համար։

Նույն Ցռանգանոց գյուղի մասին Դանիլովիչը հայտնում է, որ այնտեղ «հողի կեսը գրավ է դրված և նրանց տերերը ոչ մի եկամուտ չեն ստանում դրսից»։ Այս մասին զեկուցում է նաև Էջմիածնի առաջին գավառամասի պրիստավը։ Նա գավառապետին հայտնում է, որ իր գավառամասի բոլոր հողերի 4/5-րդը գրավ և կրկնագրավ է դրված։ Կողբ գյուղի 339 ծխից 105-ը զրկվել են իրենց բաժնեհողից պարտքերի պատճառով։

Սակայն վաշխառու-կուլակը չի բավարարվում միայն մանր արտադրողի հողի բռնագրավումով. նա իր շոշափուկները դեպի պարտատիրոջ անասուններն է ուղղում, դեպի նրա ունեցածն ու ինվենտարը, դեպի նրա հանապազօրյա հացը և վերջապես դեպի անմիջական արտադրողը, նրան իր ստրուկը դարձնելու նպատակով։

Ահա վաշխառուի ցանցում թպրտացող գյուղացու մի նկարագիր՝ տրված Մ. Պետրոսյանի կողմից։ «Խեղճ գյուղացին հերկում է,

* Р. И. Данилович, Аракская равнина, стр. 624.

ցանում է, հնձում է, կալսում է, արյան քրտինք է թափում, այժմ երբ հասունացած պտուղը ամբարել է հարկավոր, դեռ համը չտեսած ուղղակի կալից իր աչքի առաջ անգթաբար ահագին խաներով չափում են ցորենը, որը գուցե թաղարը ծախվում է 6 ռուբլիով... Նա կանգնած է քաղցած, տեսնում է թե ինչպես յուր սիրելի հատիկները արագ-արագ լցվում են խանը, ապա չվալը. կարծես յուր միսից են պոկում։ Նրա աչքից հորդ-հորդ թափում են արտասուքի կաթիլներ, թրջելով տանջված ու այրված երեսը։ Կանգնած են նրա մոտ կինն ու երեխաները, ցնցոտիների մեջ, որոնք նույնպես խեղճ-խեղճ վզները ճկած նայում են թե ինչպես իրենց կալը դատարկվում է, թե ինչպես իրենք ամբողջ ձմեռը մնալու են առանց հացի։ Նրանք իսկ վախենում են, ամբողջ մարմնով դողում են, տիրում է լռություն, որին խանգարում է համրողի միակերպ ձայնը՝ մեկ, երկու, երեք...»*։

Այստեղ տեղին է հիշել Հայկական ժողովրդական մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի խոսքերը՝

«Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից հողից հաց քամե,
Բեռով հացը հարուստին տա,
Հարուստն ուտե, վայելե»։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ ուղղությամբ էր գնում գյուղատնտեսական արտադրության մյուս կարևոր ճյուղի՝ անասնապահության օգտագործման պրոցեսը գյուղում։

Մենք արդեն տեսանք վերևում, որ ինչպես չքավոր գյուղացիների հողազրկումը, նույնպես և հողի կենտրոնացումը կուլակների ձեռքին խիստ կերպով կապված է անասնապահության հետ, առավելապես լծկան անասունների հետ։ Քննենք այս հարցը ավելի մոտիկից։

Վերցնենք Երևանի նահանգի այնպիսի գավառ, որտեղ անասնապահությունը հացահատիկից հետո առաջին տեղն է գրավում, Նոր-Բայազետի գավառը և Շարուրի ու Դարալագյազի գավառամասերը։

1884—1885 թթ. Նոր-Բայազետի հյուսիս-արևմտյան մասում անասնազուրկ գյուղացիները հաշվվում էին ընդամենը

* Մ. Գեռոսյան, Ղազախի գյուղացիների ներկա դրությունը, «Մուրճ» № 9, 1896 թ.։

7,4%։ Տասը տարուց հետո, 1894 թվին այդպիսիների թիվը արդեն բարձրանում է 22%, իսկ ամբողջ գավառում անասնազուրկ գյուղացիները կազմում են 29%-ը։ Այսպես ուրեմն, ընդամենը 10-ը տարվա ընթացքում անասնազուրկ գյուղացիների թիվը աճում է 3—4 անգամ։ Էջմիածնի և Երևանի գավառների լեռնային մասերում, որտեղ անասնապահությունը հանդիսանում է հողագործության գլխավոր ճյուղերից մեկը, գյուղացիների անասնազրկումը 42—47%-ի է հասնում։

Ճիշտ է, անասնազրկման բարձր տոկոսը վերջին երկու գավառների լեռնամասերում բացատրվում է որոշ չափով 1894—1895 թ. թ. երաշտով, բայց մի բան պարզ է, որ երբ չքավոր գյուղացին մի անգամ զրկվում է անասունից, նա հազիվ թե կարողանա նորից անասնատեր դառնալ հետագայում։ Այսպիսով, անասնապահությամբ զբաղվող երեք գավառներում գյուղացիների անասնազրկումը 29-ից 47%-ի է հասնում։ Իսկ թե ինչքա՛ն էր մեկ լծկան կամ մեկ կով, կամ մի քանի ոչխար ունեցող տնտեսությունների քանակը, և ինչքան անասուններ ունեին կուլակային տնտեսությունները, դժբախտաբար այս մասին տեղեկություններ չկան։

Այդ բացը մենք կարող ենք լրացնել Ա. Վ. Պարվեցկու՝ ամբողջ Երևանի նահանգի վերաբերյալ տվյալներով։ Նրա տվյալների համաձայն Շարուրի շրջանում լծկան անասունների թիվը 2061 գլխի է հասնում։

Ըստ տնտեսական խմբերի անասունները բաշխված են եղել այսպես*.

Շրջանի ընդամենը 1476 տնտեսությունից՝

1.	Լծկան անասուններ չունեն	818	տնտ.	կամ	55,4%
2.	Ունեն միայն մեկ գլուխ անասուն	375	»	կամ	25,4%
3.	» » երկու » »	221	»	կամ	15%
4.	» » 3—4 գլուխ »	45	»	կամ	3%
5.	» » 5—6 » »	5	»	կամ	0,3%
6.	» » 6-ից բարձր »	12	»	կամ	0,7%

* *А. В. Парвецкий*, Эк. быт гос. кр. северозападной части Шарура и восточной части Даралагаза, Ш. Даралагазского уезда Эр. губернии, стр. 136. См. материалы, т. IV, ч. II.

Տվյալները ցույց են տալիս, որ ամբողջ տնտեսությունների 55%-ը անասուններից զուրկ են, հետևապես հնարավորություն չունեն իրենց բաժնեհողը մշակելու։ Այնուհետև այդ տվյալները ցույց են տալիս, որ ամբողջ գյուղացիական տնտեսությունների 80%-ը (անասնազուրկ և մեկ գլուխ անասուն ունեցողները) ունեն ընդամենը 375 գլուխ անասուն կամ լծկան անասունների միայն 15%-ը, 15% կազմող միջակային տնտեսությունները ունեն 442 գլուխ կամ անասունների 21,47%-ը, իսկ ընդամենը 4% կազմող ունևոր տնտեսությունների ձեռքին կենտրոնացված է 1264 գլուխ կամ բոլոր անասունների 63,5%-ը։

Այժմ տեսնենք կաթնատու խոշոր եղջերավոր անասունների բաշխումը գյուղացիական տարբեր խմբերի միջև նույն շրջանում*։ Շրջանի 5091 խոշոր կաթնատու անասունները բաշխվում են հետևյալ կերպ՝

1.	Տնտեսություններ, որոնք չունեն կաթնատու անասուններ,	588	տնտ.	կամ	37%
2.	» որոնք ունեն մեկական անասուն	239	տնտ.	»	18%
3.	» » » երկու անասուն	270	»	»	17%
4.	» » » 3—6 անասուն	292	»	»	18%
5.	» » » 6—11 »	88	»	»	5%
6.	» » » 11—20 »	17	»	»	1,0%
7.	» » » 20—25 »	3	»	»	0,2%

Տվյալները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների 55%-ը (անասնազուրկ և մեկական անասուն ունեցողները) ունեն ընդամենը 293 գլուխ կթի անասուն, կամ ամբողջ կաթնատու անասունների 5,75%։ 17% միջակային տնտեսությունները ունեն 540 գլուխ անասուն, կամ ամբողջ կթի անասունների 10,8%։ Եթե 3—6 գլուխ կաթնատու անասուն ունեցող 18% կազմող տնտեսությունների կեսը —146 տնտեսություն կամ 9%-ը նույնպես միջակային տնտեսություն հաշվենք, ամեն մի տնտեսության վրա հաշվելով երեքական անասուն, ապա այդ դեպքում միջակային տնտեսությունների տոկոսը կբարձրանա մինչև 26-ի, իսկ նրանց ունեցած անասունների քանակը կհասնի

* А. В. Парвецкий, նույն տեղը, էջ 138—39։

978 գլխի, կամ ամբողջ կաթնատու անասունների 19%-ի, մինչդեռ 15,2% կազմող կուլակային տնտեսությունները իրենց ձեռքումն են կենտրոնացրել ամբողջ կաթնատու անասունների 3820 գլուխ կամ 74,5%։

Ինչ վերաբերում է մանր անասունների բաշխմանը Շարուրի շրջանում, ապա Պարվիցկին մատնանշում է հետևյալը. «Շարուրի գյուղերում մանր անասունները գտնվում են բացառապես հարուստ տնտեսություններում, որոնք կազմում են Շարուրի հետազոտման ենթարկված տնտեսությունների 14%-ը» (նույն տեղը, էջ 139)։ Հենց այդ 14%-ն էլ իրենց ձեռքումն են կենտրոնացնում 20.976 գլուխ մանր անասուններ, կամ ամբողջ կաթնատու մանր անասունների 100%-ը։

Այժմ վերցնենք նույն տվյալները Դարալագյազի — ավելի խիստ արտահայտված անասնապահական շրջանի — վերաբերյալ։ Այստեղ հետազոտված 1330 տնտեսություններից՝

1. Լծկան անասուն չունեն	256	տնտես.	կամ	19%
2. Մեկական անասուն ունեն	122	»	»	9%
3. Երկուական անասուն ունեն	211	»	»	17%
4. Երեքից չորս անասուն ունեն	447	»	»	34%
5. Հինգից վեց անասուն ունեն	225	»	»	16%
6. Յոթից 12 անասուն ունեն	69	»	»	5%

Այստեղ աշխատող անասուն չունեցողները ավելի նվազ տոկոս են կազմում Շարուրի համեմատությամբ։ Անասնազուրկ տնտեսությունները մեկական անասուն ունեցող տնտեսությունների հետ միասին կազմում են հետազոտված բոլոր տնտեսությունների 26%-ը։ Սրանց վրա պետք է ավելացնել նաև այն տնտեսությունները, որոնք երկուական լծկան անասուն ունեն։ Խիստ արտահայտված անասնապահական ռայոնում երկու լծկան ունենալը ցուցանշական չէ նրանց միջակային տնտեսության մեջ ընդգրկելու համար։ Հետևապես չքավոր գյուղացիները այս դեպքում կկազմեն բոլոր տնտեսությունների 46%-ը։ Դարալագյազի շրջանում ավելի ուժեղ չափով է արտահայտված միջակ գյուղացիների քանակը, որոնք ունեն 3—4 գլուխ լծկան անասուն և կազմում են բոլոր գյուղացիների 34%-ը։ Ունևոր և կուլակային տնտեսություն-

ները կազմում են 20%-ը։ Դժբախտաբար այս դեպքում Պարվեցկին չի տվել լծկան անասունների ընդհանուր քանակը, որպեսզի մենք կարողանայինք դուրս բերել ամեն մի խմբին ընկնող անասունների ընդհանուր քանակը և տոկոսը։ Այդ բանը կարելի է ցույց տալ կաթնատու անասունների տվյալներով։ Ուսումնասիրված գավառամասի խոշոր կաթնատու անասունների քանակը 3882 գլուխ է հավասար։ Նրանք ըստ տնտեսությունների բաշխվում են հետևյալ կերպ՝

1.	Տնտեսություններ, որոնք չունեն կաթնատու				անասուն	332	տնտ.	կամ	25%
2.	»	որոնք ունեն		մեկական	»	179	»	»	12%
3.	»	»	»	երկուական	»	227	»	»	17%
4.	»	»	»	3—6	»	408	»	»	30%
5.	»	»	»	6—11	»	170	»	»	12%
6.	»	»	»	11—20	»	13	»	»	1%

Վարվելով նույն եղանակով ինչպես վերևում, այսինքն ի մի համախմբելով կաթնատու անասուն չունեցողները մեկական և երկուական անասուն ունեցողների հետ, որոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են չքավորական տնտեսություններ,—նրանք միասին կազմում են բոլոր տնտեսությունների 57%-ը։ Սրանց ձեռքումն է գտնվում բոլոր կաթնատու անասունների միայն 16,3%-ը։ Որ միջակային տնտեսությունները Դարալագյազում ավելի ուժեղ է արտահայտված, ցույց է տալիս նաև այս աղյուսակը։

Գյուղի շերտավորումը Դարալագյազում է՛լ ավելի որոշակի է արտահայտված մանր անասունների բաշխման բնագավառում։ Մանր կաթնատու անասուններ չունեցող տնտեսությունների թիվը 47%-ի է հասնում, 10 գլուխ ունցողներինը—13,8%-ի, 20 գլուխ ունեցողներինը— 13,7%-ի, 40 գլուխ ունեցողներինը—11,8%-ի, 70 գլուխ ունեցողներինը— 5,8%-ի, 100-ինը— 4%-ի, 200-ինը— 2,4%-ի, 400-ինը— 0,9%-ի, 600-ինը— 0,2%-ի և 800-ինը— 0,2 տոկոսի*։

Ընդամենը 49 խոշոր տնտեսություններ, որոնք ունեն 200 և ավելի կաթնատու մանր անասուններ, իրենց ձեռքումն են կենտ-

* Парвецкий, նույն տեղը, էջ 138.

ցանացրել 15200 գլուխ անասուն կամ բոլոր կաթնատու մանր անասունների 40%-ը, մինչդեռ գյուղացիական տնտեսությունների 47%-ը զրկված է մանր անասուններից։ Ահա թե ինչպես է բաշխվում անասունները գյուղացիական տարբեր խմբերի միջև։

Դուրս է գալիս, որ գյուղի 15—20 տոկոսը կազմող կուլակային տնտեսությունները իրենց ձեռքում են կենտրոնացնում լծկան և կաթնատու անասունների 65—75 տոկոսը և մանր անասունների ավելի մեծ մասը։ Դուրս է գալիս, որ լծկանազուրկ և կաթնատու անասուն չունեցող գյուղացիական տնտեսությունները, մեկական կթան և մեկական լծկան անասուն ունեցողների հետ միասին կազմելով գյուղի գերակշռող մեծամասնությունը, իրենց տրամադրության տակն ունեն անասունների 20—25 տոկոսից ոչ ավելի։ Ահա գյուղացիական տնտեսությունների զարգացման պատկերը հետռեֆորմյան շրջանում անասնապահական շրջաններում։

Գյուղացիական տնտեսությունների բևեռացումը անասնապահության գծով գնում է ոչ միայն քանակական ցուցանիշների ուղղությամբ, այլև որակական ցուցանիշների ուղղությամբ։ Նույնը տեղի է ունենում նաև վարելահողի գծով։ Կիսաքաղց գյուղացին ոչ մի հնարավորություն չունի պարարտացնելու իր հողը։ Պարարտացման միակ նյութը գյուղում՝ գոմաղբը մեզանում ամբողջովին օգտագործվում էր որպես վառելանյութ։ Գյուղացին հնարավորություն չուներ ըստ ամենայնի պահելու և կերակրելու իր անասունները, բարելավելու նրանց տեսակը, ցեղը և այլն։ Վատ է ապրում գյուղացին, վատ է ապրում նաև նրա անասունը, ցածր է նրա գյուղատնտեսական տեխնիկան, նվազ է անասնապահությունից և հողագործությունից ստացված եկամուտը։ Եվ ընդհակառակը՝ լավ է ապրում գյուղացին, հարուստ է նա, լավ է ապրում նրա անասունը, բարձր է նրա տեխնիկան, բարձր է ուրեմն անասնապահությունից և հողագործությունից նրա ստացած եկամուտը։ Այսպես է խոշոր և մանր տնտեսության, կուլակային և չքավոր տնտեսության զարգացման օրենքը ապրանքային և ապրանքա-կապիտալիստական տնտեսության պայմաններում։

Մենք աշխատեցինք ցույց տալ գյուղի շերտավորումն ու նրա կապիտալիստական զարգացումը հողի գնման ու վաճառքի, հողի վարձակալության և պարտքի դիմաց գրավ դնելու փաստերով։ Այդ

բոլորը ցույց տվին գյուղատնտեսության արտադրության գլխավոր միջոցներից մեկի՝ հողի կենտրոնացման պրոցեսը կուլակների ձեռքում և չքավորների հողազրկումը։ Այնուհետև մենք ցույց տվեցինք, որ շերտավորման այդ պրոցեսը ավելի որոշակի կերպով գնում է անասնապահության գծով թե՛ քանակական և թե որակական ցուցանիշներով։ Կասկածից դուրս է, որ այդ պրոցեսը տեղի է ունենում նաև գյուղատնտեսական ինվենտարի գծով, երբ չքավոր գյուղացին ինվենտարազրկվում է, իսկ կուլակը այն իր ձեռքումն է կենտրոնացնում։ Շերտավորումը գնում է նաև կողմնակի դատումների գծով, երբ կուլակը բացի գյուղատնտեսությունից զբաղվում է նաև արդյունաբերությամբ և առևտրով, իսկ չքավորը բատրակությամբ։

Այժմ մենք պետք է քննության առնենք հետևյալ հարցը։ Ո՞ւր էր գնում ինքնուրույն տնտեսություն վարելու աղբյուրից դուրս ընկած գյուղացին։ Փրկու՞մ էր արդյոք նրան հողը գրավ դնելը, կամ տարեկան պայմաններով պարտք վերցնելու միջոցառումները։ Ո՛չ երբեք, ոչ մի բան չէր կարող այդ ուղղությամբ նեցուկ հանդիսանալ չքավոր գյուղացուն պահպանելու իր մանր սեփականատիրական տնտեսությունը և նա աստիճանաբար պրոլետարացման էր ենթարկվում, նա պրոլետար էր դառնում գյուղում կամ քաղաքում, իսկ դա հանդիսանում էր գյուղի կապիտալիստական զարգացման գլխավոր ցուցանիշը։

Տնտեսապես քայքայված, ընչազուրկ դարձած գյուղացին ստիպված էր վարձու աշխատանքի դիմելու։ Դաշտավայրում, կամ ինչպես ընդունված էր մեզ մոտ ասելու— «արանում»— տեխնիկական կուլտուրաների զարգացած շրջաններում չքավոր գյուղացին մեծ մասամբ իր «համագյուղացու» մոտ էր վարձվում և ավելի քիչ կոնտինգենտ էր դուրս թողնում Երևանի նահանգից։ Լեռնաբնակ շրջաններում պրոլետարացման ենթարկված գյուղացին մի կողմից Արարատյան դաշտավայրն էր իջնում աշխատելու, բայց մյուս կողմից ավելի մեծ կոնտինգենտ բաց թողնում Երևանի նահանգից դուրս։

Թե ի՞նչ ուղղությամբ էր գնում գյուղի շերտավորումը Երևանի նահանգում, դրա վրա որոշ լույս է սփռում 1897 թվի մարդահամարի տվյալները։ Ահա այդ տվյալները.

*Ազգաբնակության բաժանումը ըստ տնտեսությունների**

Գավառները	Գյուղացիական տնտեսությունների թիվը	Վարձու բանվորներ ունեցող տնտեսությունների թիվը	Բանվորների քանակը նրանցում			
			1	2—3	4—5	6—10
Երևանի	17774	927	839	83	3	2
Ալեքսանդրապոլի . .	16189	249	211	33	4	1
Նախիջևանի	15060	477	395	45	7	—
Նոր Բայազետի . . .	13127	246	203	39	4	—
Սուրմալուի	11884	118	91	22	5	—
Շարուր-Դարալագյազի	10993	342	304	31	6	1
Էջմիածնի	16395	730	671	54	3	2
Ընդամենը	101422	3089	2714	307	32	6

Տվյալներից պարզվում է, որ Երևանի նահանգի 101 422 գյուղացիական տնտեսություններից վարձու բանվորներ ունեն 3089 տնտեսություն, կամ բոլոր տնտեսությունների ավելի քան 3%-ը, ըստ որում վարձու բանվորներ ունեցող տնտեսությունների ավելի մեծ կոնտինգենտ է տալիս Երևանի գավառը— 5,2% և Էջմիածնի գավառը—4,4%, մի հանգամանք, որը ցույց է տալիս այդ գավառների գյուղացիական տնտեսությունների ավելի խոր շերտավորումը։

Կասկածից դուրս է, որ մարդահամարի տվյալները ցույց չեն տալիս վարձու բանվոր ունեցող տնտեսությունների լրիվ պատկերը։ Այստեղ ընդգծված են միայն այն տնտեսությունները, որոնք մշտական վարձու բանվորներ են պահում, մինչդեռ հայտնի է, որ կուլակային տնտեսությունների մի զգալի մասը ավելի մեծ թվով սեզոնային վարձու բանվորներ էին պահում։

Առավել ևս այդ տվյալները չեն տալիս վարձու բանվորների

* Աղյուսակը կազմել ենք „Памятная книжка Эр. губ. на 1906 г.", отд. IV, 162—163 էջերի տվյալներից։

ընդհանուր քանակի լրիվ պատկերը, նախ այն պատճառով, որ վարձու բանվորները, գյուղական պրոլետարների մեծ մասը վերջնականապես կտրված չլինելով իրենց ողորմելի տնտեսությունից վարձվում էին սեզոնային աշխատանքի ժամանակ միայն, իսկ մյուս մասն էլ աշխատանք չգտնելով գյուղում նահանգի քաղաքներն էր գնում, կամ նահանգից դուրս այլ վայրեր էր գնում, խտացնելով քաղաքի պրոլետարիատի շարքերը։

Գյուղից դուրս, այլ վայրերում աշխատանքի գնացող վարձու բանվորների քանակի մասին մենք լրիվ տվյալներ չունենք։ Այդ մասին որոշ գաղափար կարող է մեզ տալ ոստիկանական վարչության տվյալները գնացողներին անցագրեր տալու մասին։

Նոր-Բայազետի ոստիկանական վարչության տվյալներով 1890 թվի հունվարից մինչև օգոստոս ամիսը, այսինքն 8-ամսվա ընթացքում այլ վայրեր գնալու համար անցագրեր են վերցրել ընդամենը 122 հոգի։ Հետագա տարիներին խիստ կերպով աճում է վկայական վերցնողների թիվը։

1891 թ. տրվել է 550 վկայական։
1892 թ. » 1171 »
1893 թ. » 1242 »
1894 թ. հունվար-հունիս ամիսներին՝ 524 վկայական։

Ինչպես երևում է տվյալներից 1892—93 թ. թ. վկայական ստացողների թիվը 1891 թվի համեմատությամբ աճում է 2-ից 2 և կես անգամ, իսկ եթե այն համեմատելու լինենք 1890 թվի տվյալների հետ, ապա աճումը հավասար կլինի 6—7 անգամի (հաշվելով այդ թվի համար 180 վկայական)։ Այսպիսով ընդամենը 4 տարվա ընթացքում կողմնակի զբաղմունքների գնացողների թիվը աճում է 6—7 անգամ։

Նույնպիսի պատկեր է տալիս մեզ Բամբակ-Ղարաքիլիսայի գավառի տվյալները։ 1893 թվականին վկայականներ են ստացել 570 հոգի, իսկ 1894 թվականին արդեն 1593 հոգի, այսինքն աճը մոտ երեք անգամ։

Կասկածից դուրս է, որ վերը բերված տվյալները ոչ մի դեպքում չեն տալիս կողմնակի զբաղմունքների գնացողների լրիվ պատկերը, նախ այն պատճառով, որ բոլոր գնացողները չէին որ իրենց ապահովում էին օրինական անցագրերով, նամանավանդ, որ այդ

պխների ձեռքբերումը որոշ դրամական ծախսերի հետ էր կապված։ Նրանց մեծ մասը գնում էր առանց անցագրերի, գյուղական տանուտերի վկայաթղթերով միայն։ Երկրորդ, այն պատճառով, որ գնացողների պետական հաշվառումը մեզանում դեռ նոր էր։ Բամբակ-Ղարաքիլիսայի գավառում նա սկսել էր կիրառվել միայն 1893 թվից, հետևաբար չէր կարող ընդգրկել գնացողների ողջ կոնտինգենտը։ Իրականում կողմնակի դատումների գնացողների թիվը շատ ավելի մեծ էր, քան պաշտոնական տվյալները այդ մասին։

Կողմնակի դատումների էին գնում ոչ միայն լեռնամասի շրջանները, այլ համարյա թե բոլոր գյուղերից անխտիր կերպով։

«Տասը տարի է ինչ գոռում ենք,— գրում է գյուղատնտես Աթանեսյանը,— գյուղը դատարկվում է, աշխատող ձեռքերը թողած գութանի մաճն ու հողը, իրենց հայրենի գյուղը, գնում են օտարություն...

Տասը տարի...

Ինչ՞ւ տաս և ոչ թե տասնհինգ-քսան...

Քոչում են ու քոչում այնքան մինչև որ այժմ եթե մտնեք մեր գյուղերը, մանավանդ լեռնային սարի գյուղերը 100 տղամարդի մեջ 20 հոգի չահել չեք գտնի, բոլորը քոչել, գնացել են փող աշխատելու, գլուխ պահելու, քյուլֆաթ պահելու, գնացել են... քաղաքների զավոդները բանվորություն անելու... իսկ գյուղում մնացել են 50-մինչև 90 տարեկան ծերունիները, կանայք և երեխաները և այն՝ մինչև 15—16 տարեկանը։ Այդ հասակն առնում է թե չէ գյուղացի պատանին, գյուղի չահելը, թողնում է գյուղը և գնում իր նման հազարավորների հետևից... փող աշխատելու...» («Գյուղատնտես», 1909 թ., № 13, Ա. Աթանեսյան, «Ի՞նչ է ցանում հայ գյուղացին» հոդվածը)։

Կողմնակի դատումների գնացողների այս ակնբախ երևույթը չէին կարող չտեսնել գյուղն ուսումնասիրող ցարական պաշտոնական չինովնիկներն անգամ։ «Այն մարդկանց թիվը,— ասում է Դանիլովիչը,— որոնք կողմնակի դատումների են գնում, յուրաքանչյուր տարի աճում է... Երևանի գավառում մի շարք տնտեսությունները հարց են բարձրացրել բոլորովին Անդրկասպյան մարզը տեղափոխվելու մասին»։ Չքավոր գյուղացիների դրությունն

այն ատրիճան անելանելի էր, որ նրանք գերադասում էին թողնել իրենց հայրենի օջախը և օտար հորիզոններ հեռանալ, կարծելով, որ այնտեղ նրանք տանելի պայմաններ կգտնեն իրենց համար։

Հետաքրքրական է Դանիլովիչի բերած աղյուսակը Երևանի նահանգի հինգ գավառների՝ Էջմիածնի, Երևանի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի և Սուրմալուի գավառների գյուղերից գնացողների համար բաց թողնված անցագրերի տվյալներով*։

Այդ հինգ գավառների լեռնամասերից և դաշտավայրերից անցագրեր են տացել՝

	1891 թ.	1892 թ.	1893 թ.
6 ամսով	1911 մարդ	2063 մարդ	2611 մարդ
1 տարով	2167 »	2160 »	2256 »
2 »	307 »	300 »	222 »
3 »	161 »	132 »	147 »
Ընդամենը՝ . . .	4546	4655	5236

Ի՞նչ են ցույց տալիս ստացած անցագրերի տվյալները։ Նրանք նախ ցույց են տալիս գնացողների անշեղ աճը յուրաքանչյուր տարի։ Այնուհետև նրանք ցույց են տալիս ավելի մեծ աճ 6 ամսով գնացողների վերաբերյալ։ Սրանք գլխավորապես այն գյուղացիներն են, որոնք տարվա միայն որոշ ժամանակաշրջանում են աշխատում գյուղում իրենց տնտեսության մեջ, իսկ մնացած ժամանակաշրջանում կողմնակի աշխատանքի դիմում։ Այդ նշանակում է, որ նրանք այլևս սեփական տնտեսությամբ յոլա գնալ չեն կարող և կողմնակի աշխատանքը դառնում է նրանց ապրուստի գլխավոր միջոցը։ Սրանց թիվը քանի գնում աճում է։

Քանակի տեսակետից 2-րդ տեղը բռնում են մեկ տարով գր-

---

* Данилович, Араксская равнина, стр. 604.

5—105

նացողները, որոնք նույնպես աճում են, թեև ավելի դանդաղ քան 6 ամսով գնացողները։ Սրանք արդեն այն գյուղացիներն են, որոնք ամբողջ տարով են բացակայում գյուղից, հետևապես և իրենց ամբողջ բախտը կապում կողմնակի գատումների հետ։ Այնուամենայնիվ նրանք դեռևս չեն կտրվում գյուղից, բարենպաստ պայմաններում նրանք կվերադառնան որոշ ժամանակ գյուղում աշխատելու Երկու և երեք տարով գնացողները անհամեմատ ավելի քիչ են առաջինների նկատմամբ, բայց սրանք կողմնակի գատումների գնացողների այն կոնտինգենտն են, որոնք իրենց բախտը ամբողջովին կապել են վարձու աշխատանքի հետ։ Գյուղի հետ սրանք միայն ձևական կապ են պահպանում և ամեն մի պատեհ դեպքում վերջնականապես խզում իրենց կապերը գյուղից։

Այս տվյալները նույնպես ոչ մի դեպքում չեն տալիս գյուղի պրոլետարացման լրիվ պատկերը։ Մեզ հայտնի չէ ավելի մեծ շառավիղ ընդգրկող տարիների տվյալներն անցագրեր տալու մասին։ Ոստիկանական վարչության տվյալներն ընդգրկում են 1890-ից 1894 թվերը, այսինքն ընդամենը 3—4 տարի։ Այնուամենայնիվ եղած տվյալներն էլ շատ որոշակի գաղափար կարող են տալ մեզ գյուղի պրոլետարացման մասին։ Եթե անցագրերի բացթողումը 2—3 տարվա ընթացքում տալիս է այդպիսի աճ, ապա այն շատ ավելի մեծ կլինի հետագա հինգ-տաս-տասնհինգ տարիների ընթացքում։ Այսպիսի եզրակացությունը կասկածի ոչ մի առիթ չի կարող տալ, քանի որ գյուղի կապիտալիստական զարգացման տենդենցը ավելի ևս աճում է հետագա տարիներին։

Ո՞ւր էր գնում իր հայրենի օջախից կտրվող, պանդխտության դիմող գյուղացին։ Նա գնում էր Բաքու, Բաթում, Կրասնովոդսկ, Սեծովյան նավահանգիստները, Ռուսաստանի ավելի հեռավոր քաղաքները և եթե «ուժ» ուներ՝ հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Նա պատրաստ էր մեծ զրկանքներով ամեն տեղ գնալու, որտեղ նա կարող էր մի կտոր հաց հայթայթել իր ընտանիքը պահելու համար։ Գյուղը նրա համար խորթ մայր էր դարձել և քշում էր նրան դեպի հեռավոր հորիզոնները։

Ամփոփելով 2-րդ գլխի առաջին հոդվածի տվյալները, մենք կարող ենք հետևյալ եզրակացություններն անել.

1. Հակառակ հայ մեշչանական, մանրբուրժուական սոցիալիստների՝ գյուղական համայնքի մասին ունեցած վարդագույն պատրանքների, նա (գյուղական համայնքը) քայքայվում էր, ինչպես այն քայքայվում էր Ռուսաստանում, նրա կեղևի տակն առաջացած «պառակտումը» ավելի խորանում էր, ծնունդ տալով երկու ծայրահեղ բևեռների առաջացմանը։ Մի բևեռում առաջ էր գալիս հսկայական մասսա կազմող գյուղի չքավորությունը, մյուս բևեռում՝ աննշան քանակ կազմող կուլակությունը։ Միջակ գյուղացիությունը աստիճանաբար տարրալուծվում էր, է՛լ ավելի ստվարացնելով գյուղական չքավորության շարքերը։ Նրանցից միայն «բախտավոր» անհատներին էր հաջողվում կուլակների շարքն ընկնել։

2. Նոր աճած գյուղական բուրժուազիան ամենաբարբարոս շահագործման էր ենթարկում հողից, անասունից և ունեցվածքից զրկված չքավոր գյուղացիությանը։ Վերջինս կորցնելով իր տնտեսական ինքնուրույնությունը, վարձու աշխատանքի էր դիմում, վերածվելով գյուղական պրոլետարի։ Հետևապես գյուղում առաջ էր գալիս սոցիալական պատերազմի մի նոր ճակատ ևս, ներքին ճակատ՝ դա գյուղական չքավորության, գյուղական պրոլետարիատի և կուլակության միջև եղած պատերազմի ճակատն էր։

Այսպիսով, Անդրկովկասի և Հայաստանի գյուղն իր ներքին էվոլյուցիայով կապիտալիզմի զարգացման նույնպիսի պրոցես էր ապրում, ինչպիսին ապրում էր ռուսական գյուղը։ Տարբերությունն այստեղ կարող է միայն տեմպի մեջ լինել։

2. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես էր ազդում Ռուսաստանի արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը հետռեֆորմյան շրջանում ցարական Ռուսաստանի գաղութների վրա ընդհանրապես և նրա Անդրկովկասյան գաղութի վրա մասնավորապես։ Այս հարցի սպառիչ պատասխանը տրված է Վ. Ի. Լենինի տնտեսագիտական հանճարեղ աշխատության՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքում՝

«...Ռուսական կապիտալիզմը,—ասում է Լենինը,—Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում: Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակեցված, կամ այն լեռնականներով բնակեցված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր, և պարոն Կտրոնն անգթորեն հանում էր հպարտ լեռնականի վրայից նրա բանաստեղծական ազգային զգեստը և զարդարում եվրոպական լակեյի զգեստով (Գլ. Ուսպենսկի)։ Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին և նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցեսը (որը վարագուրվում էր հողագործական բնակչության աճումով)։ Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվի 350.000-ից աճեց մինչև 900.000-ի 1897 թվին (Կովկասի ամբողջ բնակչությունը 1851 թվից մինչև 1897 թիվը աճեց 95 տոկոսով)։ Մենք կարիք չենք զգում ավելացնելու, որ նույնը կատարվել է և կատարվում է թե՛ Միջին Ասիայում, թե՛ Սիբիրում և այլն»*։

Այսպիսով ռուսական կապիտալիզմի ազդեցությունը Կովկասի վրա արտահայտվում էր նրանում, որ՝

1) նա Կովկասը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ էր ներգրավում և օգտագործում այն որպես շուկա և հումքի բազա իր գործարանների համար.

2) որ Կովկասը համաշխարհային տնտեսության և պատմության մեջ մտնելով դառնում էր նավթարդյունաբերողների և ֆաբրիկանտների երկիր.

3) որ Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսը հետռեֆորմյան շրջանում զուգորդվում էր քաղաքային բնակչության աճմամբ։

Քննության առնենք առաջին հարցը, այն հարցը, թե ինչպես ռուսական կապիտալիզմը ներգրավելով Անդրկովկասը համաշ-

* Լենին, Երկեր, հատ. III, Հայ. հրատ., էջ 674—675 1938 թ.։

խարհային ապրանքաշրջանառության մեջ, վեր էր ածում այն իր գործարանների շուկայի։ Մենք արդեն մատնանշել ենք, որ ցարիզմին չհաջողվեց Անդրկովկասը գրավելուց հետո նվաճել այն տնտեսապես առաջին 60—70 տարվա ընթացքում։ Այս մասին մենք ունենք Լենինի ուղղակի մատնանշումը։ Կովկասի «տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից,—ասում էր Լենինը,—շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այդ նվաճումը լրիվին չի ավարտված մինչև այժմ էլ» (Լենին, նույն տեղը, էջ 673)։

Անդրկովկասի և Կովկասի տնտեսական նվաճումը ցարական Ռուսաստանի կողմից սկսվեց միայն ռուսական կապիտալիզմի զարգացմամբ։

Հանդես գալով հասարակական թատերաբեմի վրա, ռուսական երիտասարդ բուրժուազիան բնականաբար ներքին շուկաների հետ միասին առաջ էր քաշում նաև արտաքին շուկայի հարցը. արտաքին շուկայի հարցը ոչ այն պատճառով, որ անհնարին էր ընդհանրապես կապիտալիստական արտադրության պրոդուկտների իրացումը ներքին շուկայում,—ինչպես այդ աշխատում էին ապացուցել նարոդնիկները, այլ «այն հանգամանքով, որ կապիտալիզմն ի վիճակի չէ արտադրության միևնույն պրոցեսները նախկին չափերով, անփոփոխ պայմաններում կրկնելու (ինչպես այդ լինում էր մինչկապիտալիստական ռեժիմների ժամանակ), որ նա անխուսափելիորեն տանում է դեպի անսահման աճումն արտադրության, որը գերաճում է նախկին տնտեսական միավորների հին ու նեղ սահմանները» (Լենին, նույն տեղը, էջ 671—672)։

Կապիտալիստական արտադրության անհավասարաչափ զարգացումը նույնպես առաջ է մղում արտաքին շուկաների հարցը։ Արտադրության այս կամ այն ճյուղի զարգացումը մյուսների համեմատությամբ չի կարող տեղում կանգնած մնալ, նա ձգտում է տնտեսական հին շրջանակների սահմաններից դուրս գալ, նոր միջավայր որոնելով իր համար։

Ահա թե ինչու խանձարուրից դուրս եկած ռուսական բուրժուազիան հրամայաբար առաջ էր քաշում արտաքին շուկաների հարցը և նախ և առաջ իր սեփական գաղութների շուկաների նվաճման հարցը, այդ գաղութների շահագործման հարցը։

Ռուսաստանի կողմից Անդրկովկասի վրա ունեցած տնտեսական թույլ ազդեցությունը—տնտեսական սերտ կապի բացակայությունը, երկաթուղային տրանսպորտի բացակայությունը և այլն—միանգամայն աննպաստ պայմաններ էին ստեղծում Անդրկովկասի շուկան ռուսական բուրժուազիայի կողմից օգտագործելու ուղղությամբ։

Անդրկովկասի առևտրականներն անմիջապես կապվում էին ոչ թե Պետրոգրադի, Մոսկվայի և Ռուսաստանի արդյունաբերական այլ քաղաքների հետ, այլ ծովի վրայով՝ Մարսելի, Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Վիեննայի հետ, այնտեղից ստանալով իրենց ցանկացած ապրանքները։ Այս երևույթը անհանդուրժելի էր ռուսական բուրժուազիայի համար և նա խիստ կերպով բողոքում է այդ բանի դեմ, առաջ քաշելով Անդրկովկասի տնտեսական նվաճման հարցը։

Ռուսական բուրժուազիայի ցանկությունների արտահայտող Անդրկովկասյան մամուլը շատ բաց և որոշակի բողոքում էր Անդրկովկասի շուկան նվաճելու դանդաղկոտության դեմ։

«Մեզ մնում է սպասել, որ ծնվեր ինչ որ մի նոր Կոլումբոս, որը կարդալով բոլոր պաշտոնական տվյալները, որոնք տպագրվում են ֆինանսների և առևտրի մինիստրների կողմից, վերջապես բաց աներ Կովկասի առևտրական նշանակությունը, որն ապացուցեր մեր հայրենական արդյունաբերության և առևտրի նախաձեռնողներին այն պարզ ճշգրիտ թվերից բխող ճշմարտությունը, որ մեզնից հեռու գտնվող Չինաստանի շուկան, Պարսկաստանի շուկան, Միջին-Ասիական շուկան ամեն մեկը առանձին և բոլորը միասին վերցրած Ռուսաստանի համար ավելի քիչ կարևորություն ունեն, քան թե նրա քթի տակն ընկած Կովկասի շուկան»։ Այսպես էր դնում հարցը «Կավկազսկի կալենդարի» խմբագրությունը 80-ական թվականների սկզբներին*։

Կովկասը այն ժամանակ նույն «Կովկասյան կալենդարի» տվյալներով ուներ 5.387.000 բնակիչ, իսկ Պարսկաստանը 5 միլիոն։ Հետևապես Կովկասը որպես շուկա ավելի մեծ շրջանակներ ուներ, քան թե Պարսկաստանը,—դատում է կալենդարի խմբագրությունը։ Մինչդեռ մինչ այդ Կովկասը օգտագործվում էր միայն որպես տրանզիտային երկիր Պարսկաստան ապրանք տեղափոխե-

* Кавказский календарь, 1880 г., отд. II, стр. 45—46.

լու համար, այն էլ ոչ թե ռուսական, այլ եվրոպական ծագում ունեցող ապրանք։

«Մեր ենթադրությունների և դատողությունների մեջ,— ասում է խմբագրությունը,— մենք մոռանում ենք Կովկասի մասին և նպատակ ենք դնում հեռավոր Պարսկաստանի առևտրի մասին, չնայած այն բանի, որ բոլոր ռուսական ապրանքները կարող են Պարսկաստան հասնել ոչ այլ կերպ, քան Կովկասի վրայով և որ մենք չենք կարող լցնել Պարսկաստանի շուկան ռուսական ապրանքներով ավելի շատ, քան թե այդ ապրանքներով մենք կլցնենք Կովկասի շուկան»*։

Այսպիսով ռուսական բուրժուազիան ամբողջ հասակով մեկ առաջ էր քաշում կովկասյան շուկայի տիրապետման հարցը, այնտեղից օտարերկրյա կապիտալին դուրս մղելու հարցը, Կովկասը ռուսական բուրժուազիայի համար տնտեսապես նվաճելու հարցը։ Այդպիսի պլացդարմը միայն կարող էր հաստատ հիմք հանդիսանալ նրա դեպի Պարսկաստանը կատարվող ագրեսիային։ Թողնել սեփական գաղութը օտարերկրյա կապիտալի ազդեցության տակ և նրա վրայով ձգտել նվաճելու պարսկական շուկան ռիսկոտ մի քայլ էր ռուսական բուրժուազիայի համար։ Ահա թե ինչու նա առաջ էր քաշում նախ կովկասյան շուկայի տիրապետման հարցը։

Ռուսական բուրժուազիայի գործարար շրջանները չէին սահմանափակվում միայն կովկասյան շուկայի նվաճման ընդհանուր հարցադրումով։ Նրանք առաջ էին քաշում կոնկրետ ձեռնարկումներ, որոնք պետք է ապահովեին այդ պլանի իրագործումը։

Առաջին և գլխավոր ձեռնարկումն այդ ուղղությամբ դա երկաթուղային շինարարությունն էր Անդրկովկասում։ Առանց երկաթուղային տրանսպորտի ստեղծման անհնար էր Անդրկովկասը անտեսապես սերտ կերպով կապել Ռուսաստանի հետ, ուստի և ռուսական բուրժուազիան ձեռնամուխ էր լինում այդ գործին։

Երկաթուղիների կառուցումն Անդրկովկասում սկսվում է դեռևս 1867 թ. մասնավոր կապիտալի կողմից և հետագայում ողջ շինարարությունը մինչև 1889 թիվը շարունակում է մնալ մասնավոր կապիտալի ձեռքին։ Փոթի—Թիֆլիս երկաթուղագիծը բացվում է 1876 թվին։ Այնուհետև կառուցվում է Թիֆլիս—Բաքու երկաթու-

---

* Նույն տեղը, էջ 51.

գծի, որն ավարտվում է 1883 թվին։ Նույն այդ ժամանակաշրջանում կառուցվում են Ռիոն—Քութայիս (1877 թ.), Բաքու—Սուրախանի—Սաբունչի (1880 թ.) երկաթուղու ճյուղերը, ապա Սամթրեդի—Բաթումի գիծը 1883 թ., Քութայիսի—Տկվիբուլի ճյուղը 1887 թվին և այլն։

1889 թվից կառուցված և կառուցվելիք բոլոր երկաթուղիները պետության ձեռքն էին անցնում։ Ռուսական կապիտալիզմի շահերը միաձուլվում էին ցարական դեսպոտիզմի շահերին, «ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի» շահերին, նրա ագրեսիվ քաղաքականությանը։ Այդ բանից հետո սկսվում է Անդրկովկասի երկաթուղային շինարարության մի նոր շրջան, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև ռազմա-ստրատեգիական նշանակություն։ 1899 թվին ավարտվում է Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս երկաթուղու կառուցումը։ Այնուհետև 1902 թվին ավարտվում է Ալեքսանդրոպոլ—Երևան և ապա 1908 թվին Երևան—Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղագծերի կառուցումը և այլն։

Երկաթուղային շինարարության զուգընթաց և նրա հետևից կրնկակոխ Կովկաս էր ներխուժում ռուսական և արտասահմանյան կապիտալը։ Ռուսաստանից Անդրկովկաս ներմուծվող ապրանքները հեղեղում էին անդրկովկասյան շուկան, դուրս մղելով ասիական, միջնադարյան տնայնագործությունն ու արհեստագործությունն այնտեղից։ «Տեղի էր ունենում,—ասում է Լենինը,— բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների դուրս մղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր զենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից և Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի, սոդայի, կաշիների տնայնագործական մշակումն և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին պատրաստվում ռուսական գործարաններում, որոնք իրենց շինվածքները Կովկաս էին ուղարկում» (Լենին, հատոր 3-րդ. էջ 674)։

Արտասահմանյան կապիտալը հաստատուն դիրքեր էր նվաճում հայթայթող արդյունաբերության մեջ։ Շվեդական Նոբել եղբայրները և անգլիական Ռոտշիլդը արմատավորվում էին նավթարդյու-

նաբերության մեջ, ֆրանսիական կապիտալը և գերմանական Սիմենսը պղնձի արդյունաբերության մեջ, բելգիական կապիտալը Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղածի կառուցման մեջ և այլն։ Այս բոլորը տնտեսական հեղաշրջում էին առաջ բերում Կովկասում։ Նա մտնում էր, ինչպես արդեն ասել ենք, համաշխարհային և համառուսաստանյան ապրանքաշրջանառության ոլորտի մեջ։ Տնայնագործության դուրս մղման հետ միասին աճում էր տեղական հայթայթող արդյունաբերությունը, աճում էր քաղաքային բնակչությունն ու առևտուրը, սկսում էին խարխլվել հին նահապետական տնտեսական հարաբերությունները և որ գլխավորն է Բաքվում, Թիֆլիսում և այլ քաղաքներում ծնունդ էր առնում Անդրկովկասյան պրոլետարիատը, ռուսական ընդհանուր պրոլետարիատի անվեհեր ջոկատը։ Այսպես էր ռուսական և արտասահմանյան կապիտալի ազդեցությունն Անդրկովկասի վրա արդյունաբերության բնագավառում։

Ինչպիսի՞ ազդեցություն էր թողնում նա Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գյուղատնտեսության զարգացման վրա։

Դեռևս 70-ական թվականների վերջում և 80-ական թվականների սկզբին Անդրկովկասի տիրապետող հասարակական մտքի շրջանակներում վեճ էր գնում այն մասին, թե գյուղատնտեսական ինչպիսի՞ գլխավոր կուլտուրայի գծով պետք է զարգանա Անդրկովկասի գյուղատնտեսությունը, կամ ավելի ճիշտը Անդրկովկասը ինչպիսի՞ կուլտուրայի արտադրությամբ պետք է համաշխարհային շուկա մտնի։ Այս ուղղությամբ տեղի էին ունենում հատուկ ուսումնասիրություններ, դիսկուսիաներ և զեկուցումներ, և տիրապետող հասարակական միտքը այն տեսակետին էր հարում, որ Անդրկովկասի գյուղատնտեսությունը պետք է համաշխարհային շուկայում հանդես գա գլխավորապես հացահատիկային արտադրությամբ։

Մեր ձեռքի տակ է գտնվում տնտեսագիտական գիտությունների, դոկտոր Ա. Արասխանյանցի զեկուցումը այդ հարցի առթիվ «Закавка зская хлебная торговля (прошлое, настоящее и будущее)» — կարդացած «Անդրկովկասյան գյուղատնտեսական ընկերության» նիստում 1887 թվին։

Ո՞րն է Արասխանյանցի զեկուցման գլխավոր հարցը։ Ապացուցել, որ Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացումը

համաշխարհային շուկայում նրա հանդես գալը պետք է գնա հացահատիկների արտադրության և արտահանության ուղիով: Վրա է հասել «Մեր ցորենի առևտրի նոր էպոխա», «Մեզանում արտահանվող հացի առևտրի էրան»*—ասում է Արասխանյանցը և այս հիման վրա վարդագույն գույներով նկարագրում է Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, հեռանկարներ, որոնք պետք է «բարձրացնեն հացի գինը և ավելացնեն նրա դրամական արժեքը», «որոշ շարժում և փոփոխություն» մտցնեն պետական հարկերի մեջ հօգուտ պետության, խթանեն ոռոգման գործը, ավելացնեն «գյուղացիների դրամական միջոցները» և այլն և այլն (տես նույն տեղը, էջ 45. ընդգծումներն իմն են— Օ. Հ.):

Իր այսպիսի եզրակացությունների համար Արասխանյանցը հիմք է ընդունում 1885 և 1886 թվերի Անդրկովկասի հացի արտահանության տվյալները: Այդ թվերին առաջին անգամ Անդրկովկասից արտասահման էր էքսպորտի ենթարկվել (Թյուրքիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ավստրալիա և այլն) մոտ 6½ միլիոն փութ հացահատիկ (ցորեն և գարի), որից 5 ½ միլ. փ. միայն 1886 թվին: Նույն այդ ժամանակաշրջանում հացի գները Անդրկովկասում բարձրացել էին մեկ երրորդով, 50 տոկոսով և շատ տեղերում կրկնակի չափերով:

Եվ ահա հացի գների բարձրացման այս կոնյունկտուր տվյալներից դոկտոր Արասխանյանցը միանգամայն սխալ եզրակացություններ է հանում, մատնանշելով գների հետագա անփոփոխելիության մասին, հացի գների կայունացման մասին:

«Ցորենի գները բարձրացան Եվրոպայի համաշխարհային գների հետ համակերպվելով,—ասում է Արասխանյանցը,—իսկ Եվրոպայի համաշխարհային շուկաներում անհրաժեշտ չափով ուսումնասիրված տնտեսական պատճառների շնորհիվ հացի գները այն օրվանից ի վեր, որ նա միջազգային առևտրի և կոնկուրենցիայի առարկա դարձավ, այլևս փոփոխության չի ենթարկվում, որոնք հայտնի էին Եվրոպային միայն նախորդ դարերում և մինչև ներկա հարյուրամյակի երեսնական թվականներին»**:

Նույն այս սխալ տեսակետը նա կրկնում է բազմաթիվ անգամ-

---

* „Труды Кавказского общ-ва с. х.“, январь 1887, № 1, стр. 41, 78.

** Տես „Труды“, էջ 39:

Զեկուցման 55-րդ էջում մենք կարդում ենք հետևյալը. «...Մեր ավելորդ հացի արտահանումը, հացի միևնույն շատ թե քիչ հաստատուն գների պայմաններում, որոնք գոյություն ունեն Եվրոպայի առավել արդյունաբերական երկրներում, բնական և արտաքին առևտրական արգելքներ գոյություն չունեն ոչ այժմ և չեն սպասվում նաև հետագայում»*: Այստեղ Արասխանյանցը հանդես է բերում իր լիակատար անտեղյակությունը Եվրոպայում գոյություն ունեցող հացի առևտրի և շուկայական հարաբերությունների մասին:

Ամբողջ խնդիրը հենց այն է, որ ոչ մի ժամանակ հացի գները համաշխարհային շուկայում այսպիսի ուժեղ փոփոխությունների չեն ենթարկվել, որքան այն կատարվում է այն ժամանակից ի վեր, երբ հացը միջազգային առևտրի և մրցման առարկա է դառնում:

Առավել ևս գների փոփոխություններ տեղի ունեին հենց այն ժամանակաշրջանում, որի մասին գրում էր Արասխանյանցը: Հայտնի է, որ 1875—1895 թ. թ. անդրօվկիանոսյան և ռուսական էժան հացի մրցության, ապրանքային հացի գերարտադրության հիման վրա տեղի ունեցավ առաջին ագրարային ճգնաժամը Եվրոպայում: Այդ ճգնաժամը ընդգրկել էր հացահատիկային տնտեսությունը և իր արտահայտությունն էր գտնում խիստ կերպով արտահայտված հացի գների անկման և լայն գյուղացիական տնտեսությունների քայքայման մեջ:

Հացի համաշխարհային գների անկումն այդ ժամանակաշրջանում (1875—1895 թթ.) հանրածանոթ փաստ է: Պրոֆ. Լյաշչենկոյի տվյալներով** այդ ժամանակաշրջանում ցորենի գները համաեվրոպական շուկայում ընկան 51 տոկոսով, գարունը— 39 տոկոսով, տարեկանինը— 18 տոկոսով: Անգլիայում ցորենի մեկ տոննը 225 մարկից իջավ մինչև 134 մարկի. Ֆրանսիայում— 235 մարկից 162 մարկի. Պրուսիայում— 145-ից մինչև 124 մարկի և այլն:

Նույն այդ բանը տեղի ունեցավ նաև Ռուսաստանում: Ահա այդ մասին եղած թվական տվյալները***:

---

* Նույն տեղը, էջ 55—56. ընդգծումը մերն է:

** Лященко, „Социальная эволюция с. х.“, 1930 г., т. II, стр. 212.

*** Նույն տեղը:

Տարիները	Աշնան ցորեն	Հաճար	Տարեկան	Միջինը բոլորի համար
1881	—	58	62	80
1883	109	82	57	78
1885	81	63	60	67
1887	85	49	58	53
1894	51	41	35	42

Այսպիսով, հակառակ Արասխանյանցի բարի ցանկությունների, Եվրոպայի հացի շուկայում գոյություն չուներ հացի գների «քիչ թե շատ հաստատուն» վիճակ։ Ընդհակառակը ճգնաժամը ընդգրկել էր ողջ հացահատիկային տնտեսությունը և գները կատաստրոֆիկ կերպով ընկնում էին։

Կապիտալիզմը կարողացավ հաղթահարել առաջին ագրարային ճգնաժամը՝ գյուղատնտեսության ծանրության կենտրոնը տեղափոխելով հացահատիկային տնտեսությունից անասնապահության բնագավառը, ռացիոնալիզացիայի միջոցով, արտադրության ծախսերը խիստ կերպով կրճատելով և այլ միջոցներով։

Ինչպե՞ս էր ազդում համաշխարհային ագրարային ճգնաժամը և հացի մրցությունը Անդրկովկասի հացի արտահանության վրա։ Մի անգամ հացի համաշխարհային շուկայական հարաբերությունների մեջ մտնելով, Անդրկովկասը չէր կարող հետագայում չենթարկվել նրա ազդեցությանը, իր վրա չկրել նրա դրական և բացասական կողմերը։ Առավել ևս նա չէր կարող չենթարկվել ռուսական էժան հացի ազդեցությանը։ Անդրկովկասում ծավալվող երկաթուղային շինարարությունը Արասխանյանցի կողմից դիտվում էր միմիայն որպես դրական մի քայլ հացի արտահանությունը դեպի Եվրոպա արագացնելու համար։ Սակայն նա մոռանում էր այն հանգամանքը, որ Անդրկովկասը հանդիսանում էր ռուսական ցարիզմի գաղութը, որ երկաթուղային շինարարությունը մեզանում, կապելով Անդրկովկասը Ռուսաստանի հետ, ընդարձակ հնարավորություններ էր ստեղծում ռուսական հացի ներմուծման համար դեպի Անդրկովկաս։ Այս երևույթը չէր կարող չանդրադառնալ հացի գների անկման վրա Անդրկովկասում, նրա արտա-

հանության վրա և ընդհանրապես Անդրկովկասի գյուղատնտեսության ապրանքայնության վրա։

Անդրկովկասի ապրանքային գյուղատնտեսության զարգացումը հետագայում գնաց Արասխանյանցի և նրա համախոհների հակառակ ուղղությամբ։ Երկաթուղային շինարարությունը Անդրկովկասում հնարավորություն տվեց ռուսական հացի առևտրականներին արագ կերպով ընդարձակել հացի ներմուծումը և ստիպել Անդրկովկասի արտահանողներին կրճատել հացի արտահանությունը։

Այդ են վկայում հացի արտահանության և ներմուծման տվյալները հետագա տարիներում։ Ահա այդ տվյալները*.

Տարեթվերը	Արտահանում	Ներմուծում
1891	4.368.000 փ.	785.000 փ.
1892	3.962.000 »	769.000 »
1893	2.595.000 »	3.904.000 »
1894	2.200.000 »	2.783.000 »
1895	3.059.000 »	2.005.000 »
1896	202.000 »	1.696.000 »
1897	1.839.000 »	1.556.000 »
1898	1.612.000 »	1.618.000 »
1899	1.493.000 »	1.505.000 »
1900	2.356.000 »	2.592.000 »

Թվերը ցույց են տալիս հացի արտահանման կրճատման և ներմուծման ավելացման ընդհանուր տենդենցը։ 90-ական թվականների վերջում պահպանվող արտահանությունը Անդրկովկասից գնում էր գլխավորապես հացահատիկային մի կուլտուրայի՝ եգիպտացորենի ուղղությամբ։ Հետագա տարիները տալիս են հացահատիկային ներմուծման նոր վերելք, որոնք իրենց քանակով շատ ավելի գերազանցում են Անդրկովկասի հացի արտահանման ամենաբարձր տարիների տվյալներին։ Այսպես օրինակ՝ միայն ցորենի ալյուրի ներմուծումը տարբեր ճանապարհներով տեղի է ունեցել՝

* Кавказское с. х. 1899, стр. 197. и „Краткий обзор коммерческой деятельности Зак. жел. дор“.

1902 թվին	. . . . .	3.055.000 փ.
1905 »	. . . . .	3.037.000 »
1908 »	. . . . .	4.621.000 »
1912 »	. . . . .	5.720.000 »

Այսպիսով հասկանալի է, որ Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացումը ապրանքային հացի գծով կրախի մատնվեց։ Ռուսական հացը ոչ միայն դուրս մղեց Անդրկովկասը հացի արտահանության շուկայից, այլև ամուր դիրքեր գրավեց հենց Անդրկովկասի ներքին շուկայում. Անդրկովկասի գյուղատնտեսության առաջ դրված էր այժմ երկընտրանք՝ կամ շտեմնված տեմպով ուժեղացնել ապրանքային հացի արտադրությունը և մրցման կարգով դուրս մղել ռուսական հացը Անդրկովկասից, կամ թե չէ վերակառուցել գյուղատնտեսությունը զարգացման այլ ուղիով։

Գնալ առաջին ուղիով Անդրկովկասը չէր կարող։ Նա չէր կարող մրցել ռուսական էժան հացի հետ, մնում էր ընտրել երկրորդ ճանապարհը՝ գնալ տեխնիկական կուլտուրաների զարգացման ուղղությամբ, այսինքն հարմարվել առևտրական հողագործության *պահանջներին, հարմարվել ապրանքային գյուղատնտեսության մասնագիտացման համառուսական պահանջներին։*

Անդրկովկասի տեղագրական և կլիմայական պայմանները ընդառաջ էին գնում այդ պահանջներին։ Նա մասնագիտանում է բամբակի, այգեգործության, գինեգործության, ծխախոտի, թեյի, բրնձի և այլ տեխնիկական կուլտուրաների գծով և դրանցով հանդես գալիս ռուսական և համաշխարհային շուկայում։ Բամբակի գծով մասնագիտացման ենթարկվեցին Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները, ծխախոտի գծով՝ առավելապես Սուխումը, թեյի գծով՝ Բաթումի մարզը, խաղողի և գինեգործության գծով՝ Թիֆլիսի, Քութայիսի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգները։

Այդպես էր ընդհանուր գծերով ռուսական, և ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային կապիտալիզմի ազդեցությունը Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման վրա։

Երևանի նահանգի գյուղատնտեսությունը չէր կարող խույս տալ այդ ազդեցությունից։ Նրա առանձին շրջանները նույնպես մասնագիտացման են ենթարկվում որոշ կուլտուրաների ուղղությամբ

և այդ պրոդուկցիայով հանդես գալիս ռուսական և արտասահմանյան շուկայում։

Գլխավոր կուլտուրան, որով Հայաստանը հանդես էր գալիս ռուսական և համաշխարհային շուկայում — դա բամբակն էր, որի ուսումնասիրությանն էլ մենք այժմ անցնում ենք։

3. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ՝ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Բամբակի կուլտուրան Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում շատ հին է. նա գոյություն ուներ Հայաստանում անհիշատակ ժամանակներից սկսած, ըստ երևույթին տեղափոխված լինելով Պարսկաստանից և մասնավորապես Եգիպտոսից, որը հանդիսանում էր բամբակի հայրենիքը։ Գյուղացիները բամբակը ցանում էին գլխավորապես սպառողական նպատակներով՝ ամեն ոք իր հումքից, բամբակից պատրաստում էր իր ընտանիքի համար պահանջվող հագուստը և սակավ դեպքում միայն գործ ունենում շուկայի հետ։

Բամբակագործության նոր վերելքը Հայաստանում և Անդրկովկասում սկսվում է 60-ական թվականներից, կապված այս անգամ բամբակի առևտրի միջազգային շուկայական հարաբերությունների հետ։ 1861—65 թվերին Ամերիկայի Միացյալ Նահանգներում առաջացած քաղաքացիական պատերազմի հետևանքով Եվրոպայի և Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերությունը զրկվում է Ամերիկայից բամբակի հումք ստանալու հնարավորությունից։ Տեղի է ունենում բամբակի գների խիստ վերելք միջազգային շուկայում, 1861—62 թվերին Լիվերպուլում բամբակի փութը բարձրանում է մինչև 18 ռ. 20 կ.։ Չտեսնված չափերով բամբակի գինը բարձրանում է Եվրոպայում։ Եթե անգլիական ֆունտ բամբակը Նյու-Յորքի շուկայում 1859—60 թ. թ. վաճառվում էր 31 ռ. 37 կոպեկ, ապա 61—62 թ. թ. բարձրանում է 60 ռ. 80 կ., 62—63 թ. թ. —130 ռ. 80 կ., 63—64 թ.թ.—197 ռ. 21 կ., 64—65 թ.թ.—162 ռ. 1 կոպեկի, որից հետո միայն սկսում է իջնել։ Այս կապակցությամբ բամբակի գների խիստ վերելք է տեղի ունենում նաև Ռուսաստանում և Անդրկովկասում։ Մինչև քաղաքացիական պատերազմը Ամերիկայում, բամբակի փութը Մոսկվայի և Նիժնի-Նովգորոդի շուկայում վաճառվում էր 4—5 ռ., 1864 թվին նա վաճառվում է ար-

դեն 22—23 ռ., Անդրկովկասում 1862 թվին մի փութ բամբակը շուկայում վաճառվում էր 17 ռ. 50 կ., իսկ Թիֆլիսի շուկայում՝ 19 ռ. 50 կ.—20 ռ. նախկին 3—3,5 ռ. փոխարեն։

«Բամբակի սովը, ասում է Պետրովիչը, խիստ կերպով ազդեց ռուսական արդյունաբերության վրա. 1857 թ. կենտրոնական Ռուսաստանում կար 57 մանարան, 1863 թվին նրանց թիվը իջավ 35-ի։ 659 մանածագործարանից 1863 թվին աշխատում էին 338-ը միայն»*։

Այս բոլորը չէին կարող խիստ նպաստավոր պայմաններ չստեղծել առևտրային բամբակագործության զարգացման համար Հայաստանում և Անդրկովկասում։ Գների չտեսնված բարձրացումը շլացնում էր թե կալվածատիրոջը, թե կուլակին և թե մանր արտադրողին։ Սկսվեց «բամբակացանության տենդը։ Հայաստանում կտրատվում էին անտառները, կրճատվում էին հացաբույսերը և նրանց տեղը բամբակ ցանվում, խոպան մնացած դաշտերը մշակվում էին։ Հողային բոլոր տարածությունները, որոնք պիտանի էին բամբակագործության համար և ապահովվում էին ոռոգող ջրով, բամբակի դաշտերի վերածվեցին։ Տենդն այնքան ուժեղ էր և բարձր գները այնքան գրավիչ, որ Երևանի նահանգում ցանում էին տների հողե կտուրների վրա անգամ» — մատնանշում է Պետրովիչը (տես նույն աշխատությունը, էջ 11)։

Այս բոլորի հիման վրա տեղի ունեցավ բամբակի ցանքադաշտերի ընդարձակում և նրանից ստացվող բամբակի բերքի խիստ աճում*։ 1861 թվի 30,000 փթի փոխարեն՝

1862 թվին արտադրվեց	. . . .	60.000 փ.
1863 » »	. . . .	150.000 »
1870 » »	. . . .	270.000 »

Այսպիսով ընդամենը 9-ը տարվա ընթացքում բամբակի համախառն բերքը Երևանի նահանգում աճեց 900 տոկոսով կամ 9-ը անգամ։ Այս չտեսնված տեմպ էր այն ժամանակների համար։ Անդրկովկասը 1862 թվին մուտք էր գործում բամբակի վաճառքի համաշխարհային շուկա։ Նույն թվին 6000 փ. բամբակ է արտահանվում Կոստանդնուպոլիս և միանգամայն նպաստավոր գներով վաճառվում այնտեղ։

---

* П. Петрович. Նույն աշխատությունը, էջ 10։

* П. Петрович. Նույն տեղը։

Ռուսական տեքստիլ արդյունաբերությունը, որը ինչպես տեսանք վերևում, խիստ կերպով ուժեղ էր բամբակի սովից, չէր կարող աչքաթող անել Անդրկովկասը, բամբակի հումքի հայրենական գաղութը։ Ռուսական տեքստիլ արդյունաբերության ներկայացուցիչները և բամբակի առևտրով զբաղվողները Անդրկովկաս են ներխուժում։ 1877—1878 թվերին Երևանի նահանգում գնվում և Ռուսաստան է ուղարկվում Լոձի, Պողնանի ֆիրմայի կողմից 8.000 հակ բամբակ (հակը = 7½ փութ), Մոսկվայի Կարզինկինի ֆիրմայի կողմից 6000 հակ, Մոսկվայի Ալեքսեևի ֆիրմայի կողմից 4000 հակ, այնուհետև Թիֆլիսի ֆաբրիկանտ Ջիթախովի կողմից սեփական գործարանի համար— 5000 հակ, առևտրական Գեվորգովի կողմից Մոսկվայում վաճառելու համար — 5000 հակ, առևտրական Գուլգարովի կողմից — 2000 հակ, տարբեր մանր առևտրականների կողմից Մոսկվայում և Նիժնի-Նովգորոդում վաճառելու համար — 10.000 հակ և այլն**։

Ռուսական արդյունաբերական կապիտալիզմը իր ազդեցության էր ենթարկում Անդրկովկասը ոչ միայն որպես շուկա իր արտադրանքը այնտեղ վաճառելու համար, այլ նաև որպես հումքի բազա։ Նա ազդում էր գյուղատնտեսության զարգացման ուղղության վրա և գերազանցապես առևտրային հողագործության զարգացման վրա։ Մինչև 60-ական թվականները բամբակը Երևանի նահանգում, ինչպես և Անդրկովկասում արտադրում էին գլխավորապես ներգյուղյան սպառման նպատակների համար, այժմ նա արտադրվում էր արտագյուղյան շուկայի համար, վաճառվում միջազգային և ռուսական շուկայում։ Սրանում է կայանում բամբակագործության զարգացման կարևորությունը մեզանում։

Սակայն 1876 թվից սկսած մինչև 83 թվերը բամբակի ցանքատարածությունները և նրանից ստացվող բերքը Երևանի նահանգում, ինչպես նաև Անդրկովկասում խիստ կերպով կրճատվում է։ Այսպես օրինակ, եթե 1870 թվին արտադրվել է 270.000 փ. բամբակ, ապա.

1876	թվին արտադրվել է	132.000 փ.
1877	»	149.000 »
1880	»	81.000 »
1881	»	42.000 »
1882	»	74.000 »
1883	»	73.000 »

** П. Петрович, նույն աշխատությունում, էջ 11—12։

Ինչո՞վ բացատրել այս երևույթը։ Այս բացատրվում է հետևյալով։ Քաղաքացիական պատերազմը Հյուսիսային Ամերիկայում վերջանալուց հետո Ամերիկայի Միացյալ Նահանգները նորից ասպարեզ են գալիս բամբակի համաշխարհային շուկայում։ Տեղի է ունենում գների անկում, իսկ Անդրկովկասը, որն արդեն մուտք էր գործել բամբակի միջազգային և ռուսական շուկայի ոլորտը, չէր կարող այդ ասպարեզում չնահանջել։ Ռուսական տեքստիլ արդյունաբերողները փակում են իրենց գնման կայանները Անդրկովկասում և նորից ամերիկյան էժան հումքի են ապավինում։ Այս պայմաններում գյուղացիները կրճատում են բամբակի ցանքատարածությունները և նորից հացահատիկային կուլտուրաների մշակմանն են անցնում։ Թերևս այս էր պատճառը, որ Արասխանյանցը և նրա համախոհները առաջ էին քաշում Անդրկովկասի հացի արտահանման խնդիրը, լռելով ընդհանրապես բամբակի արտահանության և արտադրության մասին։

Չնայած բամբակագործության խիստ անկմանը, այնուամենայնիվ, ինչպես թվերը ցույց են տալիս, նա ոչ մի տարում չիջավ 1861 թվի մակարդակը (30.000 փ.)։ Վայրէջքի ամենաստորին կետը եղել է 1881 թիվը, որը սակայն 12000 փթով ավելի է, քան 1861 թիվը։ Այդ նշանակում էր, որ առևտրային բամբակագործությունը անցած 10—15 տարիների ընթացքում իր խորը արմատներն էր գցել գյուղացիության մեջ և որոշ նպաստավոր պայմաններում նրա զարգացումը պետք է ընթանար նույն վերելքի գծով։ Այդ են ապացուցում բամբակի համախառն արտադրանքի հետագա տարիների տվյալները Երևանի նահանգում։ Ահա այդ տվյալները, որը մենք նորից բերում ենք Պետրովիչի վերոհիշյալ աշխատությունից։

1883	*թվին արտադրվել է*	73 000	*փ. բամբակ*
1884	» »	98.000	» »
1885	» »	147.000	» »
1886	» »	157.000	» »
1887	» »	326.000	» »
1888	» »	338.000	» »
1889	» »	508.000	» »
1890	» «	501.000	» »

Թվական տվյալները ցույց են տալիս բամբակի համախառն արտադրանքի նոր վերելքը Երևանի նահանգում սկսած 1883 թվից։ Ընդամենը 7 տարվա ընթացքում արտադրանքն աճում է մոտ 7 անգամ, հասնելով 1889 թ. 508 հազար փթի, այսինքն 238.000 փթով ավելի, քան առաջին շրջանի վերելքի ամենաբարձր կետը։

Ինչո՞վ բացատրել Երևանի նահանգում բամբակագործության այս նոր վերելքը։ Այն բացատրվում էր ռուսական աճող տեքստիլ արդյունաբերության համար բամբակի հումքի անընդհատ ընդարձակվող պահանջով։ Եթե Ռուսաստանը 1870 թվին իր տեքստիլ արդյունաբերության համար ներմուծել էր 2.605.000 փ. բամբակ 31.269.000 ռ. արժողությամբ, ապա 10-ը տարուց հետո, 1880 թվին նա ներմուծում է 5.223.000 փ. 53 միլ. ռ. արժողությամբ*։

Հետագա տասնամյակները տալիս են բամբակի հումքի սպառման նոր ընդարձակում ռուսական տեքստիլ արդյունաբերության կողմից՝ 1890 թվին նա սպառում է արդեն 11.327.000 փ. ներմուծվող և տեղական բամբակ, իսկ 1898 թվին 16.803.000 փ.**։

Մեծ չափերով աճող ռուսական տեքստիլ արդյունաբերությունը ռուսական բուրժուազիային կախման մեջ էր դնում արտասահմանյան բամբակից։ Յուրաքանչյուր կոնյուկտուր աննպաստ պայմաններ կարող էին հարված հասցնել նրա շահերին։ Այդպիսի մի հարված նա ստացավ արդեն 1861—65 թվերին։ Բացի այդ, բամբակի ներմուծման համար մեծ քանակությամբ կապիտալ էր արտահոսում երկրից դուրս, որը հարվածում էր նաև ցարական կառավարության շահերին։

Այս բոլորը ստիպում էին ռուսական բուրժուազիային նորից իր ուշադրությունը «հայրենական» հումքի վրա դարձնելու։ Երկաթուղային շինարարությունը Անդրկովկասում նպաստավոր պայմաններ էր ստեղծում այդ ուղղությամբ։ Տեքստիլ արդյունաբերողները գործի են անցնում. Նրանց ներկայացուցիչները Թուրքեստան և Անդրկովկաս են ուղևորվում բամբակագործությունն առաջ մղելու համար։ 1884 թվին Սավվա Մորոզովի և Նիկոլսկի մանուֆակտուրային ընկերությունը բամբակի ամերիկյան տեսակը տեղում զարգացնելու համար Երևանի նահանգի բամբակագործներին ձրի

---

* Кавказский календарь, 1878 и 1885 г. г.

** *Туган-Барановский*, „Русская фабрика“, изд. 1934 г., стр. 244.

կերպով 200 փութ ամերիկյան սերմացու է բաժանում։ Հետագայում, 1885—86 թվերին ամեն տարի մոտ 500 փութ ամերիկյան սերմ էր ուղարկվում Թուրքեստանի և Անդրկովկասի գյուղացիներին բաժանելու համար։

1886 թվից սկսած, Անդրեյ Կարզինկինի Մեծ Յարոսլավի ընկերության կողմից Երևանում, Ենգիջայում (Շարուր-Դարալագյազի գավառ), Աղջաղում, Գյոգչայում կազմակերպվում է բամբակի գնման կայաններ, տարբեր գյուղերում դրվում է բամբակ մաքրող ջինն մեքենաներ և նորից ձրի կերպով ամերիկյան սերմեր բաժանվում գյուղացիներին։ 1887 թվին հրապարակ են գալիս երեք ֆիրմա ևս՝ Վլադիմիր Ալեքսեևինը— Մոսկվայից, Պողոսանի ֆիրման— Լոձից և Զիթախովինը—Թիֆլիսից։ Սրանք նույնպես կազմակերպում են բամբակի գնման գործը Անդրկովկասում և մասնավորապես Երևանի նահանգում։ Այս բոլորը խիստ կերպով նպաստում էին բամբակագործության զարգացման նոր վերելքին Անդրկովկասում։ Տեղական գյուղացիությունը, որն արդեն նախորդ շրջանում զգացել էր առևտրական բամբակագործության շահութաբերությունը, ընդառաջ է գնում ռուսական տեքստիլ արդյունաբերության պահանջներին։ Այդ բանին նպաստում է նաև հացի արտահանության ձախողումն Անդրկովկասում։

Ցարական կառավարությունն էլ իր հերթին նպաստում էր տեղական բամբակագործության զարգացմանը իր մաքսային քաղաքականությամբ։ Արտասահմանից ներմուծվող բամբակի մաքսերը տարեց-տարի աճում էին։ Եթե 1864—78 թվերին բամբակը ներմուծվում էր առանց մաքսի, ապա 1878—80 թվերին ամեն մի փթի վրա նշանակվում էր 40 կ. մաքս ոսկով, 1882—87 թվերին 45 կոպեկ, իսկ 1887—90 թվերին մեկ ռուբլի ծովային սահմաններից և մեկ ռուբլի 15 կոպեկ ցամաքային սահմաններից ներմուծվող բամբակի համար*։ Մաքսային այսպիսի քաղաքականությունը նույնպես խթանում էր տեղական բամբակագործության զարգացմանը։

Ահա այն բոլոր պայմանները, որոնք նպաստեցին բամբակագործության զարգացման նոր վերելքին Անդրկովկասում և Երևանի նահանգում, հասցնելով նրա արտադրությունը միայն Երևանի նահանգում 508 հազար փթի։

---

* П. Петрович, նույն տեղը, էջ 15։

Այստեղ չափազանց կարևոր է նշել մի մոմենտ ևս: Բամբակագործությունը Երևանի նահանգում աճում էր ոչ միայն քանակապես, այլև որակապես: 1890 թվին արտադրված 504 հազար փութ բամբակի 47 տոկոսը ստացվել էր ամերիկյան սերմերից, որն իր որակով և բերքատվությամբ գերազանցում էր տեղական «կարակոզ» կոչվող տեսակին: Այս հանգամանքը ինքնըստինքյան խոշոր առաջխաղացում էր առևտրական բամբակագործության բնագավառում:

Այդպիսով առևտրային բամբակագործությունը ամուր դիրքեր էր նվաճում Երևանի նահանգի գյուղատնտեսության մեջ և նրա արտադրությունը անշեղ կերպով առաջ է գնում հետագա տասնամյակների ընթացքում. 1890 թվին արտադրվել է 504 հազար փութ բամբակ, 1910 թվին 600 հազար փութ, իսկ 1915 թվին 750 հազար փութ:

Հողային ինչպիսի՞ տարածությունից էր ստացվում Երևանի նահանգի ամեն տարի աճող բամբակի հումքի վերև մատնանշված քանակը:

Բամբակի ցանքադաշտերի տարածության մասին մենք ունենք մի շարք աղբյուրների իրար միանգամայն հակասող տվյալներ: Այսպես օրինակ. Պ. Պետրովիչի տվյալներով բամբակի ցանքադաշտերի տարածությունը Երևանի նահանգում 1870 թվականին եղել է 23000 դեսյատին՝ 270.000 փութ բամբակի արտադրությամբ, 1890 թվականին—29.000 դեսյատին՝ 504.000 փ. արտադրությամբ, իսկ 1910 թվականին բամբակի ցանքադաշտերը հետ են աճում, իջնելով մինչև 22000 դեսյատինի, մինչդեռ բերքը բարձրանում է մինչև 600,000 փ*., մի բան, որը միանգամայն անհավանական է:

Ս. Ն. Տիմոֆեևի տվյալներով** ընդհակառակը՝ 1910 թվականին բամբակի ցանքադաշտերի տարածությունը Երևանի նահանգում եղել է 35000 դեսյատին, իսկ ստացված բերքը Տիմոֆեևի և մյուս հետազոտողների կարծիքով նույն այդ 1910 թվին եղել է 600,000 փութ: Այս տեսակետին է նաև Ի. Վ. Ավալաշվիլին***:

* П. Петрович—Хлопководство в Закавказье.

** С. Н. Тимофеев—Статистика хлопководства в Закавказском крае за 1905—11 гг.

*** И. В. Аваташвили—Площадь, сбор и урожайность хлопчатника в Закавказье 1909—14 гг. и 1924—28 гг.

Եթե 1870 թվի համար որպես հիմք ընդունենք բամբակի տարածության Պ. Պետրովիչի տվյալները— 23000 դեսյատին, իսկ 1910 թվի համար՝ Ի. Ն. Տիմոֆեևի տվյալները— 35000 դեսյատին, ապա 40 տարվա ընթացքում բամբակի տարածությունը Երևանի նահանգում ավելանում է մոտ 52%-ով, մինչդեռ բերքատվությունը նույն այդ ժամանակաշրջանում ավելանում է 122%-ով։

Այս նշանակում է, որ արտադրանքի աճը գնացել է առավել չափով բերքատվության բարձրացման ուղիով, այսինքն ինտենսիվ բամբակագործության ուղիով։

Մեր այս եզրակացությունը կարելի է հաստատել 1912 թվի գյուղացիական տնտեսություններում՝ Կովկասյան գյուղատնտեսական ընկերության կողմից կատարված անկետային ուսումնասիրության տվյալներով։

«Այժմ բերքն ավելի լավ է, քան 10 տարի սրանից առաջ,— գրում է Սուրմալուի գավառի Ալիկըզըլ գյուղի թղթակիցը,— այդ բարելավումը արդյունք է լավ սերմերի»։ Նույնն են կրկնում Սուրմալուի գավառի այլ թղթակիցները։ «Նոր սերմեր օգտագործելու պատճառով,— գրում է Դարալագյազի Սուլուխանլու գյուղի թղթակիցը,—բամբակի բերքն այժմ լավ է»։ Նույն գավառի Խանուղլարի թղթակիցը մատնանշում է — «այժմ լավ է, քանի որ լավ մշակում են հողը»։ Նույն բանն են ասում Բաշնորաշենի, Վարմագյարի և մյուս գյուղերի թղթակիցները։ «Շնորհիվ պարարտացման... բամբակի բերքը լավ է ստացվում»—գրում է Երևանի գավառի Դողկուզ գյուղի թղթակիցը։ «Բերքն ստացվում է լավ,—գրում են Արազդայանից,—քանի որ բնակչությունն ավելի շատ է ծանոթացել բամբակի կուլտուրային և դրա հետ մեկտեղ բարելավվում է նաև սերմերը»։

Տեղական թղթակիցների այս հաղորդագրությունները բամբակի բերքի բարձրացման վերաբերյալ, որը կարելի կլիներ շարունակել, վկայում են բամբակագործության որակական ցուցանիշների ասպարեզում եղած նվաճումների մասին*։

Այդ ժամանակաշրջանում բամբակի բերքատվության բարձրացման ֆակտորները հանդիսացան՝ ա) ամերիկյան սերմերի տարածումը և կարակոզի արտամղումը բամբակի ցանքադաշտերի մեծ

* Ավելի մանրամասն տես՝ Труды съезда хлопководов, 1913 г., т. II, ч. I, стр. 99.

մասից*, բ) հողի պարարտացման միջոցառումները, գ) արտադրողների ձեռք բերած հմտությունը բամբակի կուլտուրայի մշակության բնագավառում։

Ի՞նչ տեսակարար կշիռ ուներ Երևանի նահանգը Անդրկովկասում բամբակագործության բնագավառում։ Ցանքադաշտերի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս հետևյալը.

Նահանգները	1909 թ.	1911 թ.
	տարածությունը դեսյատիններով	
Երևանի	29.000	40.000**
Ելիզավետպոլի	14.200	53.000
Բաքվի	5.000	23.000
Թիֆլիսի	520	5.000
Քութայիսի	8[illegible]0	2.700
Ընդամենը	49.570	123.700

Այսպիսով, ինչպես երևում է թվական տվյալներից, Երևանի նահանգը մինչև 1909—10 թվերին բամբակի ցանքադաշտերի տարածության տեսակետից գրավում էր առաջին տեղը Անդրկովկասում։ Միայն դրանից հետո նա իր առաջնությունը զիջում է Ելիզավետպոլի նահանգին, բռնելով այս անգամ երկրորդ տեղը։

---

* Ամերիկյան բամբակը թե՛ իր բերքատվությամբ և թե իր որակով ավելի բարձր էր, քան կարակոզը։ Ամերիկյան տեսակից միջին հաշվով ստացվում էր 16 փութ բամբակ և 90-ական թվականներին վաճառվում էր փութը 7 ռուբլի 20 կոպեկով։ Մինչդեռ կարակոզը տալիս էր միջին հաշվով 15 փութ և վաճառվում էր նույն ժամանակաշրջանում փութը 6 ռ. 60 կոպեկով։ Բացի այդ, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում մի դեսյատին տեղական բամբակ ցանելու ծախսերը կազմում էին 53 ռուբլի 35 կոպեկ, իսկ ամերիկականինը—49 ռուբլի 25 կոպեկ։ Եվ վերջապես կարակոզի հումքը տանելը լրացուցիչ աշխատանք էր պահանջում։ Հատկապես նրա կընճուղները չէին բացվում, ինչպես ամերիկյան տեսակինը, հավաքված կընճուղները գյուղացիների կողմից հետագայում տանը չորացվում էին և հատուկ գամբյուղների մեջ լցրած այնքան թափահարվում, մինչև որ կեղևները անջատվում էին բամբակից։

** Բամբակի ցանքատարածության այսպիսի աճ Երևանի նահանգում մենք անհավանական ենք համարում։ Օ. Հ.

Ըստ գավառների Երևանի նահանգի բամբակագործությունը 1894 թվին բաշխվում էր հետևյալ կերպ*։

Գավառները	Տարածությունը դեսյատիններով	Ստացված բերքը փթերով
1. Սուրմալուի . . .	16.000	162.000
2. Էջմիածնի	5.300	45.000
3. Երևանի	4.848	55.000
4. Շարուր-Դարալագյազի	4.494	101.000
5. Նախիջևանի . . .	1.500	33.000
Ընդամենը	32.142	396 000

Տվյալները մատնանշում են, որ բամբակագործությունը Երևանի նահանգում զարգացած էր այն գավառներում, որոնք գտնվում էին Արաքսի հովտում, կապված տաք կլիմայի և ոռոգման հետ։ Առավել չափով բամբակագործությունը զարգացած էր Սուրմալուի գավառում։

Այսպես էր բամբակագործության և առևտրական բամբակագործության համառոտ պատմությունը Երևանի նահանգում։

Այժմ մեզ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե ինչպիսի՞ ազդեցություն էր թողնում առևտրական բամբակագործության զարգացումը գյուղի դասակարգային շերտավորման վրա, կամ ո՞րն է նրա սոցիալական հետևանքները։

Դժբախտաբար Անդրկովկասում ոչ մի վիճակագրական տվյալ չի կարելի գտնել այն մասին, թե բոլոր գավառների և մասնավորապես բամբակացան շրջանների հողերը ըստ տնտեսությունների ինչպե՛ս էին բաշխված։ Հետևապես մենք չունենք ուղղակի տվյալներ, որոնք ցույց տային հողօգտագործման պատկերը գյուղացիա-

* Кавказский календарь, 1886 г., стр. 180.

կան տարբեր խմբերի մոտ բամբակացան շրջաններում։ Բայց որ հողի համար այդ շրջաններում իսկական պայքար է տեղի ունեցել, դրանում ոչ մի կասկած լինել չի կարող։

Խոսելով բամբակի նշանակության մասին, Պետրովիչն իր եզրափակման խոսքում մատնանշում է՝ «Ներկայումս բամբակի կուլտուրան մեր երկրամասի գյուղատնտեսության մեջ նոր կարևոր տեղ է գրավել... որոշ տեղերում բամբակը դարձել է այն առանցքը, որի շուրջը պտտվում է տեղական, ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ առևտրա-արդյունաբերական ազգաբնակչության ողջ տնտեսական կյանքը։ «Բամբակը»—դարձել է այն կախարդական բառը, որը գրավել է չինովնիկին, բեկին, քոչվորին, բանվորին, շարքային գյուղացուն, կապիտալիստական վարձակալին, առևտրական կապիտալիստին և սովորաբար ռանտիեին»*։

Շատ տեղերում բամբակի գայթակղությունն այնքան մեծ էր, որ գյուղացիները գերադասում էին խաղողի այգիները բամբակի դաշտերի վերածելու։ «Երևանի գավառի Գառնիբասարի մահալում, —գրում է գյուղատնտես Աթանասյանը,—շատ դեպքեր են եղել, որ գյուղացիք արմատահան են արել իրենց խաղողի այգիները և տեղը բամբակ են ցանել, ասելով, թե՝ «բամբակի մուշտարին միշտ էլ արտի գլխին կանգնած է, իսկ գինունը օխտը սարի քամակին է թաքնված»**։

Բոլոր խավերի՝ բամբակի համար մղվող պայքարում հաղթողն անշուշտ հանդիսանում էր գյուղական կուլակը, առևտրականը, ֆաբրիկանտը, ցարական չինովնիկը, բայց ոչ գյուղացիական մասսան։ Օգտվելով իր տնտեսական հզորությունից, գյուղական կուլակն իր ձեռքն է կենտրոնացնում, իր հողերից բացի, գնովի հողերը, վարձակալած հողերը և գյուղացիների բամբակի իրացման գործը։

Բամբակացան շրջաններում հողի համար մղվող պայքարն իր արտահայտությունն էր գտնում վարձակալության գների խիստ բարձրացման մեջ։ Մի դեսյատին հողի վարձակալության գինը բամբակացան գավառներում 1902—1912 թվերին տալիս է հետևյալ աճը (ռուբլիներով)***.

* Труды, стр. 131.

** «Գյուղատնտես», 1909 թ. № 21, էջ 322։

*** Труды, էջ 162։

Գավառները	1902 թ.		1907 թ.		1912 թ.	
	միջինը	տատան.	միջ.	տատան.	միջինը	տատան.
Նախիջևանի . . .	20	—	30	30— 30	40	40— 40
Սուրմալուի . . .	32	20— 50	47	30— 75	53	20—100
Շ. Դարալագյազի	56	11—114	68	18— 30	99	40—200
Երևանի	40	30— 50	53	50— 60	80	70—100
Էջմիածնի . . .	24	10— 50	43	15—100	70	30—150
Ընդամենը .	34	10—144	48	15—130	68	20—200

Տվյալները վկայում են այն մասին, որ ընդամենը տաս տարվա ընթացքում հողի վարձակալության գների թե՛ միջին և թե նրա մինիմումի ու մաքսիմումի սահմանները՝ բոլոր գավառները միասին վերցրած՝ կրկնապատկվել են, իսկ որոշ գավառներում եռապատկվել են։

Միանգամայն հասկանալի է, որ դրամական վարձակալության այսպիսի բարձր գներից կարող էին օգտվել առավելապես գյուղական կուլակները, որոնք վարձակալելով կալվածատիրական և եկեղեցապատկան արգավանդ հողերը, խոշոր եկամուտ էին ստանում բամբակագործությունից։ Իսկ ինչ վերաբերում է միջակ և չքավոր գյուղացիներին, ապա սրանց գերակշռող մասը նատուրալ վարձակալության էր դիմում, կիսելով բերքը հողատիրոջ հետ։ Երևանի, Շ. Դարալագյազի, Սուրմալուի և Էջմիածնի գավառների վարձակալության պայմանները ուսումնասիրող պետական չինովնիկ Պագիրովը մատնանշում է, որ միայն Երևանի գավառումն է գերակշռում դրամական վարձակալությունը, իսկ մնացած երեք գավառներում ընդհակառակը գերակշռում է նատուրալ վարձակալությունը բերքի կես մասով։

Այստեղ կարևոր է մատնանշել հողի ոչ միայն քանակական կողմը, այլ որակը։ Կուլակն իր ձեռքն էր կենտրոնացնում լավագույն հողը։ Նա հնարավորություն ուներ թեկուզ և նվազ չափով, բայց այնուամենայնիվ պարարտացնելու այն, գործադրելու բա-

---

* Сборник статистических данных, приложение V.

ընտրված գործիքներ, դաշտը հերկել գութանով, կիրառել ցանքաշրջանառություն և, որպես այս բոլորի հետևանք, ստանալ բարձր բերք։ Չքավոր գյուղացիությունը զուրկ էր այդ բոլորից, հաճախ նա արորով միայն քչփորում էր իր վատորակ հողը։ Հողի սակավությունը զրկում էր նրան ցանքաշրջանառությունից և հողը հանգիստ թողնելուց. նա ամեն տարի ցանում էր նույն հողակտորը և, որպես այս բոլորի հետևանք, ստանում էր անհամեմատ ավելի ցածր բերք, քան կուլակը։

Վերևում մենք փաստեր բերեցինք բամբակի բերքատվության բարձրացման մասին։ Ինչ կասկած, որ այդ փաստերը վերաբերում էին խոշոր կուլակային տնտեսություններին։ Ինչ վերաբերում է չքավորական տնտեսություններին, ապա նրանց բերքատըվությունն ընկնում էր։ Տեղական շատ թղթակիցներ պատասխանելով Անդրկովկասի Գյուղատնտեսական ընկերության հարցաթերթիկին, ուղղակի մատնանշում էին այդ փաստը։ «5—10 տարի առաջ բերքը լավ էր ստացվում, — գրում է Էջմիածնի գավառի Փոքր-Շահրիար գյուղի թղթակիցը,—իսկ վերջին ժամանակներս հողը բոլորովին ուժասպառ է եղել և քիչ ու մինչև իսկ չի պարարտացվում»։ «Այնքան որքան հողը բերքից հոգնել է,—գրում է նույն գավառի Օշականի թղթակիցը,— ստացվում է վատ բերք, քան առաջներում»։ «Այժմ բերքն ավելի վատ է ստացվում, քան առաջ, հողի հյուծվելու և վատ ջրվելու հետևանքով—մատնանըշում է Գեչրլուի թղթակիցը։ «Հողի հյուծվածությունից բերքը վատ է ստացվում, ընդամենը յոթ փութ»—գրում են Սամաղարից։ Նույն բանն էին կրկնում Ղուզիգիդանի, Ղզլթամուրի և այլ գյուղի թըղթակիցները*։ Պարզ է, որ այս փաստերը վերաբերում են հենց չքավոր գյուղացիների տնտեսություններին, թեև թղթակիցները խոսում են առհասարակ, հարցաթերթիկի ընդհանուր հարցադըրման առնչությամբ։

Մի կողմից կուլակների և մյուս կողմից չքավոր ու միջակ գյուղացիների միջև եղած հակադրությունը ավելի ցայտուն է դրսևորվում բամբակի հումքի մաքրման և իրացման պրոցեսում։ Բամբակը վաճառքի էր հանվում սերմերը զատելուց հետո, իսկ զատումը կատարվում էր մեծ մասամբ գյուղական «ջավոզներում», որոնք

* Труды, стр. 97.

շատ տարածված էին և գոյություն ունեին համարյա թե ամեն մի խոշոր գյուղում։ 1911—12 թվերին այդպիսի զավոդների թիվը Հայաստանում հասնում էր 395-ի, որոնք ըստ գավառների և ըստ կատարելագործության բաժանվում էին հետևյալ կերպ*։

Գավառներ	Զավոդների թիվը ըստ շարժիչների				
	Կերասինով	Գոլորշիով	Ջրով	Ձիով	Ընդամենը
Երևանի	13	8	47	—	68
Սուրմալուի	67	—	7	30	104
Շ. Դարալագ. . . .	14	—	41	—	55
Էջմիածնի	24	19	27	10	80
Նախիջևանի	6	11	29	42	88
	124	38	151	82	395

Ո՞ւմ ձեռքումն էին գտնվում այս մոտ 400-ի հասնող «Քաթըն-ջինն» ձեռնարկությունները։ Սրանք գտնվում էին համարյա թե բացառապես կուլակների ձեռքին։ Կուլակները մաքրում էին գյուղացու բամբակը նատուրալ վարձով, գյուղացուն հանձնելով մաքրած բամբակը և սերմը։ Բայց ավելի հաճախ նրանք ուղղակի գընում էին գյուղացու բամբակը էժան գներով, մաքրում և ապա իրենք վաճառում էին կամ խոշոր կոմիսիոներներին, կամ ուղղակի անմիջական գնորդներին։ «Մեր շրջանում կա 5—6 բամբակազտիչ մեքենա,—գրում է Երևանի գավառի Նովրզլու գյուղի Թըղթակիցը,— նրանք պատկանում են հարուստներին, որոնք և գնում են գյուղացուց բամբակը, մաքրում են այն և տանում Երևան վաճառելու»**։

Հանձինս «Քաթըն-ջինն» գործարան ունեցող գյուղացիների, մենք ունենք ոչ թե գյուղական կուլակի այն տիպը, որն իր ձեռքը կենտրոնացնելով արտադրության գլխավոր միջոցները, շահա-

* Тимофеев, Статистика хлопководства в Закавказском крае, 1909 –11 г. г. См. Труды, стр. 17.

** Труды, стр. 122.

գործում է իր համագյուղացուն գյուղատնտեսության բնագավառում, այլև այն տիպը, որն իր մեջ է մարմնացնում գյուղատնտեսական և արդյունաբերական կապիտալի միասնությունը։ Նա վարձու աշխատանք է շահագործում ոչ միայն գյուղատնտեսության բնագավառում, այլև արդյունաբերական ձեռնարկության մեջ։ Նա կեղեքում է չքավոր և միջակ գյուղացիներին ոչ միայն արտադրության, այլև շրջանառության պրոցեսում։

Այսպես էր առևտրական բամբակագործության զարգացման ֆոնի վրա աճած գյուղական «հարուստի» տիպը մեզանում։ Բայց կուլակը դրանով չէր սահմանափակվում։ Նա ձգտում էր իր ձեռքը կենտրոնացնել գյուղացու ողջ բամբակի գնման ու վաճառքի գործը որպես մեծագնորդի։

«Անդրկովկասում, ինչպես և Թուրքեստանում,—ասում է Բաժուլովը,—բամբակագործական ֆիրմաները հանդես գալու սկզբբին, բամբակի ամբողջ բերքը նրա հավաքումից հետո **բամբակագործ-արտադրողները** արտահանում էին ուղղակի շուկա, որտեղ նա ընկնում էր անմիջապես գնողների ձեռքը, որոնց միջև դեռևս կոնկուրենցիա չկար»*։

Հետագայում դրությունը փոխվում է։ Ֆիրմաների մեջ առաջ է գալիս մրցում, ամեն ոք աշխատում է որքան կարող է շատ բամբակ գնել։ Այս պայմաններում հանդես են գալիս բամբակի առևտրով զբաղվող մարդիկ՝ կոմիսիոներներ և նրանց գյուղական գործակալները՝ մեծագնորդները։ Սրանք խցկվում են բամբակ գընող ֆիրմաների և բամբակ արտադրողների միջև և բամբակացան գյուղացիների հաշվին կապիտալ դիզում։ «Որոշ ժամանակից հետո,— շարունակում է Բաժուլովը,— մրցման ուժեղացման պայմաններում այս միջնորդն էլ անբավարար դուրս եկավ։ Այն ժամանակ ֆիրմաները, որպեսզի կարողանան դիմանալ մրցմանը և ապահովել իրենց բամբակով, այլ միջոցի դիմեցին։ Տարվա սկզբին ֆիրմաներն աշխատում էին ավելի շատ գործակալ կոմիսիոներների հետ պայմանավորվել, որոնք պարտավորվում էին բամբակ գնել բացառապես տվյալ ֆիրմայի համար և ուրիշ ոչ ոքի, ըստ որում գործակալ-կոմիսիոներներին էին տալիս որոշ գումար։ Կոմիսիո-

---

* *Бажулов.* По вопросу о денежных задатках под урожай хлопка. См. Труды, т. II, ч. I, стр. 51.

ներները ֆիրմաներից աշխատավարձ չէին ստանում։ Նրանց օգտին էր մնում բամբակի գնի այն տարբերությունը, որ նրանք վըճարում էին բամբակագործին և ապա վաճառում ֆիրմաներին» (նույն տեղը)։ Ամեն մի կոմիսիոներ ձգտում էր ինչքան կարելի է շատ ավանս ստանալ ֆիրմայից և իր հերթին մանր մեծագնորդներին բաժանել գյուղացիներին ավանսավորելու համար։

Այդ ավանսը հզոր զենք էր դառնում կոմիսիոներների և մեծագնորդների ձեռքին բամբակագործներին ստրկացնելու համար։ Նրանք գարնանը կանխավճար էին բաժանում գյուղացիներին և այդպիսով գնում գյուղացու ապագա բերքը միանգամայն էժան գըներով։

Այսպիսով, ֆաբրիկանտից գյուղացու ձեռքն ընկնող դրամը, նրա բամբակի գինը, անցնում էր միջնորդների մի ամբողջ օղակի երախից, որոնցից յուրաքանչյուրը իր բաժինն էր հափշտակում և բոլորն էլ չքավոր ու միջակ գյուղացիների հաշվին։ «Ֆիրմաների ներկայացուցիչների ասելով,— մատնանշում է Բաժուլովը,—բամբակ արտադրողների ձեռքն է ընկնում միայն կեսն այն փողերի, որը հատկացնում էին ֆիրմաները բամբակի համար»։

Ո՞վքեր էին գյուղական այդ մեծագնորդները, որոնց ճանկն էին ընկնում բամբակագործները։ Դրանք գլխավորապես գյուղի կուլակներն էին և միջնորդ-առևտրականները — «ամենից տեղ թափառող և ամենագետ առևտրականները»։ Սակայն մեծագնորդը մեծ մասամբ «տեղական մարդ է, նա գիտե բամբակագործի բոլոր կարիքները, նրա վարկունակությունը, ողջ տնտեսության թույլ ու ուժեղ կողմերը, իսկ գլխավորը հնարավորություն ուներ միշտ պատրաստ լինելու և այն ժամանակ, երբ իրեն է անհրաժեշտ, և այն ժամանակ, երբ գյուղացիները իր կարիքն են զգում։ Իսկ նրա կարիքը միշտ լինում է, քանի որ մեր մանր տնտեսատերերը սակավ դեպքում միայն կարող են յոլա գնալ առանց հարուստ համագյուղացու—վաշխառուի, կամ դուքանչու օժանդակության... օժանդակություն, որ թելադրվում է ժամանակակից տնտեսական ողջ կառուցվածքով»*։

Օգտվելով իր տնտեսական հզորությունից և դրամի մենաշնորհ տիրապետությունից, առևտրական-մեծագնորդը իր աքցանների մեջ է առնում չքավոր գյուղացուն և արյունաքամ անում նրան։ «Նա ան-

---

* П. Петрович, Труды, էջ 123։

համբ ստիպված էր Ֆերգանի մարզում արձանագրել դեպքեր,— ասում է Բաժուլովը,—երբ տարեկան տոկոսները (խոսքը գյուղացիներից վարկի դիմաց գանձվող տոկոսների մասին է— Օ. Հ.) հասնում էին 300—400 և մինչև իսկ 500 ռուբլու...Ճարը կտրված և ուրիշ ելք չունենալով, բամբակագործը վերցնում է փողը մեծագնորդից և սկսում է բամբակի ցանքսը։ Եթե ամառը նույնպես կարիքի է հանդիպում, նորից հանդես է գալիս մեծագնորդը և օգակը ցցելով գյուղացու շլինքը, ավելի ու ավելի է ձգում այն։ Վերջիվերջո ստացվում է այն, որ համարյա ամբողջ հետագա բերքը գտնվում է տարբեր միջնորդների ձեռքում»*։

Ֆերգանայի մեծագնորդների կողմից գյուղացիներին շնչահեղձ անելու նկարագրված մեթոդները միայն ֆերգանյան ծագում չունեին։ Այդ մեթոդը կիրառվում էր ամենուրեք, բոլոր վայրերում, որտեղ գոյություն ուներ վաշխառու, կուլակը, մեծագնորդը։

Այսպիսով գյուղական կուլակը իր ձեռքն է կենտրոնացնում նաև գյուղացիների բամբակի հումքի իրացման և վարկավճարման գործը, մարմնավորելով իր մեջ մի նոր ֆունկցիա՝ վաշխառուական կապիտալի ֆունկցիան։ Ինչքան թույլ է որևէ երկրում բանկայինվարկային կապիտալի զարգացումը, այնքան արյունռուշտ է դառնում գյուղական վաշխառուն։

«Անդրկովկասյան երկրում,—ասում է Սեգալը,—ոչ մի բնագավառ չկա, որտեղ մեծագնորդները, կրկնագնորդները, վաշխառուները, կուլակները և աշխարհակերները չբերեին իրենց վնասակար գործունեությունը։ Հացահատիկ ցանողները, բամբակագործները, ծխախոտագործները, խաղողագործները, մետաքսագործները և արհեստավորները բոլորը միատեսակ շնչահեղձ են լինում անչափ թանգ վարկի և գիշատիչների լծի տակ»**։

Բամբակագործ գյուղացին աշխատում էր այս պայմաններից ելք գտնել էժան և մանր վարկի կազմակերպման միջոցով։ Ամենուրեք, թե Մամուլում և թե Երևանի ու Ելիզավետոպոլի 1904 թվին գումարված բամբակագործների համագումարներում առաջ է քաշվում վարկային ընկերությունների կազմակերպման հարցը և պետական բանկի օժանդակությունն այդ բնագավառում։

---

* Бажулов, նույն տեղում. էջ 52.

** Труды, стр. 55.

Պետք է մատնանշել, որ մամուլի և համագումարների այս պահանջները անարձագանք չեն մնում։ Կարճ ժամանակից հետո ինչպես պետական բանկը, այնպես էլ մասնավոր բանկերն իրենց գործունեության շրջանակների մեջ են վերցնում բամբակագործության վարկավորման գործը։ Թվում էր թե դրանից հետո բամբակագործը պետք է մի քիչ ազատ շունչ քաշի՝ դեն նետելով մեծագնորդի օղակը իր պարանոցից։

Սակայն արտադրության կապիտալիստական եղանակի ժամանակ բանկային կապիտալը, վարկը մանր արտադրողի օգտին չի գործում։ Նա կարող է վերջիններիս իր ազդեցության ոլորտի մեջ ներքաշել, գնումների, խնայդրամարկղների և այլ միջոցներով հսկայական դրամական միջոցներ կորզել նրանից, բայց վարկավորել մանր արտադրողին — այդ նրան հատուկ չէ։ Վարկավորումը կապիտալիզմի պայմաններում գնում է գլխավորապես խոշոր արտադրողներին, վաճառականներին, կուլակային տնտեսություններին ֆինանսավորելու գծով, իսկ մանր արտադրողներին գրոշներ է հասնում միայն։

Քննենք այս հարցը ավելի մոտիկից, կապված բամբակագործների վարկավորման հետ։ Մեր ձեռքի տակն է Թիֆլիսի պետական բանկի բաժանմունքի կառավարիչ Բեզորբրազովի զեկուցումը կարդացած Անդրկովկասի բամբակագործների համագումարում 1912 թվին։ Զեկուցումը կրում է՝ «Անդրկովկասի պետական և մասնավոր վարկային ձեռնարկությունների նշանակությունը բամբակագործության զարգացման գործում» վերնագիրը։

Զեկուցողը մատնանշում է, որ բամբակագործության վարկավորման գծով զբաղվում են՝ 1) պետական բանկը, 2) մասնավոր բանկերը և 3) մանր վարկային ընկերությունները։

Պետական բանկի վարկավորումը գնում էր երկու ուղղությամբ՝ ա) փոխատուական վարկի ուղղությամբ և բ) վարկ մուրհակների դիմաց։ Փոխատուական վարկը տրվում էր երկաթուղային և այլ տրանսպորտի հիմնարկների կողմից տրված փաստաթղթերի հիման վրա, ճանապարհին գտնվող բամբակի դիմաց, նրա արժեքի $2/3$-ի չափով։ Հետևապես այս վարկը գյուղացիներին չէր վերաբերում, նա սպասարկում էր բամբակի գործով առևտուր անողներին։ Մուրհակների դիմաց տրվող վարկը ավելի տարածված ձև էր, սակայն այս վերջինս նույնպես գյուղացու ձեռքը չէր

ընկնում, նա ընկնում էր մասնավոր առևտրականների ձեռքը, թեև մանր վարկավորում էր կոչվում։

Ահա Թիֆլիսի բանկի օպերացիան այս ուղղությամբ.

1909 թ. կատարված է	17 վարկամ.	180.000 ռ.	միջ. հաշվ.	10.000 ռ.	ամեն մեկը
1910 թ. »	20 »	90.000	» »	4.500	»
1911 թ. »	16 »	88.000	» »	5.500	»
1912 թ. »	9 »	109.000	» »	12.000	»
Ընդամենը	62	467.000 ռ.		7.500 ռ.	

Ո՞ւմ էր տրվում վարկի այդպիսի խոշոր գումարները (միջին հաշվով 7.500 ռ.)։ Պարզ է, որ նա տրվում էր խոշոր առևտրականներին։ Գյուղացին ավելի մանր վարկի կարիք էր զգում, մինչդեռ պետական բանկը գերադասում էր գործ ունենալ առևտրականների հետ։ Նույն ուղղությամբ էր գործում Երևանի պետական բանկի բաժանմունքը։ Ահա փաստաթղթերի դիմաց տրվող նրա վարկերի գործունեությունը։

1909 թվին	12 վարկ	2.473.000 ռ.
1910 »	8 »	1.504.000 »
1911 »	7 »	1.699.000 »
1912 »	6 »	1.083.000 »
Ընդամենը	33 »	6.759.000 ռ.

Ինչ վերաբերում է «մանր վարկավորմանը», ապա այն կատարվել է միայն 1912 թվին, 58.000 ռուբլու սահմաններում։ «Բոլոր այս վարկերը տրվել են առևտրականներին,— ասում է Բեզոբրազովը — քանի որ (?) բամբակագործները իրենց վարկ ստանալու խնդրով չեն դիմել պետբանկի Երևանի բաժանմունքին։

Սակայն ո՞ւմը հայտնի չէ, որ վարկավորման ամենամեծ կարիքը գյուղացիներն էին զգում և ո՞ւմ հայտնի չէ, որ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բանկերը չէին ուզում գործ ունենալ հենց այդ վարկապահանջ մանր արտադրողների հետ։ Ո՞ւմը հայտնի չէ, որ կապիտալիստական վարկային հիմնարկները գերադասում են վարկավորել արդյունաբերողներին, առևտրականներին, մեծագնորդներին, քան թե մանր արտադրողին։ Ինչ վերաբերում է վերջինիս, ապա հեռու գտնվելով վարկային հիմնարկներից, անտեղյակ բանկային գործառնություններին — թեև տեղյակ լինելու դեպքում էլ բանկի դռները նրա առաջ փակ են—մնում է

նորից վաշխառուի և գյուղի կուլակների ճիրաններում և իր յուղով տապակվում։ Այսպես է իրերի դրությունը ոչ միայն Անդրկովկասում, այլև Ռուսաստանում ու կապիտալիստական բոլոր երկրներում։

Նույն պետական բանկի օրինակով էին գործում մասնավոր բանկերն Անդրկովկասում։ Նրանք վարկավորում էին խոշոր ու մանր առևտրականներին, կոմիսիոներին, կուլակին, մեծագնորդին, բայց ոչ չքավոր ու միջակ գյուղացուն։ Այս ընդհանուր կանոնից խոշոր բացառություն չէին կազմում նաև փոխադարձ վարկային ընկերությունները, չնայած այն բանին, որ նրանք ավելի մոտիկ էին կանգնած գյուղին։ Հետաքրքրական է այս տեսակետից Երևանի «Փոխադարձ վարկավորման ընկերության» գործունեությունը։ Վերջինս մուրհակների հիման վրա գյուղացիներին վարկ է բաց թողել.

Մինչև	1909 թիվը	201	վարկ	—130.000 ռ.	արժողությամբ
»	1909	» 30	»	— 32.000 ռ.	»
»	1910	» 32	»	— 4[illegible].000 ռ.	»
»	1911	» 50	»	— 55.000 ռ.	»
»	1912	» 50	»	— 72.000 ռ.	»
Ընդամենը		363	»	350.000 ռ.	»

«Սրանից հետևում է,— եզրակացնում է Բեզոբրազովը,— որ Երևանի փոխադարձ վարկավորման ընկերությունը ծառայում է գլխավորապես մանր բամբակացանների շահերին»*։ Թվական տվյալներից բոլորովին էլ չի հետևում, որ Երևանի փոխադարձ վարկային ընկերությունը «մանր բամբակագործների շահերին է ծառայում»։ 5-ից ավելի տարիների ընթացքում ընկերությունը ընդամենը 363 վարկավորում է կատարել, մինչդեռ վարկավորման կարիքը զգացող մանր բամբակագործների քանակը տասնյակ հազարների էր հասնում այդ ժամանակաշրջանում։ Բացի այդ, վարկավորման միջին չափը 1909—12 թվերին հազար ռուբլուց ցած չի իջնում, իսկ մանր արտադրող բամբակացանի կարիքը շատ ավելի քիչ էր լինում և մաքսիմում 200—300 ռուբլուց այն կողմը չէր կարող անցնել։ Հասկանալի չէ՞ միանգամայն, որ Երևանի «Փոխա-

* Труды, стр. 15.

դարձ վարկավորման ընկերությունը» վարկավորել է գլխավորապես կուլակային տնտեսություններին, որոնք, ի դեպ ասած, այդ վարկն օգտագործում էին ոչ միայն իրենց տնտեսական կարիքների վրա, այլև որպես վաշխառուական կապիտալ սակավահող գյուղացիներին շահագործելու համար։

Այսպես ուրեմն, ռուսական արդյունաբերական կապիտալի ազդեցությամբ զարգացող առևտրական բամբակագործությունը տնտեսական հեղաշրջում էր մտցնում Հայաստանի բամբակացան շրջաններում։ Փուլ էր գալիս հին նահապետական տնտեսությունը, իր տեղը ապրանքային տնտեսությանը զիջելով։ Մի անգամից ընդարձակվում էին այդ շրջանների տնտեսական գործունեության շրջանակները, առնվազն համառուսաստանյան մասշտաբով։ Առևտրական բամբակագործությունը կյանքի էր կոչել գյուղական կուլակին, դուքանչուն, կոմիսիոներին, ցարական չինովնիկին, արդյունաբերական և բանկային կապիտալիստին, տեղական բեկերին և այլոց, որոնց գործունեության համար լայն ասպարեզ էր բացվել։ Բոլոր նրանք կարծես խոսքերը մեկ արած շահագործում էին աշխատավոր բամբակագործներին և նրանց հաշվին կապիտալ կուտակում։

Շահագործումը տեղի էր ունենում ոչ միայն արտադրության պրոցեսում, այլև վարկավորման բնագավառում, վաճառքի պրոցեսում, բամբակի մաքրման ընթացքում, կշռումների ժամանակ, ամենուրեք և ամեն տեղ վամպիրների այդ ոհմակը դարանակալ թշնամու նման հետևում էր աշխատավոր գյուղացու տնտեսական գործունեության բոլոր պրոցեսներին և նրան արյունաքամ անում այնքան, որ նա զրկվում էր ինքնուրույն տնտեսական կյանք վարելուց և վարձու աշխատանքի դիմում իր «հայրենական» գյուղում կամ պանդխտության դիմում ուրիշ քաղաքներ։

Այսպես էր առևտրական երկրագործության՝ գյուղի վրա թողած ազդեցությունը։

4. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Այգեգործությունը և մասնավորապես խաղողագործությունը Հայաստանում և Անդրկովկասում նույնպես հին կուլտուրա է,

ինչպես բամբակի կուլտուրան։ Արաքսի հովտում նա մշակվել է անհիշատակ ժամանակներից սկսած։ «Արարատեն հինգ Նոյն իջավ, կարմիր գինովն էլ հարբեցավ» — մեր ավանդության մեջ եղած այս արտահայտությունը նույնպես վկայում է գինեգործության զարգացման այդ անհիշատակ ժամանակների մասին։ Այդ մասին են վկայում նաև հին հայկական ճարտարապետության կողմից շենքերի վրա փորագրված խաղողի ողկույզները։

Խաղողագործությունը Երևանի նահանգում զգալի չափով զարգացած էր նաև պարսիկների տիրապետության ժամանակ։ Բայց ռուս-պարսկական պատերազմը 19-րդ դարի 30-ական թվականներին զգալի հարված հասցրին խաղողագործությանը։ Պատերազմի ընթացքում պարսիկների կողմից բնաջնջվեցին առավելապես հայկական գյուղեր, որոնք խաղողագործությամբ էին զբաղվում։ Միայն պատերազմից հետո, երբ խաղաղ պայմաններ են ստեղծվում երկրում, խաղողագործությունն սկսում է նորից զարգանալ 40-ական թվականներից սկսած։ Մինչև 19-րդ դարի կեսը խաղողագործությունն ու գինեգործությունը Երևանի նահանգում իր գոյության ողջ ժամանակաշրջանում ունեցել է գլխավորապես սպառողական նշանակություն։ Փոխանակության համար օգտագործվել է խաղողի միայն աննշան մասը տեղական և գավառային շուկաներում, այն էլ փոխանակության նատուրալ հիմունքներով։ (Խաղողը փոխանակվում էր լեռնամասերում՝ հացահատիկի հետ, քոչվորների մոտ՝ յուղի, պանրի հետ և այլն)։

Այս երևույթին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ մուսուլման բնակչությունը, կազմելով նահանգի բնակչության մոտ կես մասը, կրոնական նկատառումներով գինեգործությամբ չէր զբաղվում։ Նրանց մոտ խաղողը սպառվում էր միայն թարմ վիճակում և որոշ մասն էլ գնում էր ռուչուխի և դոշաբի պատրաստման գծով։ Այս հանգամանքն զգալի չափով նեղացնում էր գինու և օղու վաճառման տեղական շուկայի շրջանակները և թույլ չէր տալիս խաղողագործության արագ զարգացումը։

Խաղողագործության զարգացման նոր վերելք Երևանի նահանգում սկսվում է 50—60-ական թվականներին միայն։ «...30-ական թվականներին,—ասում է Ա. Մարշենկոն,—Երևանի նահանգում կար 2000 այգուց ոչ ավելի։ 70-ական թվականներին խաղողի տակ էր արդեն 5583 դեսյատին հող, որոնք պատկանում էին մոտ տաս հա-

ղար այգետերերի։ Անցյալ դարի սկզբին ներկա Շ.-Դարալագյա-զի գավառում բոլորովին չգիտեին խաղողի վազի կուլտուրան, իսկ 1897 թվին այդ գավառի 14 գյուղերում կային 785 այգիներ*։

Հետռեֆորմյան շրջանը տալիս է խաղողագործության նոր վե-րելք. 90-ական թվականների վերջում խաղողի այգիների տարա-ծությունը մոտ 10 հազար դեսյատինի է հասնում**։

1895—1900 թվերին խաղողի այգիների տարածությունը ավե-լանում է 1904 դեսյատինով։ Եթե 90-ական թվականների վերջի համար խաղողի այգիների տարածությունը ընդունենք տաս հա-զար դեսյատին, ապա այդ նշանակում է, որ մոտ 30 տարվա ըն-թացքում խաղողի այգիների տարածությունը Երևանի նահանգում կրկնապատկվում է, այսինքն այստեղ աճման տեմպն ավելի ա-րագ է կատարվել, քան թե բամբակագործության գծով։

Ինչո՞վ բացատրել խաղողագործության այդպիսի զարգացումը 60-ական թվականներին և 19-րդ դարի վերջին։ Երկու դեպքում էլ խաղողագործության զարգացումը կապվում էր ապրանքային այգեգործության և ապրանքային գինեգործության հետ, այն տար-բերությամբ սակայն, որ 60-ական թվականների զարգացումը գը-նում էր գլխավորապես տեղական շուկայի ընդարձակման հաշ-

---

* *А. Марченко*. Виноградарство Эриванской губернии. См. Памятная книжка Эр. губ., 1902 г., отд. IV, стр. 93.

** Երևանի նահանգի խաղողի այգիների ընդհանուր տարածության մասին եղած տվյալները տարբեր հեղինակների մոտ միանգամայն հակասա-կան են։ Այսպես օրինակ, Ի. Զ. Անդրոնիկովը իր՝ «Ուրվագիծ խաղողա-գործության և գինեգործության մասին Երևանի նահանգում» աշխատու-թյան մեջ բերում է տեղական ադմինիստրացիայի և մարզային վարչության տվյալներն այդ մասին, որոնք սակայն իրար չեն համապատասխանում։ Ըստ տեղական ադմինիստրացիայի տվյալների, խաղողի այգիների տարա-ծությունը Երևանի նահանգում 1894 թվին եղել է 8179 դեսյատին, իսկ մարզային վարչության տվյալներով 7380 դես. (Տես՝ И. З. Андроников — Очерк виноградарства и виноделия в Эр. губ., стр. 28).

Նույնպիսի հակասական տվյալների մասին մատնանշում է նաև Մար-չենկոն 90-ական թվականների վերաբերյալ հողագործության մինիստրու-թյան չինովնիկների տվյալներով խաղողի այգիների տարածությունը հա-վասար էր ութ հազար 526 դեսյատինի, մինչդեռ տեղական ադմինիստրա-ցիայի տվյալներով այն հավասար էր տաս հազար 298 դեսյատինի (Տես՝ Памятная книжка, նույն տեղը, էջ 93—96)։

վին, մինչդեռ դարավերջի զարգացումը՝ առավելապես արտահան-գական, համառուսական շուկայի հաշվին։

60-ական թվականների զարգացումը նախապատրաստվել էր նախորդ տասնամյակներում։ Պատերազմի պատճառով Անդրկովկաս եկած մեծ քանակությամբ զինվորականությունը, ինչպես նաև Անդրկովկասում արմատավորված ռուսական չինովնիկությունը խոշոր պահանջներ էր առաջադրում գինեգործության և մասնավորապես օղեգործության նկատմամբ։ Հաղորդակցության միջոցների բացակայությունը հնարավորություն չէին տալիս բավարարելու այդ պահանջը Ռուսաստանից բերվող օղիով։ Նրա բավարարումը կատարվում էր տեղում։ Դրանով իսկ այգեգործության և խաղողագործության զարգացման համար միանգամայն նպաստավոր պայմաններ էին ստեղծվում երկրի ներսում։ Այդ բանին նպաստում էր նաև այն, որ մինչև 1863 թվականը օղեգործության զարգացումը պետական ոչ մի շրջանակով — մաքսով չէր սահմանափակվում։

Այսպիսով գինեգործության և օղեգործության նկատմամբ եղած շուկայական նոր, ընդարձակվող պահանջները մի կողմից, գինեգործության և օղեգործության զարգացումը սահմանափակող պայմանների բացակայությունը մյուս կողմից՝ խթանում էին խաղողագործության զարգացումը Երևանի նահանգում։ Սրանով պետք է բացատրել այն երևույթը, որ 30-ական թվականների 2 հազար այգիների փոխարեն, 70-ական թվականներին նրանց թիվը հասնում է տաս հազարի։

Խաղողի այգիները զարգանում են բոլոր այն վայրերում, որտեղ կլիմայական պայմանները նպաստավոր են նրա համար։ Բայց առավելապես նրանք զարգանում են վարչական կենտրոնների (Երևան, Նախիջևան) և զինվորականության մոտիկ ռայոններում (Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի գավառներ և ավելի նվազ չափով Սուրմալուի և Շ. Դարալագյազի գավառները)։

Սակայն շուկայի վերոհիշյալ պահանջները, այն չափով, ինչ չափով նրանք կապված էին գլխավորապես զինվորականության առկայության հետ, հարատև չէին և կրում էին ժամանակավոր բնույթ։ Մինչդեռ արդեն առևտրական հողագործության բազայի վրա զարգացած խաղողագործությունը մշտական շուկայի

2

պահանջ էր առաջադրում։ Եթե բամբակի կուլտուրայի բնագավառում պահանջի նվազեցման դեպքում կարելի էր ցանքադաշտերը կրճատել և այն փոխարինել այլ կուլտուրաներով, ապա նույն այդ բանը չէր կարելի անել խաղողի կուլտուրայի նկատմամբ, առանց խոշոր հարված հասցնելու գյուղացու տնտեսությանը*։

Այստեղից, շուկայի հարցը խաղողագործության ոչ միայն զարգացման, այլև եղած տարածությունների պահպանման վճռական հարցն է դառնում հետռեֆորմյան շրջանում։ Ո՞րտեղ պետք է ռեալիզացիայի ենթարկել խաղողը և նրա պրոդուկցիան, եթե զինվորականության տեղատվության պատճառով խիստ կերպով կրճատվում է ներքին շուկայի պահանջները։ Ըստ երևույթին այն պետք է իրացվեր նահանգից դուրս գտնվող շուկաներում, Անդրկովկասում և Ռուսաստանում։ Բայց Երևանի խաղողագործները ի՞նչ արտադրանքով կարող էին հանդես գալ Անդրկովկասի և Ռուսաստանի շուկաներում։

Թարմ խաղողով հնարավոր չէր հանդես գալ ոչ Անդրկովկասի, ոչ էլ առավել ևս ռուսական շուկայում, հաղորդակցության կատարելագործված և արագ միջոցների բացակայության պատճառով, չնայած այն բանին, որ Երևանի նահանգի խաղողը իր որակով և տեսակների բազմազանությամբ (ավելի քան 60 տեսակ) կարող էր մրցել Անդրկովկասի մյուս խաղողագործական նահանգների հետ։

Երևանի նահանգը կարող էր հանդես գալ գինու արտադրությամբ, և գինու վաճառքը շատ ավելի արդյունավետ էր, քան խաղողի վաճառքը։ Ի. Զ. Անդրոնիկովի հաշվումներով մեկ դեսյատին այգու խաղողի վաճառքից մաքուր եկամուտ էր ստացվում ընդամենը 60 ռուբլի, մինչդեռ նույն քանակի խաղողից ստացվող գինու վաճառքի մաքուր եկամուտը հավասար էր 124 ռուբլու։ Սակայն

---

* Խաղողի այգիները տնկելուց հետո իրենց գոյության չորրորդ կամ հինգերորդ տարում են միայն բերք տալիս, իսկ նրանց լրիվ բերքատվությունը տեղի է ունենում ավելի ուշ, որոշ տեղերում 9—10 տարուց հետո։ Ամբողջ այդ ժամանակաշրջանում գյուղացին աշխատանքի և կապիտալի ներդրում է կատարում առանց եկամուտ ստանալու։ Ի. Զ. Անդրոնիկովի տվյալներով, միայն մեկ դեսյատին այգի տնկելը նստում էր 220—450 ռուբլի, չհաշված մյուս տարիների ծախսերը։ Վերջինիս հաշվելու դեպքում ծախսերը բարձրանում էին 430—720 ռուբլի կամ միջին հաշվով 575 ռուբլի։

Երևանի նահանգի գինին իր համար Անդրկովկասում չկարողացավ շուկա գտնել, այն պատճառով, որ այդ շուկան արդեն հագեցած էր Անդրկովկասի մյուս նահանգների գինու արտադրանքով։

*Հենց այս վերջին հանգամանքն էլ հնարավորություն չէր տալիս Երևանի նահանգի այգեգործներին ընդարձակ կերպով հանդես գալու նաև ռուսական շուկայում։ Գինու արտահանումը նահանգից դուրս փոստային ճանապարհներով 1884—1894 թվերին կազմում էր**.

1884 թ.	— 1572 փութ	1890 թ.	—11762 փութ
1885 »	—11977 »	1891 »	—24837 »
1886 »	— 9760 »	1892 »	—26638 »
1887 »	—30427 »	1893 »	—149 5 »
1888 »	—43868 »	1894 »	—37734 »
1889 »	—21440 »	—	—

*Միջին հաշվով գինու տարեկան արտահանությունը 20 հազար փութի է հասնում։ Մինչդեռ հետագա տարիների տվյալները հավաքվող խաղողի և նրանից ստացվող գինու քանակի մասին տալիս են հետևյալ պատկերը***.

1895 թ.	—	խաղող	1.771.000 փ.,	գինի	—	583.000 վեդրո
1896 »	—	»	1.374.000 »	»	—	217.000 »
1897 »	—	»	1.823.000 »	»	—	865.000 »
1898 »	—	»	1.778.000 »	»	—	745.000 »
1899 »	—	»	1.914.000 »	»	—	902.000 »
1900 »	—	»	2.664.000 »	»	—	1.180.000

Այսպիսով արտահանվում էր ստացված գինու ամենաաննշան մասը միայն։ Ո՞րն էր ելքը, կամ ի՞նչ արտադրանքով Երևանի նահանգի խաղողագործները կարող էին հանդես գալ Անդրկովկասի և Ռուսաստանի շուկայում։

Ելքը կայանում էր օղեգործության զարգացման մեջ, խաղողի սպիրտի արտադրության մեջ, որն իր որակով կարող էր գերազանցել Անդրկովկասի մյուս նահանգներին և ավելի հեշտ կերպով

* *Андроников*, նույն աշխատությունը, էջ 106—107։

** *А. И. Марченко*. Переработка винограда в Эр. губ. См. Памятная книжка Эр. губ. 1902 г., отд. IV, стр. 103.

կարելի կլիներ փոխադրել ավելի հեռու շուկաները։ Հենց այդ ուղղությամբ էլ առավել չափով զարգանում է Երևանի նահանգի խաղողի և գինու մշակման գործը, գերակշռություն ձեռք բերելով Անդրկովկասի մնացած բոլոր նահանգների համեմատությամբ։

Ահա թվական տվյալներն այդ մասին. 1892 թվին թորված է օղի՝

Երևանի նահանգում	— 5.700.000°
Էլիզավետպոլի »	— 5.045.363°
Կախեթիայի և Զաքաթալայի օկր.	— 3.971.077°
Թիֆլիսի նահանգի մյուս վայրեր	— 1.478.867°
Բաքվի նահ. և Դաղստանում	— 2.630.130°
Քութայիսի նահանգում	— 1.240.493°
Ընդամենը	20.065.930° *

Այսպիսով, ինչպես թվական տվյալներն են ապացուցում, օղու թորման բնագավառում Երևանի նահանգը գրավում էր առաջին տեղը Անդրկովկասում, թեև խաղողի այգիների տարածության և հետևապես ստացվող գինու քանակի տեսակետից շատ ավելի հետ էր մնում Քութայիսի և Թիֆլիսի նահանգներից (Առաջինում խաղողի այգիների տարածությունը հավասար էր 42 հազար դեսյատինի, երկրորդում—27 հազար դեսյատինի)։

Թե ինչպես էր աճում օղեթորումը Երևանի նահանգում, այդ երևում է հետևյալ տվյալներից**։

1888 թ.	226	գավոդներում	թորված է	եղել	4.350.000°
1889 »	181	„	„	„	2.341.000°
1890 »	172	„	„	„	2.474.000°
1891 »	231	„	„	„	4.[illegible]41.000°
1892 »	274	„	„	„	5.701.000°
1893 »	474	„	„	„	8.547.000°

Թվական տվյալները ցույց են տալիս, որ ընդամենը վեց տարվա ընթացքում կրկնապատկվում են ինչպես օղու թորման գավոդները, նույնպես և օղու թորումը։

---

* Данилович, „Араксская равнина, էջ 700։

** Андроников, նույն տեղը, էջ 111։

Ո՞րտեղ էր իրացվում այսպիսի ռեկորդային տեմպով աճող օղու արտադրանքը։ Նրա որոշ մասը իրացվում էր նահանգի ներքին շուկայում (երբեմն ներքին շուկայում վաճառվում էր արտադրված օղու կեսից ավելին)։ Բայց մեծ մասը իրացվում էր նահանգից դուրս, Անդրկովկասի և ռուսական շուկաներում։

Նահանգից դուրս գտնվող շուկաներում արտահանված սպիրտը վաճառվել է.

	1892 թ.	1893 թ.
Պետերբուրգում	2219^{0}	658^{0}
Մոսկվայում	339020^{0}	36121^{0}
Վարշավայում	58169^{0}	32358^{0}
Կուրսկի նահանգում . .	630^{0}	—
Ռիգայում	3351^{0}	—
Բաթումում	537^{0}	162^{0}
Թիֆլիսի նահանգում . .	1.015980^{0}	2.157.470^{0}
Բաքվի նահանգում . .	527469^{0}	224639^{0}
Ելիզավետպոլի նահանգ.	119446^{0}	120343^{0}
Ղարսի մարզում	822437^{0}	852918^{0}
Ընդամենը . .	2584140^{0}	3,434,669^{0}*

Այսպիսով, եթե Երևանի նահանգը խաղողի և գինու արտադրությամբ չկարողացավ շուկա նվաճել Անդրկովկասում և Ռուսաստանում, ապա այդ բանը նա կարողացավ կատարել օղու և հետագայում կոնյակի արտադրությամբ։ Դանիլովիչի վերը բերած փաստերը ապացուցում են այն մասին, թե ինչպես Երևանի նահանգի օղեգործությունը ամուր դիրքեր էր նվաճել Ռուսաստանի խոշոր քաղաքների և առավելապես Անդրկովկասի շուկաներում։

Սրանք էին 19-րդ դարի վերջին Երևանի նահանգում խաղողագործության զարգացման պատճառները և նրա տարբերությունը 60-ական թվականների զարգացման պատճառներից։ Այս-

---

* Данилович, նույն տեղը, էջ 702։

պես է առևտրական խաղողագործության զարգացման համառոտ նկարագիրը Երևանի նահանգում։

Այժմ մեզ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե սոցիալական ինչպիսի փոփոխություններ էր մտցնում գյուղում առևտրական խաղողագործության զարգացումը։ Խաղողագործությունը Երևանի նահանգում զարգացած էր հետևյալ գավառներում*.

Երևանի գավառում	3.410	դեսյատին
Էջմիածնի գավառում	3.405	„
Նախիջևանի գավառում	1.250	„
Շ. Դարալագյազի գավառում	456	„
Սուրմալուի գավառում	410	„
Ընդամենը	8.931	դես.

Խաղողագործության զարգացումն ըստ գավառների ցույց է տալիս, որ այդ կուլտուրան Երևանի նահանգում զարգանում էր հենց նույն այն հինգ գավառներում, որտեղ զարգացած էր բամբակագործությունը, այսինքն՝ Արաքսի հովտում և նրան մոտիկ լեռնային ստորոտներում, բայց այնպիսի վայրերում, որոնք ապահովված էին ոռոգող ջրով։ Տարբերությունն այստեղ, բամբակագործության և այգեգործության բնագավառում, կայանում է նրանում, որ տարբեր էր տարբեր գավառների բռնած տարածությունը և նրա տեսակարար կշիռը մեկ կամ մյուս կուլտուրայի գծով։

Այսպես օրինակ, եթե բամբակագործության բնագավառում Սուրմալուի գավառը գրավում էր առաջին տեղը, ապա այգեգործության բնագավառում նա արդեն գրավում էր վերջին տեղը, ունենալով խաղողի այգիների ընդամենը 410 դեսյատին տարածություն։ Փոխվում է հարաբերությունը նաև մյուս գավառներում։

Համադրելով բամբակի և խաղողի կուլտուրաների տարածումը ըստ գավառների, ստանում ենք հետևյալ պատկերը 1894 թվի համար.

* Кавказский календарь, 1896 г.

Գավառները	Բամբակի տարածութ. դեսյատին-ներով	Ծխախոտի տարածութ. դեսյատին-ներով
1. Սուրմալու	16.000	410
2. Էջմիածնի	5.300	3405
3. Երևանի	4.848	3410
4. Շ. Դարալագյազի .	4.494	456
5. Նախիջևանի	1.500	1250
Ընդամենը .	32.142	8931

Երկու կուլտուրաների համադրությունն ըստ գավառների ցույց է տալիս, թե գավառներից որ մեկը առևտրական հողագործության երկու գլխավոր ճյուղերի զարգացման ինչպիսի տենդենց ունի։

Ինչպե՞ս էր անդրադառնում առևտրական խաղողագործությունը գյուղատնտեսության արտադրության գլխավոր միջոցներից մեկի՝ հողօգտագործման վրա։ Գյուղատնտեսական ոչ մի կուլտուրայի զարգացումը այնպիսի խորն ազդեցություն չէր թողնում համայնական հողատիրության քայքայման վրա, ինչպիսին թողնում էր այգեգործության զարգացումն ընդհանրապես և խաղողագործությանը մասնավորապես։

Ամենից առաջ հողային այն տարածությունները, որոնք այգիների էին վերածվում, համայնական հողօգտագործման շրջանառությունից հանվում էին և վերածվում մասնավոր սեփականության, դառնալով նրա տիրապետողի լրիվ իրավասության օբեկտ։

Այգետերը իրավունք ուներ իր այգին վաճառելու, ուրիշին նվիրաբերելու, ժառանգության հանձնելու և վարձելու. այնպես, ինչպես ինքն էր ցանկանում:

Ընդհանուր հողօգտագործությունից դուրս հանված հողային այդ տարածությունները որոշ գավառներում, շրջաններում և գյուղերում խոշոր տոկոս էին կազմում: Անդրոնիկովի տվյալներով Երևանի գավառում խաղողի այգիների բռնած տարածությունը կազմում էր գավառի մշակելի բոլոր հողերի 21,7 տոկոսը, Էջմիածնի գավառում—17,5 տոկոս: Այդ տոկոսն ավելի բարձր էր այն շրջաններում և գյուղերում, որտեղ այգեգործությունը հանդիսանում էր գյուղացիության գլխավոր զբաղմունքը: Այսպես օրինակ, Երևան քաղաքի այգիները բռնում էին քաղաքի բոլոր հողերի 98 տոկոսը, Գյողաքլու գյուղում— 55,6 տոկոսը, Վ. Ղամարլուում— 58,2 տոկոս, Դալուվարում— 54 տոկոս, Աշտարակում— 49,7 տոկոս, Ղըլթամուրում— 41,6 տոկոս և այլն: Հետևապես առանձին շրջաններում և գյուղերում հողերի մեծ մասը հանված էր համայնական օգտագործման ոլորտից, վերածվելով մասնավոր սեփականության:

Ո՞ւմ տիրապետության տակ էին գտնվում մասնավոր սեփականություն դարձած հողային այդ տարածությունները: Այս առթիվ չափազանց հետաքրքիր տվյալներ է բերում Անդրոնիկովը, արդեն մասնանշված աշխատության մեջ, տալով այգիների տարածության բաշխումը ըստ ծխերի:

Ահա այդ տվյալները.

Գավառները	Այգիների չափը: Ստորինը	Այգիների չափը: Միջինը	Այգիների չափը: Բարձրը	Տարածութ. դեսյատին.*	Այգետերերի թիվը	Տնտեսություններ, որոնք ունեն խաղողի այգիներ**: Մինչև 0,5 դ.	0,5—1 դ.	1—2 դ.	2—3 դ.	3—5 դ.	5—10 դ.	10—15	15-ից վերը
1. Երևանի գավառ . . .	22 սաժ.	0,69 դ.	21 դես.	3398	4922	3008	1110	535	135	85	35	11	3
2. Էջմիածնի գավառ . .	250 "	0,61 "	23 "	2299	3777	2407	784	433	95	51	6	—	1
3. Սուրմալուի . . .	33 "	0,32 "	3 "	491	1545	1327	185	30	—	2	—	1	
4. Նախիջևանի » . .	14 "	0,30 "	6 "	821	2767	2445	218	73	16	7	8	—	—
5. Ն. Բայազետի » . .	25 "	0,19 "	2 "	371	2005	1902	85	17	1	—	—	—	—
Ընդամենը	22 "	0,49 "	23 "	7380	15016	11089	2382	1088	247	145	49	12	4

* И. Э. Андроников, Очерк виноградарства и виноделия в Эр. губ., стр. 28.

** Նույն տեղը, էջ 154—201.

Հեղինակը տվյալներ չի բերում այգեգործ գյուղացիների մասին, որը չափազանց կարևոր էր մեր առաջ քաշած հարցը լրիվ կերպով լուսաբանելու համար։ Այդ բացը լրացնելու համար մենք կարող էինք վերցնել մատնանշված գավառների գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թիվը և դուրս գալով նրանցից այգի ունեցող տնտեսությունները, ստանալ այգեգործ տնտեսությունների ընդհանուր քանակը։ Բայց այդ մեթոդը ճիշտ չէր լինի նախ այն պատճառով, որ ոչ բոլոր գյուղերի հողերն են պիտանի այգեգործության համար, հետևապես ոչ ամեն տնտեսություն կարող է այգեգործությամբ զբաղվել, և ապա այն պատճառով, որ այգի ունենալը, կամ այգեգործ լինելը ամեն դեպքում չէ, որ կարող է տնտեսության կարողությունը պատկերել, եթե այգեգործության հետ մեկտեղ մշակվում են այնպիսի կուլտուրաներ, ինչպիսին է բամբակը, բրինձը և այլն։ Այս մեթոդի կիրառումը ճիշտ կլիներ այն շրջանների և գյուղերի նկատմամբ, որտեղ գյուղացիների գլխավոր զբաղմունքը այգեգործությունն է։

Նախքան այդ կարգի ուսումնասիրություն կատարելը, քննենք Անդրոնիկովի տվյալները եղած այգիների բաժանման մասին։ 15016 այգետերերից՝

Մինչև 0,5 դես.	այգի	ունեցողները	կազմ. 11089	տնտ.	կամ	73,8%
0,5—1 դեսյատին	„	„	2382	„		15,86 „
1—2	„	„	1088	„		7,24 „
2—3	„	„	247	„		1,65 „
3—5	„	„	145	„		0,96 „
5—10	„	„	49	„		0,32 „
10—15	„	„	12	„		0,08 „
15 - բարձր	„	„	4	„		0,002 „
			15016	„		100 %

Այսպիսով 15.016 այգետերերից, որոնք ունեին յոթ հազար 380 դեսյատին այգիներ, 74 տոկոսը կամ 3/4-ը ունեն 22 սաժենից մինչև 0,5 դեսյատին այգի։ Եթե միջին հաշվով ամեն մի տնտեսության ընկնող այգու տարածությունը ընդունենք 0,2 դեսյատին, ապա 11.089 տնտեսության հասնող այգիների տարածությունը կկազմի 2218 դեսյատին, կամ այգիների ողջ տարածության 30 տոկոսը։ Սրանց գերակշռող մասը չքավոր գյուղացիական տնտեսություններն են, որոնց մոտ եղած այգու չնչին տարածությունները ծառայում էին գլխավորապես նրանց ընտանիքի

անգամների սպառողական կարիքները բավարարելու համար։ Չքավոր այգետերերը խաղողի քանակի քչության և միջոցների բացակայության պատճառով հնարավորություն չունեին խաղողը մշակման ենթարկելու, գինու կամ օղու վերածելու, նրանք ստիպված էին վաճառելու խաղողը թարմ վիճակում, ավելի էժան գներով։

Այնուհետև, եթե 0,5—1 դեսյատին այգի ունեցող տնտեսությունները, որոնք բոլոր այգետերերի 15,86 տոկոսն են կազմում, հաշվենք միջակային տնտեսություններ (դրանով իհարկե չի սահմանափակվում միջակների տոկոսը։ Այդ տոկոսի վրա պետք է ավելացնել ինչպես առաջին խմբից, նույնպես և որոշ կոնտինգենտ բարձր խմբից) և նրանց յուրաքանչյուր տնտեսությանն ընկնող այգու միջին տարածությունն ընդունենք 0,75 դեսյատին, ապա նրանց ունեցած այգիների ընդհանուր տարածությունը կկազմի 1786 դեսյատին, կամ բոլոր այգիների 24,33 տոկոսը։ Հետևապես չքավորական և միջակային տնտեսությունները միասին վերցրած ունեին բոլոր այգիների 54 տոկոսը։ Մինչդեռ ընդամենը տաս տոկոս կազմող անպայմանորեն կուլակային տնտեսությունների ձեռքին կենտրոնացած էր բոլոր այգիների 46 տոկոսը։ Այսպես էր այգիների բաշխումն ըստ սոցիալական առանձին խմբերի։

Այժմ տեսնենք, թե ինչպես էր դրությունն այն գյուղերում, որտեղ այգեգործությունը հանդիսանում էր գյուղացիների գլխավոր զբաղմունքը։ Վերցնենք վերը մատնանշված չորս գյուղերը*։

Գյուղեր	Տնտեսութ. թիվը	Այգետերերի թիվը	Այգիների տարածությունը	Տնտեսությունները, որոնք ունեին խաղողի այգիներ (դեսյատին.)							
				Մինչև 0,5	0,5—1	1—2	2—3	3—5	5—10	10—15	15-ից բարձր
Դալուլար	120	96	105 դ.	18	34	34	8	2	—	—	—
Գյոզաքլու . . .	140	96	121 դ.	8	25	55	6	2	—	—	—
Վ. Ղամարլու . .	250	145	115 դ.	35	32	40	34	4	—	—	—
Աշտարակ	650	476	703 դ.	122	116	148	55	31	4	—	—
Ընդամենը	1160	813	1014 դ.	183	207	277	103	39	4	—	—

* Տնտեսությունների ընդհանուր թիվը վերցրել ենք „Памятная книжка"-ի 1902 թ. տվյալներից, իսկ մնացած ցուցանիշները Անդրոնիկովի աշխատությունից։

Վերոհիշյալ չորս գյուղերին վերաբերող թվական տվյալները ցույց են տալիս, որ 1160 տնտեսություններից այգիներ ունեն ընդամենը 813 տնտեսություն, կամ բոլոր գյուղացիների 70 տոկոսը։ Այդ նշանակում է, որ 347 տնտեսություն կամ գյուղացիների 30 տոկոսը այգեզուրկ են հենց այն գյուղերում, որտեղ այգեգործությունը կազմում է գյուղացիների գլխավոր զբաղմունքը։ Այնուհետև թվերը ցույց են տալիս, որ 183 տնտեսություն կամ բոլոր գյուղացիական տնտեսությունների 15,6 տոկոսի այգիների տարածությունը չի գերազանցում 0,5 դեսյատինից։ Ընդունելով ամեն մի տնտեսությանը հասնող միջին տարածությունը 0,25 դեսյատին, նրանց ունեցած այգիների տարածությունը կկազմի 46 դեսյատին, կամ բոլոր այգիների 4,4 տոկոսը։ Հետևապես այգեզուրկ և մինչև 0,5 դեսյատին այգի ունեցող տնտեսությունները, որոնք կազմում են բոլոր գյուղացիական տնտեսությունների 45,6 տոկոսը, միասին ունեն ընդամենը 46 դեսյատին այգի, կամ բոլոր այգիների 4,4 տոկոսը։ Սրանք բացարձակապես չքավոր գյուղացիներ են։

Այնուհետև 0,5 մինչև 1 և 1—2 դեսյատին այգու տարածություն ունեցող գյուղացիական տնտեսությունները, որոնց գերակշռող մասը այգեգործական գյուղում միջակային տնտեսություններ են, միասին կազմում են 484 տնտեսություն, կամ բոլոր գյուղացիների 41,7 տոկոսը (կասկածից դուրս է, որ այս տնտեսությունների որոշ մասը՝ մոտ 8—10 տոկոսը նույնպես չքավորական տնտեսություններ են, ինչպես և որոշ մասն էլ կուլակների շարքն են անցնում)։ Ընդունելով ամեն մի տնտեսությանը հասնող այգու միջին տարածության առավել չափը 1,25 դեսյատին, 484 տնտեսությանը հասնող այգիների ընդհանուր տարածությունը կկազմի 505 դեսյատին, կամ այգիների ընդհանուր տարածության 48,31 տոկոսը։

Եթե մի պահ ընդունենք, որ 484 տնտեսություններն էլ միջակային տնտեսություններից բարձր չեն, ապա այս դեպքում չքավոր և միջակ տնտեսությունները միասին կկազմեն 89,3 տոկոս, որոնց ձեռքումն է գտնվում բոլոր այգիների 52,71 տոկոսը միայն։ Իսկ այդ նշանակում է, որ մնացած 10,7 տոկոսը կազմող կուլակային տնտեսությունների ձեռքին կենտրոնացած է բոլոր այգիների 47,3 տոկոսը։

Այսպիսով գյուղացիական տնտեսությունների խիստ բևեռացումը միանգամայն ակնբախ է այստեղ։ 45,6 տոկոս կազմող չքավորական տնտեսությունները, որպես սեփականություն ունեին այգիների ընդամենը 4,4 տոկոսը, այնինչ 10 տոկոս կազմող կուլակային տնտեսությունները տիրապետում էին բոլոր այգիների 47,3 տոկոսին։

Սակայն կուլակային տնտեսությունների հզորությունը չէր սահմանափակվում միայն այգիների համակենտրոնացումով. այդ երևույթի քանակական կողմն է միայն։ Մինչդեռ էլ ավելի կարևոր է նրա որակական կողմը։ Կուլակը ռացիոնալ այգեգործություն էր վարում։ Ունենալով դրամական միջոցներ և կարողություն, նա ամեն տարի այգին փորել և էտել էր տալիս, պարարտացնում այն, պայքարում վնասատուների դեմ, վարձու այգեպանների օգնությամբ մշակում այգին, ջրում և բերքը հավաքում ժամանակին։ Այս բոլորի արդյունքը լինում էր այն, որ կուլակային տնտեսությունը միևնույն տարածությունից ավելի շատ արդյունք էր ստանում, քան թե չքավոր կամ միջակ գյուղացին։

Այնուհետև, չքավոր գյուղացին, ինչպես մատնանշել ենք վերևում, հնարավորություն չուներ վերամշակման ենթարկելու խաղողը, նա այն վաճառում էր մեծ մասամբ թարմ վիճակում, անբարենպաստ պայմաններով, մինչդեռ կուլակը խաղողը գինու և օղու էր վերածում և հետագայում ավելի թանկ գներով վաճառում հեռավոր շուկաներում։ Եթե չքավոր տնտեսությունը վերամշակում էր խաղողը գինու կամ օղու, ապա այն օգտագործում էր իր սպառողական նպատակներին։ Մինչդեռ կուլակային տնտեսությունների կողմից կատարվող վերամշակումը առևտրական նպատակներ էին հետապնդում։ Մշակման պրոցեսն էլ կուլակի մոտ ավելի ռացիոնալ կերպով էր կատարվում, քան թե չքավորի մոտ։ Ունևոր տնտեսությունը խաղողը գինի դարձնելուց առաջ տեսակավորման էր ենթարկում այն՝ ջոկում սև խաղողը սպիտակից, փտածները դեն նետում և ապա գինի պատրաստելուց հետո այն պահում միանգամայն հարմար նկուղներում, զերծ փոշուց և այլ բացասական ազդեցություններից և, որպես այս բոլորի հետևանք, ստանում ավելի որակյալ գինի։ Մինչդեռ չքավոր գյուղացին հնարավորություն չուներ կատարելու այդ բոլորը, ուստի և նրա գինու կամ օղու որակն անհամեմատ ավելի վատ էր։

Շատ դեպքերում չքավոր գյուղացու բերքը նրան չէր պատկանում։ Պարտքի մեջ թաղված լինելը և տնտեսական սուր կարիքը ստիպում էին չքավոր գյուղացուն վաճառել այգու բերքը նախքան բերքահավաքը։ «Չքավոր տնտեսությունները,— ասում է Մակարովը,— երբեմն նախապես վաճառում են սպասվող խաղողի բերքը մի քանի ամիս առաջ մինչև այգեկութը, հաճախ կես գնով»*։

Ո՞ւմ ձեռքումն էր կենտրոնանում այդ կես գնով վաճառվող բերքը։ Պարզ է, որ նա կենտրոնանում էր գյուղական վաշխառուի, առևտրականի և առավել չափով համագյուղացու կուլակի ձեռքին։

Այսպիսով կուլակն իր ձեռքն էր կենտրոնացնում ոչ միայն այգիների մեծ մասը, այլև հափշտակում չքավոր գյուղացիների բերքի մի զգալի մասը։ Վերջապես նա իր ձեռքն էր կենտրոնացնում օղու թորման գյուղական «զավոդները»**։

Այստեղ մենք նույն պրոցեսն ենք տեսնում, ինչ որ բամբակագործության բնագավառում։ Այնտեղ «Ջաթըն-ջինն» բամբակազտիչ գործարաններն էին կենտրոնացած գյուղական կուլակների ձեռքին, այստեղ օղու թորման զավոդները։ Երկուսն էլ օգտագործվում էին գյուղական կուլակի՝ ձեռնարկատիրոջ կողմից, մանր արտադրողին շահագործելու համար։

Այսպես ուրեմն, առևտրական խաղողագործությունը տնտեսական հեղաշրջում է մտցնում Երևանի նահանգի այգեգործական շրջաններում։ Խաղողի, գինու, օղու և կոնյակի արտադրությամբ ու վաճառքով այդ շրջանների նահապետական գյուղը դուրս է գալիս նատուրալ տնտեսության շրջանակներից և անդրկովկասյան ու համառուսաստանյան շուկա է մտնում։

Առևտրական խաղողագործությունը Երևանի նահանգում իր զարգացման բարձր աստիճանն է թևակոխում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նոր արտադրությամբ—կոնյակի արտադրությամբ։ 1899—900 թվականներին Երևանի նահանգում գործում էին արդեն կոնյակի վեց կատարելագործված գործարաններ, որոնք 1899 թվին 791.000 աստիճան սպիրտ էին թորել։

---

* Материалы для изучения, т. III, стр. 109.

** *Марченко*, Пам. книж., 1902 г., отд. IV, стр. 109.

(Աֆրիկովի կալվածում 69.000 սաժեն, Տեր-Միքայելովի կալվածում—250.000 սաժ., Թայիրովի—հետագայում Շուստովի կալվածում—175.000 սաժեն, Խուբլարովի կալվածում—133.000 սաժեն, Սողոմոնովի կալվածում—214.000 սաժեն և Սարաջևի կալվածում—50.000 սաժեն*։

Առևտրական խաղողագործության զարգացումը առավել ևս խարխլում էր համայնական հողօգտագործումը գյուղում։ Հողը այգու համար մի անգամ ցանկապատման կամ սահմանագծման ենթարկվելուց հետո դուրս էր ընկնում համայնական հողօգտագործումից, դառնում մասնավոր սեփականություն, գնման և վաճառքի օբյեկտ։ Այգու տակ եղած հողերի մեծ մասը կենտրոնացվում էր կուլակների ձեռքին, որոնք զբաղվելով առևտրական գինեգործությամբ և օղեգործությամբ, ինչպես և տիրապետելով գինու վերամշակման կալվածներին, մեծ կապիտալ էին դիզում։

5. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԲՐՆՁԻ ԵՎ ԱՅԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԳԾՈՎ

Բրնձի կուլտուրան Երևանի նահանգում նույնպես հին է, այնպես, ինչպես բամբակինն ու խաղողինը։ Նրա տարածման շրջանները նույնն էին, ինչ որ բամբակինը և իր բռնած տարածությամբ նա հավասար էր խաղողի այգիների տարածությանը։ Դժբախտաբար մենք տվյալներ չունենք Երևանի նահանգի բրնձի կուլտուրայի ցանքատարածների զարգացման պատմության վերաբերյալ, եղած տվյալները վերաբերում են միայն 90-ական թվականների վերջերին, այն էլ տարբեր աղբյուրների միանգամայն իրար հակասող տվյալներ։

Տեղական ադմինիստրացիայի տվյալներով 90-ական թվականների վերջում չալթուկի դաշտերի տարածությունը Երևանի նահանգում հասնում էր 8400 դեսյատինի, որից Երևանի գավառում—7000 դեսյատին, Շ. Դարալագյազի գավառում—800 դեսյատին, Էջմիածնի գավառում—500, Նախիջևանի գավառում—130 դեսյատին և Սուրմալուի գավառում—30 դեսյատին։ Ջրային տեսչության գրասենյակի տվյալներով այդ տարածությունը կազմում էր ընդամենը 6549 դեսյատին, որից Երևանի գավառում 2291 դեսյատին, Էջմիածնի գավառում 1605 դեսյատին, Շ. Դարալա-

* Памятная книжка, նույն տեղը, էջ 111։

գյուղում—2280, Սուրմալուում—314 և Նախիջևանում 59 դեսյատին։ Ինժեներ-հիդրավլիկների կողմից տեղում հավաքած տվյալների համաձայն չալթուկի ցանքադաշտերը հավասար էին 7706 դեսյատինի, որից Երևանի գավառում— 3890 դեսյատին, Էջմիածնի գավառում— 796 դեսյատին, Սուրմալուի գավառում— 187 դեսյատին, Շ. Դարալագյազում— մոտ 2788 դեսյատին, Նախիջևանում— 48 դեսյատին։ Եվ վերջապես Դանիլովիչի տվյալներով այդ տարածությունը Երևանի նահանգում կազմում էր 5513 դեսյատին, որը մեր կարծիքով ավելի մոտ է իրականությանը։ Դանիլովիչը ելնում է միրաբներից վերցրած տվյալներից**։

Բերած տվյալներն այնքան հակասական են, որ դժվար է միանգամայն որոշակի գաղափար կազմել չալթուկի ցանքադաշտերի տարածության մասին։ Այնուամենայնիվ այդ տվյալներից պարզվում է, որ Երևանի, Էջմիածնի և Դարալագյազի գավառները չալթուկի արտադրության գլխավոր գավառներն էին Երևանի նահանգում։ Իսկ այդ գավառներում չալթուկի կուլտուրան զարգացած էր միայն այն շրջաններում ու գյուղերում, որտեղ միանգամայն առատ էր ոռոգող ջուրը, որովհետև արհեստական ոռոգման ենթակա ոչ մի կուլտուրա չի պահանջում այնքան ջուր, որքան չալթուկը։

Նա կարող էր զարգանալ միայն ջրառատ վայրերում։ Ահա թե ինչու չնայած բրնձի արտադրության ամբողջ օգտավետությանը, թե խաղողի և թե բամբակի համեմատությամբ նա ավելի քիչ տարածություն ուներ Երևանի նահանգում։

Բրնձի տարեկան առավելագույն արտադրությունը Երևանի նահանգում Անդրոնիկովի տվյալներով հասնում էր մեկ միլիոն 400 հազար փթի։ Որտե՞ղ էր իրացվում այդ արտադրանքը։ Նրա իրացման գլխավոր շուկան հանդիսանում էր տեղական, նահանգական շուկան։ Խիստ կերպով մասնագիտացման ենթարկված բրնձի սակավաթիվ շրջաններն ու գյուղերը բրինձ էին մատակարարում մյուս գավառներին ու շրջաններին։ Անդրկովկասյան շուկայում Երևանի նահանգի բրինձը չկարողացավ ազդեցության շրջանակներ նվաճել, քանի որ իր տեսակարար կշռով նա ավելի նվազ տեղ էր գրավում Անդրկովկասի բրնձի արտադրության մեջ։

* *И. З. Андроников*, Культура риса на Кавказе. 1900 г., стр. 119.

** Район Тифлисско—Карсско—Эриванской жел. дороги.., 1897, стр. 678.

Բրնձի կուլտուրան ավելի շատ զարգացած էր Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում։ Առաջինում շալթուկի ցանքադաշտերը կազմում էին 21.000 դեսյատին, երկրորդում 16 հազար դեսյատին։ Բրինձն աճում էր նաև Թիֆլիսի նահանգում և Զաքաթալայի օկրուգում ավելի նվազ չափերով։

Այնուամենայնիվ Երևանի բրինձը չէր սպառվում միայն տեղական շուկայի շրջանակներով։ Նրա որոշ մասը արտահանվում էր Պարսկաստան և Տաճկաստան։ Այդ են վկայում Ռուսաստանից Պարսկաստան արտահանվող բրնձի տվյալները 1885—1895 թվերին։

Բրնձի արտահանումը Պարսկաստանն ու Տաճկաստանը կազմում էր (փթերով)**.

Այսպիսով, Ռուսաստանից դեպի Պարսկաստան ու Տաճկաստան արտահանվող բրնձի մեծ մասը տալիս էր Անդրկովկասը, իսկ Անդրկովկասի արտահանման 80—90 տոկոսը գնում էր Երևանի նահանգից։ «Մինչև 1895 թիվը,—ասում է Անդրոնիկովը,— Պարսկաստանը Ռուսաստանից բրինձ էր ստանում բացառապես Երևանի նահանգից, իսկ Ռուսաստանից Տաճկաստան արտահանվող ամբողջ բրնձի մեջ Երևանի բրինձը կազմում էր միջին հաշվով 50—60 տոկոսը և որոշ տարիներում էլ ավելին»***։

Տարիներ	Ամբողջ Ռուսաստանից	Անդրկովկասից	Այդ թվում Երևանի նահանգից
1888 թիվ	65.800	31.000	31.000
1889 „	21.000	14.800	13.900
1890 „	20.000	15.000	14.900
1891 „	29.000	25.000	18.400
1892 „	16.000	15.000	14.000
1893 „	—	28.000	21.000
1894 „	—	19.000	10.900
1895 „	80.000	39.500	32.500

* И. З. Андроников, նույն տեղը, էջ 96.

** Նույն տեղը, էջ 129.

*** Նույն տեղը, էջ 129.

Բրնձի կուլտուրան 19-րդ դարի վերջում առավելապես ապրանքային կուլտուրայի էր վերածվել։ Նա անարգել կերպով իրացվում էր թե՛ ներքին շուկայում և թե արտասահմանում։

Եթե բերքատվության միջինը դեսյատինից հաշվենք 200 փութ և ամեն մի փութ շալթուկի արժեքն ընդունենք 70 կոպեկ ըստ Դանիլովիչի տվյալների, ապա մի դեսյատինից ստացվող համախառն եկամուտը կկազմի 140 ռուբլի, իսկ մաքուր եկամուտը «դեսյատինից 100 ռուբլուց ցած չի լինում»*։

Բարձր բերքատվությունը և արտադրանքի ապրանքային բնույթի անարգել իրացումը խթանում էր գյուղացիներին, առավելապես կուլակային տնտեսություններին ջրառատ շրջաններում և գյուղերում առաջ մղելու շալթուկի արտադրությունը, չնայած այդ կուլտուրայի ամբողջ վնասակարությունը արտադրողների և բնակչության առողջության տեսակետից։

Առևտրական որոշ նշանակություն ունեցող մյուս կուլտուրաներից, որոնք զարգանում էին Երևանի նահանգում, անհրաժեշտ է հիշատակել ծխախոտի (մախորկա) կուլտուրան։ Այս կուլտուրայի մշակությամբ 1893 թվի տվյալներով զբաղվում էին 214 գյուղ՝ ցրված Երևանի նահանգի բոլոր գավառներում։ Մաքսային վերահսկիչի տվյալներով ամբողջ նահանգում ծխախոտի արտադրանքը 6244 փթի էր հասնում։ Ինչ կասկած, որ այդ թիվը, ինչպես մատնանշում է Դանիլովիչը, չէր համապատասխանում իրականությանը, քանի որ ճշգրիտ պաշտոնական տվյալներով միայն նահանգի սահմաններից դուրս արտահանվող ծխախոտը 5000 փթի էր հասնում։ Հետևապես նրա արտադրությունը շատ ավելի էր, քան տալիս էր մաքսային վերահսկիչը, քանի որ ծխախոտի արտադրանքի մեծ մասը սպառվում էր ներքին շուկայում։

Ծխախոտից բացի պետք է մատնանշել նաև բանջարանոցային և բոստանային կուլտուրաների՝ սոխի, ձմերուկի, սեխի և առանձնապես դուդմայի մասին, որն արտահանվում էր միմիայն Երևանի նահանգից։ Այս կուլտուրաների արտադրանքի մեծ մասը շուկա էր գնում։ Բոստանային կուլտուրաները զարգացած էին մերձքաղաքային և մերձճանապարհային գյուղերում։ Սուրմալուի գավառում բոստանի ցանքադաշտերը կազմում էին 708 դեսյատին, Սար-

* *Данилович*, Аракская равнина, стр. 672—673.

Ղարաբաղի մահալում 364 դեսյատին, Գյառնի-Բասարի մահալում 193 դեսյատին բոստանից հավաքվում էր 289 հազարից մինչև 386 հազար ձմերուկ և սեխ։ Այս պրոդուկտները վաճառվում էին ինչպես տեղական շուկայում, նույնպես և Երևանում, Ալեքսանդրապոլում, Ղարսի մարզում և Թիֆլիսում (որտեղ ուղարկվում էր դդման)։

Վերջապես անհրաժեշտ է նշել նաև յուղատու կուլտուրաների՝ քնջութի, վուշի և տզկանեփի (կլեշչեվինայի) զարգացումը Երևանի նահանգում։ Միայն քնջութի կուլտուրան բռնում էր 300 դեսյատին տարածություն։ Բոլոր յուղաբեր բույսերի մշակումը, նրանց սերմից ձեթ ստանալը, կատարվում էր գյուղական «զավոդներում» — ձիթհանքերում։ Ամբողջ նահանգում կար 150 ձիթհանք, որից Երևանի գավառում—5, Էջմիածնում—34, Ալեքսանդրապոլ քաղաքում—4, Նոր-Բայազետի գավառում—61, Նախիջևանի գավառում—25, Սուրմալուի գավառում—14 և Շ. Դարալագյազի գավառում—6։ Զավոդների տեղագրությունը ցույց է տալիս, որ յուղաբեր բույսերը ամենից շատ զարգացած էին Նոր Բայազետի գավառում։ 150 ձիթհանքերի արտադրողականությունը, Դանիլովիչի տվյալներով, հասնում էր տարեկան 28.630 ռուբլու։ Այդ զավոդներում աշխատում էին 540 բանվոր։ Հասկանալի է միանգամայն, որ այդ զավոդները նույնպես պատկանում էին գյուղական հարուստներին։

Ի՞նչ եզրակացություններ կարելի է հանել առևտրական հողագործության զարգացումից Երևանի նահանգում։

Այն, որ Երևանի նահանգի գյուղատնտեսությունը, ինչպես և Անդրկովկասի և Ռուսաստանի գյուղատնտեսությունը, հետռեֆորմյան շրջանում և մանավորապես 90-ական թվականների վերջին և 20-րդ դարի սկզբին զարգանում էր գյուղատնտեսական կուլտուրաների մասնագիտացման գծով։

«Մասնագիտացման այդ պրոցեսը, ասում է Լենինը, որը պրոդուկտների մշակման զանազան ձևերն անջատում է իրարից, ստեղծելով արդյունաբերության ավելի ու ավելի շատ ճյուղեր, երևան է գալիս նաև հողագործության մեջ, ստեղծելով հողագործության մասնագիտացող շրջաններ (և հողագործական տնտեսության սիս-

¹ Նույն տեղը, էջ 724—725։

տեսներ), առաջ բերելով փոխանակություն ոչ միայն հողագործության և արդյունաբերության պրոդուկտների, այլև գյուղատնտեսության զանազան պրոդուկտների միջև։ Առևտրային (ու կապիտալիստական) հողագործության այս մասնագիտացումը երևան է գալիս կապիտալիստական բոլոր երկրներում, երևան է գալիս աշխատանքի միջազգային բաժանման մեջ, երևան է գալիս նաև հետռեֆորմյան Ռուսաստանում...» (Լենին, հատոր III, էջ 31, հայ. հր. 1948 թ. ընդգծումը Լենինինն է)։

Հենց աշխատանքի հասարակական այս բաժանումը, որի մասին մատնանշում է Լենինը, հանդես էր եկել Անդրկովկասում ու Հայաստանում։ Հողագործության մասնագիտացող շրջանները ու գավառները փոխանակության մեջ էին մտնում ոչ միայն Ռուսաստանի արդյունաբերական շրջանների հետ, այլև տեղական տարբեր կուլտուրա արտադրող շրջանների հետ, իսկ աշխատանքի հասարակական այս բաժանումը «ապրանքային տնտեսության և կապիտալիզմի զարգացման ամբողջ պրոցեսի հիմքն է» — ասում է Լենինը (տես նույն տեղը, ընդգծումը իմն է—Օ. Հ.։)

Ապրանքային տնտեսության այս հիմքի վրա մեզանում տեղի էր ունենում գյուղի շերտավորում և կապիտալիստական հարաբերությունների ծնունդը։ Այժմ մասնավորապես հարթավայրերի գյուղացիության մեծ մասն արտադրում էր ոչ թե իր սպառման կարիքների համար, այլ շուկայի համար։ Իսկ դա նշանակում էր, որ նա ենթարկվում է շուկայի տարերքին։ Առաջ, նատուրալ տնտեսության շրջանակներում գյուղացին ենթակա էր միայն բնության տարերքին։ Այժմ, ապրանքային տնտեսության պայմաններում գյուղացին ենթակա է նաև շուկայի անարխիայի տարերքին։

Դանդաղ կերպով քայքայվում էր գյուղացիության տնտեսությունը և այդ քայքայումից ծնունդ էր առնում հարստացող փոքրամասնությունը և դեպի տնտեսական անկումը դիմող մեծամասնությունը։

Այսպիսով գյուղում ստեղծվում էր դասակարգային պայքարի մի նոր ճակատ և՝ մի կողմից գյուղական չքավորության և գյուղական կիսապրոլետարների և մյուս կողմից կուլակության միջև։

Այսպես էր գյուղի ներքին զարգացման ընդհանուր պատկերը Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին։

Գ. ՊԱՅՔԱՐ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ՑԱՐԻԶՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1905—1907 Թ. Թ. ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ագրարային հարցը Անդրկովկասում որոշ առանձնահատկություններով տարբերվում էր ընդհանուր համառուսական ագրարային հարցից։ Այդ առանձնահատկությունն արտահայտվում էր նրանում, որ այստեղ շարունակվում էր ճորտատիրական իրավունքի պահպանումը,—գյուղացիները մնում էին ժամանակավոր պարտավորյալ և ժամանակավոր կախյալ վիճակում, շարունակելով կատարել իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ։ Քութայիսի նահանգի գյուղացիները— Վորոնցով-Դաշկովի խոստովանությամբ, կալվածատերերին էին վճարում իրենց բերքի $1/4$-ից—$1/3$-ը, մինչև 1865 թիվն եղած մեկ հինգերորդի, մեկ տասներորդի և մեկ քսաներորդի փոխարեն։ Նույն դրությունը գոյություն ուներ նաև մյուս նահանգներում։ Երևանի նահանգի 17.000 կալվածատիրական գյուղացիներ շարունակում էին իրենց պարտավորությունների կատարումը կալվածատերերի նկատմամբ, նրանց վճարելով օրենքով սահմանված բերքի չորս երեսուներորդից շատ ավելի։

Գյուղացիների օգտագործման տակ եղած հողը նրանց սեփականություն չէր հանդիսանում — այն շարունակվում էր հաշվվել կալվածատերերի սեփականություն, և գյուղացիները կարող էին

այդ հողը ձեռք բերել միայն հետգնման կարգով, այն էլ կալվածատերերի համաձայնությամբ: Իսկ թե ինչպես էր կատարվում հողի հետգնումը Անդրկովկասում և մասնավորապես Երևանի նահանգում, այդ մասին չափազանց հետաքրքիր տեղեկություններ է տալիս Երևանի նահանգի գյուղացիության արտադրության կարիքներն ուսումնասիրող կոմիտեն 1902 թվին: «... Անցած 30 տարվա ընթացքում,— արձանագրում է կոմիտեն,— հետ է գնված 40 դեսյատին 2080 ք. սաժեն 4546 ռուբլի 90 կոպեկ գումարով: Այսպիսի ընթացքի դեպքում ամբողջ հետգնման օպերացիան կիրագործվեր միայն մի քանի հազարամյակներից հետո»[3]:

Ահա թե ինչպիսի տեմպով էր առաջ գնում գյուղացիների «ազատագրության» գործն Անդրկովկասում և Հայաստանում: Ահա թե ինչպես էր ցարիզմը պահպանում միջնադարի հարաբերությունները մեզանում:

Պահպանել եղած այդ հարաբերությունները այն պայմաններում, երբ Անդրկովկասի գյուղացիությունը ռուսական գյուղացիության հետ միասին, պրոլետարիատի ղեկավարությամբ ոտքի էր կանգնել ռևոլյուցիոն ճանապարհով լուծելու ոչ միայն գյուղացիների ճորտային կախվածությունից ազատագրելու հարցը, այլև բոլորովին ոչնչացնելու ցարական կարգերը Ռուսաստանում,— այդ բոլորը ստիպում էին ցարին դիմել նոր ռեֆորմների: Անհրաժեշտ էր փոքրիկ ռեֆորմներով «կանխել» Անդրկովկասի գյուղացիության ռևոլյուցիոն շարժումն ընդդեմ ցարիզմի և կալվածատիրության, անջատել նրան ընդհանուր համառուսաստանյան շարժումից, հնազանդ վիճակում պահել անդրկովկասյան գաղութը ռուսական մեծ մրրիկի պայմաններում:

Ցարիզմը հանդես էր գալիս իր ագրարային քաղաքականությամբ Անդրկովկասում ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում: Կառավարական ագրարային ծրագրի մարմնացնողն ու իրագործողը հանդիսանում էր նորին մեծության Կովկասյան փոխարքա Վորոնցով-Դաշկովը:

---

[3] Памятная книжка, 1904 г., стр. 38.

Ո՞րն էր ցարիզմի ագրարային ծրագիրն Անդրկովկասում։ Նախ և առաջ պահպանել հողի մասնավոր-կալվածատիրական և պետական սեփականությունը,—ահա ցարիզմի ագրարային ծրագրի ելակետը ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ Ռուսաստանում։ Ինչ այս մասին բացահայտ կերպով հայտարարում էր ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովը Կովկասի փոխարքայությունն ստանձնելու առթիվ արած իր հայտարարության մեջ։

«Մեր ամենաողորմած թագավոր-կայսրի կամքով և վստահությամբ իմ կառավարմանը հանձնված այս երկիրը գալով, ես ցավով սրտի տեսա, որ մի քանի տեղական գյուղացիներ չարամիտ մարդկանցից դրդված՝ համարձակվել են ինքնակամ ու բռնի գրավել մասնավոր կալվածատերերի հողերը և անտառները, ոչնչացրել են նրանց տները ու կողոպտել ստացվածքը... Հայտարարում եմ Կովկասի բոլոր գյուղացիներին — օրենքը խիստ պաշտպանում է ամեն սեփականություն անիրավացի ձեռնմխելիությունից և առավել ևս բռնի հափշտակությունից և ենթարկում է այդ տեսակ հանցավորներին ոչ միայն ծանր պատժի, այլև նյութական պատասխանատվության, ուրիշի սեփականությանը վնաս պատճառելու համար»։

«Նախազգուշացնում եմ,— շարունակում է նա,— որ գյուղացիները ոչ մի դեպքում չպետք է հույս ունենան իրենց հողաբաժինները մեծացնելու մասնավոր կալվածատերերի հողերի հաշվին։ Օրենքը պահպանելով գյուղական հողաբաժինների անձեռնմխելիությունը, հավասար կերպով պարտավոր է պաշտպանել և ամեն մի մասնավոր սեփականություն»*։

Այսպես ուրեմն, հողի մասնավոր կալվածատիրական սեփականության պահպանումը նախ և առաջ,—ահա ցարիզմի ագրարային քաղաքականության ալֆան և օմեգան։ Օրենքը պահանջում է ստատուս կվո հողային հարցում,—ահա Վ. Դաշկովի հայտարարության իմաստը։ Այս տեսակետի վրա էր կանգնած Ռուսաստանի կալվածատիրական դասակարգը։

---

* Նորին կայսրության մեծության Կովկասյան փոխարքա գեներալ-ադյուտանտ կոմս Վորոնցով Դաշկովի հայտարարությունը. տես Մուրճ, № 8, 1905 թ., էջ 59—61.

Մասնավոր սեփականությունը հողի վրա անձեռնմխելի է, նրա հարկադրական օտարումը «կուլտուրայի և քաղաքակրթության գերեզմանն է» — պնդում էր 2-րդ Պետական Դումայի դեպուտատ Շուլգինը: «Մասնավոր սեփականատերերի իրավունքի վերացումը,—ասում էր աջ կալվածատեր ազնվական Վետչինինը 2-րդ Պետական Դումայում,— հատուկ է այն պետություններին, որոնք գտնվում են հասարակական և պետական զարգացման ցածր աստիճանի վրա»: (Տես Լենին, հատոր XI, էջ 453—54): Այսպես էր ցարական կառավարության և կալվածատիրական դասակարգի ագրարային ընդհանուր ծրագիրը ողջ Ռուսաստանում:

Այս ընդհանուր ծրագրից ելնելով Վ. Դաշկովը առաջարկում էր իր «պրակտիկ» ձեռնարկումները, որոնք հանգում էին հետևյալ երկու կետերին. 1. Վերացնել գյուղացիների ժամանակավոր պարտավորյալ և կախյալ հարաբերությունները և նրանց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ և 2. հողերի հետգնումը գյուղացիների կողմից կատարել պետության «օժանդակությամբ»:

«Հողերի հետգնումը գյուղացիների վրա դնելը, ես անարդարացի էի համարում, — գրում է Վ. Դաշկովը կայսրին — քանի որ նրանց մեղքով չէր, որ պարտավորյալ հարաբերությունները ձգձգվեցին երկար տարիներ, որի ընթացքում գյուղացիները վճարում էին իրենց բաժնեհողի համար նատուրալ պարտավորություններով, որոնք իրենց արժեքով անընդհատ աճում էին գյուղատնտեսական մթերքների գների ընդհանուր թանկացման կապակցությամբ»*:

«Մյուս կողմից ես հնարավոր չեմ գտնում,— շարունակում է Վ. Դաշկովը,—դադարեցնել գյուղացիների կախյալ հարաբերությունները կալվածատերերից առանց համապատասխան հետգնման վճարների, քանի որ վերջինս խոստացվել է կալվածատերերին դեռևս 1860-ական թվականների օրենքով»**:

Այսպես էին Վ. Դաշկովի ագրարային ծրագրի պրակտիկ կե-

---

* Всеподаннейшая записка по управлению Кавказским краем ген.-адютант графа Воронцова-Дашкова, Тифлис, 1907 г., стр. 42.

** Նույն տեղը, էջ 43:

տերը, որոնք ամբողջովին տոգորված էին ցարիզմի և տեղական կալվածատերերի շահերի պաշտպանությամբ:

Ինչի՞ էին հանգում այդ առաջադրանքները: Նրանք հանգում էին 1861 թվի ռեֆորմի իրագործմանն Անդրկովկասում: Այդ ծրագրի շրջանակները 61 թվի ռեֆորմի շրջանակներից այն կողմը չէին անցնում: Հետևապես ցարիզմը առաջարկում էր 20-րդ դարի սկզբին Անդրկովկասում կիրառել այն, ինչ որ կիրառված էր Ռուսաստանում 19-րդ դարի 60-ական թվականներին: Ահա թե ինչի էր հանգում Վորոնցով Դաշկովի ագրարային ծրագրի գործնական կողմը:

Սակայն կհնազանդեցնե՞ր արդյոք ցարիզմի կողմից կիրառվող այս ուշացած ռեֆորմն Անդրկովկասի ըմբոստ գյուղացիական մասսաներին, որոնք այժմ զենքի էին դիմում,— այդ բանում ցարական կառավարությունը նույնպես համոզված չէր: Համոզված չլինելով դրանում, նա որպես նույն ագրարային քաղաքականության անբաժան մասը, նոր ուժգնությամբ առաջ էր քաշում Անդրկովկասի գաղութացման հարցը նոր քաղաքական շարժառիթներով:

Անդրկովկասի գաղութացման հարցը նոր չէր, որ դրվում էր ցարիզմի կողմից: Նա կիրառվում էր Կովկասը նվաճելու օրից սկսած, հետռեֆորմյան շրջանում նա ընդարձակ չափեր էր ընդունում, իսկ այժմ հրամայական պահանջ դառնում:

«... Ի՞նչ է գաղութը քաղաքատնտեսական իմաստով,— հարցնում է Լենինը և պատասխանում,— ... Այս գաղափարի հիմնական հատկանիշներն ըստ Մարքսի հետևյալներն են. 1) չբռնված, ազատ հողերի առկայությունը, որոնք դյուրամատչելի են գաղթողներին, 2) աշխատանքի կազմավորված համաշխարհային բաժանման, համաշխարհային շուկայի առկայությունը, որի շնորհիվ գաղութները կարող են մասնագիտանալ գյուղատնտեսական մթերքների մասսայական արտադրության մեջ, ստանալով նրանց փոխարեն արդյունաբերական պատրաստի շինվածքներ...»*:

Գաղութի քաղաքատնտեսագիտական իմաստի այս երկու պայմաններն էլ առկա էին Անդրկովկասում և Հայաստանում:

Այս երկու պայմանների առկայությունը արագացնում էր Կով-

* Լենին, Երկեր, հատ. III, հայ. հրատ., էջ 673:

կան գաղութացումը 19-րդ դարի վերջում։ «Հետռեֆորմյան դարաշրջանում, ասում է Լենինը, մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն...»*։

Ռուսական ներքին նահանգներից՝ Սամարայից, Սարատովից, Տամբովից, Վորոնեժից և այլ նահանգներից Կովկաս էր գաղթեցվում «ռուսական տարրը», առավելապես ռուս աղանդավորները՝ մալականներ, դուխոբորներ, պրիգուններ, «սուբբոտնիկներ» և այլն։ Սրանց համար հողագործության վարելու նպաստավոր պայմաններ ստեղծելով, ցարական կառավարությունը ձգտում էր արմատավորել «հենվոր տարրը» տեղում, բնիկ տեղական գյուղացիների վրա ազդելու նպատակով։ Ցարիզմն աշխատում էր միանգամից երկու նպատակ որսալ — մի կողմից ռուսական ներքին նահանգներից Անդրկովկաս տեղափոխել ցարիզմի համար ոչ այնքան հուսալի աղանդավորներին, մյուս կողմից հենց նրանց միջոցով նոր սոցիալական բազա ստեղծել Անդրկովկասում՝ տեղական գյուղացիությանը զսպելու համար, ինչպես և գաղութների ռուսացման քաղաքականությունն առաջ մղելու համար։ Աղանդավորների հետ միասին Անդրկովկաս էին ուղարկվում նաև գերմանական կոլոնիստներ, որոնք ցարիզմի կարծիքով նույնպես հուսալի տարր էին հանդիսանում գաղութում։ 1916 թվին գերմանական կոլոնիստների թիվը 12 հազարի էր հասնում։ Սրանք 1908 թվին ունեին 27.471 դեսյատին բաժնեհող և 18.055 դեսյատին սեփական հող, ընդամենը 45.526 դեսյատին, կամ ամեն մի շնչին ընկնող 4 դեսյատինից քիչ պակաս հողային տարածություն**։

Երևանի նահանգում ապրում էին մեծ մասամբ մալական գաղթականներ, տեղավորված 11 գյուղերում (Նովո-Նիկոլաևկա, Կամարլինովկա, Ն. Ախտա, Կոնստանտինովկա, Սուխոյ-Ֆոնտան, Ելենովկա, Սեմյոնովկա, Ալեքսանդրովկա, Նադեժդինո, Վասիլևանովկա և Նիկիտինո) 6236 շնչով***։

---

* Լենին, նույն տեղը, էջ 673—74, ընդգծումը իմն է— Օ. Հ.։

** Сведения о культурном-экономическом состоянии колоний в Закавказском крае, 1916 г.

*** Материалы по вопросу о введении земских учреждений в Закавказье, т. IX, стр. 76, 1910 г., Тифлис.

Սրանց մեծ մասը զբաղվում էր առևտրային հողագործությամբ, իրենց ձեռքը կենտրոնացնելով հողային մեծ տարածություններ։ Գլխավոր զբաղմունքն անասնապահությունն էր, բանջարաբուծությունը և այլագործությունը*։

Ինչպես մատնանշեցինք, Կովկասը ռուս գաղթականներով բնակեցնելու հարցը առավել խիստ կերպով առաջ էր քաշվում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին։ «Երկրագործության և պետական կալվածների պ. մինիստրների կարգադրությամբ,— գրում է «Մուրճ»-ը 1904 թվին,— 1899 թվից Կովկասում որոշվում են այն հողերը, որոնք պետք է հատկացվեն Ռուսաստանի ներքին նահանգներից եկող ռուս գաղթականներին։ Մինչև 1903 թիվը Կովկասում այս նպատակով հատակագծի վրա է հանված 38.400 դեսյատին պիտանի հող, որոնց վրա պետք է 145 գաղթականական կենտր հիմնվեն։ 1903 թվին Բաքվի, Գանձակի, Թիֆլիսի և Երևանի նահանգներում և Ղարսի շրջանում հանված է 671.887 դեսյատին հատակագիծ, որոնցից կազմելու են նույն նպատակով 32 գաղթականական բաժիններ» («Մուրճ» ամսագիր, 1904 թիվ, № 1, էջ 224)։

Միայն 1899 թվին գաղթեցման նպատակների համար կառավարությունը բաց էր թողել 80.000 ռուբլի։

Բայց այս բոլոր միջոցառումները չէին բավարարում ցարական կառավարության կողմից կիրառվող ագրարային ծրագրի նոր կուրսի պահանջներին։ Ռուսական տարրը Անդրկովկասում չափազանց քիչ էր ցարական կառավարության կարծիքով։ Եկվորների մի մասը նորից իր տեղն էր վերադառնում, մի որոշ մասն էլ — դուխոբորների որոշ մասը— վերադասեց Ամերիկա գաղթել, ոտնահարած համարելով իր կրոնական զգացմունքները**, իսկ մնացածները չէին արդարացնում ցարիզմի հույսերը։

«Ինչ վերաբերում է Կովկասին, ապա դժբախտաբար նրա գա-

* Երևան նահանգի մալականների մասին մանրամասն տես՝ С. Колосов—Русские сектанты в Эрив. губ. Пам. кн, 1902 г. отд. IV, стр. 133–135.

** Դուխոբորները կրոնական նկատառումներով չէին ընդունում պատերազմը և այդ պատճառով էլ չէին ենթարկվում զինվորագրության օրենքին։ «Այդ անհնազանդության հետևանքը եղավ նրանց ցրիվ տալ,—գրում է «Մուրճը»,—որի պատճառով նրանք տնտեսական մեծ զրկանք կրեցին» («Մուրճ», 1897 թ., № 2, էջ 378—9)։

ղութացման հնարավորությունը ձեռքից բաց է թողնված» — ափսոսանքով ասում է Վորոնցով Դաշկովը*։

Անհրաժեշտ էր «բաց թողածը» այժմ վերականգնել — լավ է ուշ, քան երբեք։ Անհրաժեշտ էր ուժեղացնել ներգաղթը դեպի Անդրկովկաս և ուղղել սխալը։ Սակայն Վորոնցով Դաշկովն այժմ նոր ձևով էր դնում գաղութացման հարցը։ Նրա կարծիքով գաղթեցման անհաջողությունն մինչև այժմ եղել է այն, որ հատուկ ուշադրություն չի դարձված եղել գաղթողների ընտրության վրա։ «Անհաջող գաղթեցման գլխավոր պատճառը, — մատնանշում է Վ. Դաշկովը նույն զեկուցագրում, — պետք է համարել ձեռնարկու գաղթողների համապատասխան ընտրության լրիվ բացակայությունը, որոնք ընդունակ լինեին բացի սովորական հացահատիկային մշակույթից զբաղվելու նաև արժեքավոր կուլտուրաներով և արդյունաբերական անասնապահությամբ»**։

Անդրկովկաս պետք է գաղթեցնել ոչ թե ընդհանրապես գյուղացիների, այլ ձեռնարկու, այսինքն ստոլիպինյան կուլակ գյուղացիներին, որոնք կարողանային արմատավորվել տեղում, մրցել տեղական գյուղացիության հետ, զբաղվել ոչ միայն հացահատիկների մշակությամբ, այլև բամբակի, խաղողի և այլ կուլտուրաների մշակությամբ, դառնալով ցարիզմի հաստատուն և վստահելի հենարանը Անդրկովկասում։ «Երկրամասն են գալիս տնտեսապես և հոգեպես առավելապես թույլ ընտանիքներ, որոնք ուրիշ ոչ մի տնտեսության մասին գաղափար չունեն, բացի հացահատիկային տնտեսությունից։ Այդպիսի ընտանիքները չեն կարող դիմանալ, թալանի են մատնվում և հետ վերադառնում»***։

Ուրեմն գաղթեցման համար պետք է խիստ ընտրություն կատարել, գաղթեցնել տնտեսապես և հոգեպես կայուն տարրերի։

Բայց ի՞նչպես կազմակերպել այդպիսի տնտեսապես և հոգեպես կայուն տարրերի գաղթը Անդրկովկաս Ռուսաստանի ներքին նահանգներից։ Չէ՞ որ այդպիսի տարրը, որն իրեն շատ լավ է զգում հայրենական գյուղում, դեպի օտար հորիզոնները չի գաղթում։ Ուրեմն ի՞նչ է անհրաժեշտ անել։ Վ. Դաշկովն առաջար-

* Всеподданнейшая записка, стр. 67.

** Նույն տեղում, էջ 72, ընդգծումն իմն է—Օ. Հ.

*** Նույն տեղում, էջ 73—74, ընդգծումներն իմն են—Օ. Հ.։

կում է իր սխալը: Պետք է դադարեցնել ներքին նահանգներից անմիջապես Անդրկովկաս գաղթեցնելու պրակտիկան: Սկզբում գաղթողներին անհրաժեշտ է Հյուսիսային Կովկաս ուղարկել» նրանց այնտեղ «ակլիմատիզացիայի ենթարկել» և միայն որոշ ժամանակից հետո, անհրաժեշտ ընտրությունից հետո նրանցից «դիմացկուններին» Անդրկովկաս տեղափոխել:

Հյուսիսային Կովկասում եղած «խմբերի միջից,— ասում է Վ. Դ.,— որոնք արդեն հարմարվել են տեղական կլիմայական և տնտեսական պայմաններին, ձեռնարկու և կայուն տնտեսությունների անհրաժեշտ ընտրության դեպքում, ավելի մեծ հնարավորություն կա, քան թե ներքին նահանգների սակավհող գյուղացիներից...» (նույն տեղը, էջ 77):

Այսպես ուրեմն, Անդրկովկաս պետք է գաղթեցնել կուլակային տնտեսություններ, որոնք աճում են Հյուսիսային Կովկասի ջերմոցներում — ահա Վ. Դուչկովի գաղթեցման քաղաքականության նոր կուրսը:

Ինչի՞ էր հանգում ուրեմն ընդհանուր առմամբ ցարական կառավարության ագրարային քաղաքականությունը Անդրկովկասում ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում: Այն հանգում էր.

1. Հողի մասնավոր կալվածատիրական սեփականության պաշտպանության հիման վրա կիրառել՝ ավարտել 1861 թվի ռեֆորմն Անդրկովկասում և

2. Արագացնել Անդրկովկաս գաղթականներ ուղարկելու գործը, կուրս վերցնելով կուլակային տնտեսությունների վրա:

1905—1907 թվերի ռևոլյուցիան ժամանակավորապես պարտվեց. երկգլխանի արծիվը հաղթանակեց,— բայց իր տեղումը մնաց դեռևս: Ցարիզմը հնարավորություն էր ստանում ստոլիպինյան ագրարային քաղաքականությամբ երկրորդ խոշոր քայլն անելու դեպի բուրժուական միապետությունը, դեպի պրուսական ուղին: Անդրկովկասում նա հնարավորություն էր ստանում իրագործելու իր վերև մատնանշված ագրարային ծրագիրը:

Ծրագրի առաջին մասի կենսագործումը երկար բյուրոկրատական քաշքշուկներից հետո իր արտահայտությունն է գտնում 1912 թվի դեկտեմբերի 20-ի հայտնի օրենքում, որը կոչվում էր. «Օրենք, Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգ-

ների ժամանակավոր պարտավորյալ և կախյալ գյուղացիների՝ կալվածատերերի նկատմամբ ունեցած հարաբերությունները դադարեցնելու մասին, բաժնեհողերը պարտադիր կերպով հետ գնելու միջոցով—պետության օժանդակությամբ»*։

Այդ օրենքի հիման վրա Անդրկովկասի ժամանակավոր պարտավորյալ և կախյալ գյուղացիները հարկադիր կարգով պետք է հետ գնեին իրենց հողերը, որպես մասնավոր սեփականություն, պետության «օժանդակությամբ»։ Օրենքը տարածվում էր նաև էջմիածնի վանքապատկան հինգ գյուղերի վրա (տես հոդված 1-ին և 2-րդ)։ 1913 թվի հունվարից վերացվում էին գյուղացիների կողմից կալվածատերերին տրվող վճարները Երևանի նահանգում, ինչպես նաև գյուղացիների կողմից Էջմիածնի վանքին տրվող գանձումները։ Դրա փոխարեն կալվածատերերին պետության գանձարանից ցմահ տրվում էր նրանց նախկին գյուղացիներից գանձվող տարեկան վճարների գումարը՝ ամեն մի ծխին հաշվելով 2 ռ. 50 կ., պլյուս հետգնման վճարների չորս ու կես տոկոսը, իսկ Էջմիածնի վանքը տաս տարվա ընթացքում պետության գանձարանից ստանում էր տարեկան 21 հազար ռուբլի։

Հետգնման ենթակա էին այն հողերը, որոնք մտցված էին 1870 թվի ուստավնոյ գրամոտայում։ Եթե վերջիններիս մեջ չէր մատնանշված բաժնեհողի սահմանները, կամ ներկա սահմանները չէին համապատասխանում անցյալում գրանցվածին, ապա հետգնումը կատարվում էր առկա եղած բաժնեհողի հիման վրա։ (Տես հոդված 12-րդ և նրա մեկնաբանությունները)։

Գյուղացիների կողմից իրենց հետգնման պարտքերը վճարելու ժամկետն ամեն մի գյուղի համար սահմանվում էր միատեսակ՝ կամ 56 տարով, կամ 41 տարով, կամ 26 տարով։ Այս հարցը որոշվում էր համայնքի ընդհանուր ժողովի կողմից ձայների մեծամասնությամբ։ Այդ հիման վրա գյուղացիները պարտավոր էին պետությանը վճարելու.

56 տարվա դեպքում ամեն մի ռուբ. տարեկ. 4,5 կոպեկ
41 տարվա դեպքում ամեն մի ռուբ. տարեկ. 5 կոպեկ
26 տարվա դեպքում ամեն մի ռուբ. տարեկ. 6 կոպեկ։

---

* Օրենքը, ինչպես նաև նրան վերաբերող բազմաթիվ լրացումները, հարցադրումները և մեկնաբանումները տպագրված են Ս. Ն. Վորոնիխինի— Закон 20 декабря 1912 г. աշխատության մեջ, Թիֆլիս, 1916 թ.։

Թե ինչ արժեր տարբեր կուլտուրաների տակ եղած հողի յուրաքանչյուր դեսյատինը, այն որոշվում էր պետության կողմից ամեն մի գավառի համար առանձին։ Այսպես օրինակ, էջմիածնի գավառի համար սահմանվում էր հողերի այսպիսի գնահատում։ (Ս. Ն. Վորոնինինի վերոհիշյալ աշխատությունը, էջ 97)։

1. Այգիների և բանջարանոցների դեսյատինը արժեր 64 ռ.
2. Ջրովի վարելահողերը (1—5 տեսակները) արժեր 32—64 ռ.
3. Անջրդի վարելահողերի դեսյատինը արժեր 27—32 ռ.
4. Խոտհարքի դեսյատինը արժեր 20—27 ռուբլի։

Այսպիսով, եթե որևէ գյուղացու հետդնման վճարը ասենք հավասար էր 500 ռուբլու, ապա նա 41 տարվա պայմանի դեպքում պարտավոր էր վճարել տարեկան ամեն մի ռուբլու դիմաց 5 կոպեկ, կամ ընդամենը 25 ռուբլի, իսկ դա նշանակում էր, որ նա 41 տարվա ընթացքում պետք է վճարեր 25. 41=1025 ռուբլի, այսինքն՝ կրկնակի անգամ ավելի թանկ, քան հետդնման սահմանված վճարումը։ Ահա թե ինչպիսի պայմաններով էին հետդնում Անդրկովկասի գյուղացիները իրենց սեփական հողերը։ Պարզ է, որ 1912 թվի դեկտեմբերի 20-ի օրենքը ուղղված էր ամբողջովին գյուղացիության շահերի դեմ, հանուն կալվածատերերի շահերի, հանուն ցարիզմի դիրքերի ամրապնդման։

Ինչ վերաբերում է ցարիզմի ագրարային ծրագրի երկրորդ մասի կիրառմանը,— ուժեղացրած տեմպով գաղթականներ տեղափոխել Անդրկովկաս, ապա այն նույնպես հետևողականորեն կիրառվում էր կյանքում։ 1906 թվին ուսումնասիրության ենթարկվեց մեկ միլիոն 700 հազար դեսյատին հողամաս, որից գաղութացման համար միանգամայն պիտանի էր ճանաչվում 875 հազար դեսյատին, որոնց վրա պետք է տեղափոխվեին ռուս գաղթականները։

Թե ինչ թափով էր գնում գաղութաբնակների տեղավորման գործն Անդրկովկասում, այդ մասին Վ. Դաշկովը մատնանշում է մի այլ փաստաթղթում, իր՝ 1910 թվին Նիկոլայ 2-րդին գրած ամենահպատակ զեկուցագրի մեջ։ Այստեղ նա ասում է հետևյալը.

«Իմ կառավարման հինգ տարվա ընթացքում (խոսքը Անդրկովկասի կառավարման մասին է—Օ. Հ.) այստեղ կազմակերպվել են 261 ռուսական գյուղ, որոնցում բնակեցված են 54 հազար երկսեռ բնակչություն, այդ թվում 139 գյուղ, 36 հազար անձով, պետական

հողերի վրա, 122 գյուղ...18 հազար անձով մասնավոր մարդկանցից գյուղացիական բանկի օգնությամբ գնված հողերի վրա*:

Պետք է մատնանշել, որ ոչ մի ժամանակ Անդրկովկասի գաղութարնակեցումը Ռուսաստանից չի կատարվել այնպիսի ինտենսիվությամբ, ինչպես այն կատարվում էր 1905—1910 թվականներին:

Պետական գյուղացիական բանկը, որն իր բաժանմունքն էր հիմնել Թիֆլիսում 1906 թվին, խիստ կերպով խթանում էր գաղութարնակեցման գործին: Նրա կազմակերպումից հետո 3—4 տարվա ընթացքում, նրա միջոցով, վաճառքի հանվեց 52 հազար 700 դեսյատին հող երկու ու կես միլիոն ռ. արժողությամբ: «Ռուսները,—մատնանշում է Դաշկովը,—ձեռք են բերել ամբողջ վաճառված տարածության 34 տոկոսը» (նույն տեղը, էջ 54):

Ոգևորված գաղութարնակեցման իր հաջողություններով, ցարական սատրապը եզրակացնում է՝ «Ինձ համար ավելի կարևոր է թվում ամենաեռանդուն միջոցները ձեռք առնել, չդանդաղեցնելու ռուսական գաղութարնակեցմանը ենթարկելու այն ամենը, ինչ որ ազատ է այժմ»:

Այսպես էր ցարիզմի ագրարային քաղաքականությունը Անդրկովկասում ռուսական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շրջանում:

2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ինչպե՞ս էին վերաբերվում Անդրկովկասի տիրապետող դասակարգերը՝ կալվածատիրությունն ու բուրժուազիան ցարիզմի կողմից ձեռնարկվող ագրարային քաղաքականությանը:

Ինչ վերաբերում է գյուղացիական հողերի հետգնմանը, պետության օժանդակությամբ, այս հարցում Անդրկովկասի կալվածատիրական դասակարգը, ինչպես նաև հայկական բուրժուազիան լիակատար կերպով համերաշխ էին ցարական կառավարության հետ: Համառուսաստանյան և անդրկովկասյան ռևոլյուցիոն հորձանքի պայմաններում Անդրկովկասի տիրապետող դասակարգերին

---

* Всеподаннейшая записка за пятилетия управления Кавказом стр. 34.

այլ ելք չէր մնում անելու, քան համաձայնվել այդպիսի միջնորդության հետ, որը նրանց կարծիքով կարող էր թուլացնել գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը ընդդեմ հողի մասնավոր կալվածատիրական սեփականության, ընդդեմ երկրում իշխող հասարակական հարաբերությունների։

Այդ էր պատճառը, որ թե՛ Քութայիսի և թե Թիֆլիսի նահանգի ազնվականությունը, թե Ադրբեջանի կալվածատիրությունը—ցարական կառավարությանը ներկայացրած իրենց խնդրագրերում առաջ էին քաշում գյուղացիների կախվածության վերացման և հողի հետդնման հարցը։ Նույն այդ տեսակետին էր կանգնած նաև հայկական բուրժուազիան։

1905 թվի մարտի 30-ին Նիկոլայ 2-րդին տված հեռագրում Վ. Դաշկովը, խոսելով Անդրկովկասում տիրող «բարեկեցության խանգարման», «խառնակությունների և բռնությունների» մասին, նույն էր հայտնում, որ իրեն կհաջողվի վերականգնել խանգարված կարգը։ «Ես հավատում եմ ժողովրդի իմաստությանը, և համոզված եմ, որ ազգաբնակության անհանդիստ մասը չի դիմանա բարեմիտ անձանց մեծամասնության միահամուռ հասարակական գրոհի առաջ (կարդա միահամուռ ժանդարմական գրոհի առաջ—Օ. Հ.)։ Ինձ նորին կայսերական մեծությունից տրված ցուցումների համաձայն, ես պետք է ժողովեմ բնակչության ներկայացուցիչների խորհրդակցություններ, ուր պետք է մտնեն ընտրվածներ ազնվականություններից, քաղաքներից ու գյուղական հասարակություններից, ինչպես և պրավոսլավ, հայ լուսավորչական և մահմեդական հոգևորականություններից»։ («Մուրճ» 1905 թիվ, № 4, էջ 222)։

Բավական էր ցարական սատրապի այսպիսի մի կեղծ դեմոկրատիզմով վարագուրված, բայց ըստ էության ոչինչ չներկայացնող հայտարարությունը, որպեսզի Անդրկովկասի տիրապետող դասակարգերը իրենց ցնծության մեղրամիսն ապրեին՝ ամենուրեք հայտարարելով, որ Անդրկովկասի համար նոր էրա է բացվում։ Բազմաթիվ ուղերձներ և հոդվածներ են գրվում ցարի և նրա փոխարքայի հասցեին վրացական ազնվականության, մուսուլմանական վերնախավի և հայկական բուրժուազիայի կողմից, փառաբանելով ամենաողորմած կայսրին դեպի Անդրկովկասի ժողովուրդներն ունեցած հոգատարության առթիվ։

Դեմոկրատական պատրանքների հրճվանք էր ապրում նաև

հայկական բուրժուազիան: «Մշակը» մի շարք առաջնորդողներ նվիրեց փոխարքայի հայտարարությանը: «Փոխարքայի այդ լուսավոր ցանկությունը մի նոր դարագլուխ է բացում մեր երկրի համար, ասպարեզ հրավիրելով մեր երկրի ազգաբնակության բոլոր խավերը»—գրում էր «Մշակ»-ի խմբագրությունն իր ապրիլի 2-ի առաջնորդողում: Նույն համարի երկրորդ առաջնորդողում, որն ուներ «Ժամը հասավ» վերնագիրը, «Մշակ»-ը նույնպիսի էքստազով գրում էր՝ «Զգում ենք միայն, որ մի դարագլուխ է սկսվում մեր բազմատանջ հայրենիքի համար»... «փրկարար ժամը հասավ կովկասյան ազգեր...» շրջվող դարնան հետ այսպիսի ավետիս է գալիս...» («Մշակ», 1905 թիվ, № 61):

Այսպես էր Անդրկովկասի տիրապետող դասակարգերի վերաբերմունքը դեպի ցարական կառավարությունը: Եվ ահա Վ. Դաշկովի հայտարարությամբ գոտեպնդված նրանք գործի են անցնում, ժողովներ և խորհրդակցություններ գումարում, բանկետներ կազմակերպում և մշակում իրենց պահանջների հանրագրերը ցարական կառավարությանը ներկայացնելու համար:

Նախահարձակն այս ուղղությամբ լինում է Քութայիսի ազնվականությունը: Առաջինը նա է, որ իշխան Ս. Ծերեթելու գլխավորությամբ 1905 թվի փետրվարի 19-ին Պետրոգրադում Ներքին գործոց մինիստրին է ներկայացնում Քութայիսի ազնվականության պահանջները: Քութայիսի ազնվականությանը հետևում է Թիֆլիսի ազնվականությունը, այնուհետև հայկական բուրժուազիան և վերջապես մուսավաթական վերնախավը: Բոլոր նրանք, մեկը-մյուսի հետևից իրենց պահանջներն են ներկայացնում ցարին և այդ պահանջների իրագործումն են հայցում նրանից:

Մեր խնդիրը չէ քննության առնել վերոհիշյալ հանրագրերը իրենց մանրամասնություններով: Նրանց բոլորի բովանդակությունը հանգում էր ավել կամ պակաս չափով հետևյալին՝ պահպանել ցարական միահեծանությունը, նրա հասարակական իրավական հարաբերությունները և այդ հիման վրա տիրապետող դասակարգերի համար դեմոկրատական որոշ արտոնություններ դուրս կորզել, սկսած գավառային և նահանգական զեմստվոներ կազմակերպելուց մինչև մամուլի և խղճի ազատությունը, մինչև ութ ժամյա բանվորական օրը և բանվորների պարտադիր պետական ապահովագրությունը (Երևանի դումայի պահանջի 13-րդ կետը): Գրկնում

ենք, այս բոլորը ցարական միահեծանության պահպանման պայմաններում և նրա հովանու տակ։

Մեզ հետաքրքրում է այդ հանրագրերի ագրարային պահանջները։ Ագրարային ինչպիսի՞ ծրագրեր են առաջ քաշում Անդրկովկասի տիրապետող դասակարգերը։

Քութայիսի նահանգի ազնվականությունը երկու կետ էր առաջադրում այս ուղղությամբ. 1) ճորտատիրական մնացորդների վերացումը Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում և 2) իրավունք տալ վրացիներին անարգել բնակություն հաստատելու պետական ազատ հողի վրա։

Ինչ վերաբերում է առաջին կետին, ինչպես գիտենք, ցարական կառավարությունն ինքը համաձայն էր դրան։ Երկրորդ կետի մասին մենք դեռևս առիթ կունենանք խոսելու։

Հայկական բուրժուազիան հանդես եկավ երկու հանրագրով։ Առաջինը դա Երևանի Քաղաքային դումայի հանրագիրն էր, ընդունված 1905 թվի մարտի 30-ի նիստում։ Երկրորդը՝ այսպես կոչված հատուկ հայկական հանրագիրն էր, որը մշակվեց Թիֆլիսում ապրիլի 3-ից 15-ը գումարված ժողով-համագումարում, Անդրկովկասի 24 հայաբնակ վայրերի 82 ներկայացուցիչների կողմից։ Առաջին հանրագիրը իր պահանջները սահմանափակում էր Երևանի նահանգի շրջանակներով։ Երկրորդն արտահայտում էր Անդրկովկասի հայության (կարդա բուրժուազիայի—Օ. Հ.) շահերը։

Քննենք այդ երկու հանրագրերի ագրարային պահանջները։

Երևանի պետական դուման հետևյալ պահանջներն էր առաջադրում ագրարային հարցի բնագավառում[*]։

1. Հողի ազգայնացումը (6-րդ կետ)։

2. Արքունական տուրքի վերացումը և բացարձակ իրավունքներ տեղական անհող և սակավահող գյուղացիներին բնակություն հաստատելու արքունական ազատ հողերի վրա և օգտվելու նրանցով (7-րդ կետ)։

3. Վերադարձնել այն կալվածները և դրամագլուխները, որոնք պատկանում են հայոց եկեղեցիներին, վանքերին և նախկին եկեղեցական ծխական դպրոցներին և թեմական դպրոցներին, թե դո-

* «Մշակ», 1905 թ., № 64։

յություն ունեցողներին և թե փակվածներին։ Վերադարձնել վակուֆ կալվածները մահմեդական մզկիթներին (21-րդ կետ)։

Երևանի քաղաքային դումայի կողմից ընդունված հողի ազգայնացման պահանջը դատարկ ֆրազից բացի ոչ մի նշանակություն չուներ նրա հեղինակների համար։ Կարելի է ենթադրել, որ առաջադրելով այդ կետը, հանրագրի կազմողները մինչև վերջը չէին հասկացել նրա ամբողջ իմաստն ու նշանակությունը, հակառակ դեպքում ի՞նչպես հասկանալ այսպես ասած ագրարային բիմետալիզմի պահանջը, երբ հողի ազգայնացման հետ միասին առաջ էր քաշվում 21-րդ կետը, որի համաձայն վանքերի, եկեղեցիների և մզկիթների մասնավոր սեփականությունը իրենց պատկանող հողերի նկատմամբ մնում էր։

Հողի ազգայնացումը բուրժուական հարաբերությունների պայմաններում կարող է լինել բուրժուական ռևոլյուցիայի վերջին քայլը։ Նրա իրագործումը անհամատեղելի է վանքապատկան, եկեղեցապատկան ու մզկիթապատկան հողերի ֆեոդալական-միջնադարյան մասնավոր սեփականության պահպանման հետ, մինչդեռ Երևանի հանրագիրը, չառաջադրելով երբեք բուրժուական ռևոլյուցիայի հարցը,— այդպիսի կոմբինացված պահանջն էր առաջ քաշում։

Թիֆլիսում գումարված ժողով-համագումարը, որը մշակեց ցարական կառավարությանը ներկայացվելիք հատուկ հանրագիրը, զանց առավ երևանցիների պահանջը հողի ազգայնացման մասին։ Այս հանրագիրը, որը ներկայացնում էր Անդրկովկասի հայկական լիբերալ բուրժուազիայի, ագրարային հարցում պահանջում էր.

1. Պարտադրել, որ մուլքադարական և ժամանակավոր պարտավոր գյուղացիները հետգնվեն ամբողջ համայնքների կողմից գանձարանի աջակցությամբ, Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահավասար հիմունքներով։ Աջակցել, որ գյուղական հասարակությունները կարողանան հետգնել իրենց հողաբաժիններից դուրս գտնվող այլ մասնավոր կալվածատիրական հողերը, որոնցից նրանք շարունակ օգտվում են, և պարտավորեցնել, որ գյուղացիական բանկը տա նրանց այդ նպատակի համար փոխառություններ (15-րդ կետ)։

2. Թույլ տալ մասնավոր վարկային հաստատություններին

գործողություններ անել գյուղացիական հողերի հետգնման վերաբերյալ (16-րդ կետ)։

3. Վերադարձնել հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները և կալվածները...

4. Նախապես խրախուսել տալ տեղական սակավահող և անհող գյուղացիներին բնակվելու ազատ արքունի հողերի վրա Անդրկովկասի սահմաններում։ Դյուրություններ տալ գյուղական արդյունաբերությանը օգտվելու անտառներից, պաշտակներից և արոտատեղերից (17-րդ կետ)*։

Այսպիսով, ի տարբերություն Երևանի պետական դումայի պահանջների, հայկական հատուկ հանրագիրը հողի ազգայնացման ոչ մի պահանջ չի առաջադրում։ Հանրագիրը պահանջում է հողի հետգնումը պետության հաշվին, համայնքներով, կանգնած մնալով գյուղական համայնքների պահպանման տեսակետին։ Չէ՞ որ համայնքը հանդիսանում էր գյուղի շերտավորումն ու կուլակային շահագործումը քողարկող ամենահարմար ձևը։ Բայց միայն գյուղացիներին պատկանող հողերի հետգնումով չէր սահմանափակվում հայկական հատուկ հանրագիրը։ Ագրարային հարցում նա ավելի լայն կերպով արտահայտում էր գյուղական կուլակի շահերը։ Գյուղական կուլակը չէր կարող պարփակվել միայն բաժնեհողի նեղ շրջանակներում։ Նրա տնտեսական հնարավորությունները դուրս էին եկել բաժնեհողի սահմաններից։ Կուլակը ձգտում էր իր ձեռքը կենտրոնացնելու նաև կալվածատիրական հողը։ Ահա թե ինչու հանրագիրը պահանջում է նաև մասնավոր կալվածատիրական հողերի գնումը գյուղացիների կողմից։ Պետական բանկը և մասնավոր վարկային հաստատությունները պետք է օժանդակեին գյուղական կուլակին այս հարցում։

Ինչ վերաբերում է «սակավահող և անհող գյուղացիներին», ապա նրանց պետք է բավարարում տրվի ոչ թե կալվածատիրական կամ վանքապատկան հողերից, այլ արքունական ազատ հողերից։

Ահա հայկական բուրժուազիայի ագրարային ծրագիրը։ Նա ամբողջովին համապատասխանում էր գյուղական կուլակի շահերին։

---

* «Մշակ», 1905 թ., № 73։

Հատուկ հայկական հանրագիր մշակող հայկական բուրժուազիայի այս ներկայացուցիչներից էլ մի տարուց հետո, 1906 թվի հունիսին ծնունդ առավ հայկական կադետական պարտիան—«Սահմանադրական-դեմոկրատական պարտիայի հայ արմատական ֆրակցիա»—որն ամբողջովին որդեգրեց ռուսական կադետիզմի ծրագիրն ու գործելակերպը Անդրկովկասյան իրականության մեջ։

Ինչ ագրարային պահանջներ էր առաջադրում մուսուլմանական կալվածատիրությունը։ 1905 թվի հունիսի 10-ին իր պատգամավորների միջոցով փոխարքային ներկայացրած հանրագրում նա պահանջում էր*.

1. Փութացնել կառավարության աջակցությամբ գյուղական հողաբաժինների փրկագործումն ամբողջ համայնքներով, ոչնչացնել գյուղացիների անձնական կախումի մնացորդները, ազատ արքունական հողերը բաշխել անհող, սակավահող, ժամանակավոր պարտավորյալ գյուղայիններին և հողատեր մահմեդականներին, վերջ տալ գաղթականության հոսանքին դեպի Կովկաս և ապահովել տեղացի մահմեդականներին ձմեռային և ամառային արոտատեղիներով (ղշլաղ և էյլաղ), անտառով և այլն (2-րդ կետը)։

2. Տարածել ազնվական և գյուղական հողային բանկերի գործունեությունը մահմեդականների վրա (8-րդ կետ)։

3. Փութացնել մահմեդական խաների և բեկերի մասին եղած խնդրի լուծումը, տալով նրանց ազնվականների այնպիսի կազմակերպություններ, որոնք գոյություն ունեն պետության ներքին նահանգներում և վաղուց մուծված են Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում (9-րդ կետ)։

Մուսուլմանական վերնախավի ներկայացրած հանրագիրը ամբողջովին արտահայտում էր մուսուլման բեկերի և աղաների շահերը։ Առաջադրելով գյուղացիական հողերի հետգնման պահանջը, հանրագիրն աշխատում էր օգտվել Ռուսաստանում եղած ընդհանուր քաղաքական սիտուացիայից և վերջնականապես, պետականորեն ձևավորել մուսուլման կալվածատիրության կազմա-

---

* «Մշակ», № 122։

կերպություններն ու արտոնությունները։ Որպես նոր հարց, այստեղ առաջ է քաշվում գաղթականության հոսանքին վերջ դնելու պահանջը։ Մուսուլման պատգամավորությունը մատնացույց էր անում այն կամայականությունն ու ճնշումը, որոնք կիրառվում էին կյանքում մահմեդականների նկատմամբ գաղութաբնակեցման կապակցությամբ։ Մի շարք տեղերում (Ղազախի գավառի Կարակոյունլու գյուղում, Խաչենի և Կըզըլղայինի դաշտավայրերում, Շուշվա Ղուլար գյուղում), մատնանշում էր «Մշակ»-ը, «Մահմեդական բնիկ գյուղացիներից խլեցին նրանց տները, այգիները, ջրաղացները, քյահրեզները, ջրհորները, ինչպես նաև ձմեռային ու ամառային արոտատեղիները և տվին գաղթականներին» («Մշակ», նույն տեղը)։

Ամփոփենք բոլոր հանրագրերի ագրարային հարցին վերաբերող պահանջները։ Այդ պահանջները հիմնականում հանգում էին հետևյալին.

1. Բոլոր նրանք, սկսած Քութայիսի նահանգի ազնվականների հանրագրից և վերջացրած Երևանի քաղաքային դումայի ավելի «ձախ» հանրագրով, կանգնած էին ցարական միապետության պահպանության դիրքերի վրա, նրա անսասանության վրա և այդ հիմքի վրա ձգտում իրագործել ագրարային ռեֆորմն Անդրկովկասում։ Ցարական կառավարությունն Անդրկովկասի տիրապետող դասակարգերի համար հանդիսանում էր այն ուժը, որը կարող էր օգնել նրանց սանձը դնելու Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման բերանին, փրկել նրանց կործանումից։ Անդրկովկասի կալվածատիրության և բուրժուազիայի թիկունքին որպես սպառնալիք կանգնած էր Անդրկովկասի ռևոլյուցիոն պրոլետարիատն ու գյուղացիությունը զենքը ձեռքին։

2. Բոլոր նրանք, այդ հանրագրերը, կանգնած էին կալվածատիրական, վանքապատկան, եկեղեցապատկան, մզկիթապատկան հողերի մասնավոր սեփականության պահպանման դիրքերի վրա (Երևանի քաղաքային դումայի հողի ազգայնացման պահանջը ինչպես տեսանք դատարկ ֆրազ էր միայն) և այդ դիրքերից առաջադրում ագրարային ռեֆորմն Անդրկովկասում։ Նրանց կոնկրետ պահանջներն այդ ուղղությամբ 1861 թվի ռեֆորմի շրջանակներից

դենը չէին անցնում, այդ պատճառով էլ նոր պայմաններում նրանք ռեակցիոն էին։

3. Բոլոր նրանք, այդ հանրագրերը, առաջադրելով գյուղացիներին պատկանող հողերի հետդարձման պահանջը, նպատակ ունեին մի անգամ ևս թալանելու գյուղացիությանը, ցարական կառավարությունից գյուղացիության հաշվին 17 միլիոնի հասնող մի կապիտալ կորզելու։ Ցարական կառավարությունը ընդառաջում էր Անդրկովկասի տիրապետող դասակարգերին այդ հարցում։

Այս երեք հիմնական հարցերում Անդրկովկասի տիրապետող դասակարգերը չէին հակադրվում ցարական կառավարությանը։ Այստեղ նրանց շահերը համընկնում էին և նրանք լիակատար կերպով համերաշխ էին միմյանց հետ։ Սակայն հանրագրերում ագրարային հարցին վերաբերող երկու պահանջ ևս կար, որտեղ բախվում էին ցարիզմի և Անդրկովկասի կալվածատիրության շահերը։ Այդ արքունական հողերի հարցն էր, և հետո գաղթականության հարցը։

Ինչպես տեսանք, բոլոր հանրագրերն էլ, սրբությամբ պահպանելով կալվածատիրական և եկեղեցապատկան հողերի մասնավոր սեփականությունը, պահանջում էին հողազուրկ և սակավահող գյուղացիներին հողով բավարարելու հարցը լուծել արքունական հողերի հաշվին և այդ կապակցությամբ էլ առաջ էր քաշվում գաղութաբնակեցման դադարեցման պահանջը։ Առաջադրելով այդ պահանջը, Անդրկովկասի տիրապետող դասակարգերն աշխատում էին մի կողմից գյուղացիությանը հեռացնել կալվածատիրական հողերի բռնագրավման ձգտումից և մյուս կողմից լուծել նրանց հողով բավարարելու հարցը պետական հողերի հաշվին։

Ինչպե՞ս էր վերաբերում ցարական կառավարությունն այս երկու պահանջներին։ Ակներև Վորոնցով-Դաշկովը համերաշխ էր այդ պահանջներին։ Ընդունելով հայկական պատգամավորությունը, Վ. Դաշկովը հայտարարեց. «Թե մինչև վերջին ժամանակներս Կովկասում տիրող հողային քաղաքականությունը գաղթականություններ հիմնելու նպատակով հողերի կողմից նեղում էր ոչ միայն հայերին, այլև ուրիշ ազգություններին էլ և որ այժմ այդ քաղաքականությունը բոլորովին փոխված է։ Այսուհետև ազատ հողերը Կովկասում պետք է տրվեն տեղական բնակչությանը, այդ թվում և հայերին» («Մշակ», № 110, 1905 թիվ)։

Նույն բանը նա կրկնեց նաև մահմեդական պատգամավորությանը։

Իրականում սակայն, կատարվում էր միանգամայն հակառակը։ Իրականում, ինչպես գիտենք նախորդ ենթագլխից, այս հարցում քաղաքականության ոչ մի փոփոխում չէր կատարվում (այստեղ ցարական սատրապը ուղղակի ստում էր, հասարակական կարծիքի աչքին թոզ փչելու համար) և անզուսպ կերպով առաջ էր մղում Անդրկովկասի գաղութաբնակեցման հարցը ամբողջ հետևողականությամբ և համառությամբ։

Հետագայում ցարական կառավարությունը երբեք չհրաժարվեց այդ քաղաքականությունից։ Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, 1915 թվի ամառը, երբ կովկասյան ճակատի զորքերի հրամանատար Յուդենիչը առաջարկում էր Վ. Դաշկովին էվակուացիայի ենթարկված Ալաշկերտի և Դիադինի հովիտները բնակեցնել Կուբանի և Դոնի կազակներով, այդ շրջանները հայերի ձեռքը չանցնելու համար,—փոխարքան լիակատար կերպով համաձայնվում է Յուդենիչի հետ։

Ինչ վերաբերում է արքունական հողերից տեղական հողազուրկ և սակավահող գյուղացիությանը բավարարելու հարցին, ապա այս հարցում ևս ցարական կառավարությունն անհողդողդ մնաց։ Արքունական հողերից Անդրկովկասի գյուղացիությունը ոչ մի հեկտար հող չստացավ։

Ռևոլյուցիոն շարժման հետագա վերելքն Անդրկովկասում, վերջնականապես ցարիզմի գիրկը նետեցին Անդրկովկասի տիրապետող դասակարգերին և նրանք ամբողջովին բավարարվելով կառավարության ագրարային քաղաքականությամբ, լռելյայն ձանց էին առնում այդ երկու պահանջները՝ գյուղացիների բավարարումն արքունական հողերից և գաղութաբնակեցման դադարեցումը։

Այսպես էր Անդրկովկասի տիրապետող դասակարգերի ագրարային քաղաքականությունը 1905—1907 թվերի ռևոլյուցիայի ժամանակաշրջանում։

3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ինչպիսի՞ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի ագրարային հարցը Անդրկովկասի հայկական միջավայրում աշխատող բուրժուա-նացիոնալիստական, կոնտրռևոլյուցիոն պարտիան՝ դաշնակցությունը։ Ո՞րն էր նրա գործելակերպը դեպի ամբողջ Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական կյանքի առանցքը հանդիսացող ագրարային հարցը։

Դաշնակցություն պարտիան իր գոյության ողջ պատմության ընթացքում, իր ամբողջ գործունեության մեջ հանդես է եկել որպես հայ աշխատավոր ժողովրդի — բանվոր դասակարգի և գյուղացիության ամենաոխերիմ թշնամին, Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների մեջ ազգային անտագոնիզմ հրահրողն ու ազգամիջյան կռիվների կազմակերպողը, ամեն մի ռևոլյուցիոն շարժման ամենադաժան ճնշողը։ Նա իր ողջ գործունեության ընթացքում եղել է հայկական բուրժուազիայի, հայ դուքանչու, գյուղական կուլակի, կղերի և ամեն տեսակ ռեակցիոն ուժերի ամենաջերմ պաշտպանը, ցարական կառավարության և իմպերիալիստական բոլոր երկրների գործակալը հայ ժողովրդի մեջ։

Այս դիրքերից էլ նա որոշում էր իր վերաբերմունքը դեպի ագրարային հարցը։

Ագրարային հարցի թեորիայի բնագավառում դաշնակցությունը ժխտում էր գյուղի կապիտալիստական զարգացումը, հողի կենտրոնացումը կուլակների ձեռքին, գյուղացիական մասսաների պրոլետարականացումը։

Պետք է մատնանշել սակայն, որ գյուղի ոչ կապիտալիստական զարգացման «թեորիան» դաշնակցականների ստեղծագործական մտքի արգասիքը չէր հանդիսանում։ Դաշնակցականներից շատ առաջ, բուրժուական տնտեսագետները և ապա մարքսիզմի բոլոր ռեվիզիոնիստները՝ Բերնշտեյնից սկսած՝ ամբողջ ջանասիրությամբ առաջ էին քաշում այդ տխրահռչակ «թեորիան» ընդդեմ մարքսիզմի։

Հայտնի է միաժամանակ, որ Մարքսը իր «Կապիտալ»-ում և Լենինն ու Ստալինը իրենց բազմաթիվ աշխատություններում ամբողջովին, մինչև վերջը մերկացրել են, պսակազերծ են արել այդ հակագիտական, ջատագովական թեորիան, քարը քարի վրա չթողնելով նրանից։

Ամենօրյա ագիտացիոն-պրոպագանդիստական գործունեության ընագավառում դաշնակցությունը, գյուղացիական մասսաներին խաբելու, նրան մոլորեցնելու, իր կառքին լծելու նպատակով, խոսում էր հողի համայնացման, ցարիզմի, կալվածատիրության և եկեղեցու դեմ պայքարելու մասին։ Նրա հրապարակախոսները իրենց կաշվից դուրս էին գալիս ցուցադրելու համար, որ դաշնակցությունը իբր թե հայ ժողովրդի շահերի պաշտպանն է։ Սակայն իրականում միանգամայն հակառակն էր կատարվում։

Դաշնակցությունը խոսքով կալվածատիրական, վանքապատկան հողերի համայնացման կողմնակից էր, բայց գործով ամենաջերմ պաշտպանն էր հանդիսանում էջմիածնի վանքի՝ կրոնական այդ ամենախոշոր կալվածատիրոջ՝ հողի մասնավոր սեփականության։ Դաշնակցությունը խոսքով դեմ էր կալվածատիրոջն ու բուրժուազիային, բայց գործով նրանց շահերի ամենաջերմ պաշտպանն էր հանդիսանում։ Բյուրավոր օրինակներից կարելի է մատնանշել մի քանիսը։ Վերցնենք Հաղբատ գյուղի օրինակը.

«Այս գյուղը,— գրում է «Աշխատանք» ժուռնալի թղթակիցը,— որը կալվածատիրական է և պատկանում է այժմ հայ կապիտալիստի, ընդհանուր որոշում է կայացնում այս տարի ոչ մի կապալագին ու հարկեր չվճարել իր կալվածատիրոջը։ Այս որոշումը ընդունել էր և դրան իր համաձայնությունը տվել հիշյալ կալվածի կառավարիչը, և ահա մի գեղեցիկ օր գալիս են դաշնակցության ներկայացուցիչները, ստիպում են գյուղացիներին ետ վերցնել իրենց որոշումը և վճարել կալվածատիրոջը նրան հասանելիք կապալագներն ու տուրքերը»*։

Դաշնակցությունը խոսքով հողի «աստիճանական համայնացման» կողմնակից էր, բայց իրականում ամեն մի պատեհ բոպեին ֆեոդալական, բեգական նոր հողատիրություն էր պատվաստում գյուղում, գյուղացիներին շահագործում ամենաբարբարոս մեթոդներով։ «Խաչեն գավառամասից,— գրում է «Աշխատանք»-ի նույն թղթակիցը,— արտաքսված են մի քանի թուրք բեգեր, որոնց բավականին ընդարձակ կալվածները, անտառները, վարելահողերը և

---

* «Աշխատանք», 1906 թ., № 39, էջ 610—612, Թղթակից Նեմոյի հոդվածը։

արոտատեղիները, փոխանակ գյուղացիների շահագործմանը թողնելու, մի քանի տեղական տզրուկների, վաշխառուների (բոլորն էլ իհարկե դաշնակցական) բաժին են մնացել, որոնք և կատարելապես օգտվում են այդ կալվածներից։ Եվ այդ Թուրք բեգերի տեղը սեղծված հայ բեգերը այնպիսի կեղեքիչ պայմաններով են շահագործում իրենց ձեռքն անցած նոր հողերը, որոնց մասին նրանց նախկին տերերը երազել անգամ չեն կարող։ Օրինակի համար վարելահողերը տրվում են հողազուրկ գյուղացիներին մշակելու այն պայմանով, որ ստացված արդյունքի մեկ երրորդ մասը հայ բեգին տան, մինչդեռ Թուրքերը վերցնում էին մեկ քառորդ մասը» (նույն տեղը, ընդգծումը իմն է—Օ. Հ.)։

Դաշնակցությունը խոսքով պետական հողերի համայնացման կողմնակից էր, բայց իրականում ցարական պետությանը պատկանող հողերի ամենաջերմ պաշտպանն էր հանդիսանում, խափանում և խեղդում էր կալվածատիրության ու ցարիզմի դեմ ուղղված ագրարային շարժումը գյուղում։

«Ախալքալակի գավառում,— գրում է «Աշխատանք»-ը,— դաշնակցության ներկայացուցիչները կարողացան խեղդել հայ գյուղացիության մեջ ծագած ագրարային շարժումները ընդդեմ տեղական կալվածատերերի։ Այդ առթիվ տեղիս ռուս բարձր աստիճանավորը ասում էր. «Կեցցեն իմ դաշնակցականները. նրանք թույլ չտվին, որ ինձ մոտ ագրարային շարժում բռնկվի գյուղացիության մեջ»* (Աշխատանք», 1906 թիվ, № 39)։

Ցարական չինովնիկի տված այս գնահատականը դաշնակցության ագրարային քաղաքականության իրական գործունեության լավագույն վկայագիրն է հանդիսանում։

Կովկասյան գործունեության նախագծում դաշնակցությունը հայտարարում էր, որ նա կռիվ մղելով կալվածատերերի և վաշխառուների դեմ, իր գործակի շուրջն է համախմբելու հողազուրկ և սակավահող գյուղացիներին։ Իրականում դաշնակցական կոմիտեները գյուղերում կազմակերպվում էին տեղական կուլակներից,

---

* Ռուսերենն այսպես է ասված. «У меня дашнакцаканы молодцы. Они не позволили у меня вспыхнуть среди крестьянства аграрному движению».

վաշխառուներից, ամեն կարգի հարստահարիչներից, բուրժուական-նացիոնալիստական ինտելիգենցիայից և նրանց ագենտներից։ Դաշնակցության դրոշակակիրը գյուղում միշտ եղել է գյուղական զուլան, աշխատավորության վամպիրը։ Դաշնակցական այդ. կոմիտեները ուղղակի մի պատուհաս էին աշխատավոր գյուղացու գլխին, սանձարձակ իրավունքներով օժտված մի նոր իշխանություն գյուղացիների վրա։

«... Գյուղը...— գրում է «Կայծ»-ի թղթակիցը,— դա մի կատարյալ դժոխք է... երբ դեռ մեր կյանքի ցեցերը ներկայացնում էին միմիայն գյուղական կուլակները, վաշխառուները, պորտաբույծ և կաշառակեր պաշտոնյաները— պրիստավից սկսած մինչև վերջին գզիրը, տերտերն ու բազմատեսակ ձրիակեր մարդիկ— դա դեռ մի կերպ տանելի էր, գյուղացին արդեն իր վզին կարողանում էր կրել դրանց բեռը, քանի որ դրանք հին էին, սովորական, նրանց կյանքի հետ ծնված ու մեծացած։ Բայց այսօր նրանց կողքին ծնվել է մի նոր կառավարություն, մի նոր ձրիակեր տարր, մի նոր միլիտարիզմ, որոնք ոչ պակաս ծանրանում են ժողովրդի շլնքին, կեղեքում են նրան և քայքայում»։ Այդ. դաշնակցական կոմիտեներն են, որոնք «իրենց էությամբ ժողովրդի գլխին ստեղծեցին սարսափի, սպառնալիքի, տեռորների, տուգանքների և հարկերի այնպիսի մի սարսափ, որի տակ ժողովուրդը լուռ ու մունջ հյուծվում է, առանց կարողանալու բողոքի մի շշունջ արտահայտելու» («Կայծ», 1906 թիվ, 27-ն ապրիլի, էջ 3)։

Այսպես ուրեմն, դաշնակցության պարտիայի ագրարային քաղաքականության խոսքն ու գործը տարբերվում էին իրարից այնպես, ինչպես երկինքը երկրից։ Խոսքով դաշնակցությունն ագրարային ֆանտաստիկ դրախտ էր խոստանում գյուղացիությանը։ Գործով նա իսկական դժոխք էր ստեղծում նրանց համար։ Խոսքով կեղծ փարիսեցիական, սոցիալիստական ֆրազներ, իսկ գործով բուրժուական-կուլակային ագրարային քաղաքականություն գյուղում— ահա դաշնակցության ագրարային և գյուղացիական քաղաքականությունը ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակ։

Իր տխրահռչակ տիրապետության ժամանակաշրջանում դաշնակցությունը, ինչպես պետք էր սպասել, ոչ միայն չիրագործեց

հողի համայնացման իր խոստումները,—սոցիալիզացիայի և սոցիալիզմի դաշնակցական ֆրազները սապոնի պղպջակների նման օդն էին ցնդել նրա պետականության շրջանում,— այլ կոնսերվացիայի ենթարկելով ցարիզմի ժամանակաշրջանում եղած ագրարային հարաբերությունները, զենքի ուժով պաշտպան կանգնեց հայ կալվածատիրոջ և հայ կուլակի շահերին իր պատկերին և բնույթին համապատասխան։ Հողային հարցի լուծումը հետին պլանի վրա էր քաշվում։ «Քանի Հայաստանի սահմանները վերջնականապես չեն որոշված,— գրում էր դաշնակցական կառավարության հողագործության և պետական գույքերի նախարար Ս. Վրացյանը 1920 թվի մայիսին,— անհնարին է հողային հարցի արմատական լուծում տալ...»։

1920 թվի սկզբին կազմակերպված հողային կոմիտեները և ապա մայիսյան ապստամբությունից հետո նրանց փոխարինող «Հողային հատուկ մարմինները» չեն լուծում ոչ մի հողային հարց հօգուտ աշխատավոր գյուղացիության։

Այդ դեռ քիչ էր։ Ագրարային հարցը տեղում ինքնուրույն կերպով լուծելու գործում գյուղացիական մասսաների նախաձեռնությունը տեղնուտեղը զենքի ուժով ամենաբարբարոս կերպով ճընշվում էր դաշնակցական կառավարության կողմից, իսկ հողերը կենտրոնացվում էին կալվածատերերի, կուլակների, կապալառուների, դաշնակցական մինիստրների, խմբապետների և ամեն տեսակ ավանտյուրիստների ձեռքը, հանուն բուրժուական դաշնակցական կառավարության դիրքերի ամրապնդման, ընդդեմ աշխատավորության։

Ահա դաշնակցական պարտիայի ագրարային քաղաքականությունը իր պետականության շրջանում։ «Շան կեռ պոչը կաղապարն էլ չի ուղղի», ասում է ժողովրդական առածը։

***

Կովկասահայ իրականության մեջ գործող այլ բուրժուական և մանրբուրժուական պարտիաներից արժե մի քանի խոսք ասել «Հայ ժողովրդական կուսակցության», հայկական էսեռների և սպեցիֆիկների վերաբերմունքի մասին դեպի ագրարային հարցը։

«Հայ ժողովրդական կուսակցությունը» ծնունդ առավ 1906 թվի հունվարին, որպես ռուսական կադետական պարտիայի (կոնստիտուցիոն-դեմոկրատական պարտիայի) հայկական ֆիլիալը։ Իր ծրագրով, տակտիկայով և մանավորապես ագրարային պլատֆորմով նա կանգնեց ռուսական կադետների տեսակետի վրա, կովկասահայ բուրժուազիայի ազգային շահերին վերաբերող մի շարք լրացումներով։

Առանց սոցիալիստական որևէ կեղծ պարուրանքի «Հայ ժողովրդական կուսակցությունը» դրսևորում էր իր դասակարգի՝ հայկական բուրժուազիայի շահերը, ջատագովում կապիտալիզմի զարգացումը Հայաստանում «հօգուտ հայ ժողովրդի», բացասում դասակարգային պայքարի միջոցով «մարդ անհատի շահագործումը մյուսի կողմից վերացնելու եղանակը» և առաջ մղում էվոլուցիոն զարգացման թեորիան, որպես «բնության և մարդկության զարգացման անհողդողդ օրենքը»։

Հենց դասակարգերի հաշտեցման այս ընդհանուր սկզբունքից էլ հայ ժողովրդական պարտիան մոտենում էր ագրարային հարցի լուծմանը։

Ռուսական կադետների օրինակով հայ ժողովրդական պարտիան իր ծրագրում առաջ է քաշում սակավահող և հողազուրկ գյուղացիների կարիքները բավարարելու պահանջը պետական, վանքապատկան և կալվածատիրական «աշխատավորական նորմաներից բարձր հողերից ստիպողական գրավման» («ստիպողական օտարման» — ռուսական կադետիզմի տերմինը—Օ. Հ.) միջոցով։

«Ստիպողական գրավման չեն ենթարկվի մանր կալվածների հողերը, որոնք աշխատավորական նորմայից բարձր չեն» — իսկույն ևեթ մատնանշում է ծրագրի 45-րդ հոդվածը։ Հայկական կադետները երկյուղ են կրում՝ չլինի՞ թե ստիպողական գրավումը դիպչի նաև «տերիտորիալիզացիայի ենթարկված» հայկական ստոլիպինյան կուլակին,— ահա թե ինչու նրանք անմիջապես վերապահում են մտցնում իրենց ծրագրում մանր կալվածատիրության հողային սեփականության անձեռնմխելիության մասին։

Սակայն ի՞նչ պայմաններով պետք է ստիպողական գրավման ենթարկվեն կալվածատերերի «աշխատավորական նորմաներից

բարձր հողերը», դրան պատասխան տալիս է ծրագրի 48-րդ հոդվածը.

«Մասնավոր սեփականատերերից հողերը պետք է գնվեն պետության հաշվով արդարացի (ոչ շուկայի) գնահատությամբ, ի նկատի ունենալով ի միջի այլոց տիրապետության հիմունքները: Վճարումը կկատարվի գնման վկայաթղթերով, որոնց տոկոսի մի որոշ մասը կտոացվի բաժանված հողի վրա նշանակված տուրքից»:

Հողի ոչ մի բռնագրավում: Որպես մասնավոր սեփականություն նա սրբազան է, այնպես, ինչպես հայկական կապիտալիզմին պատկանող ֆաբրիկաներն ու գավոդները, նրանց ունեցվածքը, նրանց դրամական կապիտալը: Ուստի և չի կարող հողի ստիպողական գրավման մասին խոսք լինել առանց հատուցման—այն պետք է կատարվի «արդարացի գնահատությամբ», ինկատի ունենալով «տիրապետության», այսինքն մասնավոր սեփականության հիմունքները: Այս է հայկական բուրժուական պարտիայի ագրարային ծրագիրը և այն կատարելապես համապատասխանում է նրա բնույթին ու պատկերին:

Հայկական «Սոցիալիստ-ռևոլյուցիոներների» (էսեռների) պարտիան ծնունդ առավ 1907 թվին, որպես դաշնակցական պարտիայից անջատված մի հատված: Լինելով ռուսական էսեռականության հայկական մասնաճյուղը, «Սոցիալիստ հեղափոխականների հայ կազմակերպությունը» ամբողջովին որդեգրեց ռուսական էսեռների ծրագիրն ու տակտիկան: Ագրարային հարցում նրանք կանգնեցին հողի սոցիալիզացիայի տեսակետին:

Ավելի հետաքրքրական է սպեցիֆիզմի վերաբերմունքը դեպի ագրարային հարցը: Սպեցիֆիզմը որպես «հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն» ծնունդ է առել Անդրկովկասում 1904 թվին: «Հայտնի է,—ասում է ընկեր Շահումյանը,—որ 1904 թվին համառուսական մարքսիստների մեջ աշխատող մի երկու ինտելիգենտ, միանալով նույնքան նախկին դաշնակցական կիսաինտելիգենտների հետ, հիմնեցին (հրեական Բունդին նմանելու ցանկությամբ) մի կազմակերպություն, որը կոչվեց «Բանվորական հայ կազմակերպություն»*:

---

* Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, էջ 83: 1928 թ.

Առաջ քաշելով պրոլետարիատին ըստ ազգությունների կազմակերպելու հակամարքսիստական նացիոնալիստական սկզբունքը, սպեցիֆիզմը ձգտում էր անջատել հայկական պրոլետարիատին Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի ինտերնացիոնալ պայքարից, նրան «հայկական հասարակության մեջ ձուլելու», ըստ էության հայկական բուրժուազիայի հետ մի միասնական ճակատ կազմակերպելու նշանաբանով։

Իր մանիֆեստում «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը» վճռականապես հայտարարում է, որ «պրոլետարիատին չի կարելի բաժանել հայկական հասարակությունից», որ «հայկական պրոլետարիատը պետք է լինի իր ցեղի հարազատ զավակը», որ «հայկական պրոլետարիատը պետք է լինի հայ ժողովրդի ամենախելացի և ուժեղ օրգանը» և այլն։

Անդրկովկասի բոլշևիկները և մասնավորապես ընկեր Ստալինը մերկացնում էին հայկական բունդիզմի այս օպորտունիստական, ազգայնական, անջատողական քաղաքականությունը, պայքար մղում Անդրկովկասի պրոլետարիատի և գյուղացիության ինտերնացիոնալ դաստիարակության համար։

Ընկեր Ստալինը իր «Ինչպե՞ս է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» նշանավոր հոդվածում, գրված 1904 թվին, ամբողջովին մերկացնում է սպեցիֆիկյան ինտելիգենտշչինայի նացիոնալիզմը։

«Նախ, անհասկանալի է,— ասում է ընկեր Ստալինը,— թե ինչո՞ւ «չի կարելի հայ պրոլետարիատին անջատել հայ հասարակությունից», եթե այդ «անջատումը» տեղի է ունենում ամեն քայլափոխում։ Մի՞թե միավորված հայ պրոլետարիատը «չանջատվեց» հայ հասարակությունից, երբ նա 1900 թվականին (Թիֆլիսում) պայքար հայտարարեց հայ բուրժուազիային և բուրժուաբար մտածող հայերին»։ «... մի՞թե հայ պրոլետարիատը — շարունակում է մերկացնել սպեցիֆիկներին ընկեր Ստալինը — կարող է «իր ցեղի հարազատ որդին» լինել, երբ այդ ցեղի մի մասը՝ հայ-բուրժուազիան սարդի նման ծծում է նրա արյունը, իսկ մյուս մասը՝ հայ հոգևորականությունը՝ բացի նրանից, որ ծծում է բանվորների արյունը, սիստեմատիկորեն այլասերում է նրա գիտակցությունը»*։

---

* Ստալին, Երկերի ժողովածու, հատոր I, էջ 44—45, հայ, հրատ.

Սպեցիֆիկները ագրարային հարցի մասին իրենց «պաշտոնական» վերաբերմունքն արտահայտեցին 1906 թվականին, սոցիալ-դեմոկրատիայի 4-րդ միացուցիչ համագումարից 2—3 ամիս անց, իրենց 2-րդ խորհրդաժողովում ընդունված բանաձևում։

Այդ բանաձևում սպեցիֆիկները իրենց վերապահելով «Անդրկովկասի և մասնավորապես հայաբնակ վայրերի ագրարային ծրագրի մշակումը», գրում են հետևյալը.

«Ի նկատի ունենալով, որ ընդհանրապես Անդրկովկասի և մասնավորապես հայաբնակ վայրերի ագրարային բարդ և կնճռոտ խնդրին բավարար լուծում կարող է տալ միայն հարցի բազմակողմանի ուսումնասիրությունը.

Ի նկատի ունենալով, որ խորհրդաժողովին ներկայացրած նյութերը թերի էին և անբավարար, որպեսզի կարելի լիներ նրանց հիման վրա տալ մի ագրարային ծրագիր.

Ի նկատի ունենալով այս բոլորը, Ս.Դ.Բ.Հ.Կ. 2-րդ խորհրդաժողովն ընտրեց մի մասնաժողով և հանձնարարեց նրան՝ ներկայացնել առաջիկա համագումարին ագրարային ծրագրի մի նախագիծ»*։

1905—1907 թվերի ռևոլյուցիայի ընթացքում բոլոր դասակարգերն ու պարտիաները պարզ ու որոշակի կերպով հանդես եկան իրենց ագրարային ծրագրով և տակտիկայով։ Գյուղացիությունը իր ներկայացուցիչների միջոցով երկու դումայում էլ (Պետական առաջին և երկրորդ դումաներում) պահանջում էր ոչնչացնել կալվածատիրական հողատիրությունը, ժողովրդի, գյուղացիության սեփականությունը դարձնել կալվածատիրական, եկեղեցապատկան, պետական և ուդելային հողերը։

Լիբերալ կալվածատիրությունը ռևոլյուցիայի սկզբում սարսափահար եղած գյուղացիական ռևոլյուցիոն շարժումից, ցանկություն էր հայտնում իր հողերից որոշ մասը գյուղացիներին զիջելու, մնացած մասն իր ձեռքում պահելու նպատակով. «Հարկավոր է գյուղացիների համար հող կտրել, ապա թե ոչ նրանք մեզ կկտրեն» —բարբառում էր մահվան երկյուղով լցված լիբերալ կալվածատիրությունը։ Բայց հետագայում, ռևոլյուցիայի տեղատվության շըր-

* «Կյանք», 1906 թ., № 15, էջ 232.

ջանում, ամրապնդելով իր դիրքերը, նա հրաժարվում էր «գյուղացիներին հող կտրելուց» և ցարիզմի ամբողջ ուժով պահպանում հողի կալվածատիրական մասնավոր սեփականությունը:

Լիբերալ բուրժուազիան կալվածատերերի հետ գործարք վարելու քաղաքականություն էր վարում ագրարային հարցում, առաջ քաշելով հողի պարտադիր օտարացման սկզբունքը արդարացի գնահատականով:

Պրոլետարիատը հանձինս բոլշևիկների, պաշտպանելով և ղեկավարելով գյուղացիության պայքարը կալվածատիրության և ցարիզմի դեմ, առաջ քաշեց հողի ազգայնացումը՝ կալվածատիրական, պետական, վանքապատկան և ուդելային հողերի բռնագրավման հիման վրա ռևոլյուցիայի միջոցով: Մենշևիզմը, որպես մանր բուրժուազիայի շահերն արտահայտող պարտիայի, հանդես եկավ իր տխրահռչակ հողի մունիցիպալիզացիայի տեսակետով: Ինչպես հայտնի է, նրանք այդ տեսակետը կարողացան անցկացնել չորրորդ միացուցիչ համագումարում, ունենալով պատգամավորների ձայների գերակշռություն: Էսեռների և դաշնակցականների ագրարային ծրագիրը արդեն մեզ հայտնի է:

Այս բոլորը ոչ մի ուսանելի բան չէին տալիս կամակոր, ինքնաբավ սպեցիֆիկներին: Ի՞նչ փույթ, որ բոլոր դասակարգերն ու պարտիաները միանգամայն պարզ ու որոշակի գրել են իրենց ագրարային ծրագիրը: Սպեցիֆիկների համար այդ հարցը մնում է դեռևս «բարդ ու կնճռոտ» և կարոտ «բազմակողմանի ուսումնասիրության»:

4. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Իր ծագման հենց առաջին օրից սկսած և հետագա ողջ ժամանակաշրջանում անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունը միակ ռևոլյուցիոն մարքսիստական կազմակերպությունն էր, որն ընկեր Ստալինի գլխավորությամբ անողոք և անդադրում պայքար էր մղում անդրկովկասյան մենշևիկների, դաշնակցական-

ների, մուսավաթականների, էսեռների, անարխիստների, ֆեդերալիստների, հնչակյանների և ամեն գույնի հակապրոլետարական, հակաշխատավորական և ազգայնական պարտիաների դեմ և կոփվում այդ պայքարի ընթացքում։

Անդրկովկասում գործող բոլոր պարտիաներից և բոլոր քաղաքական հոսանքներից միայն բոլշևիկյան կազմակերպությունն էր, որ ռևոլյուցիոն ճանապարհով լուծում էր ագրարային հարցն Անդրկովկասում, ղեկավարվելով լենինյան սկզբունքներով։

Բնութագրելով Անդրկովկասի տնտեսական պատկերը, ընկեր Ստալինը 1918 թվին գրած իր՝ «Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» հոդվածում մատնանշում է հետևյալը. «Անդրկովկասի մյուս, ոչ պակաս բնորոշ գիծը (առաջին բնորոշ գիծը ընկեր Ստալինը համարում է Անդրկովկասի ազգային կազմի բազմազանությունը— Օ. Հ.) նրա տնտեսական հետամնացությունն է։ Եթե չհաշվենք Բաքուն, երկրամասի այդ արդյունաբերական օազիսը, որը գլխավորապես արտաքին կապիտալով է շարժվում, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային երկիր ավելի կամ պակաս զարգացած առևտրական կյանքով ծայրամասերում, ծովերի ափերին և զուտ ճորտատիրական կացույթաձևի դեռևս ամուր մնացորդներով կենտրոնում։

Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգները մինչև այժմ էլ հարուստ են ճորտատեր թաթար բեկերով ու ֆեոդալ վրացի իշխաններով, որոնք հսկայական լատիֆունդիաներ, հատուկ զինված բանդաներ ունեն և իրենց ձեռքում են պահում թաթարահայ-վրացի գյուղացիների բախտը։ Սրանով էլ, իսկապես, բացատրվում են ագրարային «անկարգությունների» այն սուր ձևերը, որ ընդունում է այնտեղ հաճախ գյուղացիների դժգոհությունը»*։

Ընկեր Ստալինի կողմից Անդրկովկասի տնտեսական դրության և ագրարային հարաբերություններին վերաբերող այս սպա-

* Ստալին, Երկերի ժողովածու, հատոր IV, էջ 58—59։

ռիչ բնութագիրը», որ նա տվել է 1918 թվին, առավել ևս վերաբերում է մեր ընտրած թեմայի ժամանակաշրջանին, 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին։

Այս պայմաններում ո՞րն էր Անդրկովկասի պրոլետարիատի և գյուղացիության առաջնահերթ խնդիրը, կամ Լենինի մատնանշած երկու սոցիալական պատերազմներից ո՞րն էր առաջին պլանի վրա քաշվում այդ ժամանակաշրջանում։ Հասկանալի է միանգամայն, որ առաջին պլանի վրա էր քաշվում ագրարային ռևոլյուցիայի հարցը, ճորտատիրական մնացորդների լիկվիդացիայի հարցը, կապիտալիզմի զարգացման ուղիներ հարթելու հարցը՝ ռևոլյուցիոն ճանապարհով։ Այս էր Անդրկովկասի պրոլետարիատի և գյուղացիության առաջնահերթ խնդիրը, որի հետևողական, ռևոլյուցիոն լուծումը կհեշտացներ և պայմաններ կստեղծեր անմիջապես սոցիալական երկրորդ պատերազմի հարցին անցնելու համար։

Բայց Անդրկովկասում, Հայաստանում և ընդհանրապես ցարիզմի որևէ գաղութում ով ուզում էր զենք վերցնել բնաջնջելու միջնադարի հնոտիները, ճորտատիրական մնացորդները, նա չէր կարող այդ անել առանց ցարիզմի ջախջախումն իրագործելու։ Ցարական միահեծանությունը լինելով ամեն տեսակ ռեակցիայի օջախ և ճորտատիրության մնացորդների սիմվոլը, ինքն էր կոնսերվացիայի ենթարկում ճորտատիրական հարաբերությունների մնացորդները Ռուսաստանում, Անդրկովկասում և այլ գաղութներում։ Հետևապես ով ձեռք էր բարձրացնում միջնադարի, ռեակցիայի դեմ, նա պետք է ձեռք բարձրացներ նախ և առաջ ցարիզմի դեմ։

Իսկ ցարիզմի ջախջախումն հնարավոր էր այն դեպքում միայն, երբ հայ, վրացի, ադրբեջանական, ուկրաինացի, բելոռուս և այլ ժողովուրդները կմիանային և ռուս ժողովրդի հետ միասին, ռուսական պրոլետարիատի ղեկավարությամբ կիրագործեին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան ամբողջ Ռուսաստանում։ Դրանով իսկ Անդրկովկասի և մյուս գաղութային ժողովուրդների ազգային ազատագրության հարցը կապված էր ագրարային հարցի լուծման հետ ամբողջ Ռուսաստանում։ Տարբեր ճնշված ազգությունների ազգային ազատագրության հարցը վեր էր ածվում ռու-

սական կայսրության պրոլետարիատի և գյուղացիության ինտերնացիոնալ գործակցությանը ընդդեմ ցարական միապետության։

«... Ռուսաստանի քաղաքական կյանքի առանցքը ո՛չ թե ազգային հարցն է,— գրում էր ընկեր Ստալինը 1913 թվին,— այլ ագրարայինը։ Ուստի ռուսական հարցի և, ուրեմն, նաև ազգերի «ազատագրման» բախտը Ռուսաստանում կապված է ագրարային հարցի լուծման հետ, այսինքն՝ ճորտատիրական մնացորդների ոչնչացման հետ, այսինքն՝ երկրի դեմոկրատացման հետ»[*]։

Այսպես ուրեմն, ամբողջ Ռուսաստանի քաղաքական կյանքի առանցքը ագրարային հարցն էր հանդիսանում։ Առավել ևս այն հանդիսանում էր Անդրկովկասի և Հայաստանի քաղաքական կյանքի առանցքը, քանի որ ճորտատիրության մնացորդներն այստեղ ավելի ակնբախ էին, քան թե Ռուսաստանի ներքին նահանգներում և, բացի այդ, ազգային ճնշման վերացման հարցն իր հերթին դեմ էր առնում այդ առանցքային հարցի լուծմանը։

Սրանով պետք է բացատրել գյուղացիական այն հուժկու շարժումները, որոնք ծնունդ առան Վրաստանում, Լոռում և Հայաստանում 1901—1903 թվականներին և ավելի ուժգնորեն դրսևորվեցին 1905—1907 թվերի ընթացքում, շարժումներ, որոնց նախաձեռնողը եղավ ռուսական պրոլետարիատը սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ։

Անդրկովկասի բոլշևիկները պայքարելով հանուն լենինյան ագրարային ծրագրի, միաժամանակ հաշվի էին առնում Անդրկովկասի առանձնահատկությունները։

Այդ առանձնահատկություններից առաջինը այն էր, որ ագրարային հարցը Անդրկովկասում ուներ որոշ, ճիշտ է ոչ գլխավոր, երկրորդական, բայց այնուամենայնիվ որոշ առանձնահատկություն կապված ճորտատիրական իրավունքի ավելի ուժեղ մնացորդների և գյուղացիների ժամանակավոր պարտավորյալ և կախյալ վիճակի առկայության հետ (տես առաջին գլուխը) և Երկրոր-

[*] Ստալին, Երկերի ժողովածու, հատոր II, էջ 371, հայ. հրատ.։

ջը— այն, որ այստեղ, Անդրկովկասում ագրարային հարցը շաղկապվում էր ազգային հարցի հետ։ Ազգերի «ազատագրության» բախտը կապված էր ագրարային հարցի լուծման հետ, այսինքն կալվածատիրության և ցարիզմի տապալման հետ։

Մինչև վերջը և հետևողականորեն հավատարիմ մնալով լենինյան ագրարային ծրագրին և կիրառելով այն Անդրկովկասում, Անդրկովկասի բոլշևիկները խիստ կերպով հաշվի էին առնում այդ առանձնահատկությունները։

Ագրարային ծրագրով Անդրկովկասի ռևոլյուցիոն մարքսիստները հանդես եկան 1903 թվին, նախքան պարտիայի 2-րդ համագումարը։ Ելնելով Լենինի ագրարային հարցին վերաբերող հիմնական դրույթներից, որոնք տրված էին մինչև 2-րդ համագումարը լույս տեսած նրա բազմաթիվ հոդվածներում և աշխատություններում ու մասնավորապես «Բանվորական պարտիան և գյուղացիությունը» հոդվածում, Կովկասյան Միութենական Կոմիտեն, «Կովկասյան Ս. Դ. բանվորական կազմակերպությունների միության ծրագրի նախագծում»— հրապարակված 1903 թվի գարնանը, ագրարային հարցի վերաբերյալ առաջադրում է հետևյալ ռևոլյուցիոն պահանջները։

«Գյուղացիներին ճնշող ճորտային դրության մնացորդները ոչնչացնելու ու գյուղում դասակարգային կռվի ազատ զարգացում ստեղծելու համար, Կովկասյան Միությունն առաջարկում է.

1) Վերացնել հետզնում կոչված հարկերը և այն ամենը, որ ներկայումս ծանրացած է գյուղացիների, ինչպես հարկատու դասի վրա։

2) Վերացնել այն օրենքները, որոնք արգելում են գյուղացուն իրեն հողերը կարգադրելու իր ցանկության համեմատ։

3) Հաստատել կոմիտեներ հողային հարաբերությունների վերաբերմամբ ճորտային դրության մնացորդները վերջնականապես ոչնչացնելու համար։

4) Դատարանն իրավունք ունի պակասեցնելու անչափ մեծ կապալները և անվավեր հայտարարելու ստրկական բնավորություն ունեցող պայմանգրերը։

Ի նկատի ունենալով այն առանձնահատկությունները, որոն-

ցով Կովկասը տարբերվում է Ռուսաստանի մյուս մասերից, «Կովկասյան Միությունն անհրաժեշտ է գտնում իր ծրագրի մեջ հետևյալ կետերը մտցնելու.

1) Անմիջապես ոչնչացնել գյուղացիների ժամանակավոր պարտավորությունները։

2) Խիզաններին հատկացնել այն հողերը, որոնցից այժմ նրանք օգտվում են։

3) Սեփականատեր դարձնել Բաքվի, Երևանի, Ելիզավետպոլի և մասամբ Թիֆլիսի նահանգում ապրող գյուղացիների այն ստվար թիվը, որոնց դրությունը որոշված է 1870 թվի կանոնադրությամբ։

4) Արքունական ազատ հողերը տրվում են բոլորին միանման պայմաններով, առանց կրոնի և ազգության խտրության»...*։

Որն էր Անդրկովկասի ռուս. մարքսիստների ագրարային այս ծրագրի նշանակությունը։ Այստեղ, ինչպես նկատում է ընթերցողը, դեռևս առաջ չի քաշվում կալվածատիրական, եկեղեցական և պետական հողերի բռնագրավման պահանջը, ինչպես և այդ հիման վրա ամբողջ հողի ազգայնացումը։ Նախագծի հիմնական ելակետը կազմում է դասակարգային պայքարի ազատ զարգացումը գյուղում։ Այդ հարցն էր այն ժամանակ առաջին պլանի վրա դրվում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի առաջ ամբողջ Ռուսաստանում և Անդրկովկասում։ Այդ ժամանակ անհրաժեշտ էր այնպիսի լոզունգներ առաջադրել գյուղին, որոնք հուզեին գյուղացիությանը և մարտի ասպարեզ դուրս բերեին նրանց։ Այդպիսի կոնկրետ լոզունգներն այդ ժամանակ Անդրկովկասի համար հանդիսանում էին՝ հետգնման հարկերի ոչնչացումը, գյուղացիների տնօրինությունը իրենց հողերի վրա, գյուղացիների ժամանակավոր պարտավորյալ և կախյալ դրության ոչնչացումը, արքունական հողերից օգտվելու իրավունքը և այլն։ Որպես գլխավոր միջոց, այդ պահանջներն իրագործելու համար, նախագիծը պահանջում է գյուղացիական կոմիտեների կազմակերպումը։

---

* «Պրոլետարիատի կռիվ», № 2—3։ Ընդգծումը իմն է — Ս. Հ.։

Այսպես էր Անդրկովկասի բոլշևիկների ագրարային ծրագիրը 1903 թվին։ Նա բխում էր լենինյան այդ ժամանակաշրջանի ագրարային ծրագրի հիմնական դրույթներից, կոնկրետացրած Անդրկովկասի պայմաններին համապատասխան։

Անդրկովկասի բոլշևիկները չէին սահմանափակվում միայն ծրագրերի մշակմամբ։ Բոլշևիզմը—դա անմիջական գործունեության պարտիա է, իր ծրագիրն ու տակտիկական գիծը գործի վերածելու պարտիա։ Մշակելով ագրարային ծրագիր, Անդրկովկասի բոլշևիկները ամբողջ թափով լծվեցին նրա իրագործմանը։ Բոլշևիկ ագիտատորները, պրոպագանդիստները և կազմակերպիչները ձգտում էին գյուղացիների սեփականությունը դարձնել բոլշևիկյան լոզունգները, հուզել գյուղացիներին և դասակարգային պայքարի ասպարեզ դուրս բերել նրանց։

Չափազանց կարճ ժամանակամիջոցում բոլշևիկների աշխատանքը Անդրկովկասի գյուղում իր փայլուն արդյունքն է տալիս։ Անդրկովկասի գյուղացիության առաջավոր ջոկատները համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժման ազդեցությամբ գոտեպնդված ընդհանուր ռևոլյուցիոն շարժման մեջ են մտնում բոլշևիկյան լոզունգներով։

Գյուղացիական ռևոլյուցիոն շարժման օրրանը Անդրկովկասում հանդիսանում էր փառապանծ Գուրիայի գավառը Վրաստանում։ Առաջին անգամը չէր, որ Գուրիայի ռևոլյուցիոն գյուղացիությունը ոտքի էր կանգնում վրացական կալվածատիրության և ցարական ինքնակալության դեմ։

Սակայն 1902—1903 թվերից սկսած նա առաջին անգամ էր, որ հանդես էր գալիս բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի՝ սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ։ Գուրիայի գյուղացիական շարժումը ծավալվում էր ընկեր Ստալինի կողմից կազմակերպված Բաթումի կոմիտեի և Կովկասյան Միութենական Կոմիտեի անմիջական ղեկավարությամբ։ Սկսելով իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ չկատարելուց, Գուրիայի գյուղացիները հետագայում 1905—1906 թվերին հասան մինչև կառավարական իշխանությունների տեղական օրգանները գյուղից վռնդելուն և ռևոլյուցիոն ինքնավարության ստեղծմանը։ Ցարական կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց պատ-

ժիշ արշավախմբերի միջոցով ճնշել Գուրիայի ապստամբությունը 1906 թվին։

Ընդհանուր ռևոլյուցիոն շարժման և մասնավորապես Գուրիայի գյուղացիների ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ 1903 և հետագա թվերին գյուղացիական նոր շարժումներ են ծավալվում Քարթալինիայի, Մինգրելիայի, Կախեթիայի, Բորչալուի և այլ տեղերի գյուղացիության մեջ։

Առավելապես հատկանշական է Բորչալուի գավառի գյուղացիության և մասնավորապես Հախպատի գյուղացիության ըմբոստացումը կալվածատիրության ու ցարիզմի դեմ։

Հախպատի գյուղացիությունը երկար տարիների ընթացքում հեծում էր կնյազ Բարաթովի վայրենի շահագործումից։ Ամբողջ Հախպատն ուներ ընդամենը 500 դեսյատին հող, մինչդեռ միայն կալվածատեր Բարաթովը 2500 դեսյատին։ Ծայրահեղ սակավահողությունից ճնշված հախպատցիներն ստիպված էին ստրկական պայմաններով վարձակալել կալվածատեր Բարաթովի հողը, կատարելով նրա համար անթիվ ու անհամար պարտավորություններ։ Այնուամենայնիվ անկշտում կնյազը յուրաքանչյուր տարի է՛լ ավելի ձգում էր գյուղացիների շնքին գցած օղակը։

Չկարողանալով այլևս դիմանալ կալվածատիրոջ անլուր շահագործումներին, Հախպատի գյուղացիությունը ըմբոստանում է կալվածատիրոջ դեմ։ 1903 թվի նոյեմբերի 5-ի ժողովում գյուղացիները ձևակերպում են իրենց պահանջները։ Ահա այդ պահանջները․

1) Հրաժարվել կալվածատիրոջ ամեն տեսակի վճարումներ կատարելուց։

2) Իջեցնել հողի կապալավարձը։

3) Կտրել կալվածատերերի հողերից 2000 դեսյատին և տալ գյուղացիներին։

4) Կամուրջը գյուղացիներին է պատկանում։

5) Արոտավայրերն ու խոտհարքները նույնպես գյուղացիներին են պատկանում և այլն։

Այս որոշումից հետո գյուղացիները նրա կենսագործմանն են անցնում։ Բռնագրավում և իրենց բաժնեհողին միացնում կալվածատեր Բարաթովի հողից 2000 դեսյատին։ Այդ՝ հախպատցիների կողմից հողի բռնագրավման առաջին քայլն էր։

Պարզ է, որ իշխան Բարաթովը չէր կարող հանդուրժել գյուղացիների այս «ապօրինի» ոտնձգությանը իր մասնավոր սեփականության նկատմամբ։ Նա կառավարական օրգաններին է դիմում՝ օգնություն պահանջելով նրանցից։ Կալվածատերերի շահերի արթուն պահապան ցարական կառավարությունն անմիջապես օգնության է հասնում։ Գյուղն են ներխուժում 200-ից ավելի կազակներ, որոնք պահանջում են գյուղացիներից կատարել կալվածատիրոջ պարտավորությունները։ Անզեն գյուղացիները սկսում են ընդդիմադրել կազակներին։ Վերջիններս համազարկի են բռնում գյուղացիներին։ Սպանվում է ութ հոգի, այդ թվում չորս կին և երկու երեխա, ապստամբ գյուղացիներից 60 հոգի բանտարկում են։ Երկգլխանի արծիվը «հաղթանակ է» տանում Հախպատում։ Գավառական պրիստավը տեղնուտեղը դատաստանական վճիռ է արձակում՝ «Կնյազ Բարաթովին հասցրած վնասի դիմաց գյուղացիներից բռնագանձել հօգուտ կալվածատեր Բարաթովին—5000 ռուբլի»*։

Բայց իզուր, հախպատցիները նրա համար չէին ըմբոստացել, որպեսզի նրանց վզին նոր լուծ դրվի։ Նրանք նորից ապստամբություն են նախապատրաստում։ Այս անգամ հախպատցիներին միանում են Քոթեշի գյուղացիները։ Ապստամբ գյուղացիները սարերն են բարձրանում, սկսվում է հուզումներ Բորչալուի գավառի մնացած գյուղերում։ Սարսափահար եղած գավառապետ Շանշիևը Կովկասի կառավարչապետ արյունարբու Գոլիցինին է դիմում, զինված օգնություն հայցում նրանից, ապստամբ գյուղացիներին ճնշելու համար։ Օգնությունն անմիջապես կազմակերպվում է։ Նոյեմբերի 29-ին Հախպատ են մտնում 250 կազակներ գնդացրերով և մեկ թնդանոթով։ Կնյազ Բարաթովի գինով հարբեցած կազակները «ռազմաճակատ են դուրս գալիս» անզեն գյուղացիների դեմ։ Հասկանալի է, որ գյուղացիները բահերով ու մահակներով չէին կարողանային երկար դիմադրել մինչև ատամները զինված կազակներին։ Նրանց ապստամբությունը ճնշվում է։ Ցարիզմը խրախճանք է կազմակերպում Հախպատում։ Գյուղի հրապարակում ապստամբ գյուղացիներից հինգ հոգու գնդակահարում են, 70 մարդու բանտարկում։ Այնուհետև սկսվում

---

* «Պրոլետարիատի կռիվ», № 5 1903 թ.։

է ցարական ճնշիչների թալանը, կամայականությունը և բռնակալությունը գյուղում։

Շանշիևը Թիֆլիսի նահանգապետին նույն օրը հեռագրում է. «Հախպատը հավասարեցրինք հողին, այլևս այնտեղ խոտ չի բուսնի»։ Սակայն իզուր էր ցարական գավառական սատրապը այդպիսի հապճեպ եզրակացություններ անում իր օգտին։ Ռուսաստանը կանգնած էր ռևոլյուցիոն մեծ մրրկի նախադռանը։ 1902—1903 թվերի շարժումները ռուսական առաջին ռևոլյուցիայի նախերգանքն էին հանդիսանում միայն, նրանք «միայն ծաղիկներն էին, որոնց հետևում էին իսկական պտուղները»։ Եվ Բորչալուի հերոսական գյուղացիությունը բոլշևիկների ղեկավարությամբ իր արժանի տեղը գրավեց Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման մեջ 1905—1907 թվականների ընթացքում։

1903 թիվը Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում հայտնի է ցարիզմի դեմ ուղղված ժողովրդական և գյուղացիական մի այլ ընդարձակ շարժմամբ ևս։ Այդ շարժումը կապված էր ցարական կառավարության կողմից Էջմիածնի վանքին և հայ լուսավորչական եկեղեցուն պատկանող կալվածների և գույքերի բռնագրավման հետ։ 1903 թվի հունիսի 12-ի ուկազով ցարական կառավարությունը որոշում էր.

«Հայ լուսավորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատություններին և հոգևոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալվածները... այդ հոգևորականության և հոգևոր հաստատությունների վարչությունից առնել և հանձնել երկրագործության և պետական կալվածների մինիստրի տեսչությանը, իսկ վերոհիշյալ հիմնարկներին պատկանող դրամագլուխները ներքին գործերի մինիստրի տեսչությանը...»։

Բռնագրավման ենթակա էին այդ հաստատություններին պատկանող բնակեցված և անբնակ հողամասերը, անտառները, մարգագետինները, արոտատեղիները, ձկնորսության տեղերը, ջրբաղացները և այլն, բացառությամբ հողային այն տարածությունների, որոնց վրա գտնվում էին վանքերը, եկեղեցիները, մատուռները, հոգևոր հաստատությունների և հոգևորականության բնակարանները, գերեզմանոցները և հոգևորականության ձեռքում եղած բանջարանոցներն ու այգիները, որոնց տարածությունը 3 դեսյատինից ավելի չէր։ Վերոհիշյալից բացի, գրավվում էին նաև Անդրկովկասի տարբեր քաղաքներում եղած հայ լուսավորչական եկեղեցու

պատկանող բոլոր այն տներն ու շինությունները, որոնք հարկավոր չէին հոգևոր հաստատությունների տնտեսական կարիքների համար։ Կրոնական հաստատությունների և ծխական դպրոցների պահպանության, ինչպես և հոգևորականության տնտեսական ապահովության գործը ցարական կառավարությունը ինքն էր կատարում բռնագրավված կալվածներից ստացվող եկամուտների հաշվին։ Այսպես էր հունիսի 12-ի ուկազի բովանդակությունը։

Հողերի բռնագրավումը կատարվում էր ռուսական ռևոլյուցիոն շարժման վերելքի տարիներին։ Ռուսական պրոլետարիատը 1901—1903 թվականներին հանդես եկավ գործադուլային ընդարձակ շարժումով՝ քաղաքական լոզունգներով։ 1901 թվի մայիսի մեկը արյունահեղ ընդհարում առաջ բերեց բանվորների և զորքի միջև Պիտերի Օբուխովյան ռազմական գործարանում։ 1902 թվի մարտին տեղի ունեցավ Բաթումի բանվորների խոշոր գործադուլն ու դեմոնստրացիան. Բաթումի Ս.-Դ. կոմիտեի գլխավորությամբ։ Գործադուլներ եղան նաև Դոնի Ռոստովում։ Գործադուլային ավելի ընդարձակ շարժում սկսվեց 1903 թվին, ընդգրկելով Անդրկովկասի արդյունաբերական քաղաքները՝ Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը։ Այդ գործադուլները դառնում էին ավելի ու ավելի համառ և կազմակերպված։ Ռուսաստանի բանվոր դասակարգը ոտքի էր կանգնում ցարական իշխանության դեմ ռևոլյուցիոն պայքար մղելու համար։

Բանվորական շարժումն իր ազդեցությունն էր թողնում նաև գյուղի վրա։ Գյուղը նույնպես ոտքի էր կանգնում։ Անդրկովկասի գյուղական շատ շրջաններ, ինչպես արդեն մատնանշել ենք, նույնպես ակտիվ կերպով շարժման մեջ էին մտել։ Բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ սկսվում էր շարժումը ուսանողության մեջ և այլն։

Այսպիսի մթնոլորտում կատարվող ցարական կառավարության կամայականությունը հայ եկեղեցու և վանքի հողերի նկատմամբ չէր կարող առիթ չհանդիսանալ տարերային ռևոլյուցիոն շարժման բռնկմանը հայ ժողովրդական մասսաների մեջ։

Հայ ժողովուրդը ցասման զայրույթով էր պատասխանում ցարական կառավարությանը։ Ամենուրեք, Անդրկովկասի բոլոր քաղաքներում՝ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Գանձակում, Ալեքսանդրոպոլում, Ղարսում, Ախալքալաքում և այլ բազմաթիվ

շրջաններում ու գյուղերում 1903 թվի աշնանը տեղի են ունենում ժողովրդական մասսաների հուժկու ցույցեր ընդդեմ ցարական կառավարության։ Շատ տեղերում այդ ցույցերը վերջանում էին արյունահեղ ընդհարումներով՝ ժողովրդի և ցարական զորքերի ու ոստիկանության միջև։

Ինչո՞վ բացատրել ժողովրդական մասսաների այդքան ինքնաբուխ շարժումը Անդրկովկասի հայաբնակ վայրերում։ Կասկածից դուրս է, որ այստեղ որոշ նշանակություն ուներ ժողովրդի կրոնական ֆանատիզմը։ Սակայն այստեղ էականն այդ չէր, այլ այն, որ եկեղեցապատկան հողերի գրավումը առիթ հանդիսացավ հայ ժողովրդական մասսաների տարերային, անկազմակերպ շարժմանը ցարական բռնապետության դեմ, նրա ճնշման, կամայականության, գոլիցինյան բանի քաղաքականության դեմ։ Ժողովրդական մասսաների տասնյակ տարիների ընթացքում կուտակված զայրույթն այժմ, քաղաքական նպաստավոր պայմաններում ժայթքում էր։ Հոգ չէ, որ այդ ցասման բողոքը գնում էր կրոնական քողի տակ։ Հասարակության պատմության մեջ քիչ չեն եղել դեպքեր, երբ ճնշված ժողովուրդների ըմբոստացումը ընդդեմ բռնապետության և ճնշումների ընդունել է կրոնական ձև, էականն այստեղ տարերային այդ հուժկու շարժման փաստն է ընդդեմ ցարիզմի։ Էականն այստեղ այն էր, որ հայ ժողովրդական մասսաների շարժումը հանդիսանում էր ռուսական և անդրկովկասյան ռևոլյուցիոն շարժման ծնունդը, նրա անբաժան մասը, նրա տարերային արձագանքը։ Այդ տեսակետից մենք պետք է մոտենանք այդ շարժման գնահատականին։

Անդրկովկասի բոլշևիկները գլխավորում էին այդ շարժումը. Կովկասյան Ս. Դ. միությունը երկու կոչ բաց թողեց հայ եկեղեցական հողերի գրավման և այդ առթիվ առաջացած տարերային շարժման մասին։ Մերկացնելով ցարիզմի դիտավորությունները կալվածների գրավման առթիվ, Կովկասյան Միությունն իր առաջին կոչում՝ ուղղված բանվորներին և գյուղացիներին, գրում էր.

«Բանվորներ և գյուղացիներ.

Դեռևս չեն վերջացել Ֆինլանդիայի վերաբերմամբ գործ դրված ճնշումները, դեռ դահիճների ձեռքերը չեն մաքրվել Քիշնևում կատարված հրեական ջարդի արյունից, դեռ չեն առողջացել Միխայլովի, Բաթումի, Բաքվի, Օդեսայի, Կիևի մեր ընկերների վերքերը,— ահա ցարի կառավարությունը՝ վառված կողոպուտի և

անօրինության ծարավով՝ իր անարգ թաթերը ուղղում է դեպի
հայերը։
Հունիսի 12-ի օրենքով ցարը հայերից խլում է իրենց եկեղեցական կալվածները կառավարելու իրավունքը... Ցարի կառավարությունը իր ձեռքը գցելով այդ կալվածները, հայ քահանաներին զանազան «նպաստներ» կտա և այսպիսով նույնիսկ հայ ժողովրդի փողերով կկաշառի նրա քահանաներին։

Հայերը շատ լավ հասկանալով ցարի հետին նպատակները, — շարունակում էր կոչը, — արդեն բարձրացրել են կռվի դրոշը, նրանց արյունն արդեն թափվել է...

Իսկ մենք, եղբայրներ, մենք ի՞նչ պետք է անենք սոցիալ-դեմոկրատ ընկերներ։ Մենք համաշխարհային պրոլետարիատի մեծ բանակի զինվորներս, մենք ամեն մի ճնշման և ապօրինության երդվյալ թշնամիներս միշտ և ամեն տեղ կրծքով պետք է պաշտպանենք բոլոր ճնշվածներին։ Չինովնիկների զզվելի կամայականության դեմ մղած հայերի այս կռվում առաջին շարքերը մեզ պետք է պատկանեն»։ Կոչը վերջանում է հետևյալ լոզունգներով.

«Կորչի միապետությունը, կեցցե ռամկավար հանրապետությունը, կեցցե սոցիալիզմը»։

Կովկասյան Միութենական Կոմիտեի երկրորդ կոչում տրվում է արդեն տարերային շարժման գնահատականը։

«Ժողովրդի սրտում թաքնված զայրույթը երկար ժամանակ ելք էր գտնում մինչև որ կարմիր դրոշակը և պրոլետարիատի աներկյուղ կռիվը արթնացրին մեր երկրի նիրհող ուժերը և ցույց տվին բոլորին, որ հարկավոր է կռվել։ Միայն այդ կռվի շնորհիվ է, որ այսօր մեր շուրջը մենք տեսնում ենք պատերազմական տրամադրություն, միայն նրա շնորհիվ է, որ մենք այսօր հպարտությամբ կարող ենք ասել—հեռու չէ այն ժամը, երբ Ռուսաստանի ընդհանուր եղբայրությունը վերջնականապես կփշրի բռնության լուծը, որ այսքան դարեր ծանրացել է ռուսների և նրանց հետ ապրող բազմաթիվ այլ ազգությունների վրա»։

Այնուհետև կոչը խոսում է սոցիալ-դեմոկրատների անելիքների մասին։

«Մենք ենք, ընկերներ, որ դեպի կյանք ենք կոչել այդ մասսաները, մենք էլ պարտավոր ենք գիտակցական արտահայտություն տալ նրանց բողոքին։ Մենք ճիգ պետք է թափենք, որ մեր երկրի բոլոր ծայրերում տեղի ունեցող տարերային ընդհարումները կա-

ռավարության հետ՝ դառնա մի հուժկու փոթորիկ, որը պետք է ջախջախի գաղան միապետի արյունոտ գահը և վերջ տա նրա բազմաթիվ դահիճների գոյությանը»:

Այնուհետև Միութենական կոմիտեն կոչ է անում կովկասյան ժողովուրդներին միանալու առանց ազգերի խտրության, համախմբվելու սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշակի շուրջը և վըճռական մարտի դուրս գալու ցարական բռնակալության դեմ, որը գլխավոր աղբյուրն է ամեն տեսակ շահագործությունների և ժողովրդի թշվառության»:

Որքա՜ն մարտական, որքա՜ն վճռական և ինտերնացիոնալ է Անդրկովկասյան Միութենական Կոմիտեի կոչը: Նա ձգտում է տարերային անկազմակերպ շարժումը կապել համառուսաստանյան և համակովկասյան ռևոլյուցիոն շարժման հետ, բարձրացնել հայ ժողովրդական մասսաների շարժումը մինչև սոցիալ-դեմոկրատական գիտակցության աստիճանը, ցեմենտել Անդրկովկասի ժողովուրդների միասնական պայքարը՝ ռուս մեծ ժողովրդի հետ միասին ցարական գահը տապալելու համար:

Այսպես էր Անդրկովկասի բոլշևիկների վերաբերմունքը հայ ժողովրդի մասսայական շարժման նկատմամբ:

Գյուղը դասակարգային պայքարի մեջ ներգրավել, և գլխավորել գյուղացիական մասսաների տարերային շարժումը ընդդեմ ճորտատիրական կարգերի մնացորդների,— ահա թե ինչ խնդիրներից էր ելնում Անդրկովկասի բոլշևիկների ագրարային քաղաքականությունը մինչև 1903 թվականը:

Շուտով վրա է հասնում 1905 թիվը, ռուսական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի առաջին տարին: Պրոլետարիատի նախաձեռնած ռևոլյուցիան իր անդրադարձումն է գտնում գյուղացիության և զինվորության մեջ: Դեռևս 1905 թվի գարնանից սկսվում է գյուղացիական հուզումները: «Գյուղացիները հըսկայական բազմություններով գնում էին կալվածատերերի դեմ տակն ու վրա էին անում նրանց կալվածքները, շաքարի և օղեթորման գործարանները, հրդեհում էին կալվածատիրական պալատներն ու ագարակները: Մի շարք տեղերում գյուղացիները գրավում էին կալվածատիրական հողը, դիմում էին մասսայական անտառահատման, պահանջում էին կալվածատերերի հողերը հանձնել ժողովրդին»: (ՀամԿ(բ)Պ Համառոտ դասընթաց, էջ 82, 1946 թ.):

Այդ շարժումը լայն ծավալ ստանալով Ռուսաստանի կենտրոնական նահանգներում, անցնում է Անդրկովկաս, ընդգրկելով Վըրաստանի, Գուրիայի, Քարթալինիայի, Կախեթիայի և Բորչալուի գավառները։ Անդրկովկասի գյուղացիության հուժկու այս շարժումը տեղի է ունենում այժմ Կովկասյան Միութենական Կոմիտեի անմիջական ղեկավարությամբ։ Քարթալինիայի և Կախեթիայի գյուղացիներին ուղղված կոչի մեջ, գրված ընկեր Ստալինի կողմից, Կովկասի Միութենական Կոմիտեն ձևակերպում է շարժման մեջ մտած գյուղացիների պահանջները։ Ահա այդ պահանջները.

1) «Դասերի վերացումը (մենք չենք ուզում ոչ ազնվականություն, ոչ գյուղացիություն. մենք ուզում ենք, որպեսզի բոլորը ազատ քաղաքացիներ լինեն, որպեսզի բոլորը օժտված լինեն միատեսակ իրավունքներով)։

2) Ամեն տեսակ պարհակների վերացումը՝ կալվածատիրական, տերտերական կամ ոլոստական։

3) Կալվածատիրական և տերտերական հարկերի (հետգնման, դրամովային (драмовые)) ոչնչացումը։

4) «Խիզաններին», «ժամանակավոր պարտավորյալներին», պետական և եկեղեցական գյուղացիներին հանձնել որպես սեփականություն այն բոլոր հողերը, որոնք այժմ նրանց օգտագործման տակ են գտնվում։

5) Գյուղացիներին վերադարձնել «ազատագրության» ժամանակ և հետո նրանցից կտրված հանդերը (վարելահողերը, անտառները, մարգագետինները և ջրերը)։

6) Հետգնման և այլ վճարումների վերադարձը գյուղացիներին և այլն»։

Այս բոլոր միջոցառումներն իրագործելու համար կոչը պահանջում է կազմակերպել գյուղացիական կոմիտեներ, որոնք հարցերը պետք է կարգավորեին գյուղացիների օգտին։

Այնուհետև կոչը պահանջում է հաշտարար միջնորդների վերացումը, նրանց տեղն առաջադրելով գյուղացիներից ընտրված դատավորներ, մասսայական սպառման ապրանքների վրա դրվող անուղղակի հարկերի ոչնչացումը, զինվորական ծառայության ոչնչացումը, պարտադիր ուսուցման կիրառումը, անցագրային սիս-

*տեմի վերացումը, գյուղական շրջանային և գավառային ինքնավարությունների հիմնումը և այլն**։

Նույն այս մարտական կոչը իր բոլոր կոնկրետ պահանջներով, որոշ խմբագրական փոփոխություններով Միութենական Կոմիտեի կողմից ուղղվում է «Հայ գյուղացիներին»։

Անհրաժեշտ էր անդրկովկասյան գյուղացիական շարժման մեջ ներգրավել նաև հայկական գյուղը, ստեղծելով Անդրկովկասի գյուղացիների և պրոլետարիատի մի միասնական ֆրոնտ ընդդեմ ցարիզմի և կալվածատիրության։ Թվարկելով գյուղացիների կոնկրետ պահանջները, երկու կոչումն էլ ասված է հետևյալը.

«Հասկանալի է, կալվածատերերը և հողատականները մեզ դեմ կլինեն։ Բայց նրանց հախից գալը դատարկ բան է։ Նրանք այժմ արդեն իրենց համար բուն են որոնում, գիտենալով, հավանորեն, որ մեզ հետ հանաք անելը նրանց էժան չի նստի։ Բայց խնդիրը նրանումն է, որ մեր ճանապարհը փակում է ցարական կառավարությունը, այն կառավարությունը, որը կալվածատիրական լծի հետ միասին մեր շլինքին է դրել ցարական լուծը և աղքատության դատապարտել մեզ։ Ահա այդ կառավարությանը մենք պետք է խիղախ հակահարված տանք։ Միք մոռանա, գյուղացիներ, որ ցարական կառավարությունը բաղկացած է կալվածատերերից և այլ հարուստներից... Ինչպես շնից գառ չի ծնվի, այնպես էլ այս կառավարությունից ոչինչ որևէ բարիք չի կարելի սպասել։ **Մենք մեր նպատակին չենք հասնի, քանի որ երկրում գոյություն կունենա** *ցարական կառավարությունը։ Այդ պատճառով էլ մենք պետք է ոչնչացնենք ցարական կառավարությունը» (Նույն տեղը, էջ 108)։*

«Ուրեմն առաջ, հայ գյուղականներ,— վերջանում է կոչը,— քաղաքի բանվորների գլխավորությամբ, դիմենք դեպի դեմոկրատական հանրապետությունը։ Բանվորների հետևից գնանք և նրանց հետ մեկտեղ ոչնչացնենք նողկալի կարգերը, որպեսզի ճանապարհ բաց անենք դեպի հավասարությունը կյանքում, դեպի

---

* Прокламации большевистских организаций Закавказья 1901—1906 г. г., Тбилиси, 1940 г., стр. 103—108.

սոցիալիստական կարգերը, որին անդրդվելիորեն ձգտում են քաղաքային բանվորները և գյուղական չքավորությունը»*։

Առանց ցարիզմի ոչնչացման չի կարելի ոչնչացնել կալվածատիրությունը։ Իսկ որպեսզի ոչնչացվի թե մեկը և մյուսը, գյուղացիությունը պետք է բանվորների հետևից գնա և նրա ղեկավարությամբ ու նրա հետ միասին վերջ դնելով տիրող նողկալի կարգերին, ճանապարհ հարթի դեպի սոցիալիստական կարգերը, որին ձգտում է պրոլետարիատն ու չքավոր գյուղացիությունը,— այսպես է վրացի և հայ գյուղացիներին ուղղված կոչի իմաստն ու էությունը։ Այստեղ ընկեր Ստալինը ձևակերպում է բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական ռևոլյուցիաների ընթացքում պրոլետարիատի՝ գյուղացիության հետ ունեցած դաշինքի լենինյան սկզբունքները — ամբողջ գյուղացիության հետ դաշնակցած ընդդեմ ցարիզմի և կալվածատիրության և ապա չքավոր գյուղացիության հետ միասին՝ հանուն սոցիալիստական ռևոլյուցիայի։

1905 թվի նոյեմբերին ընկեր Ստալինի գլխավորությամբ հավաքվում է Անդրկովկասի բոլշևիկների չորրորդ կոնֆերանսը։ Կոնֆերանսը որոշումներ կայացնելով զինված ապստամբություն նախապատրաստելու, ցարական դուման բոյկոտի ենթարկելու և այլ խնդիրների մասին, զբաղվում է նաև ագրարային-գյուղացիական հարցով։

«Կավկազսկի Ռաբոչի լիստոկ» թերթը անդրադառնալով գյուղացիական հարցի մասին կոնֆերանսի ընդունած որոշմանը, գրում է. «... Ընդգծելով «վճռական գոտեմարտի» մոմենտի մոտենալը և այդ «գոտեմարտի» մեջ գյուղացիներին և զինվորներին պատկանող բարձր դերը, կոնֆերենցիան գյուղացիական հարցի վերաբերյալ՝ վերջիններիս ռևոլյուցիոն ոգին բարձրացնելու և նրանց պրոլետարիատի շուրջը համախմբելու նպատակով, հանձնարարեց անհապաղ ձեռնամուխ լինել դեմոկրատական ձևով կառուցված գյուղացիական ռևոլյուցիոն կոմիտեների ստեղծմանը, որոնց նպատակն է գյուղի փաստացի ազատագրումը» (Լ. Բերիա,

---

* Հաշվի առնելով այդ կոչի հայերեն թարգմանության ակնհայտ սխալներն ու աղավաղումները, տալիս ենք նոր թարգմանությամբ, օգտվելով Քարթալինիայի և Կախեթիայի գյուղացիներին ուղղված նույն կոչից (Տես «Պրոկլամացիա», նույն տեղը, էջ 109)։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, 1945, էջ 99)։

Բոլշևիկների Համառուսաստանյան 3-րդ համագումարը գյուղացիական շարժման մասին ընդունած բանաձևում որպես մարտական լոզունգ առաջ էր քաշում անհապաղ գյուղացիական կոմիտեների կազմակերպումը, որոնք ռևոլյուցիոն ճանապարհով պետք է լուծեին բոլոր դեմոկրատական բարեփոխումները գյուղում, ընդհուպ մինչև կալվածատիրական հողերի բռնագրավումը։ Անդրկովկասի բոլշևիկների չորրորդ կոնֆերանսն այդ ուղիով էր առաջ ընթանում, առաջադրելով գյուղացիական ռևոլյուցիոն դեմոկրատիկ կոմիտեների կազմակերպումը՝ գյուղի փաստական ազատագրության համար։

Գուրիայի գյուղացիները 1906 թվին կենսագործում էին բոլշևիկյան կոնֆերանսի այդ որոշումները՝ իրենց մոտ դեմոկրատական ինքնավարություններ ստեղծելով։

Այսպես էր Անդրկովկասի բոլշևիկների ագրարային քաղաքականության նոր էտապը կապված ռևոլյուցիայի զարգացման հետ։

Այդ կոնֆերանսից մի քանի ամիս հետո, 1906 թվի մարտին, նախքան Ստոկհոլմի միավորիչ համագումարը, ընկեր Ստալինը, ելնելով լենինյան նոր լոզունգներից ագրարային հարցում, վրացական «Էլվա» թերթի մի քանի համարներում տպագրում է իր հոդվածաշարը — «Ագրարային հարցի» վերաբերյալ։ Հոդվածաշարի առանցքը կազմում է կալվածատիրական և պետական հողերի բռնագրավումը գյուղացիների կողմից։

«Միայն այդ (բռնագրավումը—Օ.Հ.),—ասում է ընկեր Ստալինը,—կարող է իր վախճանին հասցնել գյուղացիական շարժումը, միայն այդ կարող է ուժեղացնել ժողովրդի եռանդը, միայն այդ կարող է հողմացրիվ անել ճորտատիրության հնացած մնացորդները» (Ստալին, Երկերի ժողովածու, հատոր I, էջ 245)։

«Այսպես ուրեմն— գյուղի այսօրվա շարժումը, եզրակացնում է ընկեր Ստալինը, գյուղացիների դեմոկրատական շարժումն է։ Այդ շարժման նպատակն է ոչնչացնել ճորտատիրության մնացորդները։ Իսկ այդ մնացորդները ոչնչացնելու համար անհրաժեշտ է կալվածատերերի և արքունական ամբողջ հողի բռնագրավումը» (Նույն տեղ, էջ 245—46)։

Հետևապես, ճորտատիրության մնացորդների ոչնչացման համար այժմ անհրաժեշտ էր ոչ թե ատրեզկաների հարցը դնել, ոչ թե կալվածատիրական և պետական հարկերի ոչնչացումը և ոչ էլ ժամանակավոր պարտավոր գյուղացիների սեփականությունը դարձնելու նրանց հողերը — այս բոլորը անցած էտապի լոզունգներն էին — այլ պետական և կալվածատիրական ամբողջ հողերի բռնագրավումը: Այսպես էր արդեն շարժման մեջ մտած գյուղացիներին առաջարկվող բոլշևիկյան մարտական նոր լոզունգը։

Մեծագույն և միաժամանակ չափազանց դժվարին խնդիրներ էր դրվում Անդրկովկասի բոլշևիկների և մասնավորապես հայկական միջավայրում աշխատող բոլշևիկների առաջ այդ շրջանում։ Անհրաժեշտ էր լենինյան-ստալինյան մարտական այս լոզունգները հայ գյուղացիական մասսաների սեփականությունը դարձնել, ընդհանուր ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավել նրանց։ Մինչդեռ պրոլետարական կենտրոններից հեռու գտնվող հայկական գավառներում մարակի և մաուզերի զոռով «ամրացած» դաշնակցականներն ու հնչակյանները աշխատում էին բթացնել հայ աշխատավոր գյուղացու դասակարգային գիտակցությունը, հետ պահել նրանց դասակարգային մեծ մարտերից, քաշել տալ նրանց շովինիստական, եղբայրասպան կռվի ուղին։

Անհրաժեշտ էր վճռական մարտի դուրս գալ հայ աշխատավոր գյուղացու ոխերիմ թշնամիների՝ դաշնակների և հնչակյանների դեմ, հողմացրիվ անել նրանց գյուղում, դուրս բերել հայ աշխատավոր գյուղացիության այդ պարտիաների մորակի տակից, ուղղելով նրանց եռանդն ու էներգիան վրացի, ադրբեջանցի և մյուս գյուղացիների հետ միասին ընդդեմ կալվածատիրության, ընդդեմ ցարական միահեծանության։ Անհրաժեշտ էր գյուղացիների սեփականությունը դարձնել լենինյան-ստալինյան այն սկզբունքը, որ անհնարին է ճնշված ազգերի ազատագրությունը առանց ցարիզմի և կալվածատիրության տապալման։ Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտները, ընկեր ընկեր Սպանդարյանը, Շահումյանը և մյուսները պատվով են կատարում այդ գործը հայ աշխատավոր գյուղացիների շրջանում։

Ընկեր Ս. Սպանդարյանը, այդ բոցաշունչ ստալինյանը, մեծ-

չիզմի, դաշնակցականների և ամեն կարգի ազգայնական-բուր-ժուական և մանրբուրժուական պարտիաների դեմ մարտնչող անվեհեր մարտիկը — այդ ճակատն է նետվում։

Իր՝ «Մեր գործը գյուղում» փայլուն հոդվածաշարքով նա հայ աշխատավոր գյուղացիների սեփականությունն է դարձնում պար-տիայի՝ ագրարային քաղաքականության լոզունգները, կոնկրե-տացնում այդ լոզունգները, պայքարի ելնում դաշնակների և հըն-չակների դեմ։

«Մեր «ազգային պարտիաները»,— գրում է ընկեր Սպան-դարյանը բոլշևիկյան «Նոր խոսք»-ում,— որոնք բաժանել են հայ գյուղացիությանն իրենց մեջ, որ «կազմակերպել» և «զարգացրել» են մեր գյուղերը մորակներով, զենքով և էկզեկուցիաներով—շա-րունակ բթացրել են գյուղի պրոլետարական տարրերի գիտակ-ցությունը և հայ գյուղացիությունը դարձրել են «ամենախաղաղ-լուռ ու մունջ մասսա»*։

Որն է սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը հայկական գյուղում։ Սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն է դուրս բերել գյուղը այդ նա-ցիոնալիստական պարտիաների ազդեցությունից։ «...Ռեվոլյուցիոնա-կանացնել գյուղն ամբողջապես, ազդել ամբողջ գյուղացիության վրա, տալով նրան մեր լոզունգը՝ «ամբողջ հողը և ամբողջ ազատու-թյունը»։ «Գյուղացին պետք է հասկանա,— շարունակում է ընկեր Սպանդարյանը,— որ առանց քաղաքական ազատության, առանց ժողովրդի լիակատար իշխանության, նա չի տեսնի իր փափագած «հողը», նրա համար պիտի պարզվի քաղաքական կարգերի և նրա տնտեսական դրության անխախտելի կապակցությունը, նա պիտի համոզվի, որ դրությունը չի փոխվի անձնավորության փոխվելով, այլ պետք է ամբողջ սիստեմը հեղաշրջել ներքևից մինչև վերև։ Մի խոսքով նա պիտի հասկանա, որ հողը և ազատությունը ամենա-սերտ կերպով կապված են միմյանց հետ և եթե շաղկապող «և» ջնջենք, կկորչեն և՛ հողը և ազատությունը»**։

Այսպես ուրեմն, գյուղացիների կողմից «ամբողջ հողի» ստա-ցումը կապված է «ամբողջ ազատության» հետ, դրա համար էլ

* Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 79։
** Նույն տեղը, էջ 79, 80 ընդգծումներն իմն են—Օ. Հ.։

պետք է ռևոլյուցիոնացնել ամբողջ գյուղը և տապալել ցարական կարգերը,— այս է սոցիալ-դեմոկրատիայի **առաջնահերթ խնդիրը** բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակ։

Սակայն ամբողջ գյուղի ռևոլյուցիոնացմամբ և ցարիզմի տապալմամբ չի սահմանափակվում սոցիալ-դեմոկրատիայի դերը գյուղում։ Նա պետք է մտածի նաև իր վերջնական նպատակի մասին։ Այդ վերջնական նպատակն իրագործելու համար սոցիալ-դեմոկրատիան պետք է կազմակերպի գյուղական պրոլետարիատին։ Լենինյան-ստալինյան ստրատեգիական այս լոզունգը իր փայլուն արտահայտությունն է գտել ընկեր Սպանդարյանի վերոհիշյալ հոդվածում։

«Հասկանալի է, ասում է նա, որ սոցիալ-դեմոկրատիան որպես բանվորական պարտիա, որպես որոշ դասակարգի շահերի և ձգտումների գիտակից արտահայտիչ և պաշտպան — իրեն գլխավոր նպատակ պետք է ունենա կազմակերպել գյուղի **պրոլետարական կամ կիսապրոլետարական** մասսան, գյուղական բանվորներին, հողազուրկներին։

Սոցիալ-դեմոկրատիան պետք է զարթեցնի այդ պրոլետարական տարրերի մեջ նրանց քնած դասակարգային գիտակցությունը, պետք է աջակցի գյուղում դասակարգային կռվի զարգացման և պիտի ղեկավարի այդ պայքարը, բացատրելով մեր վերջնական մեծ նպատակը և հաստատելով գաղափարական կապ՝ գյուղի և քաղաքի բանվորության մեջ»*։

Կազմակերպել և ռևոլյուցիոնացնել **ամբողջ գյուղը** բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի համար։ Կազմակերպել և ռևոլյուցիոնացնել գյուղի **պրոլետարական և կիսապրոլետարական** մասսաները՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար։ Կազմակերպել և գլխավորել երկու կարգի սոցիալական պատերազմը գյուղում — ահա թե Լենին-Ստալինի ինչպիսի հստակ իդեաների մարմնացումն են հանդիսանում ընկեր Սպանդարյանի «Մեր դերը գյուղում» հոդվածները։

Վճռական և հետևողական կերպով առաջ քաշելով գյուղում երկու ճակատի վրա աշխատանք ծավալելու գործնական խնդիրները, ջախջախիչ հարված հասցնելով բուրժուական-նացիոնալիստա-

---

* Նույն տեղը, էջ 78, ընդգծումները իմն են—Օ. Հ.։

կան պաշտոններին, Սպանդարյանը միաժամանակ զգուշացնում է տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին իրենց շարքերի աճեցման մասին։

«Այժմ,— ասում է Տիմոֆեյը,— երբ գյուղում սկսվել է ռեակցիա «ազգային կուսակցությունների» վերաբերմամբ, ... սոցիալ-դեմոկրատիան կարող է իր շարքերն արտաքին կերպով ճոխացնելու համար շատ բան անել։

Բայց նա այդ բանը միանգամայն մշակ է բացասե, և մենք զգուշացնում ենք մեր ընկերներին այդպիսի արտաքին հաջողությունից։

Մեզ հարկավոր չեն հազարները և հարյուրները— մեզ հարկավոր է ունենալ մի քանի տասնյակ գիտակից հետևողներ։ Մեզ բոլորովին անպետք է միմիայն անունով սոց.-դեմոկրատական անգիտակից ամբոխ, ինչպես նա ներկայումս հնչակյան է, կամ դաշնակցական։ Մենք «անդամներ» չենք ուզում ունենալ, այլ գիտակից ընկերներ, մենք չենք կամենում «օրեկաներ» ունենալ մեր էքսպերիմենտների համար, այլ գործունյա և դատող «սուբյեկտներ» (նույն տեղը, էջ 81)։

Ունենալ գյուղում իսկական պրոլետարական, մարտական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, իրենց շուրջը համախմբված լայն գյուղացիական, աշխատավորական պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներով, որոնք գործում են պարտիայի լոզունգներով,— ահա լենինյան-ստալինյան կազմակերպչական ինչպիսի խնդիրների իրագործումն է պահանջում գյուղում ընկեր Սպանդարյանը։

Նույն այդ ժամանակաշրջանում հսկայական աշխատանք է ծավալում գյուղում նաև ընկեր Շահումյանը։ Իր հոդվածներով և գյուղերում կազմակերպված ելույթներով Սպանդարյանի և մյուսների հետ միասին նա հայկական գյուղացիական խրճիթն է տանում Լենինի և Ստալինի լուսավոր միտքը, բոլշևիկյան պարտիայի մարտական լոզունգները։

«Գյուղացիությունն իր դրոշակի վրա գրել է. «Հանուն ամբողջ հողի, հանուն ամբողջ ազատության» լոզունգը,— ասում է ընկեր Շահումյանը գյուղական ժողովներից մեկում,—իսկ այդ նպատակին հասնելու համար գյուղացիներն այսուհետև պրոլետարիատի ղեկա-

վարությամբ պետք է պայքարեն մինչև վերջը ու պրակտիկ կերպով լուծեն բոլոր ցարական, ուդելային, կաբինետային, բոլոր վանքապատկան և դրանց հետ միասին բոլոր մասնավոր սեփականատիրական հողերի բռնագրավումը»*։

Նույնպիսի ընդարձակ աշխատանք են ծավալում գյուղացիության մեջ Բորչալուի և բազմաթիվ այլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները հայկական գյուղում 1905—1907 թվերի ընթացքում։

Դա իսկական բոլշևիկյան, համառ պայքար էր գյուղացիությանը գրավելու համար, գյուղացիությունը բուրժուազիայի ռեզերվից պրոլետարիատի ռեզերվ դարձնելու համար։ Եթե ամբողջ Ռուսաստանում այդ ժամանակաշրջանում և հետագայում, մինչև 1917 թվի փետրվարը պայքար գյուղացիության գրավման համար գնում էր կադետների և բոլշևիկների միջև, ապա հայկական գյուղում այդ պայքարը գնում էր գլխավորապես հայկական բուրժուական-նացիոնալիստական պարտիաների և առավելապես դաշնակցության և բոլշևիկների միջև։ Անդրկովկասի բոլշևիկներին հաջողվեց 1905—1907 թվերի ընթացքում հայ աշխատավոր գյուղացիության մեջ հսկայական աշխատանք կատարել այդ ուղղությամբ։ Հենց այդ ժամանակաշրջանումն էլ հիմք դրվեց մեզանում բանվորա-գյուղացիական դաշինքի, որի ամրապնդման համար անհրաժեշտ էր դեռևս համառ և երկարատև աշխատանք տանել։

Թե ինչո՞ւմն էր արտահայտվում 1905—1907 թվերի Անդրկովկասի բոլշևիկների գյուղում կատարած աննկուն աշխատանքների արդյունքները, այդ երևում էր նրանից, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի գյուղական շրջանների մեծ մասում ծավալվում է գյուղացիների իսկական պայքար կալվածատիրության և ցարական կառավարության դեմ, մի պայքար, որ շատ տեղերում վերջանում էր զինված ապստամբությամբ։

***

Ամփոփելով վերջին գլխի մեր շարադրանքը, կարելի է հետևյալ եզրակացությունն անել։

1. Անդրկովկասում գործող բոլոր պարտիաներից և քաղաքական հոսանքներից միայն բոլշևիկներն էին, որոնք 1905—1907 թվե-

* «Նոր խոսք», № 15, 1906 թ.։

րչ ռևոլյուցիայի ընթացքում և հետագայում հանդիսանում էին Անդրկովկասի պրոլետարիատի և գյուղացիության իսկական ղեկավարներն ու առաջնորդները։ Միայն բոլշևիկներն էին, որոնք կազմակերպում և պայքարի էին դուրս բերում Անդրկովկասի աշխատավոր ժողովրդին ընդդեմ ցարիզմի և կալվածատիրության, որպեսզի նոր պայքար ծավալեն սոցիալիստական ռևոլյուցիայի համար։ Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպության հիմնադիրն ու ղեկավարը հանդիսանում է ընկեր Ստալինը։ «Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի և Վրաստանի ռևոլյուցիոն ամբողջ շարժումը՝ նրա ծնունդ առնելու առաջին իսկ օրերից, անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի աշխատանքի և անվան հետ» (Բերիա)։

2. Անդրկովկասում գործող բոլոր պարտիաներից և քաղաքական հոսանքներից միայն բոլշևիկներն էին, որոնք ճիշտ կերպով դնում և լուծում էին ագրարային-գյուղացիական հարցը Անդրկովկասում։ Ելնելով ագրարային հարցի մարքսիստական-լենինյան թեորիայից, Անդրկովկասի բոլշևիկները ընկեր Ստալինի ղեկավարությամբ ոչ միայն կոնկրետացնում էին այն Անդրկովկասի պայմաններին համապատասխան, այլ իսկական, սիստեմատիկ և համառ պայքար ծավալում ագրարային ծրագրի իրագործման համար։ Սկսելով գյուղում դասակարգային պայքար մտցնելու համար հուզող լոզունգներ առաջադրելուց, Անդրկովկասի բոլշևիկները հասան մինչև գյուղացիների զինված ապստամբությունների կազմակերպմանը Անդրկովկասի շատ գավառներում։ Այդ պայքարի ընթացքում հիմք դրվեց Անդրկովկասի բանվորների և գյուղացիների դաշինքին։ Ռեակցիայի և հետագա տարիներին Անդրկովկասի բոլշևիկները անդուլ կերպով շարունակում էին իրենց աշխատանքը բանվորա-գյուղացիական դաշինքն ամրապնդելու ուղղությամբ, հանուն գալիք ռևոլյուցիայի։

3. Անդրկովկասում գործող բոլոր պարտիաներից և քաղաքական հոսանքներից միայն բոլշևիկներն էին, որոնք ընկեր Ստալինի ղեկավարությամբ ոչ թե ձևականորեն, այլ իսկապես, ոչ թե խոսքով, այլ գործով ամրապնդում էին Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ-եղբայրական կապը ռուս մեծ ժողովրդի հետ, դարձնելով Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարը համառուսաստանյան պայքարի անբաժան մասը։

Ինտերնացիոնալ այդ կապը ստեղծելու համար Անդրկովկասի բոլշևիկները ջախջախիչ հարված էին հասցնում մենշևիկներին, վրացական ֆեդերալիստներին, դաշնակցականներին, հնչակյաններին, անարխիստներին, էսեռներին, սպեցիֆիկներին և ամեն գույնի նացիոնալիստական, բուրժուական և հակաշխատավորական պարտիաներին։

Բոլոր այդ պարտիաները—նրանցից մի մասը բացարձակ կերպով, մյուս մասը քողարկված կերպով—վարում էին Անդրկովկասի ժողովուրդները միմյանց դեմ և ռուսական մեծ ժողովրդի դեմ թշնամացնելու քաղաքականություն, մի քաղաքականություն, որ ջուր էր լցնում ցարիզմի ջրաղացին։ Միմիայն բոլշևիկներն էին, որոնք կռվում էին բոլոր ազգությունների մի ընդհանուր միասնական ճակատ ցարիզմը ջախջախելու համար։ Իսկ առանց ցարիզմի և կապիտալիզմի ջախջախման անհնարին էր լուծել ոչ ագրարային և ոչ էլ ազգային հարցը Ռուսաստանում և նրա գաղութներում։

604—11

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

К. Маркс — Капитал, том III, гл. 47 — Генезис капиталистической земельной ренты.

К. Маркс — Архив, книга 1, стр. 211, 274, 280—282.

К. Маркс и Энгельс — Собрание сочинений, т. 21.

В. И. Ленин — Что такое «друзья народа» и как они воюют против социал демократов? Соб. соч., том I

В. И. Ленин—Развитие капитализма в России. Соб. соч., том III.

В. И. Ленин — Аграрный вопрос и «Критика Маркса». Соб. соч., том IV.

В. И. Ленин — Пересмотр аграрной программы рабочей партии. Соб. соч., том IX.

В. И. Ленин — Аграрная программа в первой русской революции. Соб. соч., том XI.

В. И. Ленин — Аграрный вопрос в России в конце XIX века. Соб. соч., том XII.

В. И. Ленин — «Крестьянская реформа» и пролетарско-крестьянская революция. Соб. соч., том XV.

В. И. Ленин — Новые данные о законах развития капитализма. Соб. соч., том XVII.

И. В. Сталин — Об основах ленинизма. Глава V.—Крестьянский вопрос.

И. В. Сталин — К вопросам аграрной политики в СССР.

И. В. Сталин — Как понимает социал-демократия национальный вопрос? Собр. соч., т. I.

И. В. Сталин — Марксизм и национальный вопрос. Собр. соч., том II.

И. В. Сталин — Контрреволюционеры Закавказья под маской социализма. Собр. соч., т. IV.

История ВКП(б) — Краткий курс.

ВКП(б) в резолюциях. Часть 1.

Берия — К вопросу об истории большевистских организаций в Закавказье.

Прокламации большевистских организаций Закавказья 1904—1906 г.г.

Ս. Սպանդարյան — *Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր։*

Ս. Շահումյան — *Երկերի ժողովածու, հատոր 1-ին և 3-րդ։*

И. В. Авалашвили—Площадь, сбор и урожайность хлопчатника в Закавказье 1904—14 г.г. и 1924—28 гг., 1928 г.

Андроников И. З. — Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии. 1896 год.

Андроников И. З. — Культура риса на Кавказе. 1900 г.

А. М. — Культура риса в Эриванской губернии. См. Памятная книжка Эриванской губернии, 1902 г.

Акты, собранные Кавказской археологической комиссией, I—X тома.

Аразханянц А. — Закавказская хлебная торговля (прошлое, настоящее и будущее), 1887 г.

Аргутинский-Долгоруков — Борчалинский уезд. См. сборник—Район Тифлисско—Карсско—Эриванской железной дороги.

Баградзе и Березнев — Тифлис в историческом и этнографическом отношениях. 1870 г.

Бажулов — По вопросу о денежных задатках под урожай хлопка.

Барон А. фон-Гакстгаузен — Закавказский край. Часть I, 1857 г.

Безобразов — Значение Закавказских государственных и частных кредитных учреждений в деле развития хлопководства.

Воронихин — Закон 20 декабря 1912—1916 г.г.

Воронцов-Дашков — Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта графа Воронцова-Дашкова. 1907 г.

Воронцов-Дашков — Всеподданнейшая записка за пятилетнее управление Кавказом. 1910 г.

Гогичайшвили — Малоземелье среди крестьян Закавказья. 1903 г.
Данилович — Аракская равнина. См. сборник—Район Тифлисско—Карсско—Эриванской железной дороги. 1897 г.
Егиазаров С. А. — О водовладении в Закавказском крае. 1895 г.
Егиазаров С. А. — Исследования по истории учреждений в Закавказье. Часть 1, 2. 1894 г.
Иваненко В. Н. — Гражданское управление Закавказьем. 1901 г.
Инженер Псарев — Записка об ирригации на Араздаянской степи. 1882 г. См.—Материалы по изучению положения 3 декабря о пользовании водами для орошения земли в Закавказье.
Кавказский Календарь — Все номера с 1864—1916 г.г.
Колосов С. — Русские сектанты в Эриванской губернии. См. Памятная книжка Эриванской губернии, 1912 г.
Краткий обзор коммерческой деятельности Кавказской железной дороги. См. сборник — Кавказское сельское хозяйство. 1899 г.
Кучаев — Крестьянская реформа в Елизаветопольской губернии. 1885 г.
Кучаев — Поземельное устройство государственных крестьян, водворенных на владельческих землях в Закавказских губерниях. 1886 г.
Кавказское Сельское Хозяйство — (журнал) — несколько номеров.
Лященко — Социальная эволюция сельского хозяйства.
Лященко — История народного хозяйства.
Макаров — Экономический быт государственных крестьян Эриванской губернии.
Марченко А. И. — Виноградарство Эриванской губернии. См. Памятная книжка Эриванской губернии, 1902 г.

Марченко А. И. — Переработка винограда в Эриванской губернии. См. Памятная книжка Эриванской губернии. 1902 г.

Материалы по изучению экономического быта государственных крестьян. I—VII тома.

Материалы по изучению положения 3 декабря о пользовании водами для орошения земли в Закавказье.

Материалы по вопросу о введении земских учреждений в Закавказье. Том IX. 1910 г.

Новая история колониальных и зависимых стран. Том I.

Орест Семин — Великая годовщина. 1911 г.

Парвецкий А. В. — Экономический быт государственных крестьян Северо-западной части Шарура и Восточной части Даралагеза, Ш. Даралагязского уезда. См. материалы по изучению эк. быта гос. кр. Том IV, часть I.

Петрович П. — Хлопководство в Закавказье. См. труды Съезда хлопководов. Том II, часть I.

Положения о пользовании водами для орошения земель в Закавказье.

Памятные книжки Эриванской губернии 1902, 1904, 1906 и 1912 г.г.

Сборник статистических данных о землевладении и способе хозяйства в пяти губерниях Закавказского Края. 1899 г.

Сборник — Орошение и обводнение на Кавказе.

Сведения о культурно-экономическом состоянии колоний в Закавказском крае. 1916 г.

Стенографический отчет государственной Думы. Сессия 2.

Труды Съезда хлопководов. Том I и II. 1913 г.

Труды Кавказского Общества сельского хозяйства.

Туган-Барановский — Русская фабрика.

Тимофеев — Статистика хлопководства в Закавказском крае за 1905—1911 г.г.

Хлопковое дело — (журнал) №№ 3—4, 1923 г.

Черноярский — О водопроводах в Эриванской губернии.

Шопен — Исторический памятник состояния армянской области в эпоху ее присоединения к Российской империи. 1852 г., С.-Петербург.

Эсадзе — Историческая записка об управлении Кавказом. Том I.

Աղայան —*Երկու քույր։*

Բաբկեն վարդապետ — *Սուրբ Էջմիածնի կալվածները և նրանց բարեկարգության ծրագիրը, 1908 թ.։*

Թաղիանոսյան Մ. — *Ճանապարհորդություն ի Հայս, 1847 թ.։*

Լեո — *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1905 թ.։*

Լեո — *Անցյալից, 1927 թ.։*

Մխիթար վարդապետ — *Հայերը Ռուսաստանում, 1906 թ.։*

Մուսայելյան Հ. — *Անդրկովկասի հողային պայմանները։*

Մելիքսեթյան Գ. Տ. — *Նվեր քյասիբ գյուղացիներին։*

Մելիք-Շահնազարյան Կ. Կ. — *Տեղեկագիր Ս. Էջմիածնի գյուղատնտեսական բաժնի։*

Պռոշյան Պ. — *Հացի խնդիր։*

Պռոշյան Պ. — *Բղդե։*

Պետրոսյան Մաղաք — *Գավառական նամակներ։ Տես «Մուրճ» 1896 թ., №№ 7—8։*

Պետրոսյան Մաղաք — *Ղազախի գյուղացիների ներկա դրությունը։ Տես «Մուրճ» 1896 թ., № 8։*

Րաֆֆի — *Խամսայի մելիքությունը։*

Սիմեոն Երևանցի — *«Ջամբռ»։*

Վանցյան Գ. — *Հայ համայնքի սովորությունները։*

ԹԵՐԹԵՐ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐ

«Աշխատանք» —*Բոլոր համարները։ 1906 թ. (Թիֆլիս)*
«Արարատ»— *Մի շարք համարներ։ 1868—1918 (Էջմիածին)*
«Գյուղատնտես» —*Բոլոր համարները։ 1909—17 թ.*
«Կայծ» —*Բոլոր համարները։ 1906 թ.*
«Կյանք» —*Մի շարք համարներ։ 1906 թ.*
«Կռան» —*Մի շարք համարներ։ 1911—12 Երևան.*
«Մշակ» — *Բազմաթիվ համարներ։*
«Մուրճ» — *Բոլոր համարները։*
«Նոր խոսք» —*Բոլոր համարները։ 1906*
«Նորք» — *Բոլոր համարները։*
«Շեփոր» —*Մի շարք համարներ։ 1908 թ. (Բաքու)*
«Պրոլետարիատի կռիվ» —*Բոլոր համարները։ 1903—05 թ.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

1. Գյուղացիական ռեֆորմը Անդրկովկասում և Հայաստանում . . . 3
2. Կալվածատիրական տնտեսության զարգացումը հետռեֆորմյան շրջանում 11
3. Գյուղացիական տնտեսությունների վիճակը հետռեֆորմյան շրջանում . 16
4. Ցարիզմի հարկային քաղաքականությունը Հայաստանում . . . 25
5. Առաջին գլխի համառոտ եզրակացությունները 30

Բ. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Գյուղի շերտավորումը 33
2. Ռուսական կապիտալիզմի ազդեցությունը Անդրկովկասի գյուղատնտեսության վրա 52
3. Առևտրական հողագործության զարգացումը Երևանի նահանգում՝ բամբակագործության գծով 64
4. Առևտրական հողագործության զարգացումը Երևանի նահանգում՝ այգեգործության և գինեգործության գծով 83
5. Առևտրական հողագործության զարգացումը Հայաստանում՝ բրնձի և այլ կուլտուրաների գծով 102

Գ. ՊԱՅՔԱՐ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ցարիզմի ագրարային քաղաքականությունը Անդրկովկասում 1905—1907 թ. թ. բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շրջանում . . 109
2. Անդրկովկասի տիրապետող դասակարգերը և ագրարային հարցը . . 120
3. Դաշնակցությունը և ագրարային հարցը Հայաստանում . . 130
4. Բոլշևիկների ագրարային քաղաքականությունն Անդրկովկասում . . 140
Օգտագործված գրականության ցանկը 165

ԳՐԱԴԱՐԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ ԱՐ. ՄԱՐՈՒԽՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ

ՎՖ 00638 Պատվեր 504. տիրաժ 3000. հեղ. 9 մամուլ,
տպագր. 10 3/4 մամուլ, հանձնված է արտադր. 1/I 1948 թ.
ստորագրված է տպագր. 19/II 1949 թ.

Հայկ. ՍՍՌ. Մինիստրների Սովետին կից պոլիգ. և հրատկչ.
Վարչության I տպ. Լենինի փ. № 65

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
37	ն. 4	է	էր
38	վ. 14	այնպես էր	այնպես չէր
46	վ. 14	աղբյուրից	աղուրից
65	ն. 16	«անում էին	«ցանում էին
92	վ. 9	3403	3405
103	վ. 18	չորրորդ պարբերությունը, ապա աղյուսակը	աղյուսակը, ապա չորրորդ պարբերությունը

ՎՖ 00638 Պատվեր 504. տիրաժ 3000. հեղ. 9 մամուլ,
տպագր. 10 3/4 մամուլ, հանձնված է արտադր. 1/I 1948 թ.
ստորագրված է տպագր. 19/II 1949 թ.

Հայկ. ՍՍՌ. Մինիստրների Սովետին կից պոլիգ. և հրատկչ.
Վարչության I տպ. Լենինի փ. № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0015401

- 50կ.

ԳԻՆԸ ~~4 Ռ.~~

ԿԱԶՄԸ ~~1 Ռ.~~

ЦЕНА